

ՀԱՅ ԳԵՂՈՎ

Y SILEN

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8

ՕԳՈՍՏՈՍ

1905



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԱՐՄԻՆ» Թաղար. վար. № 18.

1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

Երկ.

1. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԲԱՅ ՔԻՒՐԴԻՍՏ.,
(Վանից—Շէմզլիքնան) Կ—ցիլի 5
2. Թ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, 13
3. ԴԷՊԻ ԱՆԻ, Ա. Անարոնեանի, 19
4. ՓԻԼԻՍՈՓԱՅ-ՍՈՅԻՕԼՈԳ, Մ'իք. Յովնանիսեանի . . . 24
5. ԹԻՒՐԲԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուբէն Բերքերեանի . . 32
6. ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅ ԵԿԵԴԵՑՈՒ ՊԱՏՄԱ-
ԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ, Ա. Վ. Ղլտնեանի 47
7. ԿԵԱՆՔԻ ԱՆԻԻԸ, (քաղուածք մի յիշատակարանից)
Տիկ. Եկ. Բաճաթուրի 67
8. ԴՈՒ ՅՈԳՆԱԾ ԵՍ, Խաճաճուր Հայկունիի 71
9. ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐԲԻԱՅԻՅ, Շարէի 72
10. ՕՐԵՐԼԷՆԵՐԸ, Վեպ Րընէ Բագէնի 101
11. ԹՈՒՐԲ ՄԱՄՈՒԼԸ. Տ. Ջալիլի 113
12. ԱՄՊԻՆՎԱԼԻ ՓԱՐՈՍԻ ՊԱՀԱՊԱՆԸ, ՀնարիկՍննկե-
վիչի Թարգմ. Ատում. 125
13. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1)
Լեւոն Խանանամեան «Զարարիս Զաղեցու օրերը».—
2) Հ. Ս. Լիբիկեան «Պատկերազարդ բնաշխարհիկ բա-
նարան».—3) Գր. Չալխուշյան «Армянский во-
просъ и армянскіе пороки».—4) Պ. Ա. Յսի-
պով. «Մի Կ. տմիս Պոլիսում».—5) Դ. Ա. Ազբելով
«Կանանց հարցը Եապոնիայում».—6) Խաչատուր ա-
րեղայ Զուղայեցու «Պատմութիւն պարսից» . . . , 141
14. ՆՈՐ ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ 150
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տեղեկութիւններ դաւաճներից.—
Բեֆորմների խաչքնդոտ տարր.—Փոխարքայի նամակը
Կով. ուս շրջ. հոգար.—Մուսուլմանների կրթութեան
առիթով.—Զեմետովն եւ ցանկալի կորրեկտիւներ.—
Ա. Հ. Կաթողիկոսը Փոխարքայի մօտ.—Հայոց դպրոց-
ների եւ կալուածների վերադարձումը.—Փոխարքայի
կոչը եւ յայտարարութիւնը.—Կարեւոր բացատրութիւն.

Նոր շրջան V տարի

Հրատ. XVII տարի

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ի Ր

№ 8

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1905



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Ընկ. Մադաթ. փող., 15.

1905

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 6-го августа.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

Երկ.

1. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԳԱՑ ՔԻՒՐԴԻՍՏ.,
(Վանից—Շէմզլէնան) Կ—ցիլի 5
2. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, 13
3. ԴէՊԻ ԱՆԻ, Ա. Անարոնեանի, 19
4. ՓԻԼԻՍՈՓԱՅ-ՍՈՑԻՕԼՈԳ, Միք. Յովհաննիսեանի . . . 24
5. ԹԻՒՐԳԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուբէն Բերքերեանի . . 32
6. ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄԱ-
ԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ, Ա. Վ. Ղլտճեանի 47
7. ԿԵԱՆՔԻ ԱՆԻԻԸ, (քաղուածք մի յիշատակարանից)
Տիկ. Եկ. Բահաթուրի 67
8. ԴՈՒ ՅՈԳՆԱԾ ԵՍ, ոտանաւոր Հայկունիի 71
9. ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ, Շաքէի 72
10. ՕԲԵՐԼԷՆԵՐԸ, Վէլլ Րընէ Բազէնի 101
11. ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ. Տ. Զաւէնի 113
12. ԱՍՊԻՆՎԱԼԻ ՓԱՐՈՍԻ ՊԱՀԱՊԱՆԸ, Հենրիկ Սենկե-
վիչի Թարգմ. Ատոմ. 125
13. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1)
Լեոն Խանսանմեան «Զարարիա Զաղեցու օրերը».—
2) Հ. Ս. Էֆրիկեան «Պատկերազարդ բնաշխարհիկ բա-
ռարան».—3) Գր. Чалхушьянъ „Армянскій во-
просъ и армянскіе пороки“.—4) Պ. Ա. Օսի-
պով. «Մի Կ. ամիս Պոլիսում».—5) Ն. Ա. Ազբելով
«Կանանց հարցը Եւպոնիայում».—6) Խաչատուր ա-
բեղայ Զուղայեցոյ «Պատմութիւն պարսից» . . . , 141
14. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԴՐՔԵՐ 150
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տեղեկութիւններ դաւաճներից.—
Բեֆորմների խաչընդոտ տարր.—Փոխարքայի նամակը
Կով. ուս շրջ. հոգաբ.—Մուսուլմանների կրթութեան
առիթով.—Զեմստովոն եւ ցանկալի կորրեկտիւներ.—
Ա. Հ. Կաթողիկոսը Փոխարքայի մօտ.—Հայոց դպրոց-
ների եւ կալուածների վերադարձումը.—Փոխարքայի
կոչը եւ յայտարարութիւնը.—Կարեւոր բացատրութիւն.

- Պրինց Նապոլէօնի կողմ.—Պաշտօնական հաղորդագրութիւն Թիֆլիսում մի դաւադրութեան մասին.—Օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ուկազը: 152
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ռուս-ճասպոնական պատերազմը.—Խաղաղութեան կոնֆերենցիան.—Գերմանիայի միտումները Թիւրքիայում.—Խորս գիւղի դէպքը.—Սուլթանին սպանելու փորձը: 168
17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ :
18. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
19. ՅԱԽԼՈՒԱԾ. Զէյմն Մորիէր՝ «ՀԱՋԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, Թարգմ. անգլ. Մ. Կարապետեան. 65—112

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԲԱՅ ՔԻՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ¹⁾

(Վանից—Շէմզղինան)

V.

Նէհրի կամ Ների կենտրոնավայրն է Թիւրքաց Քիւրդիս-
տանի այն ընդարձակ կադսյի (գաւառ), որ կոչւում է Շէմզ-
ղինան և որ տարածւում է արեւելքից մինչև Պարսկաստան,
արեւմտահիւսիսից՝ Գեվէն, և հարաւից՝ Ռեվանդիդ: Նէհրին
շինուած է, ինչպէս ասացի, բլուրներով շրջապատուած մի սի-
ւուն հովտի մէջ ծառաշատ, ջրասուն, միանգամայն տեղ-տեղ
էլ ժայռուտ առապարներով, որի իւրաքանչիւր քարի տակից,
կարելի է ասել, մի-մի աղբիւրակ է դուրս ցայտում, ա-
կանակիտ և քաղցրահամ. դրանց շնորհիւ է որ վիւղաքաղաքի
արեւմտահարաւից հոսող Ների գետակը, դեռ աւանի միւս ծայ-
րը չհասած՝ միանգամից, անանցանելի լինելու համար յորդա-
նում է: Չնայած սակայն ջրերի այսօրինակ տոատութեան՝
Ներին, իր մերձաւոր շրջականերով բուսականութիւնից և
մարդագետիւններից շատ աղքատ է, այն աստիճան, որ տեղա-
ցիները յաճախ ստիպուած են լինում իրանց ոչխարների հօտե-
րը հեռաւոր արօտավայրեր տանել արածացնելու համար: Այդ
ոչխարների հօտերի մեծագոյն մասը Շէյխի սեփականութիւնն
է կազմում, մօտաւորապէս 4—5000 գլուխ:

Նէհրին բաղկացած է մօտ 400 տներից՝ որոնց 350-ը
քիւրդ, 50-ը հրէայ, բնակիչներով: Տները կոկիկ են և մեծ մա-
սով երկյարկանի և շինուած կոշտ հրաբխային քարերից, որոնք
բերւում են շրջակայ հարուստ քարահանքերից: Տներից մի քա-
նիսը աչքի են ընկնում իրանց դեղեցկութեամբ, լայն, լուսար-
ձակ պատուհաններով և մաքուր տաշուած, բառակուսի բար-
եայ շինուածքով:

Ներիի մէջ ամենից աչքի ընկնող շինութիւնն է Շէյխի
հսկայ տունը, որ բարձրանալով աւանի հարաւային ծայրում՝

¹⁾ Տես «Մուրճ», № 7.
Օգոստոս, 1905.

իշխում է ամբողջ միւս շինութիւնների վրայ: 200 քառ. ճարտարապետական կանգուն (արշին) տարածութեան վրայ կառուցուած այս հսկայական շինութեան՝ սկսուած՝ սրանից հինգ տարի առաջ, այժմ հաղիւ երրորդ յարկը լրացրած կարելի է համարել. իսկ որպէս չորրորդ յարկ՝ պիտի կազմուեն երկու մեծ, հոյակապ պատշգամբներ, շէնքի ճակատամասում և յետս կողմում զէպի հիւսիս և հարաւ նայող: Իւրաքանչիւր յարկը բաղկացած է 14-ական մեծ կտոր դահլիճ-սենեակներից: Շինութեան վրայ—որի ճարտարապետը, ինչպէս և բարտաշ և հիւսն վարպետները բերուած են առանձնապէս Վանից—մինչև այժմ ծախսուած է տասնեակ հազար ոսկիներ, չհաշուած շինութեան զանազան նիւթերը, որոնք հայթայթուած են, համարեա ձրի, շրջակայ անտառներից և հարուստ քարահանքերից^{*)} (սպիտակ չէշոտ կրաքարից): Նոյն արհեստաւորների ձեռքով շինուել են նոյնպէս 6 ժամ հեռաւորութեան վրայ զէպի արեւելք՝ պարսկական սահմանի մօտերը կառուցուած Կատոնա կոչուած շէյխի ամարանոցի քարաշէն, փառաւոր, հսկայ շինութիւնները:

Նէրիում կայ եօթը մղկիթ, ջամի, որոնցից մէկը՝ մայր ջամին՝ Շէյխի սեփական աղօթատեղին է, իր հօր՝ Իբրաքուլ-լահի ժամանակներից մնացած. կան 50-ի չափ խանութներ, մի փոքրիկ բազարում, մի քանիսը վաճառականական ահագին մթերքներով հարուստ, որովհետև Նէհրին ներկայացնում է Շէմզղինոն գաւառի և շրջակայ քրդարնակ գիւղերի վաճառաշահ կենդրոնը, լինելով միանգամայն պարսկական սահմանագլխին մերձ: Ամենահարուստ և մեծ մագազինները պատկանում են Շէյխին և կամ գտնւում են նրա անմիջական հսկողութեան տակ, նրա խոշոր կապիտալի միջոցով կատարելով իրանց առևտրական գործառնութիւնները. մնացեալները մանր առևտրականներ կամ չարչիներ են: Ապրանքը ստացւում է Վանից, Խոշապ-Բաշգալէ-Գէվիւի գծով, մասամբ և Պարսկաստանից, առաւելապէս մերձակայ Ուրմի պարսկական քաղաքից:

Կան նաև զանազան արհեստաւորներ, գլինագործ, դերձակ, կօշկակար, երկաթագործ և թամբագործ (սառաջ):

Տեղացիների՝ քրդական ուղիւրական հագնելու ղզեստներն են տղամարդկանց համար՝ թաղիքէ քոլոզը, որպէս գլխարկ, կողբին սպիտակ բժերով, մեծ, կապոյտ թաշկինակներ (աղաբանի) փաթաթած և կամ չիթից, թանձր աստառով կարած

^{*)} Հսկայ քարերը կտրուած և հարթուած են գետաբերանում տեղաւորուած մեծ մեքենայով:

արախչի՝ (գտակ) ծայրին ծոպերով (փրակելը). ապա սպիտակեղէն՝ հաստ, սպիտակ կտաւից կարած. սրա վրայից հագնում են գունաւոր շալից գործուած իջլիկ (ներքնակ), որի վրայից՝ ամառ ու ձմեռ քիւրդից անբաժանելի գաւիկը (կոռտիկ), բլր-դեայ թանձր թաղիքի մի տեսակ շերտերից կարած, որ անթե քեազալսիի է նմանում սպիտակ կամ սև գոյնով. իսկ վարտիքի վրայից՝ սև շալից գործած լայն անդրավարտիկ՝ շալվար կոչուած, որ ամփոփելով իր մէջ իջլիկի փէշերը հաստ թելով սեղմուած է մէջքի վրայ: Իսկ կանանց համար՝ սպիտակեղէն՝ նոյնպէս կոշտ, սպիտակ կտաւից, ներքնակ, որի վրայից հաստակ կտաւից՝ սովորաբար, կամ մետաքսեայ կտորից՝ փոքր մասամբ, շրջադնտ: Գլխներին կապում են սպիտակ քառակուսի թաշկինակ, եռանկիւնաձև ծալած: Գործ են ածում, դարգարանքի համար, ոսկիների շաքեր ճակատի վրայ, կամ արծաթեայ դարդեր. բազուկների և ոտների վրայ կրում են ապարանջաններ արծաթից կամ ուլունքներից, յաճախ կարմիր մարջանից:

Տները առողջապահական, մաքրութեան տեսակէտից այնքան էլ գոհացուցիչ չեն. որպէս նրանց նիստ ու կացը, տների կահաւորութիւնը անպաճոյճ է և աղքատ, բաղկացած խտրից, փալատից և մի քանի նոսր մինդէրներից՝ բարձերով: Կահ կարասին պարզ է և հասարակ. ամանները՝ հողից և պղնձից: Որպէս խմիչք, բացի ջրից գործածուած է միայն թէյը առաւօտ և երեկոյ անխտիր. ոգիլից ըմպելիները արդելուած են բնականաբար. իսկ գաղտնի ամենեւին չի գործածուած:

Ուտելու հացը պատրաստուած է բնոյնանրապէս կորեկից և բառիկ կոչուած մի տեսակ ծառի պտուղներից, որ չորացնելով ալիւր են աղում և նրանից հաց պատրաստում. շատ բշերն են որ ցորենի հաց են գործածում: Հացից բացի՝ որպէս սնունդ՝ գործածուած է միս, կաթնեղէն, բանջարեղէն և բրինձ:

Ընտանեկան կեանքի կազմակերպութիւնը այնքան էլ բարդ չէ Շէմդղինանի քիւրդերի մէջ. աղջիկ փախցնելու նախնական սովորութիւնը տակաւին պահպանուած է այստեղ. կապում են շատ մօտիկ ազգակցական արիւնակցական ամուսնութիւններ (3—4 պորտ). ամուսնանում են յաճախ առանց մղկիթ մտնելու: Տղամարդ և աղջիկ (յաճախ շատ մանկահասակ տարիքում) բաւական է որ իրանց մէջ համաձայնին — ամուսնական կապը այլ ևս կնքուած պէտք է համարել: Սովորաբար աղջիկները ձեռք են բերում զբամական պայմաններով, սակարկութեամբ, մի տեսակ առուտուելով՝ ծնողների հետ: Շէմդղինանցի քուրդ կինը զեղեցիկ է, վայելչակազմ և կին-

սունակ, միաժամանակ և չարքաշ. նա չարքաշ է մեծացնում և իր զաւակին:

Շէմզդդինանում ոչ մի ուսումնարան գոյութիւն չունի, չէնայնքան որ ինքը՝ Շէյխը լուսամտի և կրթութեամբ մարդ է. տեսայ միայն մի աջագուրկ քիւրդ մուլա-կարգացողի, որ 15-ի չափ 10—13 տարեկան քիւրդ երախտներ գլխին հաւաքած՝ մի զետնափոր տան կտուրի վրայ տրարերէն զուրանից դասեր էր տալիս: Պէտք է գիտնալ, որ շէմզդդինանցի քրդերը պատկանում են իսլամի զաւանութեան սիւննի ճիւղին և կոչւում՝ «Նախալարանդի»: զէրվիշութիւնը իսպառ արդելուած է:

Շէմզդդինանի պտղատու ծառերից կարելի է յիշատակել ընկոյզը, մեծ քանակութեամբ թթնիներ, որոնք տալիս են խոշոր պտուղներ. ալուչա (սալոր), դամն, թուզ, նուռ, խնձոր և խաղողի մեծ բարունակներ (որթեր) սակաւաթիւ:

Շէմզդդինանի զաւառը արտադրում է արմաթներէից՝ ցորեն, կորեկ, գարի, տարեկան, բրինձ, գխտոր և այլն, և որ գլխաւորն է թութուն (ծխախոտ), որ Շէմզդդինանի արտահանութեան առատ և ամենաշահարէր առարկան է կազմում: Շէմզդդինանի ծխախոտը, մանաւանդ նրա ամենահոշակաւոր տեսակը, «Հաւլուանի թութինը» աղնիւ և թաւանման դեղին թերթիկներով՝ ուղարկւում է մեծ քանակութեամբ Թիւրքիայի ներքին գաւառները, Պարսկաստան, և մինչև իսկ Ռուսաստան, մեծ յաջողութեամբ մրցելով թրքական միւս ծխախոտների ամենալաւ տեսակների հետ, ինչպէս «սամսը»: Ծխախոտի արտահանութիւնը մասնաւորապէս Շէմզդդինանի շէյխի խոշոր եկամուտների ամենամեծ աղբիւրներից մէկն է կազմում, որը ստացւում է նրա խնամով մշակել տուած բազմաթիւ ծխախոտի արտերից:

Շէմզդդինանի լեռների վրայ, անտառների մէջ թափառում են վայրի կենդանիներից արջ, դայլ, խոզ, կուզ և աղուէս, նշանաւոր իրանց ագնիւ մորթիւներով. կայ և մեծ քանակութեամբ օձ. ընտանի կենդանիներից՝ ձի, եզ, գոմէշ (սակաւ) ոչխար և այծ:

Արժէ այժմ մի քանի խօսք էլ Շէմզդդինանի Շէյխ-Մահմադ-Սըղդլիի մասին ասել, որի անունը յօդուածիս մէջ քանի անգամներ յիշատակելու ասիթ ունեցայ: Սա անցեալ դարու վերջին քառորդին Քիւրդիստանի այս մասերում իշխող և իր արշաւանքներով մեծ հռչակ հանած Շէյխ-Իբրաղուլանի փոքր որդին է. անգլանիկը, որ մինչև այժմ էլ տալրում է կոչւում է Շէյխ-Արդիւլ-Քադըր՝ իր հանգուցեալ հօր հոգեւոր իշխանութեան իսկական ժառանգը, որի ձեռքից սակայն կրբասեր եզրայրը Շէմզդդինանի շէյխական աթոռը յափշտակելուց ի

վեր ապրում է առանձնացած Նմէնի կողմերում, մահմեդական-
ների սրբազան, նուիրական քաղաքներին մէկում, մի տեսակ
աքսորականի նման թիւրք կառավարութեան ձեռքով:

Շէյխ-Մահմադ-Սըղըղլի կրօնական իշխանապետութեան
ուսմանները շատ ընդարձակ են և տարածուած են Բաշգալէի,
Ուրմիի, Մուսուլի և Բաղդադի, Քիւրդիստանի այդ ընդարձակ
երկրամասի մէջ ամփոփուած, բազմաթիւ քիւրդ տարրերի վը-
րայ: Շէյխը, իր ձեռքի տակ ունի 3500—4000 լաւ զինուած
քիւրդ զոլամներ, որոնք շատ հմուտ են և ճարպիկ՝ զէնք գործ-
ածելու մէջ, պատրաստ՝ իրանց հոգևոր իշխանաւորի առաջին,
թեթեւ մէկ ակնարկից ոտքի կանգնելու և անձնուիրաբար ծառա-
յելու նրան: Նրա անհանգիստ, զինուած ձիաւորները անհան-
գըստութիւն են պատճառում յաճախ պարսկական սահմաններին:
Սովորական հրացաններն են, մարտինին և բերդանը, և սակաւա-
թիւ հին շէշիանաները:

Տակաւին Նէհրի՝ Շէյխի աթոռանիստը չհասած՝ շատ
բաներ, աւելի լաւ, քան թէ վատ, լսել էի Շէյխ-Մահմադ-Սըղ-
ըղլի մասին, որոնց մեծ մասը յետոյ կարողացայ ստուգել:
Նախ որ նա մի կըթուած և լուսամբիւ մարդ է, եղել է Կ.
Պոլսում երկար ժամանակ, և բուն հետաքրքրութիւն է ցոյց
տալիս զէպի ներքին և արտաքին քաղաքականութիւնը. ծան-
րազուլի է, խորամանկ, ճարպիկ և դիպլոմատ:

Նա համարեա կիսանկախ է և Քիւրդիստանի մի կարեւոր
և բարեբեր գաւառը՝ Շէմզգիւնանը գտնուած է գրեթէ նրա ան-
միջական իշխանութեան տակ, այնպէս որ թիւրք կառավարու-
թեան, Նէրիում նստող ներկայացուցչի, գաւառական կայմա-
կամի պաշտօնը համարեա անուանական նշանակութիւն ունի
միայն, և օսմանեան ղինաստիայի հեղինակութիւնը շատ թոյլ է
այս վայրերում: Շրջակայ ամբողջ քիւրդ տարրը յարգում է իր
մեծ կրօնապետին և նրա կամքը, իսկ հակառակորդ քիւրդ շէյխ-
երը օր. Բարգանայի շէյխը, Շէրէֆ բէկը և ուրիշները խո-
նարհում են նրա անյաղթելի ոյժի և բարձր հեղինակութեան
առաջ: Դեռ ճանապարհին շատ անգամներ էր ականջիւ ընկել
քիւրդերի սովորական, ամենասրբազան երգումը մեծ Շէյխի
գլխի վրայ—«Սերէ շըլս-Մահմադ-Սըղըղլի»: Նրա ձեռքը դի-
պած ամեն մի առարկայ, ամեն մի իր նուիրական է քիւրդերի
համար. նրա տան հացը ձեռք է բերուած և ուտացնում վախե-
ցողին, որպէս բուժիչ թալիսման, և տրուած ամուլ կնոջ, կամ
նրա բարձի տակը դրուած, որպէսզի կարողանայ ամուլթիւնից
ազատուել:

Նրա իշխանութեան սահմաններում անկարգութիւնները

շատ հազուադէպ են. քրդերի մէջ եղած լուրջ ընդհարումները, տարածայնութիւնները կարգադրւում են ըստ էության, միայն նրա դիւանատնից իսկ արձակուած կտրուկ կարգադրութիւններով, հրամաններով: Շէմզդինանը առանց չափազանցութեան կարելի է համեմատել Շվէյցարիայի հետ. իր տեղագրական վայրենի, լեռնոտ պայմանները յիշեցնում են դաժան կլարիսն ու Ռէտերվալդէնը. այստեղ, հակառակ օտմանեան զփխեմ ընթիմին, տիրող կարգ ու կանոնը, անձի, գոյքի, սպասուի, սեփականութեան անձնականութիւնը և ազատութիւնը յիշեցնում են Հելուտական երջանիկ Դաշնակցութիւնը: Ինչպէս սովորական է ասել, Շէմզդինանի սահմաններում «ոսկին գլխիդ վրայ դիր և ման եկ»: Նրեկոյեան ուշ ժամանակ, գրսում ման գալիս, յաճախ է պատահում, աւանից մինչև մի ժամ հեռաւորութեան վրայ, անտառում, ձորակում տեսնել, բաց տեղում ձգուած աշխատութեան գործիներ—ուրագ, սղոց, բահ ու մինչև իսկ շորեր առանց հսկողութեան, որպէսզի առաւօտները կարիք չունենան նոյները շալակած, իրանց աշխատանքի վայրը տեղափոխելու: Այստեղ պէտք է աւելացնել, որ շէմզդինանցին հարուստ է և առ հասարակ բարեկեցիկ: Նոյն բարեացակամ վերաբերմունքն ունի տեղացի բիւրդ տարրը և զէպի որևէ իցէ հայ, կամ օտարագգի:

Թիւրք կառավարութեան ձեռքով կազմակերպուած 94—96-ի հայկական սպանդանոց-կոտորածի օրերում Շէյխի սահմաններում ոչ միայն ոչ մի հայ չի սպանուել, այլ ընդհակառակն ի հարկին պաշտպանուել և ապահով ապաստանարան է գտել. ափսոս միայն որ այստեղի քիւրդ տարրը զուրկ է առհասարակ ամենատարրական կրթութիւնից. ոչ միայն Շէմզդինանի կենդրոնում, ինչպէս տեսանք, այլ և ամբողջ ընդարձակ սահմաններում չկայ և ոչ մի դպրոց. այդ բանը նպաստում է անշուշտ Շէյխի աւանդական հեղինակութեան միշտ իր բարձրութեան վրայ մնալուն և նրա կրօնական, թէօկրատիական պրէստիժի յաւիտենական պահպանութեան՝ իր հպատակների աչքում:

Այնքան էլ անմատչելի չէ Շէյխը. յաճախ, ամառուայ հողանակներում մանաւանդ, նա դուրս է գալիս իր նորաշէն, հոյակապ բնակարանից, և գնում իր տան հիւսիսային կողմը՝ ձորակի բերանը գտնուող մեծ չինարի հովանու տակ շինուած սաքիւի (terrasse) վրայ հանգստանալու և իր սովորական նաւագիւն ծխելու: Այստեղ կարող է նրան դիմել ամեն մի քիւրդ իր կարիքների և խնդիրների մասին նրան աղերսելու: Հետաքրքիր է այն՝ որ Շէյխը իր սահմաններում և քաղաքում տեղի

ունեցող ամեն մի պատահարի, անց ու դարձի մասին հանգամանօրէն ծանօթանում է:

Առաջակական հարստութիւն ունի Շէյխը. բացի Նէրիի խանութների առուտուրից և շահաբեր հկամուսներից, ունի խանութներ և Ուրմիում, և անսահման կալուածներ իր երկրի զանազան մասերում: Թող որ, ինչպէս վերեւումն ասացի, ծխախոտի արտահանութիւնը և այլն, նրա շահու գլխաւոր աղբւրներն են, Շէյխը ձեռնամուխ է լինում և բազմազան շահադիտական ձեռնարկութիւնների. դեռ սրանից մի քանի տարի առաջ զիմեւ էր թիւրք կառավարութեան՝ Վանայ ծովի վրայ շոգենաւ բանեցնելու մոնոպոլը ձեռք բերելու համար: Սակայն, երկար բանակցութիւններից և ձգձգումներից յետոյ, Բ. Դրան կողմից անհետեանք թողնուեց նրա խնդիրը *): Իր սեփական ծախսով է անցկացրած և Գէվէդից-Շէմզիլի նան երկարող հեռագրական գիծը:

Ճանապարհորդագրական յօդուածս վերջացնելուց առաջ հարկաւոր եմ համարում ասել մի քանի խօսք էլ այն թափառական Կարաջների (բօշայ) մասին, որոնք իրանց ամբողջ հայրենիքը՝ մի կտոր փալատ, մաղ շինելու գործիքները շալակած, մի քանի կահ-կարասիներ և մադեր էշի վրայ բարձած՝ թափառում են ամառը այս կողմերում:

Նէրիի շինութիւններից 50 քայլ հեռաւորութեամբ գետի ափին, մի տափարակ գետնի վրայ, այդ ժամանակներում մի քանի օրուայ համար միայն իջևանել էին Հարկի կոչուած մահմեդական ցիզանների մի թափառական խմբակ:

Գարունը բացվելուն պէս, երբ ձիւնը սկսում է քիչ-քիչ հալուել, սրանք դուրս են դալիս, կոռնկների նման, իրանց ձմերոցից՝ Բաղդադի և առաւելապէս Մուսուլի սահմաններից և փոքր խմբերով՝ բազկացած 10—15 ընտանիքից, մի գլխաւորի ղեկավարութեամբ, սկսում են շարժուել դէպի այս կողմերը, օրական ապրուստը ձարելու դիտաւորութիւնով: Ոսում են ֆարսի և արաբերէն լեզուների աղճատուած բարբառները: Ունեն և գաղտնի՝ պայմանական լեզու, ինչ որ ուրիշներից, օտարներից շատ դադտնի են պահում: Կրօնական գաւանդութիւններն անորոշ է. հապուստները տեղական քրդական շորերից այնքան էլ չի տարբերում. աչքի է ընկնում նրանց շորերի մէջ ընդհանրապէս կապոյտ գոյնը. հագած են շատ աղքատ, ցնցոտիներ միայն, համարեա կիսամերկ. մանաւանդ կանայքը ստաբորիկ են և թափառելիս իրանց մերկ երախաները տալ-

*) Տես իմ «Վան-Տոսպ» յօդուածը, «Մուրճ», 1903, № 6.

բազմաթիւ մէջ դրած կրում են իրանց կոնսակներ Վրայ. մազե-
րը արձակ և վայրենի տեսքով: Մարդկանց շորերը կազմում են
ողորմելի ներքնակը, վրան թաղիքէ կոտորիկ, և մազից լայն
շալվար. գլխները արախչի գրած, և շուրջը կապոյտ աղաբա-
նիներով փաթաթած, իսկ ոտները չարուխ անցկացրած, որ
ոտների վրայ ամրացրած է կաշիէ, կամ մազէ թելերով: Արեւառ
և սեպած երեսները՝ ընդհանրապէս ծաղիկ հիւանդութեան
խոր հետքեր են կրում:

Նէրիի մօտ իջկանած՝ 7—8 քառակուսի մետր միայն տա-
րածութիւն ունեցող գետնի վրայ խոնուել էին 40—50 Հար-
կիներ, ծեր, երիտասարդ, այր, կին, աղջիկ, երախայ միմեանց
վրայ բոլորակ շրջան կազմած. իրանց կողքին տեղաւորել են
5—6 էշ, 2—3 կով, մի քանի այծ, մի քանի շներ. աւելացրէք
սրանց վրայ և մի արջի ձագ և պատկերը կատարեալ կը լինի:
Իսկ այդ բազմազան զանգուածից բարձրացած ժխորը ներկա-
յացնում էր լսողութեան համար մի զարհուրելի խլացուցիչ
կոնցերտ: Այդ անտանելի խառնաշփոթութեան մէջ մինչդեռ
կանայքը կաթսաների մէջ մի քանի ափ սև ալիւր հունցած,
հացի համար խմոր էին պատրաստում թխելու համար օջախ-
ների վրայ դրած թիթեղներով (սաջ), միւս կողմը արհեստա-
ւոր տղամարդիկ իրանց շարժական դէզգետանների վրայ դրա-
դուած էին իրանց բազմապիսի արհեստներով, շինելով մազ,
փայտեայ օրօրոց, երախաների համար փայտեայ խաղալիքներ,
որոնց ներկում էին գոյնղգոյն և վաճառում իրանց իջկանա-
տեղի մերձակայ շէնքերում: Հարկիները իւրաքանչիւր իջկանած
վայրերում մնում են ոչ աւելի քան 8—10 օր, որից յետոյ թող-
նում են իրանց հնացած հայրենիքը և շարժւում են տնով տե-
ղով դէպի ուրիշ տեղեր, ուրիշ աստղերի տակ նոր հայրենիք
որոնելու, իրանց ողորմելի գոյութիւնը պահպանելու համար:
Տեղացի քրդերը սովոր են հաշտ աչքով նայել ընտելեան այս
խորթ, անժառանգ, թափառական, անհայրենիք զաւակներին
վրայ: Այս կողմերի ցիլանների թափառելու սահմանները հաս-
նում են երբեմն արեւմուտքից մինչև Զուլամերիկ-Բաշգալէ, իսկ
արեւելքից մինչև Պարսկաստանի արեւմտեան սահմանները:

ԿԱՐՍԵՑԻ

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Բաղմակարօտ եղբայր Դէորդ.

Ես քո նամակն ստացայ. բայց չկարողացայ նորա պատասխանը գրելու խիստ յիմար պատճառաւ. բայց և այնպիսի յիմար, որ յաճախ ինձ արգելք է եղել ուրիշ անգամներ ևս սոյն անձղութիւնը անելու. կ'հաւատամ թէ ոչ. ես 10 կողէկ փող չունէի այդ մի շարաթուայ մէջումը. զու կ'ասես՝ «այդ անհաւորին է. ապա ինչպէ՞ս կառավարվում ես ամբողջ տպարանով»։ այդ է ահա զազանիքը, որով ես կարողանում եմ Պետրբուրգի պէս քաղաքումը զործ յառաջացնելու հեռի ամենայն մարդկային օգնութենէ։ Հատուկտոր նպաստը, որ այս ահագին միջոցումը, ստացայ ժամանակ առ ժամանակ մի քանի անձանցմէ՝ գրեթէ ոչինչ է, եթէ բաղդատելու լինեմ, և այլն ինչ և իցէ, թողնենք այս։

Ահա քեզ 100 օրինակ պահանջած Ռօբինզոնէն. մինչև այժմ չ'ստացայ նոցա վարձն, որ դու ամիս յառաջ խոստացել էիր հասցնելու, և չգիտեմ՝ ե՞րբ կարելի է ստանալ. բայց խնդրեմ շուտով փոշտ ձգես և ուղարկես ինձ, որ ես շատ չարաշարվում եմ անփողութեամբ։ Ինձ մի կարծիլ ամենազօր կարողութեամբ, որ ամեն ինչ կարող է կատարել։ Մեր Թիմուր-կանն չի գաղարում մեծ մեծ խոստմունք անելու. բայց ահա մի տարիից առիլի է որ միայն մի նամակի արժանի գտաւ ինձ և մեր ուխտը. դնա ու դրանց պէս մարդոց հետ բան յառաջացուր։

Ահա քեզ մեր նոր մանր տառերով տպած կէս թերթ. այդ մեր ուխտի նշանաւոր արգասիքն է լինելու, որոնց վրայ ես քեզ արդէն գրել եմ։ Դու ինձ գրում ես որ հայք մեր գործի վրայ նայում են իբրև մի երեխայական խաղի. կարծեմ, եթէ այս բառարանը տպած աւարտած տեսնեն, կ'փոխեն մեր վրայ իւրեանց յիմարական և անհիմն կարծիքը։ Ես քեզ ուղարկեցի 3 օրինակ, որոնցմէ մինը կ'ուղարկես Ղզլար համ վրայ կամիս, և խնդ-

րես որ ստորագրութիւն անեն իւրաքանչիւր օրինակի 1,40 կպ. այս բառարանը $1\frac{1}{2}$ չափ աւել լինելու է Իրիցփոթեանից, և տեսնում ես որքան արժան նորանից. իսկ յետ տպելոյ դինը կ'լինի 3 մանէթ, 50 կոպէկ, կամ 4 մանէթ. երկրորդը քեզ կ'պահես, և երրորդը կ'ուղարկես Ստաւրապօլ գիրէքտօրին և կ'յայտնես մեր պայմանը և կ'խնդրես նորա խորհուրդը և օգնութիւնը:

Իմ հասցէն ուղացիր. ահա

У Синяго моста, въ д. Мановскаго
въ армянской типографіи.

Խոնարհ եղբայր քո Ռ. Պատկանեան

1858. փետրուարի 1

Ս. Պ. Բուրգ.

Հոգեհարազատ եղբայր իմ Գէորգ.

Նամակագրութիւնդ ինձ հետ յանկարծ կասեցրիր և ինձ թողիր մի այնպիսի անորոշ վիճակի մէջ, որ ես նմանեցնում եմ խրտնուած ձիու յանկարծ տեղումը սարսափած և դողողալով մնալուն, որ չգիտէ՝ յառաջ վազէ, յետ երթայ, աջ թէ ձախ խփէ, թէ... կանգնէ տեղումն: Դու ինձ վերջի (ուզում եմ ասել երկու ամիս առաջ գրած) նամակումդ ասել էիր թէ շուտով կ'ստանաս նամակ ևայլն... Բայց շուտը, շատ ուշ եղաւ և դու տող մի բան չի գրեցիր. այնինչ Քերովբէն 3 թէ 4 նամակ արդէն ստացել է քեզմէն: A propos, այդ լինչ վէճ է՝ ձեր մէջ. հաւատան Գէորգ, որ ես շատ թոյլ գաղափար ունէի բուժարտարութեան վրայ, որ յայտնուեցաւ երկու վերջին գրութեանդ մէջ՝ մինչև անգամ խորհուրդ տուի Իգմիրեանցին, որ բերի տայ քեզնից այդ թղթակցութիւնը, բայց լինչ էր իմ նպատակը, ես քեզ անշուշտ կ'գրեմ: Միայն այսբան իմացիր՝ որ քու գրութեանը ես ուրիշ գովասանք չի գտայ, բայց եթէ նմանեցնել Եֆ-линскій переписка-ի հետ. բայց ես պարտք համարում եմ ինձ համար այդ առարկայով հրկար խօսք բանալ քեզ հետ. այժմ բոպէ չունեմ ազատ միջոց: 15-ին խնդիրքս կ'տամ և կարծեմ ամսոյս վերջին կ'աւարտեմ քննութիւնս (կամ լաւ կամ...): Բայց եթէ քու անմեղ աղօթքը ուրիշ բանով վերառաքելու չէ դէպ երկինք, ուղղէ ուրեմն իմ յաջողութեան համար: Լսեցի ձեր ընկերութեան մասին. յետոյ կ'խօսենք: Եթէ զրեւս ես ուրախու-

թեամբ պատրաստ եմ լսելու: Աւելորդ եմ համարում խնդրել այն ինչ արդէն խնդրել էի. գոնէ տո՛ւր ճիշտ տեղեկութիւն, այն, թէ ո՛չ: Չկարծեմ որ այլ ևս այնքան կարօտ լինիմ օգնութեան, որովհե-տեւ այժմ իմ վճռական ժամերն են:

Քո միշտ մտերիմ Ռափայէլ .

Սիրելի եղբայր Գէորգ.

Եթէ ես չեմ սխալում, փետրուարի 22-ին գրած նամակս վերջինն էր և այնուհետեւ յամառութեամբ լսել էի և 2 թէ 3 նամակը անպատասխան թողի. դորա պատճառը, որքան էլ վրուսդ ջարդել ուզէիր չէիր կարողանալ հասկանալու, մինչև ես ինքըս չգրէի և չպարզէի քեզ. և ինչո՞ւ էի այդպէս անում. լսելով իմ չքմեղութիւնը իհարկէ կը տատ ինձ իրաւունք: Յունուարից ես սկսեցի աւարտման քննութեան պատրաստուելու, և գրեթէ օրն ի րուն տանն էի նստած դասագիրքներու և տետրակներու վրայ, որ այս ամսին տամ աւարտեմ համալսարանական ընթացքն. խղճատանքս ինձ ասում էր, որ բաւականին պատրաստ եմ: Ապրիլի 15-ին տուի խնդիրը, որ ինձ թոյլ տան քննուելու: Մի շարաթից պատասխան տուին որ ես ոչ դուրս գալու, այլ 3 կուրս անցնելու քննութիւնը պիտի տամ, որովհետեւ ուսանող եմ և ո՛չ ազատ լսող և իմ $1\frac{1}{2}$ ազատ ուսանողութիւնս ոչինչ չեն համարփ, այլ 46-ից են սկսում: Ես ասացի որ՝ ես ֆօրմա հագայ ոչ այլ ինչ պատճառաւ (ինչպէս մտնելու ժամանակ խնդրում բացարձակ յայտնել էի) այլ միայն որ համալսարանի հովանաւորութեան տակ մտնեմ: Ինչ խօսքս երկարացնեմ, ասացին որ 2 կուրսից աւարտել չէ՛ կարելի, եթէ կամենում են մի կերպով օգնելու, այդ ժամանակ պարտական եմ գոնէ մինչև գալ զեկտեմբեր ազատ ուսանող լինել և ապա վերջին քննութիւն տալ: Այսպէս իմ ցանկութիւնը քեզ անուկընկալ ուրախացնել, կորաւ ինձ համար և ես այժմ ընկղմած եմ խորին յուսահատութեան մէջ: Ի հարկէ մնում է ինձ գըլուխս ծոկն ռուսաց անօրէն օրինաց առաջ: Բայց ռրքան չարչարանք կայ առաջիս:

Ես կամենում էի անդադարաւ քու հետ տեսնուել. ողջը մէկ է՝ ո՞վ մեզանից կամի գայ միւսի մօտ, տպաւրանի համար երկար խօսելու: Դու գիտես որ Թիմոքեանը միանգամայն ուրացել է մեզ. նա կարծում է թէ $\frac{1}{2}$ տարի մի անգամ մի խելացնոր նամակ գրելը մեծ առաքինութիւն է, որոյ համար մար-

դիւ զգալնեայ պսակ պիտի ոլորեն նորա գլխին. նորա բոլոր ազգասիրական սխրագործութիւնը այդ եղաւ. և ես (ճշմարիտը ասեմ) խիստ ափսոսում եմ որ ես յիմարացայ նորա խոստմունքին հաւատալով: Էնֆրիաջեանցի կասկածը նմանապէս ինձ մեծ զգալի փնաս հասցուց: Իսկ պր. Իզմիրեանցի մի չոր մամուլը առանց ուրիշ բաներու խիստ անբաւական էին բան յառաջացնելու համար: Պէտք է իմանաս որ տպած տաղարաններից միայն 25-ի փող եմ ստացել, իսկ և Ռօբինզոնի—45 (որոցմէ 30-ը քեզանից): Թողնենք այս յիմար ծիծաղելի առարկան, որոյ մէջ ես էի թշուառ դերասանը:

Իմ դրութիւնը այս ժամանակ խիստ ցաւալի է. եթէ մի կերպով ուզում ես օգնել, զոհ չեմ խնդրում. այս ուղարկած ձեռագիրս մինին ծախէ ինձ ձեռնտու պայմանով: 10 ամսուայ աշխատանք է. գերմաներէնէ և գաղղիերէնէ թարգմանած, առարկան հետաքրքիր, ինչպէս ինքդ կարող ես իմանալ կարդալով. լեզուի համար միայն այն կ'ասեմ որ մարդկային հնար չի կայ առել լաւ հայերէն խօսելու միջին ոճով. ես շատ անգամ զուրս եմ գրել դորան. ինչ ծանօթ ունեմ, թէ ուսում առած թէ տգէտ, գրեթէ ամեն քաղաքից, ամենի տաղ կարդացել եմ, ամենի հետ խորհուրդ եմ արել և ամենի հետ յարմարուել եմ. շատ նոր ոճեր կան դորա մէջ, որոնք մինչև այսօր տիպ չեն մտած, որոնք ժողովրդի բերնումը թագցրած գանձ էին, ես մտցրել իմ դորա մէջ: Խնդրեմ, դու ևս կարդա, մի քանի այդտեղի ուսանողաց ևս տուր կարդալու և ձեր կարծիքը յայտնեցէր ինձ թղթով, կամ նոյնիսկ ձեռագրի լուսանցնելու վրայ մատիտով նշանակեցէր ձեր կարծիքը:

Գի՛նը նշանակում են 150—250 (միթէ իմ ամսուայ աշխատութիւնը չարժէ 25 մանէթ):

Խոնարհ Ռափայէլ Պատկանեան

Պր. Խոջայեվի հետ տեսնուեցայ, լաւ տղայ է. աստուծով շուտով բանի կը կաշի:

Մայիս 1858.

Ձեռ կարող երեակայել, քաղցրիկ իմ Գէորգ, թէ ի՞նչպիսի բերկրանօք թափ տալիս է սիրտս, երբ առնում եմ ձեռքս գրիչս, որ մեր տարօրինակ վիճակումը միակ բարերար միջոցն է հոգեւորապէս իրար հետ կենցաղավարելու, իրար առաջ առատօրէն թափելու, հոսելու միմիանց սիրոյ զգացմունքը, վիշտը ուրախութիւնը, տաղնապը, ցնծութիւնը, լացը և ժպիտը, միով բանիւ՝ քանի մի բոլորէ, ժամ, օր և... կեանք միանգամայն անց-

նեղու ըղձալիի հետ. հա. ես իզուր եմ գանգատիլ շատ անգամ իմ բաղձն՝ մոռանալով որ քեզ պէս բարեկամ ունենալն միևնոյն է, որ ունենալ ամեն գանձը, երջանկութիւնը վայելին է. ես մեղաւոր եմ նախախնամութեան դէմ, բայց արդարանքը, պատճառ չքմեղութեան ևս ունիմ. բացի քեզ ես չունեմ բարեացակամ բարեկամ, բայց քեզ... քեզ Գէորգ, շատերն են սիրում. միթէ չէի կարող երկրայել, որ դու այդ զեղուն սիրոյ մէջ իրենմն մտիցդ հանում լինիս նորան, որի քու կորուստը անդարձ անվարձատրելի է: Անցեալ նամակս իր պահանջմունքով կոշտ էր, բայց չի հասկացար միթէ, ի՞նչ բան թելադրած պիտի լինէր ինձ այն վշտալի տողերը. նախանձ, կ'ասես.—հչ, չարակամութիւն, կ'ասես.—կվիրաւորես ինձ, վրէժ, կ'ասես.—ամօթ կը լինի քեզ: Բայց ի՞նչ: Այն ինքզ հասկացիր: Հիմի երևակայէ թէ ինչպէս ինձ ուրախացրած պիտի լինէր այն տարօր/մալ նամակդ, որ գրել էիր ամսոյս 7-ին:

Տարօրինակ ասացի. գիտե՞ս ինչո՞ւ: Լսիր, (մինչև այսօր չգիտեմ թէ ի՞նչ բան է. և խնդրեմ անպատճառ մեկնես): Հասցէդ իմ վրայ էր ուղղուած ոռոսերէն, բայց հայերէն խնդրում էիր որքան կարելի է շուտով հասցնեմ Իզմիրեանցին: Կ'ընչանալէ ես պարտաւոր էի իսկոյն (չբացած ծրարագիրը) հասցնել քու և իմ բարեկամին—Իզմիրեանցին: Ես քու խնդիրքը անյաշաղ կատարեցի. ստանալս և ծառայիս ձեռով ուղարկելս կէս րոպէի բան էր: Վրայ անցաւ 7—9 օր, դարձեալ ստացայ Թիֆլիզից նամակ, որ ուղղած էր նմանապէս Իզմիրեանցի վրայ. այն ևս ծառայիս ձեռքով ուղարկեցի նորան. յանկարծ տեսնեմ ծառաս բերում է պր. Իզմիրեանցէն մի ծրար, որի միջումն գտայ այն նամակը. և ի՞նչ կարգած. խնդրում ես որ լեղապատուտ տանեմ մի, ինձ անյայտ, նամակ, որ իբր թէ քեզանից պարոն Իզմիրեանցին, և սպառնում ես թէ՛ ուշանալով շատ ֆլաս ես կրելու: Ես մինչև ցայժմ երկմտութեան մէջ եմ. ի՞նչ նամակ, ի՞նչ լեղապատառ տանել, ովից, ինչո՞ւ: Ա՛յ քեզ տրաքոց. կըրկնում եմ մինչև այսօր կրկնելով Աբովեանի խօսքը: Վաղուց է որ Իզմիրեանցին տեսած չեմ, և քու խնդիրքը ինձ համար մի անլուծանելի առեղծուած է դարձել: Ահա քեզ պատճառը, որ այսօրան ժամանակ պատասխան չէի գրում. նաև կարծում էի, որ դո՛ւ վիրաւորուել ես իմ առաջարկումէն:

Դու Քերորի համար քու նկատմամբ մի անորոշ НАМЕКЪ ես անում, բայց մանրամասն չեմ գրում և յայտնում. միթէ աւելորդ ես տեսնում ինձ հետ բացասիրտ լինելն. կարծես թէ իմ կողմանէ այդպիսի ընթացք չեմ նկատել. դրէ, խնդրեմ. գոնէ ես կը հանգստանամ որ՝ միայն ես չեմ նորամէն իրաւացի

զանգատաւորն,—այդ անպիտանէն: Ես քեզ գրել էի որ զգոյշ կենաս նորա լրտեսէն, որ ինչպէս Կեկատում եմ, քեզ հետ մօտ յարաբերութիւն ունի: Այդ *плутешка*-ն 10 օր չի կայ որ ինձ, երևի թէ եղբօրը յորդորանքով մի այնպիսի նամակ էր խաղմզել, որոյ պատասխանը սաստիկ պէտի ֆնասէր ինձ, եթէ ես նրանց պահանջմանց համեմատ՝ միամիտ և բացասիրտ լինէի. բայց ես սաստիկ սառը պատասխանով հասկացուցի որ Քերորը սրտակիցը իմ շէմքէն շատ հեռի պիտի լինի. բայց և այնպէս իմ նամակը (կարծում եմ) բայց գուցէ և պատճէնը լինի (ճշտիւ չգիտեմ) յայտնուեցաւ այստեղ, եղբօրը մօտ. և շատ գոհունակ եմ Վահագէն, որ զգուշացոյց ինձ սառը ընդունել նորա *сентиментальный* նամակը: Իմ մասին ոչ մի խօսք մի ասիլ նորան, ոչ լաւ, ոչ վատ. իբր թէ մենք ամենեւին յարաբերութիւն չունենք: Ամբարդանեանցին ասա. նա թող հանգիստ և անզորը լինի իմ ժառին. ես իմ առարկաներով այնպէս եմ պարապում, որ կանդիդատութիւնն արժանի վարձն պիտի լինի (եթէ Աստուծով արժանանամ) իմ այսքան քրտինք և անքուն կատարած աշխատանցս: Նա ինձ խրատում էր բար...¹⁾ պարապել: Շնորհակալ եմ: Ես տնից դուրս չեմ գալի ահա 4-րդ ամիսն է, ուրեմն քաղաքական լուրեր քեզ չունեմ յայտնելու. բայց մասնաւորներէց այս միայն յայտնի լինի, որ Քերորը լաւ շորեր հագած, պատուական *биржевой* կառքի մէջ նստած *разъѣзжается* ամեն հայերու մօտ—ինչո՞ւ—որ ամեն տեղ տարածէ թէ ես հայերէն չգիտեմ. Դու *баловень судьбы*, Վահագը *выскачка*, ինքը—հրաշալի երևոյթ 19 գարուն: Հաւատով եմ արդեօք կը հարցնես: Իմ պատասխանը. Ուր որ լսվում է ոսկիի ձայնը, ճշմարտութիւնը լսում է: Գօգօլի ասածով, թէ ես նա իւր փողը ոչովին չի տալ, բայց մարդուս ընտելութիւնը այնպէս է, որ ահաւայ խոնարհում է իւր ծնկները ոսկի հորթի առաջ (որքան մտիս է գալիս): Սերորը... Սերորը... ախ, էլ մի հարցնիլ, ես չեմ տեսել. կարգացած ես չեմ այսպիսի կեղծաւոր... Էհ, տեսնում եմ որ նամակը խայտաճամուկ է դարձել չարագործներու նկարագրութեամբ: Թողնենք այս: Գրէ ինձ շուտ, շուտ, բայց ես կը լռեմ առ ժամանակս. պէտք թողում և սկսեմ գասեր սերտելու: Ներիւր և մնաս բարեւ:

Մ'նամ քեզ մինչև մահ հաւատարիմ Ռափայէլ:

P. S. Եթէ խոստմունքդ կատարէիր, հաւատացիր շատ կ'ուրախացնէիր ինձ. լսել եմ որ դու մի պատուական ուսանող եղբայր ունիս. շատ բարեւ նորան ինձմէն և Վահագէն: Ամբարդանեանցին, իմաստապահանին շատ բարեւ:

Ս.-Պ.-Բուրդ.

Հոկտ. 18. 1858

1) Այստեղ պատուած է.

Դ Է Պ Ի Ա Ն Ի *

Որպէս մի գեղանի ու վշտահար այրի՝ որ այնքան ծանր կորուստներից յետոյ, իր վերջին գառն խօսքը զեռ չի ասել երկնքին, կանգնած է նա, այն Մայր եկեղեցին, մենաւորութեան մէջ հոյակապ, իր աւերածով՝ աղէտաւոր, կանգնած է հէնց Ախուրեանի ափին և լալիս է նրա հետ դարերի ցաւը: Փշրուած քարերի բեկորներով շրջափակուած մի փոքրիկ բակ ունի, ուր լեռնային խոտեր ու թփեր բուսել են ու իրար գալարուել վայրի քմահաճոյքով: Ամեն տարի գարնանը նրանք բարձրանում են, և աշնանը թռչնում ու գեղնում և իրանց չոր ցօղունները դէմ տալիս զիշերային հովերին աւերակների յաւիտենական երգի համար: Եւ շրջապատի համատարած ամալովեան, աւերածի վհատեցուցիչ պատկերի հետ Մայր եկեղեցու համեմատարար շէն արտաքինը մի հակադասակեր է ներկայացնում էլ աւելի ուժգին դարձնում կորուստի զգացմունքը: Մի անկիւնը խոշոր փլուածք ունի, գմբէթ չի երևում, զաւիթը վաղուց խորտակուել է, բայց և այնպէս այս բարձրաբերձ, յղիւած ու նուրբ պատերը իրանց զարդանկարներով, լուսամուտներով, կտրի շուրջը եզերող սիրուն երկնքերով վառնում են աւերածի խեղդող խոհերը և շէն ու հոյակապ յիշատակարանի պտրարիչ պատրանքը տալիս այցելուին:

Ներս հմ մտնում. համատարած մերկութիւն ու լքում, արտաքինը խաբուսիկ էր, ներսը վհատեցուցիչ: Խոնաւ, տեղտեղ քարուքանդ ու մամուլատ սալայատակի վրայ քայլում եմ և իմ ոտների արձագանքը երկար ու ձիգ ոլորներով կլրկնում է բարձր կամարների տակ: Սեփական շարժումով առաջ բերած այդ աղմուկը ճնշում է ինձ. և միևնույն ժամանակ այնտեղ, վերևում սկսւում է մի ուժգին թրպրտոց. նայում եմ, խայտաբղէտ աղանձների մի ահագին երամ է այն, որ խրտնած՝ մարդու ներկայութիւնից, իրար անցաւ: Նրանք շրջաններ

2) Տես «Մուրճ» № 4.

են կատարում իմ գլխից վեր, սիւների շուրջը, սեղանի վրայ, ոմանք դուրս են ընկնում լուսամուտներից, անկիւնի լայն բացումաճքից, և միւսները վերստին հանգչում պատերի դուրս ցլցումաճ մասերի վրայ: Վերստին քայլում եմ առաջ, վերստին ոտնաձայնիս արձագանքները կրկնում են հազար ու մի ոլորներիով առանց վախեցնելու աղաւնիներին: Մնում է քամին... Նա խաղում է այստեղ ազատօրէն, նա տէր է այստեղ, փչում է որտեղից ուզում է և ինչպէս կամենում է, պտոյտներ է գործում պատերի տակ, անկիւններում, կամարների տակ, լուսամուտների մէջ և մանաւանդ արեւմտեան կողմի լայն փլուածքի շուրջը:

Մայր սեղանի ճակատի լուսամուտից վաղորդեան շողքերը խուրձերով ներս են ընկել և խաղում են մամուսապատ ու խոնաւ յատակի վրայ: Անյոյս ու մռայլ ծալքերով դողդողում է քամու զէմ սեղանի առաջը փռումաճ այս սև կտորը, որ այնպէս յիշեցնում է դադաղի ծածկոյթը: Մի հատիկ հնամաշ ժամագիրք կայ կաշուէ կազմով, որի վերին երեսը ցցուել է վեր և նայում է աստուածածնի պատկերին բողբոջ շեշտով: Բժըշկութեան մի աւետարան կայ, որ յենում է եղել մոմակալի պատուանդանին, բայց ընկել է երևի քամու երեսից: Հաստ մոմակալի մէջ երկու խոշոր մոմեր կան, որոնցից մէկը զաւարուել է և անյոյս ձևով կախուել է դէպի վար, կարծես նայում է յատակին, իսկ միւսը թեքուել և մօտ է վայր ընկնելու:

Եւ այս բոլորից վեր, բոլորի վրայ անփակ աչքով հսկում են երկու աստուածածիներ, մէկը վէմ քարի բարձրութիւնից, իսկ միւսը սեղանի առջևում: Երկու գոնատ, լալկան աստուածածիներ, անտաղանդ գործեր, մի ողբալի արուեստագէտի, որ ունեցել է սակայն մի հատիկ ներշնչում. լալկան դարձնել այդ սրբերին: Եւ նրանք լալիս են, բայց ոչ սրբի, այլ մուրացիկի, լքումաճ ու քաղցած մուրացիկի արցունքներով: Զոյգ քոյրեր լինին կարծես, որոնք չգիտես ի՞նչու դատապարտում են այս պաղ մթնոլորտի, այս խեղդող ամայութեան մէջ սգալ անվերջ: Նրանցից իւրաքանչիւրը իր գրկում մի մանուկ ունի. աստուածային երեխաներ, որոնք զարմանքով են նայում և՛ իւրանց մօր արցունքին, և շրջապատի ամայութեանը: Գրբեր, վարագոյր, ծածկոյթ. նոյն իսկ աստուածամայրերն իրենց գրկի մանուկով՝ ողջ դողդողում են քամու առաջ, որ թափանցում է ամեն տեղ, լիզում է բոլորը, պրպտում է բոլոր անկիւնները ուշադրութեամբ, ասես իմանալու համար, թէ հինաւուրց այս սրբավայրը, այս դարերի նահատակը չի՞ ծածկել մի թանկագին դարդ իր հին օրերի ճոխութիւնից: Ո՛չ, նա ոչինչ չի ծածկել,

աւերուած է, կողոպտուած ու սրբապղծուած: Յաճախ լսել էի, թէ Անիի Մայր եկեղեցին տակաւին շէն է: Վհատեցուցիչ է ասել, որ նա նոյնքան շէն է, որքան կենդանի կարող է համամարուել մեծ ճանապարհին աւազակների ձեռքն ընկած ճամբորդը, կողոպտուած, մահացու կերպով խոցուած սրերով և լքուած: Եւ մանաւանդ լքուած...

Մեր սև պայմանները եւր պիտի թոյլ տան բարձրացնել հայ ժողովրդի գիտակցութիւնը և կարողութիւնը, որ նա ցանկութիւն և պարտք զգայ փրկել ազգային յիշատակարանները վերջնական աւերածից:

Խնչեր են անցել զարձեւ այս հոյակապ շէնքի վրէժով. ո՞վ գիտէ, բայց մի բան հաստատ է, որ ժամանակից շատ աւելի, այստեղ աւերած են գործել մարդկային ձեռները: Մայր սեղանի պատի վտանգաւոր բացուածքից դուրս, թոււմ է թէ մնացած բոլորը քարուքանդ են արել բարբարոս մարդիկ: Տեղտեղ ահագին աշխատանք է թափուել մի զարդ ցած բերելու պատերի վերին մասերից. ուրիշ տեղ պարզապէս փշրել են լոկ աւերմունքի հաճոյքով առաջնորդուած: Մուրճերով մաս-մաս խորտակուած սիւներ, պատուանդաններ կան, որոնց անկարելի է նայել առանց խորին ափսոսանքի, ինչպէս և առանց խորին դարշանքի դէպի մարդ արարածը:

Մայր գմբէթը չկայ. նրա տեղ մնացել է մի ահագին շրջանաձև բացուածք: Թոււմ է թէ մի նզովուած օր, եւր ներսում բարբարոսները կրծոտում, փշրում, անարգում էին սըրբութիւնները, այս հինաւուրց տաճարը դայրոյթի և ցաւի մի գերազոյն ճիզով դէն է շարտել իր կատարի ծածկոյթը, որպէսզի երկինքը տեսնի, թէ ներքեւում ինչպէս է անարգւում ամեն մի վեհ ու վսեմ բան:

Եւ երկինքը նայել է այն ցաւոտ օրում, և շարունակում է նայել բարձունքից: Գիշակեր թռչուններն իրանց հզօր թռիչքով գալիս են և քարանում եթերի մէջ, կտուցները կախ և շեղ ու սրատես նայուածքով փնտռում են անդգոյշ աղաւնիներ այս բացուածքի շրթունքին, ապա նետում են որսի վրայ. նրանց հզօր թևերի թրպրտոցը և զոհի ճիչը մի վայրկիան աղմկում է ամայի ու լքուած շէնքը: Ամպերն են գալիս շարան-շարան իրանց խոնաւ աչքերը պլշած. քաշ են ընկնում, և նայում են աւերակ տաճարի ներսը, և յետոյ՝ ասես հասկանալով պատկերի բոլոր ցաւոտ խորհուրդը, հինաւուրց շէնքի վիշտը, ցնցում են իրանց գլուխները, և հողմերի թևերի վրայ գնում են մեռնելու անհունութեան մէջ:

Ջարմանալի է, որ գլխատուած տաճարի այս ահագին

րացուածքը բնաւ չի խախտում շէնքի ամբողջութեան ներգաշ-
 նակութիւնը: Դէպի վեր ձգուող եկեղեցին այդ երկնածիւ բա-
 ցուածքով միացել է երկնքի հետ կարծես մի ճարտարապետա-
 կան խաչով, ինչպէս Հռոմի պանթէօնը: Նայում եմ այս տա-
 ճարի հարուստ և ուղղաձիգ գծերով բազմանկիւնի սիւներին,
 այս խոցոտուած ու չանգոռուած սրտերին, այս թեթև կամարնե-
 րին, որոնք եղբայրների պէս պահում են իրանց ուսին քարէ
 զանգուածը մի ժպտուն համերաշխութեամբ, և հիացմունքի ու
 հպարտութեան մի անխառն գգացմունք լցնում է իմ սիրտը:
 Ծարտարապետական այս հոյակապ կազմուածքի մէջ իմ առջև
 կանգնած է ինքը հայ ժողովուրդը: Ես տեսնում եմ այստեղ
 գեղեցիկն ու վսեմը ըմբռնելու նրա առանձնայատուկ կարո-
 ղութիւնը, անհունը և անյայտը պարփակելու նրա այս գողտ-
 րիկ ու թեթև ճիւղը, գերբնականին հաղորդակից լինելու այս
 մեղմ ու անուշ ձևը, ես տեսնում եմ իմ ցեղի ոգին, որ միշտ այն-
 պէս անխառն մնաց չորացնող միստիցիլմի, խեղճող դոգմայի
 մահաբեր ցանցերից: Աձեն ինչ պարզ է այստեղ ու յստակ, որպէս
 մանկան հոգի ոչինչ զանգուածային, ոչինչ ու խոլական ու ճրն-
 շող, որից մարդու էութիւնը փշրում է, կամքը ընկճում և
 ազատ մտածողութեան թափը խորտակում: Պատերը նուրբ
 ու թեթև սլանում են վեր ծիծաղկոտ ու անհոգ. բարակ սիւ-
 ները, որոնք իրանց կատարներին կրում են ամբողջի ծանրու-
 թիւնը, տանջանքի, յաւիտենական ճիգի զգացմունք չեն յա-
 րուցանում նայողի սրտում, այլ լոկ գեղարուեստական հաճոյք.
 նրանք չեն սնըում, չեն լալիս անագին բեռի տակ, որպէս դա-
 տապարտուածներ, այլ ժպտում են իրար, պարող մանուկների
 պէս: Հապա կամարները, այս թեթև կերպով անկիւնաւոր կի-
 սաղջանները այնպէս են կախուած վերելում, ինչպէս սալարթ-
 ներից հիւսուած լինին, թեթև ու սիրուն: Անգամ անհրն ու
 լուսամուաները, որոնք ըստ սովորութեան թէև, նեղ են, բայց
 դարձեալ այնպէս չեն ճնշում, ինչպէս այն եկեղեցիներում, ո-
 րոնց պատերը չափազանց լայն են և յիշեցնում են հին, քարա-
 շէն բանտեր: Եւ աշխարհում քիչ չեն եկեղեցիներ, որոնց կա-
 մարների զանգուածային ծանրութիւնը, սիւների բրտութիւնը,
 պատերի հաստութիւնը, մթնոլորդում իշխող մշտատե ու գաղջ
 խաւարը, մարդու ակամայ մտածել են տալիս բանտի մասին:
 Կոյր ու կրօնամոլ եռանդը միշտ աշխատել է հոգին ընկճել
 խաւարի ու ճնշող խորհրդաւորութեան բեռի տակ, ինչպէս որ
 աշխարհիկ բռնակալութիւնը նոյնն է արել մարդկային մարմնի
 վերաբերմամբ: Եւ որչափ անողորք, ոչնչացնող ու խեղճող է
 մի եկեղեցի, նոյնքան նեղսիրտ, բռնակալ, անմեղադատ ու
 մոլի պիտի լինի նրան ստեղծագործող ոգին: Թե՛ղ ասեն ինչ

ուզում են մասնագէտները, բայց ինձ համար Անիի Մայր եկեղեցին զուտ հայկական ոճ ունի, հայ եկեղեցու ոգու մարմնացումն է, այն ոգու, որին երբէք ծանօթ չեղան կրօնական հաւածանքները, որ չիմացաւ երբէք, թէ ի՞նչ են նշանակում խարոյկները և ինքը հանդիսացաւ յաւիտենական մարտիրոս:

Հայկական ճարտարապետութեան մասին խօսելիս, ընդունում եմ ասել, որ մենք ազգային անխառն արուեստ չունենք, որ հայկական յիշատակարանների ոճը մի խառնուրդ է արաբականի և բիւզանդականի: Եւ այս կարծիքը թոււմ է տրամաբանական, ի նկատի ունենալով մի շարք պատմական հանգամանքներ և յատկապէս մեր ինքնուրոյն, ազատ կեանքի կարճատև շրջանները համեմատելով օտարների յաճախակի տիրապետութեան հետ: Ճշմարիտ է, որ հայ ցեղը շնորհիւ յիշուած ձախրոյ պայմանների անկարող եղաւ իր հոգևոր կեանքի բոլոր արտայայտութիւններին տալ այն ինքնուրոյն կատարելութիւնները, որոնք այնպէս բնորոշում են ցեղերը և ցեղական հանճարները: Բայց անկասկած է, որ նոյնը չի կարելի ասել նրա եկեղեցական կազմակերպութեան մասին: Քիչ անգամ մի եկեղեցի կարող է աւելի ազգային լինել, իսկական արտայայտութիւն մի ժողովրդի հոգևոր կարողութեան՝ քան եղաւ հայկական եկեղեցին. արդ՝ երբ մի ազգ իր հոգևոր կեանքի այդ աստիճանի յատակ, կատարեալ արտայայտութիւնն ունի, անրնական, նոյն իսկ անմիտ է ենթադրել, թէ նա չի ունենայ նրա առարկայական նիւթական արտայայտութիւնը: Ճարտարապետութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իւրաքանչիւր ցեղի հոգում իշխող ձևերի և պատկերների առարկայացումը, գեղեցկութեան գաղափարների մարմնացումը: Հայ ժողովուրդը միշտ ունեցաւ կրօնական իր առանձնայատուկ հասկացողութիւնը, իր եկեղեցական ձևը, տարբեր՝ բոլոր միւս եկեղեցիներից թէ ըստ արտաքինի և թէ ըստ ներքինի, և ահա նոյն այդ ոգին է, որ նա այդպէս մարմնացրել է Անիի Մայր եկեղեցւոյ մէջ: Թեթև խառնուրդը այս զէպքում ոչինչ չի խլում հայկական եկեղեցական ճարտարապետութեան ազգայնութիւնից: Առհասարակ անխառն ոճ ոչ մի ազգ չունի: Գաղափարների և արուեստների էլոյլիցիան կատարում է ոչ միայն սերնդից սերունդ, անհատից՝ անհատ, այլ և ցեղից՝ ցեղ, հորիզոնից՝ հորիզոն: Կատարեալ անհատականութիւնը ֆիզիքական և հոգևոր աշխարհում մի անկարելութիւն է, էակաների և գաղափարների կապը տարածութեան ու ժամանակի մէջ որքան աննկատելի է, նոյնքան բացայայտ է և անհուն:

Ա. Ահարոնեան

ՓԻԼԻՍՈՓԱՅ՝ ՍՈՑԻՈԼՈԳ *)

Սոցիոլոգը, Սպենսերի կարծիքով, պետք է ազատ լինի զգացումների տիրապետութիւնից,—մարդկային պատմութեան զրական երևոյթները նա պիտի հետազօտէ պաղ, անխուով հանդարտութեամբ, առանց հրճուանքի և առանց ցասումի:

Ամենագարշելի իրողութիւններն անգամ իրանց տեղն ունին տիեզերական էվոլիցիայի մէջ,—և՛ նախամարդու կոշտ ու գոհակ սնապաշտութիւնը, որ ընդունակ է մեր երեխաների ծիծաղը շարժել, և՛ համատարած մարդակերութիւնը, որ սրբագործուած էր յաճախ կրօնական հաւատալիքներով, և՛ զերութիւնը, որ ենթարկուած էր միլիօնաւոր մարդկանց զազիր, անպատիւ, անամանական զրութեան, և՛ այն դրիւնալի պատերազմներն ու հեկատոմբները, որոնք լցնում են մարդկային պատմութիւնը, և՛ այն վիթխարի պիրամիտները, կազմուած բիւրաւոր զոհերի զանգերից, որ բռնաւորները ի ցոյց էին դնում վաղեմի դարերում, իրրեւ յաղթութեան դժոխային կոթողներ, և այլն և այլն...

«Ինչ որ իրական է, խելացի է,» Was wirklich ist, ist Vernünftig—ասել է Հեգելը, ասում է և Սպենսեր...

Դաժան, անհեթեթ է հնչում այդ ֆրազը, բայց նա, դժբախտաբար, պատմական ճշմարտութեան արտայայտութիւն է, և մենք նտիպուած ենք համակերպուել մաքի երկու տխրանքներին, որոնք երկուսն էլ օրեկտիւ մուսոնորութեան ամենահզօր ներկայացուցիչներն են:

Հասարակական ընդհանուր էվոլիցիայի տեսակէտից կարող է համարուել բարոյական ու օգտակար այն՝ ինչ որ ընթացիկ մորալի տեսակէտից դատապարտուած է իրրեւ բացարձակ անբարոյականութիւն, իրրեւ չարիք: Եւ ընդհակառակը. հասարակութիւնների առաջագիմութեան ու բարգաւաճման համար նրանց զարգացման որոշ շրջաններում—կարող են չարիք լինել այն յատկութիւնները, որոնք հռչակուած են ժա-

*) Տես «Մուրճ» № 5:

մանակակից էտիկայի կողմից, որպէս գերագոյն առաքինութիւններ:

Ո՞րն է արդեօք գերադասելի՝ խաղաղասիրութիւնը, թէ՛ ռազմական ու գիշատիչ հակումները: Ո՞րն է բարիք և ո՞րն է չարիք...

Իդէալական բարոյախօսութեան համար պատասխանը պարզ է. իսկ սոցիոլոգի համար՝ նա պայմանաւորւում է այլ և այլ հանգամանքներով: Բարիք է կամ չարիք, նայած տեղին և ժամանակին... Եթէ բովանդակ մարդկութիւնը հասած լինէր Սպենսերի երազած «ինդուստրիական» (արդիւնաբերական) շրջանին, տարալոյս չկայ, որ խաղաղասիրութեան զգացումը կը լինէր զուտ առաքինութիւն, այն ինչ ռազմատենչ հակումները պիտի ժխտուէին, որպէս հակասոցիալական մի պատուհաս, որպէս անէծք: Սակայն մի շրջանում, ուր գոյութեան կոիւր տակաւին օրէնք է, ուր ֆիզիկական դիմադրութեան ուժը ամենաէական պայմաններից մէկն է ժողովուրդների յարատեւութեան ու նորմալ, անսայթաք առաջադիմութեան,—մի այդպիսի շրջանում եկէք ու ներբողեցէք խաղաղասիրութիւնը, եկէք ու դատապարտեցէք ռազմական հակումները... Առաջինը, իր չափազանցութեան մէջ, յայտնւում է որպէս չարիք, երկրորդը, իր չափաւորութեան մէջ, յայտնւում է որպէս բարիք: Անդարձ կորստեան վիճն են նետւում այն ժողովուրդները, որոնք ղեկավարւում են քրիստոնէական խոնարհութեան հրահանգներով և արհամարհում են կռուի, դիմադրութեան, ինքնապաշտպանութեան պահանջները: Անդարձ կը մարէ անգամ ամենախելօք, ամենառաջադէմ ժողովրդի ասողը, եթէ խաղաղասիրութեան ու ալտրուիզմի, այլասիրութեան հետ՝ նա չի դաւանի ռազմասիրութեան ու էպօիզմի աւետարանը... Հին, տարածուած ճշմարտութիւններ, որոնք ցոլում են համաշխարհային էվոլյուցիայի զգաստ, օրեկտիւ ուսումնասիրութիւնից...

Բարոյական սկզբունքները, Սպենսերի կարծիքով, քաղաքակրթութեան առաջադիմութեան աստիճանաշաղի չեն. կան վայրենի, բիրտ համայնքներ, որոնք իրանց ազնիւ հակումներով կարող են ամօթահար անել քաղաքակիրթ մարդուն: Հնդկաստանում կան ցիրուցան բեկորներ նախնական ցեղերի, որոնց մէջ ճշմարտախօսութիւնն ու շիտակութիւնը օրդանական յատկութիւններ են: Նրանք այդ կողմից աւելի բարձր են, քան իրանց հարեան ինդուսները—որոնք անհամեմատ աւելի զարգացած են և արդէն որոշ քաղաքակրթութեան տէր—նրանք բարձր են նոյնիսկ եւրոպացիներից:

Ուրիշ ռազմաթիւ վայրենի ցեղերի մէջ ևս, մանաւանդ

լեռնականների աշխարհում, միսիօնարների ու ճանապարհորդ-գիտնականների վկայութեամբ, ծաղկում են ամենաբարձր աստվածութիւնները՝ շիտակութիւնը, ալտուրկլմն ու պատուասիրութիւնը և արհամարհում են՝ կեղծիքը, սուտը, դողութիւնը և այլն:

Մի քանի աստիճան վեր բարձրացէք քաղաքակրթութեան ասնդուլքի վրայով և մտէք ամերիկական Փիջիների մէջ, որոնք անգրագէտ ցեղերի աշխարհում համարւում են ամենալսելալիկը,— ունեն քաղաքական կալմակերպութիւն, զինուորական կարգեր, երկրագործութիւն, նաւարկութիւն և այլն: Այդ տեղ դուք կը տեսնէք մի բոլորովին ջոկ պատկեր. սուտը, կեղծիքը, դաւաճանութիւնն ու մարդասպանութիւնը նուիրագործուած օրէնքներ են. երեխաներին յաճախ կոտորում են, հիւանդներին խեղդամահ են անում, կենդանի մարդկանց յօշոտում են, լափում:

Մի աստիճան ևս վեր բարձրացէք ու մտէք ամերիկական դահոմէների աշխարհը: Քաղաքակրթութիւնը մի քայլ առաջ է. աշխատանքի բաժանումը սուելի է զարգացած, հասարակական դատակարգերը՝ աւելի բազմաթիւ, կանոնաւոր զօրք, օրէնքներ բանտեր, ոստիկանութիւն: Սակայն այդ բոլորը ունենալով հանդերձ՝ դահոմէների հայրենիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կազմակերպուած մի ոճրանոց: Պատերազմներ են մղում միմիայն նրա համար, որ ձեռք բերեն մարդկալին գանկեր արքայական պալատները զարդարելու համար: Հարիւրաւոր հպատակներ են մորթում, երբ մեռնում է թագաւորը և ուրիշ հարիւրաւորները ուղարկւում են նրա ետեւից իւրաքանչիւր տարի: Արիւնարբու և ստախօս, մարդկային ամեն արժանաւորութիւնից զուրկ՝ դահոմէները նոյնալիսի գազաններ են իրանց հարազատների՝ ծնողների ու զաւակների, քոյրերի ու եղբայրների դիմաց,

Շարունակելով մեր ճանապարհը դէպի նորագոյն քաղաքակրթութեան որրանները, ամեն տեղ մենք ականատես կը լինենք նման բարբարոս տեսարանների. Ասորեստանի կոտորածներն ու գերի բռնուածների կլասիկ դարձած չարչարանքները, Եգիպտոսի թագաւորների խժդուութիւնները, Հոովմի դարաւոր ողբերգութիւնը, գլադիատորական, սուսերամարտական արիւնոտ նախճիրներով, ներոնների ու Ատտիլանների հեղինակած արհաւիրքները, միջնադարեան քրիստոնեայ Եւրոպայի ամբողջ պատմութիւնը՝ իր ինկվիզիցիայով, հաւատաքնութեամբ ու մասսային ջարդերով, վերջապէս, նորագոյն շրջանը՝ իրան յատուկ սարսափներով, դիւանագիտութեան և զաղուծթային քաղաքականութեան աշխարհագրորդ ոճիւրներն—այդ

բոլորը դժուար թէ նսեմանայ դահոմէների և ֆիշիւների գազանութիւնների առջև...

Ո՛րպիսի հակադատներ, բարոյական տեսակէտից որքան ահագին տարբերութիւն այդ մեծ ցեղերի և մարդկային այն բիրտ, ստոր, նախնական համայնքների միջև, որոնց մասին քիչ առաջ խօսեցինք, որոնք զրեթէ հորդայական վիճակում՝ ցիրուցան բնակւում են Հնդկաստանի մէջ, որոնց աշխարհում ծաղկում են բարոյական առաքինութիւնները, ալտրուիզմը, մարդասիրութիւնը, արդարութիւնն ու շիտակութիւնը...

Եւ, այնուամենայնիւ, չենք կարող ասել, թէ այդ վերջինները աւելի բարձր են, կուտուրայի տեսակէտից աւելի առաջացած, քան հւրոպական մարդկութիւնը, քան հոռիմէական բռնապետութիւնը, քան նոյնիսկ Եգիպտոսը, Ասորեստանը: Չենք կարող երանի տալ նախնի այն ցեղերին, թէկուզ և բարոյական ու առաքինի, չենք կարող ցանկանալ, որ մարդկութիւնը յաւիտեան զեգերէր այնպիսի պլրիմիտիվ, հորդայական վիճակում, ուր մարդկային համախմբումները՝ անճար ու անօգնական, առանց որևէ հասարակական կազմակերպութեան, առանց զէնքերի ու արդիւնաբերական մշակուած գործիքների՝ թափառէին նախիրների պէս ազատ բնութեան մէջ, մատնուած գիշատիչների յարձակումներին և բնութեան քմահաճ խաղերին...

Ո՛ւր է «պրօգրէսը»...: Էլ ուր է, սակայն, քաղաքակրթութիւնը, եթէ Սէյլանի դոհիկ Վէգդաները և Հնդկաստանի մանրիկ հորդաները իրանց մեղմ ու մարդասէր բարոյականութեամբ աւելի բարձր են, քան թէ բարձր ու կազմակերպուած ազգութիւնների անդամները, քան մեծ պետութիւնների, Եգիպտոսի ու Արեւմուտքի քաղաքացիները, որոնք զարեւով մշակել են քաղաքակրթութիւն, կանգնեցրել են արուեստի և գիտութեան հոյակապ արձաններ...

Ո՛ւր է «պրօգրէսը»:

Հասարակական գիտութեան կնճռոտ ու փափուկ հարցերից մէկն է դա, որին Սպենսեր պատասխանում է դարձեալ անալոգիայով, նմանութեան օրէնքով: Նա օրինակ է բերում շնչաւոր բնութիւնը և ներբողում է կոռւի սկզբունքը, որը թէև դաժան, անողորմ ու աւերիչ, բայց կազմակերպող ու աշխարհաշէն է, առաջադիմութեան մի գրաւական, պրօգրէսի մի խթան:

Անասնական աշխարհում, ասում է նա, գոյութեան կռիւը համատարած երևոյթ է և նա է էվոլյուցիայի գործօնը, մղիչը: Մրցման շնորհիւ, անասնական ամեն մի տեսակի մէջ առաջ

են գալիս ամենաճարպիկ կամ ուժեղ անհատները, մշակում է բարձրագույն տիպը: Մրցման շնորհիւ, այլ և այլ տեսակների մէջ զարգանում են այլ և այլ խոշոր առանձնայատկութիւններ, որոնցով նրանք յարմարւում են իրանց միջավայրին և յարատեւում են (La survivance des plus aptes): Առանց այդ անողոր, բնաջնջող կռուի՝ չէին զարգանայ կենդանիների և տեսակների բազմաթիւ օրգաններն ու ֆունկցիաները, նրանց անդամներն ու զգայարանները:

Ամեն մի պրոգրէս, որ կատարւում է այս կամ այն անասնական տեսակի մէջ՝ ուժի, ճարպիկութեան, ճկունութեան տեսակէտից՝ առաջ է բերում միւս, մրցակից տեսակների մէջ ևս նոյնանման ընդունակութիւններ... Մէկը յուսահատ ճիգ է գործ դնում բռնելու որսը, միւսը ճգնում է խոյս տալ հալածողի ճիրաններից... Առանց այդ յաւիտենական, յուսահատ ճիգերի՝ պրոգրէս չէր լինի անասնական աշխարհում: Առանց այդ աւերիչ ու արիւնահեղ կռիւների՝ պրոգրէս չէր լինի և մարդկային աշխարհում... Կռուի միջոցով է, որ նախապատմական մանրիկ համախմբումները հետզհետէ միացել են և կազմել ընդարձակ մարդկային համայնքներ. կռուի շնորհիւ է որ ծնունդ է առել հասարակական գործակցութիւնը (Coopération sociale), համերաշխութիւնը միեւնոյն համայնքի, միեւնոյն ցեղի, միեւնոյն ազգի և միեւնոյն պետութեան անդամների մէջ: Մարդիկ նախ և առաջ մտածել են կազմել միահամուռ յարձակման ու պաշտպանութեան սիստեմ, որից և առաջացել են ժամանակի ընթացքում հասարակական գործակցութեան այլազան ձևերը:

«Անտարակոյս, ասում է Սպենսեր, չէ կարելի արդարացնել տիեզերական այդ անտազոնիզմի պատճառած սարսափները.—անտազոնիզմ՝ որ սկսուելով տաս հազար տարի սրանից առաջ համայնքների մշտնջենաւոր ընդհարումներով՝ յանգել է մեծ ազգերի մեծ պատերազմներին: Պէտք է սակայն խոստովանել, որ առանց այդ սարսափների՝ աշխարհը տակաւին բնակուած կը լինէր միայն թոյլ տիպի մարդկանցով, որոնք կը փնտռէին իրանց ապաստանը բարանձաւներում և կը կերակրուէին գարշ նիւթերով:» ¹⁾

Սակայն Սպենսերը անուղղայ յուստես ֆատալիստներից չէ: «Գոյութեան կռիւը» հասարակութիւնների մէջ լինելով մինչև օրս անհրաժեշտ պայման էլովիւցիայի՝ յաւիտենապէս չպիտի պահպանէ իր կոշտ ու վայրագ բնաւորութիւնը:

¹⁾ Principes de Sociologie

Մենք խոստովանում ենք, որ պատերազմներին ենք պարտական՝ մեծ հասարակութիւնների առաջացումը և նրանց օրգանների զարգացումը, բայց մենք կարող ենք եղբակացնել, որ ձեռք բերուած ուժերը, որոնք կիրարկուած են այժմ ուրիշ հասարակական փունկցիաների համար, յետոյ պիտի կորցնեն իրանց նախնական դերը: Մենք ընդունում ենք, որ առանց այդ յարատե, արիւնոտ կռիւներէ՝ քաղաքակիրթ հասարակութիւնները չէին կազմակերպուի և որ կոռւի այդ վիճակը պէտք է անհրաժեշտարար ունենայ իրու լրացուցիչ՝ մարդու բնաւորութեան համապատասխան ձև—նոյնքան անգլթութիւն, որքան եւ խելը: Բայց դրա հետ միասին իրաւունք ունենք պնդելու, որ այդ հասարակութիւնները կազմակերպուելուց յետոյ՝ նրանց բնաւորութեան վայրագութիւնը—անհրաժեշտ պայմանը այդ կազմակերպման պրոցէսի—պիտի չքանայ... Այդ շրջանի ծնունդ՝ հասարակական և անհատական չարիքները ստիճանարար պիտի նուազին ու անհատանան: Այդպէս ուրեմն, երբ մենք քննում ենք որեւէ հասարակութեան կազմն ու փունկցիաները էվոլիւցիայի տեսակէտից, կարող ենք պահպանել հոգու անդորրութիւն, որ անհրաժեշտ է՝ գիտական մեկնութիւն տալու համար.—և այդպէս վարուելով, մենք դարձեալ ընդունակ կը լինենք ունենալու բարոյական դրուատումի կամ պարսաւանքի զգացումը:» ¹⁾

*
* *

Տեսնենք այժմ, թէ Ինչպէս է ընթացել խոշոր գծերով մարդկութեան քաղաքական էվոլիւցիան, ըստ Սպենսերի:

Մարդկային հասարակութիւնները իրանց սկզբնաւորութեան շրջանի մէջ նման էին իրար, Ինչպէս նման էին և կենդանական մարմինները բիօլոգիական զարգացման արշալոյսին: Անալոգիան այստեղ ևս, Սպենսերի կարծիքով, աչքի է զարնում երկու կարգի օրգանիզմների մէջ: Ինչպէս որ ներկայիս բոլոր այլազան կենդանիները ծնունդ են առել մէկ կամ մի քանի պարզ, նախնական տեսակներից, այնպէս և այժմեան հասարակական բարդ մարմինները առաջացել են մէկ սկզբնական, պարզ կազմակերպութիւնից: Այլազանութիւնը յետոյ է եկել, պատմական դարաւոր էվոլիւցիայի ընթացքում:

Էվոլիւցիայի չուկէտը՝ միևնոյն հորդան է, որի մասին խօսեցինք նախորդ յօդուածում: Ինչպէս էր այդ պարզ, նախնական համայնքը վճռում իր կենսական խնդիրները,—տեղա-

¹⁾ Principes de Sociologie

փոխութիւն մի վայրից միւսը, հաւաքական պաշտպանութիւն թշնամու հանդէպ, հաւաքական յարձակում և այլն:

Սպենսեր այդ հարցին պատասխանում է *a priori*, ենթադրութիւններով: Ժողովներ էին կազմում և հորդան, ամենայն հաւանականութեամբ, բաժանում էր երկու մասի. մի կողմից՝ ծերերը, ամենից ուժեղները և ամենից խելօք ճանաչուածները. դա ղեկավարող փոքրամասնութիւնն էր, որ մասնակցում էր վիճաբանութեան: Միւս կողմից՝ երիտասարդները, բոլոր թոյլերն ու անփորձները. զրանք էլ կազմում էին հորդայի մեծ մասը և սոսկ ունկնդրի դեր էին կատարում, երբեմնապէս իրանց յօժարութիւնը կամ մերժումը արտայայտելով:

Ղեկավարող փոքրամասնութեան մէջ՝ կը լինի միշտ մէկը, որ աչքի կը զարէ իր հեղինակութեամբ,—մի ծեր որսորդ, մի հռչակուած ռազմիկ, մի հմուտ կախարդ և այլն: Նրա ազդեցութիւնը կը գերակշռէ և նա իր կամքը կը թելադրէ ամբողջ համայնքին: Այդպէս է եղել հաւանականօրէն: Եւ այդպիսով, նախնական մարդկային համայնքի մէջ հետզհետէ գոյացել են նրք տարբեր մասեր, բիօլոգիական արտայայտութեամբ՝ սկզբնական պարզ զանգուածը ենթարկուելով դիֆֆերենցիացիայի, զանազանաւորման, ծնունդ է տուել մէկ կորիզի (*noyau*) և մէկ նիւկլէօլի:

Քաղաքական կազմակերպութեան այդ սաղմերը առաջ են եկել բոլոր նախնական ժողովուրդների մէջ. կրկնութիւնները ամբապնդել են նրանց, զարձրել են կանոն:

A priori բնգունուած այդ զրութիւնը հաստատուում է *a posteriori*: Ներկայումս գոյութիւն ունեցող այլ և այլ վայրերի ցեղերը տալիս են մեզ այդ նոյն կարգերի հմուշները: Ծանապարհորդ Սմիտի վկայութեամբ՝ աւստրալիական Վիկտորիայի ազգաբնակչութեան մէջ, երբ մի ցեղ պատրաստուում է իր մի անդամի սպանութեան համար վրէժխնդիր լինել հակառակորդ ցեղից,—նա գումարում է խորհրդաժողով, բազկացած բոլոր ծերերից: Կանայք շրջան են կազմում սղամարդկանց չորս կողմը, և առաջնորդը—ամենահեղինակաւոր ու ազդեցիկ վայրենին—բաց է անում ժողովը...

Պարլամենտի նահապետական ձևն է դա, որ դիտում ենք Ամերիկայի շատ վայրերում, Հնդկաստանի լեռնականների մէջ և ուրիշ տեղեր: Ամենակարեւոր խնդիրները վճռում են ժողովրդական համագումարում, ժողովրդի համաձայնութեամբ: Այդ նոյն կարգերի ներկայացուցիչ էր հոմերական ժամանակների յունական Ագորան,—մի խորհուրդ, ուր ժողովրդի պա-

րագլուխները, թագաւորի նախագահութեան տակ, խորհրդակցում էին հասարակական ծանրակշիռ գործերի մասին, և թագաւորի դերը սահմանափակւում էր նրանով, որ ականջ էր դնում և յայտնում էր իր հաւանութիւնը: Ժողովուրդը շարւում էր պարագլուխների շուրջը և միշտ կրաւորական հանդիսատեսի դեր չէր կատարում:

Նոյնպէս հոռմէական պատմութեան սկզբնական ժամանակներում, ծանրակշիռ պարագաների մէջ թագաւորը հաղորդում էր իր առաջարկները համախմբուած քաղաքացիներին, որոնք յայտնում էին իրանց մերժումը կամ հաւանութիւնը:

Հռչակաւոր պատմագիր Տակիտոսի ասելով՝ նախնի գերմանների մէջ ևս տիրապետում էին այդ կարգերը: Առաջնորդները քննում էին իրանց մէջ աննշան հարցերը, իսկ նշանաւորները զբաղեցնում էին ամբողջ ժողովրդին: Այն խնդիրները, որոնց վերջնական վճռի իրաւունքը պատկանում էր ժողովրդին, քննութեան էին ենթարկւում պարագլուխների կողմից. այնուհետև թագաւորն էր խօսում, որը իր տարբերով, ղեկավարական հմայքով կամ պերճախօսութեամբ՝ լսեցնում էր իր ձայնը աւելի համոզելով քան հրամայելով: Երբ նրա կարծիքները հաճելի չէին ժողովրդին, վերջինս արտունջներով իր մերժումն էր յայտնում:

Նոյն սովորութիւններն ենք տեսնում արիական ու սիմիական ցեղերի աշխարհում և հիւսիսային Ամերիկայի կարմըրամորթների մէջ: Չկայ ուրիշ կառավարող ոյժ, բայց եթէ միայն կազմակերպուած համայնքի միահեծան կամքը: Եւ միւս կողմից էլ այդ ընդհանուր կամքը որոշելու մէջ ղեկաւոր դերը խաղում է ժողովրդական ընտիր փոքրամասնութիւնը:

Ուշագրաւ է, որ քաղաքական այդ հիւսուղի կազմակերպութեան ձևը դեռ մինչև օրս էլ պահպանուել է Շվեյցարիայի մի քանի կանտոններում: Ուրի, Ապպենցել կանտոնների տարեկան համագումարները (Landsgemeinde) նոյն նախապատմական տեսարաններն են վերարտադրում մեր աչքերի առաջ: Ժողովրդական հանդիսաւոր պարլամենտներ, ուր հազարաւոր պարզ քաղաքացիները, համախմբուած իրանց օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնների հետ, բոլորն էլ հաւասար ձայնի իրաւունքով քննում ու վճռում են համայնքի, կանտոնի կենսական խնդիրները: Ժողովուրդը՝ միահեծան տէր իր ճակատագրի՝ այո կամ ոչ-ով, ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով, ընտրում ու հեռացնում է իր վարիչներին, պաշտօնեաներին... Մի յուզիչ ներդաշնակութիւն՝ նահապետական պարզութեան մէջ... «Վայրենութիւնը» այդպիսով հիւս-

ւում է ամենաառաջագէտ քաղաքակրթութեան հետ, սակայն այս դէպքում վայրենութիւնից մնացած ժառանգութիւնը՝ ժողովրդական կառավարութեան ձևն է, ուսմկավարութեան մեծ սկզբունքը:

Միք. Յովհաննիսեան

(Կը շարունակուի)

ԹԻԻՐՔԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ *)

III

Չկայ մի պետութիւն, որ միևնոյն առարկայի վերաբերմամբ ունենայ այնքան բազմատեսակ տուրքեր, որքան Թիւրքիան: Այգիի տէրը պէտք է վճարէ օրինակ մի որոշ տուրք այգիի գետնին, այսինքն հողին համար, մի տուրք այգիի ծառերի համար, մի տուրք այգիի որթերից քաղելու խաղողին համար (ըուխսաթ [թէսքերէսի]), մի տուրք, արդէն քաղած խաղողի համար, մի տուրք խաղողի չաշից (ճիպրէ) վազելու օդին համար և այլն: Երբ այս բոլորը հաշուենք՝ կը գտնենք, որ այգետէրերը և կառավարութիւնը այգու ընդհանուր արդիւնքից գրեթէ հաւասար բաժիններ են ստանում արդիւնաբեր տարիներում, իսկ նուազ արդիւնաբեր տարիները միշտ ի փաստ այգետիրոջ են լինում: Ահա թէ ինչու Թրքահայաստանում քանի գնում քանդում են այգիները և արտերի են վերածում. երևի խաղողի ծննդավայրը մի օր բոլորովին զրուկուած պիտի լինի խաղողից:

Գոյութիւն ունի նոյնպէս «թէմէթիլ» կոչուած հարկը, որը ենթադրում է իբր թէ գիւղացին տնային արհեստով է զբաղուած: Այս տուրքը համարեա միշտ զգոհութիւններ է յարուցանում գիւղացիների մէջ: Կառավարութիւնը ոչ միայն աչքի առաջ չի ունենում եկամուտի մի որևէ minimum, այլ մինչև իսկ գիւղացու կամ գիւղական բանուորի պատահական օրավարձը ընդունում է որպէս եկամուտ և ուրեմն հարկատուութեան ենթակայ. կառավարական պաշտօնեաները ուշադրու-

*) Տե՛ս «Մուրճ» № 6:

Թիւն չեն դարձնում այն բանի վրայ, թէ գիւղական բանուորը տարուայ մէջ քանի օր զբաղուած է եղել և քանի օր առանց գործի է մնացել: Այն պէպքում, երբ ծառայողները կամ բանուորները չեն կարող կամ չեն ուզում հարկը վճարել—իսկոյն բանտարկուած են. քանիցս պատահել է, որ մի քանի փոքրիկ օղիի և այլ գործարաններ, ուր բանում են 10—15 բանուոր՝ յանկարծ առանց աշխատաւոր ձեռքի են մնացել լոկ այն պատճառով, որ բանուորների մեծամասնութիւնը բանտարկուել է «թէմէթթիւ»-ի հարկը անվճար թողնելու համար:

Մի քանի տարի առաջ Թրքահայաստանի գաւառներից մէկում, չոր ու ցամաք ամառից յետոյ խոտը ամեն տեղ պակասում էր. այդ պատճառով ահագին քանակութեամբ ոչխարներ սատկեցին. բայց կառավարութիւնը ուշադրութիւն չդարձրեց դրա վրայ և պահանջեց, ոչխարների վրայ զբաղուած հարկերի այն քանակութիւնը, որ առնւում էր հախկին տարիներում. իսկուր էին գիւղացիները պնդում, որ ոչխարների մեծամասնութիւնը էլ գոյութիւն չունի: Բողոքը անուշադիր մնաց:

Բարձր. Դուռը անպերջ պահանջում է իր գաւառներից փող, փող և փող. փողի պահանջը գալիս է վալիին. վալին իր կողմից պահանջում է մութէսարիֆից. իսկ այս վերջինը գայ՝ մագամից: Փողը պահանջելիս՝ բարձր պաշտօնեան իր կրտսեր պաշտօնակցին ակնարկում է այն բանի վրայ, որ եթէ փողը չճարուի, այդ չարաբաստիկ փոքրիկ պաշտօնեան վտանգում է իր պաշտօնը եւ այս վերջինս քաջ իմանալով, որ փողային հարցերում կառավարութիւնը հանաք չի սիրում և սաստիկ ճշտապահ է, (երբ ի հարկէ ինքը կառավարութիւնն է պահանջում և ոչ թէ ուրիշներ նրանից) պաշտօնեան շտապում է ինչ գնով էլ որ լինի գտնել Կ. Պոլսից պահանջուած փողը: Հարկատուն հաւսրեա երբէք չի ստանում իր վճարած հարկի փոխարէն մի որևէ թուղթ, ստացագիր, իբրև ապացոյց իր վճարման. այդ հանգամանքից շարունակ օգտւում են կառավարական մեծ թէ փոքր պաշտօնեաները և նորից պահանջում վճարել:

Անբարեբեր տարիներում, երբ ցորենը սկսում է թանգանալ, կառավարական պաշտօնեաները իրանց բարեկամներին միջոցով էժան էժան գնում են ցորենը և լեցնում կառավարական ամբարները ու այդպիսով սովի աղէտները սպեկուլիացիայի են ենթարկում:

Բայց ինչ են դեռ այդ հարկերը, հարկահանութեան այն ձևերի ու միջոցների հանդէպ, որոնց գիմում է կառավարութիւնը իր պաշտօնեաներով: Օր. Թրքահայաստանի վալիներից մէկին հեռագրում են Կ. Պոլսից, որ նրա գաւառում երկու

գունդ գործ է գալու ձմեռելու և ուրեմն վալին պէտք է դանել մօտ 300 հազար ֆրանկ տեղային անհրաժեշտ ծախքերի համար: Վալին ամեն ջանք գործ է դնում և ժողովում է այդ գումարը. կարելի է երևակայել, թէ ի՞նչ միջոցներ գործ է ածում այդքան փող ժողովելու համար, քանի որ դրանից առաջ արդէն հարկերը դժուարութեամբ է տուել ժողովուրդը: Սակայն երբ Կ. Պոլսում իմանում են, որ վալին կարողացել է 300 հազ. ֆր. ժողովել, նորից հեռագրում են նրան, որ այդ գումարից 100 հազարը փոխադրէ Կ. Պոլսի պալատական գլխաւոր ներքինին, իսկ 200 հազարը ուղարկէ Իլլիր-Քեսով. միևնոյն ժամանակ յայտնում են, որ վալին այս ինչ աստիճանի շքանշան է յատկացում... Ահա մի այլ գուտ արեւելեան միջոց հարկահանութեան: Օր. գոյութիւն ունի 5 տոկոսանոց հողային մի հարկ Կ. Պոլսի տների համար: Այդ հարկը շարունակ 5—10 տարի չի պահանջում. յետոյ՝ յանկարծ, մի քանի տարուայ գումարը միասին են պահանջում: Յայտնի բան է տան սեփականատէրը սարսափած այդպիսի անսպասելի գումարից, իսկոյն սկսում է «միջոցներ» գործ դնել: Սկսում է առևտուր տանտիրոջ ու պաշտօնեայի միջև: Վերջապէս «բաքշիշը» գործին օգնում է և հարկի տասներորդ մասն է միայն տրւում ու երկու կողմերն էլ գոհ և հանգիստ բաժանում են: Վերացուած չեն մի քանի հայկական գաւառներում և այլ տեսակի հարկեր ու տուրքեր, ինչպէս այն տարօրինակ տուրքը, որը կայանում է նքանում, որ ամեն մի քրիստոնեայ պարտական է հիւրասիրել իր գուռը բաղխող մահմեդականին. այդ մահմեդականը իրաւունք ունի ապրել նրա տանը 3 օր. ի՞նչ տակ կուղէ, որ այդ հիւրասիրութեան հետեանքը յաճախ շատ աղետարեր է լինում ամբողջ հայ ընտանիքի պատուին. եթէ տան տէրը զիմադրէ—հիւրը նրան ծեծում է, իսկ եթէ տանտէրը այդ հրէշին սպանէ—իսկոյն կառավարութիւնը «ապստամբութիւն» է տեսնում այդտեղ և գիւղը շրջապատւում է մութէսարիֆի ուղարկած զօրքով:

Առանց մանրամասնօրէն կանգ առնելու՝ յիշենք այստեղ մի քանի խօսքով մնացեալ հարկերի մասին: ¹⁾

«Կրթական» հարկ, որ քրիստոնեաները ստիպուած են տալու առանց սակայն վայելելու պետական դպրոցների մէջ կրթուելու արտօնութիւնը:

¹⁾ Հայերէն լեզուով աւելի մանրամասն տեղեկութիւններ հարկերի մասին. ընթերցողը կարող է գտնել պ. Սաժալի հետաքրքրական գրքի մէջ. «Հարկերը Տաճկաստանում»:

«Ձինուորական» հարկ՝ իւրաքանչիւր արու քրիստոնեայից (տարեկան 3—4 ռուբլի). այդ հարկը վերցնելու ժամանակ տալէն տարի կրկնուում են ամենաբարբարոս և աւազակային միջոցները պետական պաշտօնեաների կողմից:

Կալուածական հարկ, ճանապարհների հարկ, ժառանգութեան հարկ (10 տոկոս ժառանգուած հարստութիւնից) և այլն և այլն:

Կան և պատահական հարկեր, որոնք պաշտօնապէս պարտադիր չեն, բայց էսպէս պարտադիր են գառնում թէ մահմեդականներ և թէ քրիստոնեաների համար. օր. «օժանդակութիւն» կոչուող հարկը, որ արւում է երբ կառավարութիւնը անյետաձգելի կարիք ունի մի որեւէ գումարի և կոչ է անում իր «հաւատարիմ հոլատակներին»... Մի թէ այդ դէպքում ստրուկ ծնուած հայը չի շտապելու իր «հաւատարմութիւնը» ցոյց տալու կառավարութեան...

Ոչ պաշտօնական հարկերի թւումն է և այն տուրքը, որ մի քանի գաւառներում հայ գիւղացիք տալիս են քիւրդերին, իրանց՝ հայերին պաշտպանելու համար քրդական մի այլ ցեղի կամ կառավարական պաշտօնեաների կեղեքման դէմ:

Ինչ որ ասացինք Թրքահայաստանի մասին, նոյնը կարելի է կրկնել և Մակեդոնիայի վերաբերմամբ: Այստեղ էլ միևնոյն մանր և խոշոր հարկերը, հարկահանութեան միևնոյն ձեւերը ու միջոցները, նոյն անտեսական դրութիւնը, նոյն բարոյական ստրկութիւնը: Մի երկրում, ուր անտեսական կեանքը կաշկանդուած է—շնորհիւ իրաւական-քաղաքական ընդհանուր պայմաններին—նչ մի մասնաւոր բարեկաւումն չի կարող ժողովրդին իսկական օգուտներ տալ: Այսպէս՝ երբ 90-ական թուականների սկզբներում թիւրք կառավարութիւնը գաւառներում հաստատեց «մէնաֆիէ-սանդուք»-ներ այսինքն և երկրագործական զրամարկներ—անվերջ գովասանքներ ստացաւ թէ եւրոպական և թէ Կ. Պոլսի ստրկացած մամուլի կողմից: Այդ երկրագործական զրամարկները իրր թէ պէտք է զարգացնէին տեղային երկրագործութիւնը և վաշխառութիւնը պէտք է քաննչորս ժամուայ մէջ չքանար: Եւ ի՞նչ. հէնց այսօր էլ, ինչպէս սրանից 25 տարի առաջ, վաշխառութիւնը շնորհիւ ընդհանուր դրութեան՝ ամուր և հաստատուն հողի վրայ է կանգնած և գիւղացիները տարեկան վճարում են 50-ից մինչև 200 տոկոս: Այդ երկրագործական բանկերին դիմելը և հազար ու մի գծաւորութիւնից յետոյ փող ստանալը գեւ այն բիսկն էլ ունի, որ պարտքը չվճարուելու հէնց առաջին դէպքում կառավարութիւնը գրաւում է գիւղացու ցանքսը և հողը ու աճուր-

դով ծախում: Վաշխառուի հետ զործ անելիս գիւղացին էլի յոյսը չի կտրում, որ հողը մի սրող ժամանակ իր «սեփականը» կը լինի և կամ մի յաջող տարի գուցէ կը կարողանայ իր պարտքից էլ ազատուել. մինչդեռ «էժան» Մանիֆէ-ն հրկար չի սպասում. մի վատ տարի և... հողը չկայ: Ահա և մի այլ օրինակ. թիւրք կառավարութիւնը Եւրոպայի աչքին թող փչելու հպատակով «առևտրական պալատներ» է հաստատում կամ ձեացնում է թէ պատրաստ է հաստատել թիւրքիայի վաճառականական կենդրոններում, և եւրոպական վարձուած մամուլը իսկոյն «րեֆորմներ»-ից է խօսում. մինչդեռ թրքաց օրէնքներով վաճառականը կամ գիւղացին մի վիճակէթից միւս վիճակէթը իր ապրանքները անձամբ տեղափոխելու համար հետեւել ձեակերպութիւնները ստիպուած է կատարել. գնալ և իրաւունք ստանալ 1) իր համայնքի կամ գիւղի մուստարից, 2) տեղական քաղաքացիական վարչութիւնից, 3) երկրագործական բանկից (իւր զաւառի) վերցնել մի թուղթ, որ ոչ մի տեղ պարտք չկայ իր հորի վրայ և թէ միւս հարկերն էլ վճարած է. այնուհետև հողագործը, որը ուզում է իր ցորենը տանել ծախել, պէտք է գնայ 4) ոստիկանատուն և զրանից յետոյ, 5) ժանդարմների վարչութիւնը, որպէսզի վերջիններս բարեհաճեն տալ նրան մի «վկայագիր վարուց», որով «չեն հակառակում այդ վաճառականի կամ գիւղացու տեղափոխուելուն»: Այս բոլոր թղթերը ու վկայագիրները ձեռք բերած՝ որպէս կատարեալ յաղթութիւն՝ անվերջ կասկածոտ վարչութեան վրայ— վաճառականը այնուհետև կարող է մի տեսակ յաղթանակով ներկայացնել նրանց պոլիցիային, ուր և կը կնքեն ու կը ստորագրեն անհրաժեշտ անցագիրը: Ահա զրանից յետոյ միայն չարաբաստիկ վաճառականը կարող է ճանապարհ ընկնել իր ապրանքը ծախելու կամ գնելու համար:

Անաշառութիւնը պահանջում է շեշտել այն երևոյթի վրայ, որ թրքաց ներկայ ընդհանուր բեժիմից տուժում է ոչ թէ միայն քրիստոնեայ տարրը, այլ և մահմեդականը:

Աղքատ մուսուլմանը կոչւում է օր. զինուորական ծառայութեան ուր և մնում է 2 կամ 3 անգամ աւելի քան պահանջում է օրէնքը: Պատահում է նաև, որ նա փոխարինում է այն հարուստ թրքերին, որոնք այս կամ այն պատճառով «ազատուել են» այդ ժամանակամիջոցում զինուորական ծառայութիւնից: Թուրք զինուորը չի ստանում իրան նշանակուած ոռճիկը, համազգեստի փոխարէն նրան տալիս են պատառոտած վերարկուներ. պակասում են կօշիկները յաճախ և հացը... Օֆիցերից սկսած մինչև մինիստրը՝ կողոպտում են զինուորա-

կան պէտքերին յատկացուած գումարները. ծախում են զինուորանոցի ալիւրը, մթերքները, համազգեատը և վառօդը: Կիւսաքացւոյն կեդոտ, ենթարկուած շատ անգամ ջերմախտի կամ վեներական հիւանդութիւնների—այդ թշուառները ստիպուած են լինում կամ ապստամբուելու կամ գողութեան ու աւագակութեան զիմելու: Թուրք գաւառապետները այնպէս են գործը կարգադրում, որ Մակեդոնեայի մեծ քաղաքների շուկաները (եթէ միայն սրանք քրիստոնեաներին են պատկանում) ժամանակ առ ժամանակ հրդեհի ենթարկուեն: Եւ ահա, երբ տեղային զինուորական գունդը քաղցածութիւնից ստիպուած սկսում է զժգհութիւն ցոյց տալ կառավարութեան դէմ, յանկարծ «պատահմամբ» հրդեհում է տեղային շուկան և զինուորները (օրէնքը այդ է պահանջում) ի հարկէ, ուղարկւում են օգնութեան՝ հրդեհը հանգցնելու և ապրանքները աղատելու: Եւ իսկապէս զինուորները «ազատում են» շուկայի ապրանքները բայց... կողոպտելով ու իրանց սեփականացնելով: Մակեդոնեայում, Եաննայից սկսած մինչև Պրիցզենդ քաղաքը՝ չկայ քրիստոնեաներին պատկանած մի մեծ շուկայ, որ երկու կամ երեք անգամ ստիպուած չլինի վերջին տարիներս կերակրել և զգեստ մատակարարել ալբանացի և թուրք զինուորներին:

Գիտար է ասել, այսպիսի պայմաններում, թէ մասնաւոր բեֆորմներ,—ինչպէս օր. քրիստոնեայ ժանդարմերիա—առաջարկելը միամտութիւն է, թէ՞ կեղծաւորութիւն: Գաղտնիք հօշէ, որ թիւրք ժանդարմերիան էլ ոտճիկ չի ստանում. ուստի և նրանք քաղաքական խուզարկութեան պատրուակի տակ—գողանում են ու կողոպտում՝ քրիստոնեաների տները ու խանութները: Ուրեմն Բնչպէս կարելի է խօսել մահմեդական թէ քրիստոնեայ ժանդարմների քանակութեան մասին, երբ ժանդարմերիան ճակատագրօրէն անկարգութեան ու անօրէնութեան տարր է ներկայացնում առհասարակ և մասնաւոր թիւրքիայում: Բայց զինուորներից ու ժանդարմներից յետոյ ահա և թիւրքիայում տիրող օրէնսդրութեան պաշտպանները և նրանց նիւթական զրութիւնը:

Արեւելքում, գոնէ թիւրքիայում, դատաստանատան մօտ կարելի է պատահել մի խումբ մարդկանց, որոնք կեղծ վկաների վեր են խաղում: Ով իր շահերն է ուզում պաշտպանել, նա ստիպուած է զիմել այդ կեղծ վկաներին. վերջիններս իրանց ստացածից որոշ գումար յատկացնում են դատաւորին: Բայց կեղծ վկայութիւնը այնպիսի անարգ ու առատ ապրանք է դառել արեւելքում, որ գինը սաստիկ ընկել է: Քիչ թէ շատ «կարգին մարդու» սուտ վկայութիւնը և հրդումը թիւր-Օգոստոս, 1905.

քիայում արժէ միջին թուով 1—2 մեջլիդիէ (4—8 ֆր. կամ մօտ 3 բուլբի) ¹⁾։ Դատաւորը այդ դէպքում համարեա ոչինչ չի ստանում... Նրան պէտք էն աւելի մեծ և հաստատ եկամուտներ, որովհետև կառավարութիւնը նրան երբէք ոչինչ չէ վճարում փաստօրէն։ Մի որևէ ընտանեկան հարց քրիստոնեաների մէջ, կամ սեփականութեան կսիւ քրիստոնիայի և մահմեդականի մէջ, տալիս է ամենաառատ հունձը թիւրք զատաւորին։ Մի երկիր, ուր գոյութիւն չունեն անձնոմխելի նօտորական մատենաներ ու վկայագրեր՝ չի կարող գոյութիւն ունենալ հէնց տիրող օրէնսդրութեան տեսակէտից ևս որևէ սեփականութիւն, որ մի անգամ ընդ միշտ զերծ մնար «օրինական» կամ բռնի կողպուտից ու զեղծումից։ «Դու ուզում ես, ապացուցել որ այս գիւղը քեզ է պատկանում, հարցնում է գատաւորը. բայց այս ինչը պնդում է, որ գիւղը իրանն է և իբրև ապացոյց՝ դրացի սրճատնից բերում է տաւը հատ վկայ, որ յօգուտ նրան են վկայութիւն տալիս. դու ի հարկէ նոյնքան և աւելի ես շատ կարող ես վկաներ բերել, բայց արժէ այդքան ծախսեր անել... խելացի մարդը սկսում է անխուսափելի «ծայրից» և վարձատրում է նախ և առաջ գատաւորին...», «դու գնել ես դաշտավայրի կամ անտառի այս ինչ մասը նօտարի ներկայութեամբ, որը և արձանագրել է իր մատենաներում, որի պատճէնը դու ունես, բայց մի տարի անցնելուց յետոյ քեզ ծախողը յայտարարում է որ այդ ծախուած հողը իր կնոջ սեփականութիւնն է և թէ ինքը ծախողը իրաւունք չունէր ծախելու... գիտես, չարժէ»։ Եթէ այդ դէպքում գատաւորը չափազանց ազան է երևում և գործը անպատճառ գատաստանատուն է բերում, անհրաժեշտ է նախ և առաջ ներկայացնել վկաներին. մի կողմից եթէ ցոյց են տալիս 12 վկայ, միւս կողմն էլ պէտք է նոյնքան և աւելի թուով վկաներ ներկայացնէ։ Այդ վկաներին պէտք է ներկայացնել «նորին գերազանցութեան»—գատաւորին, նա ընդունում է այս ինչ վկային—պէտք է տալ նորին գերազանցութեան 2 ֆր. նա ընդունում է այս երկրորդ վկային—նոյնպէս 2 ֆր. և երբ վարձատրուեն բոլոր ներկայացուած վկաները, այն ժամանակ մնում է միայն տալ գատաւորին այն՝ ինչ արդէն նա կը պահանջի։ Այդ է իրաւասութեան ու իրաւական մթնոլորտը ամբողջ Թիւրքիայում, գուցէ փոքրիկ վարիացիներ-

¹⁾ Ըստ Դուրանի շատ դէպքերում մահմեդականի սուտ վկայութիւնը ու երդումները չնչին ջոհողութիւններով, մինչև իսկ մի երկու •ը ծոմապահութեամբ կարելի է քաւել։ (տես Ատրպետ «խալիֆաթ»)։

քով. կարող է այդպիսի մթնոլորտում տնտեսական կեանքը ընթանալ իր բնական ճանապարհով:

Եւրոպան պնդում է, որ Թիւրքիան չի կարող առանց ճանապարհների լաւ հաղորդակցութեան բարգաւաճել. դա տնտեսական է մի երկրի հասարակական կեանքի զարգացման տեսակէտից ևս: Եւ Թիւրքիան ստիպուած է ուրեմն այդ առիթը, բայց դրա համար նա պիտի յաճուի ամենահասարակ և ամենաէական միջոցը՝ այնպէս ձրի բանեցնել ճանապարհներին կից գիւղացիներին: Այսպէս՝ երբ Կ, Պոլսում ծրագրուած է մի որեւէ ճանապարհ լայնացնել, կամ բարեփոխել և կամ նորը պատրաստել, երկու քաղաքների, օրինակ Սալոնիկի և Մանաստիրի միջև, մուլթէսարիֆները երեւիլի միջոց ունեն և՛ ժողովուրդը բանեցնելու և՛ ճանապարհները նոյն վատ դրութեան մէջ թողնելու: Նրանք այնպէս են աշխատանքը բաժանում գիւղացիները՝ մէջ, որ Սալոնիկի շրջակայքում ապրող գիւղացին գնա սկսէ աշխատել Մանաստիրի մօտ, իսկ Մանաստիրի շրջակայքում ապրող գիւղացին գնա մինչև Սալոնիկ և այնտեղից սկսէ աշխատել ծրագրած ճանապարհների վրայ. այդպիսով՝ գիւղացիները ստիպուած են հեռանալ իրանց բնակավայրերից 100—200 վերստ: Յայտնի բան է, որ գիւղացիները սկսում են արտոնջալ: Իսկ սա արդէն մուլթէսարիֆի տեսակէտից ապստամբութիւն է և ուրեմն իրաւունք ունի ժանդարմներ ուղարկել դժգոհութիւն ցոյց տուող գիւղերը...: Գիւղացիները նախ ծեծուում են, ապա և կողոպտուում. շատ անգամ նրանց ունեցածը կրակի վոճ է դառնում. բայց եղել են շատ դէպքեր, երբ դժգոհ գիւղացիք կախաղան են բարձրացել. և այդ բոլորից ազատուելու միակ միջոցը կայանում է վերջապէս հասկանալու մէջ, թէ՛ մուլթէսարիֆի կամ դայմագամի ցանկութիւնն է դժգոհներին ոչ ծեծել, այլ... նախապիտի վերածել գիւղացիներից պահանջուած աշխատանքը:

Մի քանի դժբաղդ փորձերից յետոյ, գիւղացիները վերջապէս «խելքի են գալիս» և որոշ գումար փողով կամ ապրանքով տալիս են մուլթէսարիֆին, որը իսկոյն բաժանում է իր ստացածը վաւառապետի և Կ. Պոլսի պալատականների հետ: Այդ տխուր կատակերգութիւնը կրկնուում է համարեա ամեն տարի. ճանապարհները նոյն նախնական անտանելի դրութեան մէջ են մնում, մինչդեռ մուլթէսարիֆները ծախուելիք փողի եռապատիկը արդէն ստացել են գիւղացիներից: Եւ եւրոպական դիպլոմատիան ժամանակ առ ժամանակ մասնաւոր բեֆորմներ է պահանջում Թիւրքիայից... Արդեօք կարող է իրագործուել որ և է՝ ընթերմ այսպիսի տնտեսական և իրաւական պայմաններում:

Մենք դեռ չենք խօսում մի այլ հանգամանքի մասին, որ մի-
րեֆորմ առաջարկուելիս՝ ոչ այնքան գաւառներում, որքան հէնց-
կ. Պոլսում նստած կառավարական խոշոր պաշտօնեաներն են
հակառակուում: Ամեն մի նոր բեֆորմ ներմուծուելիս—սեղմում,
ընկճում է «բարձիշի», շանտաժի միջնորդութեամբ, որը կեանքի ու
մահուան խնդիր է դառնել թուրք աստիճանաւորի համար:
Այդ է պատճառը, որ մի խումբ քաղցած պալատականներ ու
փաշաներ ամեն մի նոր բեֆորմի առթիւ՝ սարսափեցնում են սուլ-
թանին, որ ամեն ինչ կործանուելու, տալնուվրայ լինելու մօտ
է «աշխարհի ամենալաւ երկրներից մէկում»: ¹⁾ Եւ չնայած այս-
բոլորին, ասում ենք, պաշտօնական Եւրոպան չլսող ու չհա-
կացող է ձեռնում և անծայր ու անվերջ հատուկութիւն, անգլուխ
կամ անպոչ բեֆորմների ծրագիրներ է «առաջարկում». այդ
բեֆորմները պէտք է «ընդունուեն» և իբր թէ պէտք է իրագոր-
ծուեն թուրք կառավարութեան կողմից և նրա սպասու կամքով:
Դա ի հարկէ միամտութիւն է, որ եւրոպական տիպումատիան
աւելի ևս միամիտ մարդկանց գլխին է փաթաթում. չէ որ շա-
տերը հաւատում են, իբր թէ կարելի է Թիւրքիայում ներմու-
ծել մասնակի բեֆորմներ, այն էլ թողած թիւրք կառավարու-
թեան կարգադրութեան ու հսկողութեան: Մենք, ինչպէս մեզ
հետ շատերը, ոչ մի նշանակութիւն չենք տալիս այդ առա-
ջարկուած «ծրագիրներին»: Եւրոպայի «առաջարկները և Թիւր-
քիայի խոստումները» շարունակում են ահա մօտ 80 տարի է:
Համարեա մի ամբողջ դար սուլթանների ոչ մի խոստումը չի
անցել խօսքից գործի, և թէ միայն մի որևէ եւրոպական պի-
տութիւն չէ ստիպել նրան: Օրինակների համար հեռու չպէտք
է գնալ:

1829 թ. Ռուս-թրքական պատերազմից յետոյ՝ Ադրիա-
նուպոլսի դաշնագրի հիման վրայ՝ Թիւրքիան խոստացաւ
փոխել քրիստոնեաների վերաբերմամբ իր բռնած քաղաքակա-
նութիւնը. միևնոյն ժամանակ նա ճանաչեց Ռուսաստանի իրա-
ւունքը միջամտել «քրիստոնէական» հարցերի ժամանակ:

1839 թ. սուլթան Աբդուլ-Մէճիտը ստիպուած եղաւ հրա-
տարակել նշանաւոր «Սաթթի-Շէրիֆ» իրադէն, որով նա խոս-
տանում էր պաշտպանել իր «հպատակ քրիստոնեայ սպիտա-
թիւնների պատիւը, կեանքը, սեփականութիւնը, առանց ցեղի
կամ կրօնի խտրութեան»:

¹⁾ Շատ անգամ պալատականները Շէյխ-ուլ-իսլամների միջոցով յա-
նուն Ղուրանին են վախեցնում սուլթանին, թէ բեֆորմները ֆեաւաւար են
կրօնական տեսակէտից էլ:

1844 թ. նոյն սուլթանը նոյնատեսակ միայլ հրովարտակ հրատարակեց, ուր խոստանում էր մօտաւորապէս միևնոյնը: 1856 թ. Ղըիմի պատերազմից յետոյ սուլթանը շտապեց ընդառաջ գնալ Պարիզի դաշնագրին և հրատարակեց մի իրագէ, ուր ասուած էր, թէ այսուհետև իր բոլոր հպատակները հաւասար են թուրք օրէնքի առաջ և պիտի վայելին քաղաքացիական հաւասար իրաւունքներ: Այդ իրագէն կամ մանիֆեստը, ի միջի այլոց ասում էր հետեւեալը. «Կառավարութեան իղձն է որ Թիւրքիայում գոյութիւն ունեցող կրօններից ոչ մէկը չենթարկուի որևէ խտրութեան պետական օրէնքների առաջ»: Բայց այդ մանիֆեստը ինչպէս և միւս մանիֆեստները ¹⁾—մեռած տառեր մնացին: Անցնենք սակայն նոյն քառասական բեթիմի նոր ներկայացուցչի Աբդիւլ-Համիդի խոստումներին:

1877 թ. անգլո-թրքական դաշնագիրը ասում էր ի միջի այլոց. «Նորին Մեծութիւն սուլթանը խոստանում է Անգլիային՝ իրագործել անհրաժեշտ բեֆորմները, որոնց նպատակն է քրիստոնեաների պաշտպանութիւնը հայկական դաւառներում»: Եւ որպէսզի սուլթանը կարողանայ պաշտպանել «Հայաստանը Ռուսաց դէմ», նա «ընդունում է Կիպրոս կղզու գրաւումը Անգլիայի կողմից». բացատրութիւնները իհարկէ աւելորդ են... Անգլիան բարեհաճեց Կիպրոս կղզին գրաւել, բայց սուլթանը չկարողացաւ քրիստոնեաների իրաւունքը պաշտպանել:

Դրանից յետոյ Սան-Ստեֆանոյի դաշնագրի հիման վրայ Թիւրքիան պարտաւորութիւն յանձն առաւ Ռուսաստանի առաջ «բարեօրէն առանց յապաղման հայերի դրութիւնը և նրանց պաշտպանել քրդերի և չէրքէզների դէմ»: Այդ «պարտաւորութիւնն» էլ իհարկէ լոկ թղթի վրայ էր:

Մի քանի ամիս չանցած՝ 1878 թ. Բերլինի նշանաւոր դաշնագիրը ստիպում է սուլթանին ընդունել § 61-րդը, ուր ասուած էր, որ սուլթանը իր վրայ պարտականութիւն է առնում իրագործել, էլի «անյապաղ», այն բեֆորմները, որոնք պահանջում են հայաբնակ դաւառների տեղային պայմանները, ինչպէս և պաշտպանել հայերին քրդերի և չէրքէզների յարձակման ու կողոպուտի դէմ: Այդ «նպատակը իրագործելու միջոցները մասին Բ. Դուռը պէտք է ժամանակ առ ժամանակ իմաց տայ հերոսական հինգ պետութիւններին, որոնք և կը հսկին

¹⁾ 1866 թ. սուլթ. Աբդիլ Օսմանեան երկրում ուսումը պարտադիր հրատարակեց, այդ նպատակով տասանորդ հարկի փոխարէն պէտք է ոտացուէր մի ութերորդը և յաւելուած հարկը յատկացուէր լուսաւորութեան նախարարութեան: Թէև հարկերը աւելացան, բայց ուսումնարանները չբացուեցին:

րեֆորմները իրագործման վրայ...» Նոյն Բերլինի դաշնագրութեան § 29-ով խոստացուած էր մօտաւորապէս նոյնը Մակեդոնիայի վերաբերմամբ:

1880 թ. Թիւրքիան խոստանում է եւրոպական պետութիւններին իրագործել մի քանի անհրաժեշտ ընդհանուր Սրբեկեան Ռումելիում: Տասնէ հինգ տարի յետոյ, երբ ոչ թէ որեւէ բարեփոխում տեղի չունեցաւ Թիւրքիայի գաւառներում, այլ բրիտանականների գրութիւնը աւելի ևս վատացաւ, 1895 թ. սուլթան-Աբդուլ-Համիդը խոստացաւ կայսերական իրազեկով իրագործել նշանաւոր «Եւրոպական կոնցերտի» այսինքն դիպլոմատիայի պատրաստած ընդհանուր ծրագիրը: Սակայն մի անգամ ևս ոչինչ չիրագործուեց. նոյն հալածանքը, նոյն խնդիրները, մի խօսքով նոյն բեժիմը շարունակուած է Թիւրքիայում առանց փոփոխման: Երեւան եկան մի քանի նոր երեւոյթներ՝ հալածանքը փոխուեց բանտի, խռովութիւնները՝ մասնակի ապա և ընդհանուր կոտորածի. կոտորուեց մեծ և փոքր, կիւն և մարդ, կոտորուեց յաւանեակ, հարկւր հազարներով: Եւ Արեւելեան Հարցի շուրջը կուտակուած էին մի կողմից ընդհանուր ծրագիրներ, միւս կողմից կոտորածների դիակներ: Եւ մինչդեռ շատերը կարծում էին որ «ընդհանուր ծրագիր» կատակերգութիւնը այլևս կրկնուելու չէ, յանկարծ 1903 թ. Աւստրիայի և Ռուսաստանի կողմից սուլթանին ներկայացրուեց Միւրցշտէյկի ծրագիրը—Մակեդոնիայի վերաբերմամբ: Երբ Եւրոպան տեսաւ, որ սուլթանը իսկոյն և եթէ բարեհաճեց ընդունել այդ ծրագիրը քիչ էր մնում, որ «գարձանքից մարէր»... Մեզ համար զարմանալին հէնց իր՝ Եւրոպայի՝ հաւատքն է ու միամտութիւնը: Ծրագիրը ընդունուեց, որովհետեւ այն՝ փոխանակ մակեդոնացիներին որեւէ գոհացում տալու, տարօրինակ կերպով աւելի էր ամրացնում սուլթանի գրութիւնը Մակեդոնիայում: Պաշտօնական Եւրոպայի սանկցիայով Մակեդոնիան ձեռք ու ոտք կապուած գրուեց Թիւրքիայի քմահաճոյքի տակ: Միւրցշտէյկի ծրագիրը, թուով վերջինը որ առաջարկուեց սուլթանին, ոչինչ նոր բան չէր պարունակում, որ արդէս տասնեակ իրագէներում կրկնուած ու խոստացուած չլինէր: Հարցի ամենաէական կէտը—փայլում էր իր բացակայութեամբ. այն է՝ Եւրոպայի մշտական և ուղղակի կոնտրոլը երկրի ընդհանուր վերակազմակերպութեան վրայ: Մինչև որ այս էական կէտերից գոնէ մէկը չիրագործուի,—Արեւելքի վերքերը բաց կը մնան, և դժուար է ասել, թէ ինչով կը վերջանայ Արեւելեան Հարցը: Միայն վերջին երկու տարուայ ընթացքում Մակեդոնիայում 201 գիւղ է աւերակ դարձել:

12,440 տուն կողոպտուել, 4,694 մարդ սպանուել, 3,122 կին բռնաբարուել և 71,855 մարդ անանկացել ու աղքատացել: Իսկ Եւրոպան:

Պաշտօնական ու կապիտալիստ Եւրոպան զրադուած է միակ մտատանջութեամբ՝ թողնել թիւրքիայի նախկին *ad valorem* մաքանահարկը, եւրոպական ապրանքների վերաբերմամբ և նոր փոխառութիւններ առաջարկել թիւրքիային, որպէսզի կարողանայ հրացան ու թնդանօթ պատուիրիկ Եւրոպային ու այդպիսով աւելի սերտ կապերով կապուել «քաղաքակիրթ» երկրներին... շահերին ¹⁾:

Մենք տեսնք, որ թիւրքիայի ֆինանսները, իսկ զրահեռ և թիւրքիայի տնտեսական կեանքը՝ կապուած են մի կողմից ուղղակի իրան թիւրք վարչութեան, միւս կողմից Եւրոպայի կամ եւրոպական կապիտալիստների հետ, որոնց ներկայացուցիչն է, ինչպէս ասացինք «Հանրային պարտքերի վարչութիւնը»:

Չնայած այն ճշմարտութեան, որ թիւրքիայի զրութիւնը ողորմակի և անյոյս է, հէնց այդ անորմալ զրութիւնը մի տեսակ պահապան հրեշտակ է դարձել թիւրքիայի անկախութեան համար: Թողնելով և պահպանելով թիւրքիան, որպէս մի քաղաքական առանձին և անկախ պետութիւն՝ Եւրոպան նոյն այդ թիւրքիայի ֆինանսական և տնտեսական կեանքը իր ձեռքն առաւ և այն աստիճան իրար ձուլեց իր ու նրա նւթական կեանքը, որ ակամայ դարձաւ նրա քաղաքական շահերի պաշտպանը: Գոնէ կապիտալիստների համար անհրաժեշտ է դարձել այսուհետև պահպանել իրերի զրութիւնը, *statu-quo*-ն թիւրքիայում: Կապիտալիստ Եւրոպան իր միջամտութեամբ (Հանր. պ. վարչութեան) զարմանալի կերպով ոյժ և տոկունութիւն տուեց թիւրքիայի պաշտօնական ֆինանսներին, իսկ զրա միջոցով ոյժ և կենսունակութիւն փչեց թրքաց միապետական, մինչ

¹⁾ Մեր յօդուածը վերջացրել էինք, երբ սուսաց ֆինանսների մի-նիստութեան թերթից իմացանք, որ 1905 թ. յունուարին՝ Կ. Պոլսում հիմնուել է. «Արտասահմանտն առևտրի միութիւն» (*Union perm. des délégués de Commerce étranger*). այդ հիմնարկութեան նպատակն է «զարգացնել թիւրքիայում այս միութեան յարուող պետութիւնների առևտուրը». այդ նոր հիմնարկութեան մասնակցում է և Ռուսաստանը: Ահա միջազգային տընտեսական մի հիմնարկութիւն ևս, որ ապագայում կտրող է մեծ դեր խա-կալ. հիմնարկութիւնը յամենայն դէպս արժանի է ուշադրութեան. «Կայ հիմք կարծելու, որ Ռուսաստանը կը բռնի իրան արժանի տեղը, և որ ի դէպ երաշխաւորում է նրա աշխարհագրական դիրքը» թիւրքիայի արտասահման-եան առևտրի մէջ»—ասում է սուս պաշտօնական թերթը (*Вѣст. Финан-совъ*, 1905, № 15):

այդ, խարխուլ կարգերին: Բաժանելով թրքայ պետութեան ֆինանսական կեանքը երկու մասի, Եւրոպան առաւ իր ձեռքը պետութեան նախ եկամուտների մի մասը՝ նախկին պարտքերի հատուցման համար, ապա օգնեց նրան այդ հարկերի կարգադրութեան ու հարկահանութեան հարցերում: Իր օրինակելի կազմակերպութեամբ կապիտալիստ Եւրոպան (Հանր. սլաւո. վարչութիւնը) պարտքերի զեղջման հարցերում ցոյց տուեց զիպլոմատիային, թէ Թիւրքիան մի շատ շահաւէտ և անսպառ աղբիւր է Եւրոպայի շահերի համար: Այլ լսան է, եթէ նոյն Թիւրքիայի պարտքերը անկանոն վճարուէին և հետևապէս Եւրոպայի շահերը ֆլասուէին. այն ժամանակ անշուշտ պաշտօնական Եւրոպան իսկոյն կը գար այն եզրակացութեան, որ այդտեղ չէ տիրում «կատարեալ անդորրութիւն» և ուրեմն թուրք պետութիւնը դարձել է անպէտք, մինչև իսկ ֆլասուաւոր «քաղաքակրթութեան» համար ¹⁾: Բայց հէնց այս կողմից Թիւրքիան ապահով է, որովհետև նա իր գլխին ունի մի լնամմաւ, մի ընդունակ «կառավարիչ», որ հոգս է քաշում նրա համար, բոլոր անհրաժեշտ ֆինանսական հարցերում:

Ի՞նչ փոյթ թէ թրքահպատակ աղբութիւնները տնտեսապէս քայքայուեն, աղքատանան. ի՞նչ փոյթ թէ երկիրը քաղաքական ու իրաւական որևէ իրաւունքից զրկուած լինի—քանի որ այդ քառասական դրութիւնը անքան ձեռնտու է Եւրոպական պետութիւններին:

Մինչև 90-ական թուականները կէսերը գլխաւորապէս Անգլիան, Ֆրանսիան և Աւստրիան էին որ շահուում էին Թիւրքիայից. իսկ վերջին տաս տարում զրանց թոին աւելացաւ և Գերմանիան, որ ամեն օր մի նոր տնտեսական նուաճում է անում խալիֆների հայրենիքում: Մի կողմից Եւրոպացիք ներմուծում են իրանց ռաւածարանական ապրանքները, առաւել զարգացնելու նոյն Թիւրքիայի սեփական արդիւնաբերութիւնը, միւս կողմից հիմնում են գերմանական, ավստրիական տներ Թիւրքիայի խոշոր կենդրոններում ու այդպիսով գերիշխող դիրք են գրաւում: Ուստի և Թիւրքիան Եւրոպական պետութիւնների վերաբերմամբ և տնտեսական տեսակէտից՝ կապիտալիստական կոլոնիայի դեր է խաղում: Ահա թէ ի՞նչու Թիւրքիայում տեղի ունեցող ապստամբութիւնները ու զժգոհութիւնները միմեանցից բոլորովին տարբեր նշանակութիւն ու լուսաբանութիւն են ստանում:

¹⁾ Բաւական է յիշել Լորանդօ և Տիւբինի ընկ. հարցը և նոյնանման զէպքերը: Բ. Բ.

Եթէ խլրտումները տեղի են ունեցել ծովափնեայ քաղաքներում և կամ այնպիսի վայրերում ուր հարկահաւաքութիւնը «Հ. պարտ. վարչութեան» հսկողութեան ու կարգադրութեան տակ է—այն ժամանակ Եւրոպան իսկոյն սկսում է Թիւրքիային «խելքի բերել»: Հօ չէ կարող Եւրոպան ստանութեամբ նայել ապստամբութեան կամ կոտորածների վրայ, որոնք ընկել են ենթարկում «Հանր. պարտ. վարչութեան» շահերը... Այլ խնդիր է եթէ Թիւրքիայի մի յետ ընկած, խուլ անգիւնում, ուր Եւրոպայի տնտեսական շահերը ոչինչ չեն կորցնում, ապստամբութիւն է կատարւում. նրան ի՞նչ, չէ՞ որ այդ տեսակ հարցերը մի «կարգին» տէրութիւն պարտական է ինքը վճռել, և «կարգին տէրութիւնը» ինքն է «վճռում» այդ կնճառտ հարցերը: Եւ միայն երբ արդէն քարերն են խօսում՝ Եւրոպան էլ սկսում է կոկորդիլոսի արցունքներ թափել:

«Եւրոպա» ասելով մենք հասկանում ենք եւրոպական կապիտալիստ դասակարգը ու նրա շահերը պաշտպանող եւրոպ. դիպլոմատիան և ոչ թէ այն նշանաւոր գործընկերը ինչպէս՝ Ժորէո, Բեքել, Վանդերվելդ և այլն, որոնք Եւրոպայի պրոլետարիատի ներկայացուցիչ ու մեր անկեղծ բարեկամներն են:

Եւրոպայի համար գլխաւոր հարցը կայանում է այն բանի մէջ, որ Թիւրքիան վճարէ իր պարտքերը: Եւ յիշաւ Թիւրքիան շնորհիւ «Հանր. պարտ. վարչութեան» իր պարտքերի մի մասը վճարեց: Եւ—եթէ ժամանակ առ ժամանակ Թիւրքիան նորանոր պարտքեր է անում—գուզնիթացաբար էլ նա իր նախկին պարտքերի գումարը փոքրացնում է: Քսան տարուայ մէջ նա վճարել է մօտ 35 միլիոն թրքական ոսկի, իսկ նոր պարտքեր է արել մօտ 20 միլիոն թրքական ոսկի: Այդպիսով նա փոքրացրել է 15 միլ. իր պարտքերից: Սօսը չկայ ուր գուզնիթացաբար և անհամեմատ աւելի ժողովուրդը տնտեսապէս քայքայուել է, բայց այս հանգամանքը հաղիւ թէ որեւէ նշանակութիւն ունենայ պաշտօնական Եւրոպայի աչքում:

Մենք արդէն ասացինք, որ Թիւրքիայի թէ ընդհանուր և թէ մասնաւոր ճիւղերում տնտեսական կեանքը դրուած է այնպիսի պայմաններում, որ չէ կարող զարգացնել երկր խարդիլ-նաբերող ոյժերը: Այդ կաշկանդման գլխաւոր պատճառն է թուրք միապետութեան ժաշուած, անպէտքացած կազմը և կառավարութեան կախումը եւրոպական կապիտալիստ դասակարգից: Այդ բոլորը ստեղծում է Թիւրքիայում պատմութեան մէջ դեռ ևս նմանը չտեսնուած մի քաոսական դրութիւն, որը ընդհանուր առմամբ օգտաւէտ է եւրոպական մեծ պետութիւնների համար: Միևնոյն ժամանակ այդ տնտեսական-քաղաքական քա-

օսային գրութիւնը անկարելի է դարձնում, ինչպէս տեսանք, մասնաւոր ընթերցման իրագործումը թիւրք միապետութեան սահմաններում: Բայց եթէ Եւրոպայի կողմից սուլթանին սուլթանի տալիս մասնաւոր ընթերցմանը անկարելիութեան են բաղ-խում, արդեօք նոյն Եւրոպան չի կարող ուժով մտցնել հիմնա-ւոր և արմատական ընթերցման և կամ բաժանել թիւրքիան եւրոպական տէրութիւնների մէջ: Մենք ամենահին յաւակնու-թիւն չունենք մարգարէութիւններ անելու, ակնարկենք մի-այն այտուղ երկու խոշոր պատմական փաստի վրայ: Առաջինը ինչպէս տեսանք, այն է, որ թիւրքիայի հէնց արդի գրութիւնը ամենից շատ համապատասխանում է Եւրոպայի տնտեսական, ֆինանսական շահերին: Երկրորդը զուտ քաղաքական՝ վերաբե-րում է թիւրքիայի դրացի մեծ պետութիւններից մէկին՝ Ռու-սաստանին. կարծում ենք այլևս ոչ ոքի համար զաղտնիք չէ, որ Ռուսաստանը դէմ է որեւէ արմատական վճռի թիւրք միա-պետութեան վերաբերմամբ ¹⁾:

Ներկայումս մի բան կարելի է հաստատել, որը ինքն ընտ-ինքան հետևում է մեր ասածից. քանի թիւրքիայի սահման-ներում գոյութիւն ունենայ իրերի արդի գրութիւնը, անխուսա-փելի են նոյն պետութեան մէջ զանազան ազգութիւնների դժ-գոհութիւններն ու իլլրտումները, որ գնալով աւելի ևս կարող են ուժգին կերպարանք ստանալ:

Իսկ քանի այդպիսով Արեւելեան Հարցը գործօն հրաբուխի ոյժ է ստանում, Եւրոպային ճակատագրօրէն սպառնում է մի սոսկալի կոնֆլիկտ թիւրքիայում գոյութիւն ունեցող միջազ-գային շահերի հոգի վրայ:

Փամանակի անիւր անյաբան ուժգնութեամբ է ընթանում սակայն, որ այդ նոյն կապիտալիստ դասակարգը կամաց-կա-մաց կորցնում է իր ոտի տակ ամուր կարծուած հողը, կորցնե-լով դրա հետ միասին և իր դերը ու ազդեցութիւնը, թէ իր

1) Վերջին 7—10 տարին Ռուսաստանը քանի գնում լայնացնում է իր տնտեսական կապերը թիւրքիայի հետ, ներմուծելով այնտեղ մեծ քա-նակութեամբ իր արդիւնաբերութիւնները (կերութիւն, ապակի, մանուֆակ-տուրային ապրանքներ և այլն): Առանց կանգ առնելու միւս գոյ ծօնների վրայ՝ մասամբ կարելի է և տնտեսական պատճառներով բացատրել կոմս Լորանովի խօսքերը, թէ «Ռուսաստանը չի ուղում մի երկրորդ Բուլղարիա տնանել իր կողքին», որից նա ոչ տնտեսական և ոչ էլ քաղաքական շահ ունեցաւ. նոյն Լորանովի պատմական ֆրագմենտից մէկն է նոյնպէս. «Հայկական ընթերցմանը մեր ներքին հարցն է»: Ինչ և է, մնում է փաստ, որ մեծ պետութիւնները զոհնում են, որ թիւրքիայի ներկայ տնտե-սական հասարակական պայմանները պէտք է պահպանել:

մօտ և թէ Թիւրքիայի վերաբերմամբ: Նոյնը և աւելի ևս արագութեամբ կատարուում է Թիւրքիայի միւս պաշտպան գործօնի — ուստի միապետութեան վերաբերմամբ: Եւ այն ժամանակ Թիւրքիան զրկուած իր ամենաուժեղ պաշտպանից, պաշտօնական հարապայի կապիտալիստ դասակարգից և զրացի երկրներէ խուլ քաղաքականութիւնից — կամ պէտք է արմատաւէս ու հիմնովին բարեփոխուի, և կամ հնթարկուի մաս առ մաս բաժանման մեծ պետութիւններէ մէջ: Վերջինս գուցէ աւելի ճակատագրական է Թիւրքիայի համար, որպէս քաղաքական միութեան անհրաժեշտութիւն...

Ռուբէն Բերբերեան

(Վերջ)

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

I

Հայ եկեղեցու կանոնական իրաւունքի ամենաէական ըսկզբունքներից մէկը՝ նրա հոգևոր-վարչական կազմակերպութեան մէջ՝ համարուում է ընտրական սկզբունքը:

Շատ անգամ է դրուել զրա մասին, սակայն մեր եկեղեցու իրաւունքի ու նրա պատմական կեանքի մէջ արտայայտուող այդ սկզբունքը դեռ պատմական հետազօտութեամբ — իր ծագմամբ, եկեղեցու դարաւոր պատմական կեանքի ընթացքում յաջորդական զարգացմամբ, ու իր արտայայտութեան եղանակներով՝ ցարդ լուրջ ուսումնասիրութիւն ենթարկուած չէ. պատմական բազմաթիւ փաստերի վերաբնահատութեան դեռ ևս եղած չէ:

Եկեղեցու համար այդպիսի արտակարգ լուրջ խնդիրներ շօշափելիս՝ բաւական չէ ասել, որ Հայ եկեղեցին ժողովրդական է, ու իբր այդպիսի մի եկեղեցի՝ կառավարուում է ընտրական լայն սկզբունքներով և այլն, և այլն:

Հայ եկեղեցու իրաւունքի գիտութեան համար լոկ խօսքերը բաւական չեն. նա պահանջում է եկեղեցու կեանքի մէջ ար-

տայայտուած իւրաքանչիւր երևոյթի վերլուծութիւնը—ծագումը, ընթացքը, արտայայտութեան եղանակները—և ապա եզրակացութիւններ այն բոլորից, ինչ որ կը տայ պատմականօրէն լուսարանուած խնդիրների նախնիաց քննադատութիւնը:

Այդպիսի մի լուրջ աշխատութիւնից յետոյ միայն, հնարաւոր կը լինի ասել, թէ մեր եկեղեցու մէջ, նրա իրաւական խնդիրների շարքում արտայայտուող ընտրական սկզբունքը մի ճանաչուած ու անբռնարարելի սկզբունք է, թէ՞ մի պատահական երևոյթ: Խնդրին այսպէս լուրջ վերաբերուիլն ու նրա հիմնաւոր ուսումնասիրութիւնը մեր առաջ կը պարզէր ընտրական հիմունքների արտայայտութեան ձևերը հայ եկեղեցու պատմական կեանքի մէջ՝ սկսած Հայրապետի եկեղեցու գլխից մինչև նրա ստորին պաշտօնեաների ընտրութիւնը:

Ընտրական երևոյթների ուսումնասիրողը, զբաղից յետոյ, պիտի որոշէ թէ, արդեօք ընտրական սիստեմի համար, ինչպէս և նրան յարակից բոլոր խնդիրների վերաբերմամբ, հայ եկեղեցին որևէ կանոնական սահմանադրութիւն ունի, թէ ոչ, և սահմանադրական կանոնական որոշումները մէջ գրաւոր հիմքեր մնացել են՝ այդ առթիւ նրա օրէնսդրական գործունէութիւնից, թէ ոչ: Թէ, Հայ եկեղեցին իր պատմական կեանքի երկուրդ փուլերում ոչ մի պարտադիր կանոն չէ սահմանել ընտրական սկզբունքի և նրա իրաւորման համար, այլ զեկաւարտել է աւանդաբար հասած կարգերով ու սովորոյթի օրէնքի տրամադրութեամբ:

Հայ եկեղեցու պատմութեան և նրա իրաւունքի աղբիւրների մեր ծանօթութիւնը մեզ թոյլ է տալիս ասելու, որ մինչև այժմ՝ յայտնի եղած նիւթերը (ձեռագիր կանոնադրքերն էլ հետը) այդպիսի մի կանոնական գործունէութեան մասին՝ ընտրական սիստեմի եկեղեցու կեանքի մէջ իրաւործելու ձևերի նկատմամբ՝ լուս են: Առաջ, երկրորդ և զաւիս ենք այն եզրակացութեան, որ Հայ եկեղեցին մեր ակնարկած կանոնադիր գործունէութիւնը չի ունեցել, կամ առնուազն այդպիսի գործունէութեան արդիւնքներ մեզ չեն հասել: Ասածներուցս տրդէն պարզ է, որ խնդրի ուսումնասիրութեան համար աղբիւրներ կարող են լինել և վճռական լուրջ նշանակութիւն ունենալ եկեղեցու պատմական կեանքի երևոյթները—իրը պատմական փաստեր և սովորոյթի իրաւունքն ու աւանդական կարգերը:

Հայ պատմագիրները մէջ յայտնի ցուցումներ կան այս կամ այն կաթուղիով, առաջնորդի, վանահօր ընտրութեան մասին, ինչպէս և մի քանի յարակից խնդիրների նկատմամբ, սակայն այդ արժէքաւոր ու ըստ ամենայնի ուշադրութեան կա-

բօս հատուկոր տեղեկութիւնները կանոնական որոշումներ լինելուց շատ ու շատ են հետու: Այդ տեղեկութիւնները պատմական յայտնի վաստակների նկարագիրներ—սովորոյթի իրաւունքի գործադրութեան իրողութեան արձանագրութիւններ են: Եւ իբրեւ պատմական իրականութիւն ունեցող վաստերի նկարագիրներ, կարող են ու պիտի ծառայեն այդ և յարանման խնդիրների ուսումնասիրութեան ու պարզարանելու գործին:

Այժմ մանրամասն կերպով նկատողութեան ասենք այն խնդիրը, թէ ընտրական սկզբունքը մեր եկեղեցու հոգևոր-վարչական կազմակերպութեան մէջ, նրա պատմական կեանքի ընթացքում ինչպէ՞ս և ի՞նչ խնդիրներ կարգաւորելիս կարող էր արտայայտուել: Այդ առթիւ թուենք այն բոլոր հարցերը, որ կարող են մօտաւորապէս զրուել այդ երևոյթի ուսումնասիրողի առաջ: Այսպէս.—

Հայ եկեղեցու ի՞նչ պաշտօններ էին ընտրովի ընդհանուր առմամբ, և ի մասնաւորի եկեղեցու պետի ընտրութիւնն ինչպէ՞ս էր կատարուում: Ովքե՞ր էին իրաւատէր Հայրապետի ընտրութեան գործում: Ժողովրդի մասնակցութիւնն ու իրաւասութիւնը կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ ի՞նչ կերպ էր արտայայտուում:

Ի՞նչ դեր և իրաւունքներ ունէին հայ քաղաքական իշխանութիւնները, արքայական տունը, իշխանները, նախարարները, մանր ազնուականութիւնը—աղատանին այդ ընտրութիւնների ժամանակ. ու նրանց իրաւասութեան սահմանները մինչև հիւր էր հասնում:

Ո՞վքեր էին մասնակցում կաթողիկոսական ընտրութիւններին հոգևորականութիւնից. քահանայական դասակարգը որեւէ իրաւունք կամ մասնակցութիւն կարո՞ղ էր ունենալ ընտրական գործերում և յատկապէս հիւր:

Հայրապետի ընտրութեան ընդհանուր ժողովն ո՞վ և ի՞նչ կերպ էր հրաւիրւում և հիւր անունից:

Եկեղեցու և ազգի ներկայացուցչութեան համար որեւէ կարգ, կանոնական սահմանադրութիւն կա՞ր, որի հիման վրայ ժողովի հրաւիրողը զիմէր որոշ հիմնարկութիւնների՝ պատգամաւոր ընտրելու կամ ուղարկելու համար:

Հոգևոր պատգամաւորներն ընտրուում էին, թէ նախապէս յայտնի էր մասնակցութիւն ունենալու իրաւատէր պաշտօնեաների կամ հիմնարկութիւնների անունները: Կամ գուցէ իւրաքանչիւր առաջնորդ, վահագայր, եպիսկոպոս, եկեղեցունշանաւոր վարդապետ, և եկեղեցիների աւագ երէցներ՝ սովորոյթի

գործադրուող իրաւունքի հիման վրայ կարող էին մասնակցել ընտրութիւններին:

Եթէ պատգամաւորի իրաւունք ունեցող մէկը, կամ իրան իրաւատէր հաշուող մի անձն, գաւառ կամ նահանգ և այլն լինին հոգևորական կամ աշխարհական, որեւէ պատճառով չի կարողացել կամ չէր կարողանում մասնակցել ընտրութիւններին, թոյլատրելի՞ էր ձայնն ուրիշի յանձնել, կամ գրաւոր յայտնել իր ցանկութիւններն ու համաձայնութիւնը: Եթէ որեւէ քաղաքի կամ հայ ժողովուրդի մի ստուար ղեկավարող մասի մասնակցութեամբ չէ եղել Հայրապետի ընտրութիւնը, ի՞նչ էր ստում աւանդական կարգը, ընտրութիւնից, զահ րարձրանալուց յետոյ էլ, հարկաւոր էր ընտրութեան չմասնակցողներին համաձայնութիւնը՝ թէ ոչ:

Իբր ընտրական պաշտօն, Հայրապետն ի՞նչ պարտաւորութիւններ էր յանձն առնում ընտրողների առաջ՝ եկեղեցական-վարչական գործերի բարձր ղեկավարութեան նկատմամբ:

Եթէ Հայրապետը որեւէ կերպ դուրս գար իր վրայ դրուած պարտաւորութիւնների սահմանից, որով եկեղեցու հիմնական սկզբունքներին վտանգ սպառնար, նա ընտրողների առաջ արդեօք որեւէ պատասխանատւութեան կարող էր ենթարկուել ու եթէ ենթարկւում էր, ի՞նչ կերպ էր արտայայտուած այդ պատասխանատւութիւնը: Մի անգամ արդէն ընտրուած և գահակալող Հայրապետը կարող էր գահընկէց լինել և ի՞նչ կերպ ու պատճառներով: Գահընկէցութեան գէպքերը մեր եկեղեցու կեանքում պատահական երևոյթներ են, թէ՛ նրա իրաւունքը հիմնական սկզբունքներ ունի մշակած այդ առթիւ: Եթէ Հայ եկեղեցու իրաւունքը կանոնական հիմունքներ չունի Հայրապետի գահընկէցութեան համար, հասկա ընտրողը—ազգը ինչի՞ վրայ է յանում իր իրաւունքը:

Եպիսկոպոսների, առաջնորդների, վստահայրերի, քահանաների, երեսփոխանների և եկեղեցու ստորին պաշտօնեաների ընտրութիւնն ի՞նչ հիմունքներով էր կատարւում, ովքե՞ր էին մասնակցում այդ ընտրութիւններին և ի՞նչ իրաւունքներով:

Առանց ժողովրդի կամ թեմի ընտրութեան Ամենայն Հայոց Հայրապետը կարող էր եպիսկոպոս, քահանայ ձեռնադրել կամ պաշտօններ տալ, ծուխեր նշանակել և այլն:

Հայ եկեղեցու պատմութիւնը ցոյց է տալիս շատ անգամ կըկնուող փաստեր՝ հայրապետական պաշտօնի մի քանի սոհմա՛մարի մէջ ժառանգական կերպն ստացած լինելու մասին. այսինքն, որ հայրապետական գահը յաջորդել են մէկը միւսից

յետոյ մերձաւոր ազգականներ: Նոյնը կարող ենք ասել աւելի մեծ ծաւալով քահանայական դասակարգի նկատմամբ:

Եկեղեցու մէջ տեղի ունեցած ժառանգական կարգն այժմ մնացել է քահանայական դասի մէջ միայն, ուր շատ տեղերում, միեւնոյն տոհմի մի շարք սերունդներ յաջորդաբար քահանաներ են եղել և լինում:

Արդ, Հայ եկեղեցու ընտրական սկզբունքը կանգնած լինելով յաճախ կրկնուող այդպիսի երեւոյթների առաջ, ի՞նչպէս էր վարւում. զիջում, տեղի՞ էր տալիս ժառանգական իրաւունքներին—եթէ այդ իրաւունքը եկեղեցին ընդունում էր իբր մի պարտաւորութիւն—թէ՞ անշեղ հետևում էր ընտրական հիմունքներին:

Այդ հրկու աւանդական կարգերից (ընտրական և ժառանգական) մին էր պարտաւորական ժողովրդի համար: Գուցէ երկուսն էլ համաձաւասար կերպով գեր էին կատարում ընտրական գործում, և որոշ փոխադարձ զիջողութիւններ անում:

Ահա այն բոլորն ինչ որ կարող էինք խոշոր դժերով ասել ընտրական սկզբունքի մեր եկեղեցու կեանքում արտայայտուելու մասին:

||

Նախընթաց գլխի մէջ մենք դրինք մի շարք խնդիրներ, շրջափեցինք ընտրական սիստեմի էական կէտերը: Այդ կողմից դա մի նախընթաց աշխատանք էր, մի լուսարանուած ծրագիր՝ պարզելու համար, թէ մենք երբ ձեռնարկում ենք ընդհանուր դժերով Հայ եկեղեցու իրաւունքի այդ ուշագրաւ խնդրի արտայայտութեան ձևերի մասին ակնարկներ անելու և ընդունելու տալու, ի՞նչ էական և անհրաժեշտ կէտերի վրայ մենք պիտի ուղղենք մեր հայեացքը մի կողմից, միւս կողմից էլ նրա դարաւոր կեանքի տուած փաստերը լինելով մեր ամենապիտան որ աղբիւրը, առաջարկուած ի՞նչ հարցերի պիտի պատասխանենք:

Այս աշխատանքը, որ ժամանակակից կեանքի հրատապ խնդիրներն են դրել մեր առաջ, մի ծանր աշխատանք է ու պատասխանատու: Հարկաւոր է աչքի անցնել այն բոլորն, ինչ որ Հայ եկեղեցու պատմական կեանքը թողել է այդ խնդրի լուսարանութեան համար:

Այն, ինչ վերաբերում է նիւթերին, դա մենք գտնում ենք մեր մի անտիպ աշխատութեան մէջ, ուր դէպքերի և հանգամանքների ժամանակագրական կարգով դասաւորել ենք Հայ

եկեղեցու իրաւունքի ամենատեսակ խնդիրներին վերաբերեալ բոլոր նիւթերը: Այդ նիւթերը մենք քաղել ենք ¹⁾ Հայ պատմագիրներէից. ²⁾ Հայ Աստուածարան գրողներից. ³⁾ Հայ եկեղեցու իրաւունքի ազբիւրներէից. ⁴⁾ Հայբապետական կոնդակներից և այլն: Եւ մենք կարծում ենք, թէ սպառած ենք այդ նիւթերը. յամենայն դէպս համոզուած ենք, որ մեզ անյայտ, անտիպ, նիւթերը ոչինչ ուր և էական բան չեն կարող մտցնել այն նիւթերի մէջ, որոնք Հայ եկեղեցու իրաւունքի ուսումնասիրութեան մէջ մի ուր, ցարդ չնկատուած գիծ առաջ բերէին նրա հիմնարկութիւնների իրաւական կողմի համար: Նախ տանք առաջարկուած հարցերի լուսարանութեան համար նիւթերը:

1. Տրդատ Թագաւորը, իր կին Աշխէն Տիկնոջ և Խոսրովագուլիստ բրոջ հետ միասին, հրաման տուեց ժողով կազմել՝ միաբանութեամբ իր բոլոր պօրքերի: Եւ շտապով հրամանի համաձայն հասնում էին ժամադրութեան տեղը՝ Այրարատ գաւառի Վաղարշապատ քաղաքը: Թագաւորն էլ գնալով այնտեղ հասաւ: Եւ հաւաքուեց բոլոր պօրքը, և մեծամեծները, կուսակալները, գաւառակալները, պատուաւորները, պատուականները, զօրավարները, պետերն ու իշխանները, նախարարներն ու ազատները, զատաւորներն և զօրագլուխները հասան Թագաւորի առաջ: Թագաւորը բոլորի հետ միասին խորհուրդ էր անում... Եկէք, ասում էր, Աստուծոց մեզ կեանքի առաջնորդ դրուած այս Գրիգորին շտապենք հովիւ կարգել...

Իսկ Թագաւորը... գումարելով գլխաւոր նախարարներին... ուղարկեց նրանց Կապագովկացոց կողմերը Կեսարիա քաղաքը... որպէսզի Գրիգորին տանելով՝ քահանայապետ անեն իրանց աշխարհի: (Ագաթանգեղոս. 460 երես):

2. Ապա Տրդատ երանելի Թագաւորը աղաչեց Ս. Գրիգորին, որպէսզի ձեռնադրէ և եպիսկոպոս տայ նրան՝ իր առբը որդին... Ռստակէսին: Որին նա եպիսկոպոս ձեռնադրեց իր փոխանակ: (Ագաթ. 496 երես):

3. Արդ, Տրդատի Թագաւորութեան ժամանակ... Գրիգորի... կրտսեր որդին Արիստակէսը հօրը զործակից եւ եպիսկոպոսակից էր...: (Փաւստոս. 6 երես):

4. Օծում էր (Գրիգոր) փոխանակ իր՝ Վրթանէս որդուն իր քայանայապետութեան աթոռին նստեցնելու համար...: (Մովս. Կաղ. 28 երես):

5. Եւ աթոռը յաջորդեց նրա (Վրթանէսի) որդի Յուսիկը: (Մովս. Խոր. 283 երես):

6. Յուսիկը... հասնելով հօր քահանայապետութեան ա-

թողին՝ յանդիմանում էր թագաւորին՝ նրա մեղսաւէր չարագործութեան համար, և նա (թագաւորը) հրամայելով եկեղեցու մէջ բրով ծեծում սպանում են նրան (Յուսիկին): (Մովս. Կաղ. 28 եր.):

7. Այն ժամանակ թագաւորն ու նախարարները ամբողջ աշխարհը խորհուրդ արին, թէ ո՞ւմ այն բանին (կաթողիկոսութեան) արժանի գտնեն, որովհետեւ երկու երկւորեակ մանուկները (Յուսիկի որդիքը)... ճանաչուած էին իբրեւ ստահակներ և անիրաւներ... և Գրիգորի զաւակի նոյն տանից ոչ ոք չկար: (Փաւստ. 30 երես):

8. Գրիգորի ազգից մարդ չլինելու պատճառով, ընտրեցին ոմն Փառնեբաէհի՝ Տարօնի Աշտիշատից, և նստեցրին քահանայապետ՝ Տիրանի տաները դարում: (Մ. Խոր. 234 երես):

9. Եւ ապա խորհուրդ արին Յուսիկի որդիներին իրանց հայրերի քահանայութեանը հասցնել: Ապա առանց իրանց կամքի՝ եպիսկոպոսների միաբանութիւնից (ժողովից, համալըմբումից) բռնուեցին և բռնադատուեցին. որովհետեւ կաշանաւորուած էին, ակամայից սարկաւազութեան ձեռնադրութիւնը հարկադրուեցան առնել Պապն ու Աթանաղինէսը... Բայց ոչ ոք չկար այն ժամանակ, որ նրանց համար քահանայապետութիւն անէր: Ապա խորհուրդ արին, թէ ո՞ւմ գտնեն իրանց առաջնորդ, ապա ամենքն առհասարակ մի մտքի եղան, որպէսզի նոյն Գրիգորի իշխանութեան տանից գտնեն, որ նա հայրերի աթոռը նստի (ուսենայ): (Փաւստ. 37 երես):

10. Այն ժամանակ միաբան աշխարհօրէն խորհուրդ արին թէ ո՞վ պէտք է... կաթողիկոսութիւնը վերցնի: Ապա երբոր Գրիգորի տանից դրան (կաթողիկոսութեան) արժանի չկար, Շահակ անունով մէկին, Աղբիանոս եպիսկոպոսի զաւակի տոհմից յարմար դարձրեցին այդ բանին: Եւ նրան տալիս են մարդպետութեան իշխանի ձեռքը, որի անունը Հայր էր կոչուած, և աւագներից խմբուած են նրա հետ Գարդմանաց ձորի իշխանը և առան նրանց հետ տան այլ նախարարներ և ուղարկեցին նրան (Շահակին) մեծաշուք պատուով Գամերնների երկիրը՝ Կեսարիա մեծ քաղաքը: Այնտեղ ձեռնադրեցին Շահակին Մեծ Հայոց կաթողիկոս, և պատուով դառնում են իրանց թագաւորին: (Փաւստ. 39 երես):

11... Վախճանուած է Շահակ պատրիարքը... նրա եղբայր Զաւէնը հաստատուած է նրա աթոռի վրայ: (Պատմ. Յ. Կաթ. 67 եր.):

12. Ապա մի ժողովի հաւաքուեցին Արշակ թագաւորի մօտ զանազան ազգերի և տոհմերի մեծամեծ նահապետները, գնդերի՝ և դրօշակների տէրերը, բոլոր սատրապները, նախարարներն Օգոստոս, 1905.

և ազատները, տէրերն ու իշխանները, զօրավարներն ու սահմանապահները, մի հաւանութեամբ միաբանական խորհրդի, որպէսզի գտնուէին տեւանքն և խորհին իրանց առաջնորդների (կաթողիկոս) մասին, ով է արժանի Հայրապետական աթոռին նստելու և Բրիտանիոյ բանաւոր խաշներին հովուելու:

Ապա խորհրդի այս բանը յաղթեց առհասարակ ամենքին (այսինքն ամենքը եկան մի համաձայնութեան), որ այնտեղ էին, որպէսզի Գրիգորի տան շառաւիղներից գտնեն առաջնորդութիւն: Որովհետեւ ամենքը ասում էին թագաւորին, թէ որովհետեւ Աստուած նորոգեց ձեր թագաւորութիւնը, սոյնպէս էլ պէտք է նրա զաւակներից նորոգել հոգեւոր նահապետութիւնը: Որովհետեւ, ասում են, այդ աթոռի նորոգուելու հետ կը նորոգուի Հայոց աշխարհի պայծառ վարքն: Ապա տկանէ յանուանէ աշխարհաժողով բազմութիւնը խնդրում է նրան, որ Ներսէս էր կոչուած, Աթանազիոսէի որդուն... և նրա մօրը Բամբիշ անունով, որ Տիրան արքայի քոյրն էր: Սա ամուսնացած էր եղել... առ հասարակ ատեանը բողոքելով աղաղակում էին, թէ Ներսէսը թող լինի մեզ հովիւ: (Փաւստ. 57 եր.):

13. Ապա մեծամեծ իշխանները հաւաքուեցին, որպէսզի իրանց ցանկացած Ներսէսին առնեն և զնան, ուր որ սովոր էին Հայրապետին օծել: Նաև Հայոց եպիսկոպոսների բազմութիւնը ժողովուեց թագաւորի մօտ նոյն խնդրի առթիւ. մի միաբանութեան բոլորը խոնարհելով նրան ընտրել, ամենքին հաճոյ թուեցաւ, որ նա նստի գլխաւորութեան աթոռին: (Փաւստ. 60 եր.):

14. Պապ թագաւորը Ներսէս Հայրապետի մահուանից յետոյ Յուսիկին կարգեց (Հայրապետ), որ Մանազկերտի Աղբիւնոս եպիսկոպոսի զաւակներից էր: Հրաման տուեց նրան Հայրապետների տեղը բռնել, իշխել նրա փոխանակ որին սպանել էր. և նա եղաւ փոխանակ նրա (Ներսէսի): (Փաւստ. 190 երես):

15. Հայոց տանուտէրները որ խոստացել էին կաթողիկոսութիւնը արժեկէացի Սուրմակ երէցին, նստեցրին նրան Հայոց կաթողիկոս: Որը սակաւ ժամանակից յետոյ, ընդգրկմանալով Հայոց զօրավար իշխաններից ոմանց, նրանք մերժելով ձգեցին նրան կաթողիկոսութեան իշխանութիւնից: (Ղազ. Փարպ. 25 երես):

16. Լսում էր (Վռամ պարսից թագաւորը) յօժարութեամբ Սուրմակի կեղատա խօսքերին: Որովհետեւ եպիսկոպոսապետութեան աթոռը նրան էին խոստացել թշնամութիւն սիրող և խռովարար նախարարները... Բայց Սուրմակի իշխանութիւնը

մի տարուց աւելի չտեց, նոյն նախարարները հալածեցին նրան աթոռից: Նա յետոյ պարսից թագաւորից արտօնութիւն առացաւ իր Բզնունի գաւառի եպիսկոպոսութիւնը վարելու ցեղով: (Մ. Խոր. 310 երես):

17. Իսկ Շմուէլը հինգ տարի ապրելով մեռաւ... այն ժամանակ բոլոր նախարարները միասին ժողովուրդով, գնացին մեծ Սահակի մօտ և իրանց մեղքը խոստովանելով աղաչում էին նրան կրկին նստել աթոռը, խոստանում էին հաստատել սալ նրան յլաւսից թագաւորին և բոլորի կնքով վաւերացրած՝ թղթով նոյն իշխանութիւնը ցեղից ցեղ նրա թուներին տալ: (Մ. Խոր. 316 եր.):

18. Մեր աշխարհի առաջին եպիսկոպոսները, սուրբ, լուսաւորութեան պատճառ դարձող երեւելի մարդիկ, որդեծնութեամբ հասան մինչև մեծն Սահակը. այստեղ արու գաւառների ծնունդը դադարեց: (Անդ. 283 երես):

19. Սուրմակի մահից յետոյ Հայոց Հայրապետները ժողովուրդով՝ փնդուելով գտան մի քահանայ՝ Յովսէփ անունով, որ մեծ Մեսրոպին աշակերտ էր եղած...: (Ասողիկ. 78 երես):

20. Ս. Յովսէփ կաթողիկոսի նահատակութիւնից յետոյ Հայոց աշխարհիս կաթողիկոսութեանը յաջորդեց Տէր-Մելիսէն, որ Մանազկերտցիների ազգից էր. նրանից յետոյ Տէր-Մովսէսը, որ նա ևս նոյն ազգիցն էր. Եւ ապա Աստծու տեսչութեան համաձայն Հայոց աշխարհի կաթողիկոսութեանը յաջորդեց Տէր-Գիւտը: (Ղ. Փարսլ. 110 երես):

21. Այն ժամանակ Կաւառ թագաւորը կանչում է Վարադորիոցին, Սմբատ Բագրատունու որդուն, որ Խոսրով Շում էր կոչւում, և նրան տալիս է տանուտէրութեան (Հայաստանի) իրաւունքը. նրան մարզպան է անում և ճամբում Հայաստան... Եւ երբ որ նա եկաւ Հայաստան, նրան ամբողջ Հայաստանեայց աշխարհն ընդունեց ուրախութեամբ. բայց որովհետեւ մեռել էր Կումիտաս կաթողիկոսը և նրա տեղը անհրաժեշտապէս էր մրնացել, ընդորի նետ խորհուրդ էր անում՝ արժանաւոր մէկին գտնելու համար: Այն ժամանակ Ռշտունեայ տիրոջ Թէոդորոսի առաջադրութեամբ ընտրեցին անապատական մէկին՝ Արրահաման տնից, որի անունը Քրիստափոր էր: Նրան կաթողիկոս նստացրին... Սա շատ խռովութիւն բարձրացրեց... Նա Հայրապետական աթոռին կեցաւ երկու տարի, և երրորդ տարին զըրին նրա վրայ բամբասանքներ: Եւ բոլոր եպիսկոպոսները ու իշխանները ժողովուրդով քննութիւն արին... Եւ նրանից առան Հայրապետական պատուի փակեղը, և ձգեցին նրան կարգից և նրան անարդանօք հալածեցին: Եւ հէնց այնտեղ շտապով նստե-

ցրին Եզրին կաթողիկոս... որ երանելի Կոմիտասից կարգուած էր ս. Գրիգորի փակակալ... (Սերէոս 97 երես):

22. Կանոններ, որ զրուեցին Դուռնում, մինչդեռ ժողովուած եպիսկոպոսները մտածում էին Մովսէս կաթողիկոսի մահուանից յետոյ կարգել Հայոց կաթողիկոս. և խափանուեց այս անգամին:

Որովհետեւ առաջուց ս. հայրերն ու ուղղափառ վարդապետները մերժել և զէն էին ձգել սոսկալի նզովքներով բոլոր հերձուածողներին... ինչպէս և տնօրէն ժողովն Քաղկեդոնի և Լեոնի պիղծ տոմարը... և այժմ մեր աշխարհից շատերը Քաղկեդոնի և Լեոնի տոմարի ընդունողների և խոստովանողների հետ միաբանեցին, ոմանք կամաւ փոճ փառասիրութեան և աշառութեան համար, և Լէսերն էլ նրանցից աւամայ կեցով բռնադատուելով, և ուրիշներն էլ սղիստութեամբ կամ անձեռնհաս լինելու համար, ուստի և ժողովուեցինք եպիսկոպոսներս Դուռնայ այս մայրաքաղաք Եկեղեցին. Թէոդորոս մարգարտական եպիսկոպոս, Յովհաննէս Արծրունեաց եպիսկոպոս, Քրիստափոր Սիւնեաց եպիսկոպոս, Մանասէ Բասկեայ եպիսկոպոս, Արրահամ Ռշտունեաց եպիսկոպոս, Յովհաննէս Ամատունեաց եպիսկոպոս, Գրիգոր Անձեացեաց եպիսկոպոս, Սիմոն Գողթան եպիսկոպոս, Ահարոն Մհնունեաց եպիսկոպոս, Ներսէս Բաթունեաց եպիսկոպոս, Յոհանիկ Նլոյ եպիսկոպոս, Թադէոս Առնայոյ եպիսկոպոս: Եպիսկոպոսք Ծ. (50) և Հարք և քահանայք ՅՈՒՂ. (390)...: (Սոյն ժողովը կաթողիկոսական ընտրութիւն չկարողանալով անել, սահմանում կանոններ թուով հինգ՝ առ հասարակ հոգևորականաց մասին): (Գ. Թղթ. 146—8 երես):

23. Ձեռնարկ՝ որ խնդրեց Սմբատ Վրկան մարգարանը այն եպիսկոպոսներից, որոնք դարձեալ ժողովեցին նրա հրամանով Դուռն, կարգել Հայոց կաթողիկոս Մովսիսի մահուանից յետոյ: (Նոյն եպիսկոպոսները, որ վերևում առաջ բերինք երկրորդ անգամ ժողով են գումարում կաթողիկոս ընտրելու, բայց նախ քան ընտրութիւնը Սմբատ մարգարանի և Վրթանէս տեղակալի հետ փոխադարձաբար ուղիղ դաւանութեան ձեռնարկ են սալիս միմեանց և ստորագրութեամբ և կնքով վաւերացնում): (Գ. Թղթ. 146—50 երես):

24. Հետևեալ 151 երեսից (Գ. Թղթ.) երևում է որ Արրահամ կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ, որին մասնակցել են և աշխարհականներ, Արրահամ կաթողիկոսի նրա աթոռակիցներ և իշխանների—Վրկան մարգարան Սմբատի աշխարհականների առաջ բազմաթիւ հայ եպիսկոպոսներ, վանահայրեր

գալիս ճշմարիտ գաւառութեան ձեռնարկ են տալիս: (Գ. Թղթոց. 151-2 երես):

25. Նրանից (Յովհ. Իմաստասիրի) յետոյ Հայրապետական աթոռին նստեցնում են Դաւթին... Եսայիին են կոչում Հայրապետական աթոռի համար: Սրան նախ կարգել էին եպիսկոպոս Գողթան գաւառի և յետոյ Հայրապետական աթոռի վրայ նստեցրին... Սրանից յետոյ Դուռնեցի Ստեփաննոս անուշով մէկին դրին... Յակոբ Հայրապետի վախճանելուց յետոյ Սողոմոնին են սրբութեան աթոռին նստեցնում... Մմբատ սպարապետը... նախ հրամայում Երուզաւորս գիւղաքաղաքում եպիսկոպոսներին ժողով անել, և ձեռնադրում են Զաքարեային Հայրապետ... Որովհետեւ Գէորգ մեծ Հայրապետը վախճանուել էր, Թադաւորն ու իր համագգիւրը... Մաշտոցին ընտրեցին Հայրապետ... որին (վարքի և խստակեցութեան համար) հաճելով և հաւանելով Թադաւորը, գահամեծար իշխանները և պատուական ազատ մարդիկ... նրան ս. Լուսաւորչի աթոռին բազմեցրին... Սրանից յետոյ ես թշուառական և հէք... Յովհաննէսս, որ այս պատմութիւնը գրեցի... զի թէպէտ և ս. մարդ Մաշտոցի (կաթողիկ.) աշակերտ էի մանկութիւնիցս, այլ նաև նրա հարազատ ազգիցն էի ըստ մարմնոյ: (Պատմ. Յովհ. կաթ. 133—230 երես):

26. Եւ ապա կաթողիկոս եղաւ Վահանիկը... Բաղայ Զիւլանշիրի որդին: Սա քաղկեդոնականների հետ կամեցաւ սիրալիր յարաբերութեան մէջ մտնել Թղթով (գրադրութեամբ): Որի առթիւ Հայոց կրօնաւորները ժողովուեցան Անի քաղաքը, Տէր-Սաչիկ Արշարունեաց եպիսկոպոս, հայր Պօղիկարպոս առաջնորդ Կամրջաձորոյ և հայր Սարգիս՝ Հոռոմոսի վանքի վանական, և հայր Ստեփաննոս՝ Սեանայ վանքի վանական, և այլ եպիսկոպոսներ և բազմաթիւ հայրեր: Իսկ ժողովը կամակեցութեամբ Աշոտ շահնշահի՝ Հայոց կաթողիկոս հաստատեց Սեանի վանական Ստեփաննոսին: (Աստղիկ. 121 երես):

27. Վահանից և Ստեփաննոսից յետոյ Հայոց կաթողիկոս եղաւ Արշարունեաց Սաչիկ եպիսկոպոսը, Տէր-Սեանեայի (կաթողիկոսի) քրոջ որդին: (Աստղիկ. 184 երես):

28. Եւ ապա Սաչիկի մահից յետոյ՝ Հայոց Գագիկ Թադաւորը թէ հայոց աշխարհի և թէ յունաց կողմի եպիսկոպոսների ժողով արաւ, որոց զուին էր Տէր Սահակ Արշակունեաց եպիսկոպոսը և նստեցրին նրան (Տէր Սարգսին) կաթողիկոսութեան աթոռին... (Աստղիկ 259 երես):

29. Այն ժամանակ Յովհաննէս Թադաւորը և Հայոց բոլոր նախարարները... Թուղթ գրեցին Տէր Պետրոսին (կաթ.) նրա

բոլոր հրամանները լսելու մասին... Տէր Պետրոսը լսելով նրանց հրդմանը, դառնում է իր աթոռը: Եւ երբոր Անի քաղաքն էր մտնում, Յովհաննէս թագաւորի հրամանով Տէր Պետրոսին մի տարի և հինգ ամիս կալանաւորուեցին. և թագաւորը զրկեց Սանահին վանքը և բերել տուեց մեծ Դիոսկորոսին՝ վանքի վանահօրը: Նա զալով, Պետրոսին հակառակ եղաւ և նստեցրին Հայոց Հայրապետութեան աթոռին... Նրա ձեռնադրութեանը եպիսկոպոսները, քահանաները և Հայրապետները չժողովուեցին... Իսկ նա (Դիոսկորոս), որոնք իրանց յայտնի յանցանքների համար, նախկին Հայրապետներից մերժուած էին, նրանց բուրին առաջ քաշեց: Իսկ Հայոց աշխարհի վարդապետներն ու եպիսկոպոսները նզովքով փակեցին թագաւորին և Հայոց բոլոր նախարարներին այն հակառակութեան համար, որ եկեղեցու մէջ եղաւ... Այն ժամանակ թուղթ գրեցին թագաւորը և Հայոց բոլոր իշխանները Աղուանք և կանչեցին Աղուանից աշխարհի Տէր-Յուսէփ կաթողիկոսին որ գայ բարեխօսութեան և Պետրոսին հաստատելու համար: Այդ բանը լսելով Տէր Յուսէփը, վեր է առնում իր հետ Աղուանից աշխարհի եպիսկոպոսներին և գալիս է Անի քաղաքը Տէր Պետրոսին հաստատելու համար: (Մատթ. Ուռհ. 87 երես):

30. Իսկ երբոր այս աշխարհից հրաժարուեց Տէր Խաչիկ սուրբ Հայրապետը, որոնք որ մնացել էին թագաւորազններից և Հայոց իշխաններից, երբ խորհրդածութեան նիւթ արին գտնել արժանաւոր մէկին՝ որ սուրբ Գրիգոր Լուսաւորչի Հայրապետութեան աթոռին նստի, և գտան Պահլաւունեաց ազգից մի երիտասարդ՝ Վահրամ անուանով, որ Հայոց մեծ իշխան Գրիգոր Մագիստրոսի որդին էր... Տէր Գրիգորիսը (Վահրամը) նստաւ Հայրապետութեան աթոռը Գագիկ շահի հրամանով: (Մատթ. Ուռհ. 185 եր.):

31. Կորիկէ թագաւորը (Լուռուայ) ժողովեց Աղուանից աշխարհի եպիսկոպոսներին և բերելով Աղուանից Ստեփաննոս կաթողիկոսին Հաղբաթ կոչուող վանքը. ձեռնադրեցին Տէր Բարսեղին կաթողիկոս Գրիգոր Լուսաւորչի աթոռին՝ ամբողջ Հայոց աշխարհի համար, Կորիկէ թագաւորի և Տէր Ստեփաննոսի հրամանով... Եւ եղաւ Բարսեղը կաթողիկոս Հայոց թագաւորաւորնակ Անի քաղաքում և Շիրակի ամբողջ տունը ելաւ նրա առաջը. և ահա գալիս էր Վասակը՝ Տէր Բարսղի հայրը և նրա Հասան, Գրիգոր և Ապլջահապ եղբայրները, քաջ և հզօր մարդիկ՝ եպիսկոպոսներով և նստեցրին Տէր Բարսեղին Տէր Պետրոսի աթոռին: Մ. Ուռհ. 266 երես:

32. Այս ժամանակներում (X) դարի վերջերը) ու Գրիգոր

Լուսաւորչի աթոռի համար մեծ խռովութիւն և աղմուկ էր. որովհետեւ այդ օրերումս Աթոռի գահակալութիւնը Աստուծոյ հրամանով կամ արժանաւորութեամբ և կամ ընտրութեամբ չէր, այլ զօրութեամբ, կարողութեամբ և բարձրագոյն իշխանութեամբ: (Մ. Ուռհ. 276 երես):

33. Այս տարում Հայրապետութեան աթոռը նստաւ Ապիրատի որդի Տէր Գրիգորիսը, որ Գրիգոր Մագիստրոսի ազգիցն էր... որովհետեւ Տէր Բարսղի մահից յետոյ եպիսկոպոսների և հայրերի ժողով եղաւ Կարմիր վանքում, Քեսունի մօտ: (Մ. Ուռհ. 412 երես):

34. Այս ժամանակում, որ ՈԺՂ (618 թ. Հայոց) թուականն էր, Տէր Գրիգորիսը ծերացել էր և Հայրապետութեան աթոռին կեցել էր յիսուն և չորս տարի. և ապա ս. հոգու ազգմամբ եպիսկոպոսների, վարդապետների և բոլոր վանականների ժողով է անում և իր տեղը ձեռնադրում է իր հղբօր Տէր Ներսէսին Հայոց կաթողիկոս: (Սմբ. Սպ. պատմ. 87 երես):

35. Որովհետեւ Քրիստոսից և իւրայիններից բաւականաչափ ուսանք մեր առաջ դրուած խորհրդի մասին՝ հոգևոր իշխանութիւնը ժառանգութիւն չանել, այսուհետեւ կարօտ ենք նոյնն ուսանել մեր առաջին հայրերից, որ Փրկչին հետևեցին և մեզ էլ նոյն ճանապարհը ցոյց տուին: Որովհետեւ խօսքիս հաստատութիւնը սրանցից կարող ենք գտնել, որով ամենեկին ամօթապարտ յանդիմանուին նրանք, որոնք ճշմարտութիւնը ազաւազում են. մանաւանդ որ՝ վկայ են բերում ասածս նիւթերից և ասում թէ սուրբ Գրիգորից նրա որդիքը և ցեղը ժառանգեցին աթոռը... Այժմ ի՞նչ ասենք, ինքը ս. Գրիգորը ինքն երբեմն առաւ այն պատիւը, որ իր ցեղին էր պարգևում... ս. Գրիգորի որդոց առաքիւնութիւնը նոցա յարգեցին, և ոչ ս. Գրիգորի որդիութիւնը... և Պահլաւի մեղսատէր անունը... Իսկ երբոր աղլը այդ բանը ախտ շինեց և տգիտաբար հին օրէնքի համաձայն Հայրապետական աթոռը ցեղից ընտրուածին հասցրին, տես թէ Աստուծոյ նախախնամութեան տեսչութիւնը ի՞նչ տնօրինեց. նա արդիւր և վաղանք գրեց, սուրբ Սահակին արու գաւակ չտալով...:

Եւ սկսած ՚ի ս. Սահակից մինչև Տէր Պետրոս, Հայրապետական աթոռը ժառանգութեամբ չվարեցին երբէք... որի պատճառով ևս ոչ եպիսկոպոսներն իրանց վիճակը և ոչ վանահայրերն իրանց վանքերը, այլ բարեպաշտութեամբ և քրիստոնէական օրէնքով էին ընթանում. և սուրբ հօր խօսքերը վերջ գրեց ցեղընտիր լինելուն՝ այսքան ժամանակ:

Իսկ Դագիկ Բաղրատունու ժամանակ՝ Տէր Պետրոսն իբր

արժանաւոր ընտրուեցաւ, և ոչ որպէս ազգական, և իր եղբորից՝ Տէր Խաչիկից աթոռը առաւ... Նա քանզեց օրէնքը, չգլտեմ, ինչպէս և իր բրոջ որդի Տէր Խաչիկին ձեռնադրեց... Որից յետոյ (Գրիգորիսից) Տէր Բարսեղ՝ Ազգիս և Աղուանից ընտրութիւնով, և Տէր Գրիգորիսն և նրա եղբայր Տէր Ներսէսը՝ բոլորի վկայութեամբ կոչուեցաւ: Եւ մեր ժամանակում Տէր Գրիգորը, թէպէտ և նրանց ազգից՝ սակայն եպիսկոպոսներիդ, ընտրութեամբ յաջորդեց: Սակայն թէպէտ և այս այսպէս է... Հեն ասում թէ Տէր Ներսէսը իր արժանաւոր յաջորդեց եղբորը, այլ որովհետեւ եղբայրն էր, ուստի և փոխանակ եղբորն եղաւ. ուստի և բոլորը նոյն կարծիքով մոլորուեցին, և աչքերը վեհազոյն աթոռին են ձգել... Եպիսկոպոսները վիճակները, հայրերը վանքերը, քահանայք եկեղեցիները՝ իրեւ ժարմնական ընտանիքի մարմնական ժառանգութիւն զասն: (Ներս. Լամբ. 532—6 երես):

36. Թագաւորն Լևոն ժողովելով շատ եպիսկոպոսներ և դրին Տէր Յովհաննէս Խճկտորին, Սսի արքեպիսկոպոսին, Կաթուղիկոս... որ իննը տարի կենալով... աթոռից ձգուեց Լևոն Թագաւորի հրամանաւ: Սրանից յետոյ Դաթին դրին... որ երկու տարի կենալով՝ մեռնում է. և նորից Տէր Յովհաննէս Խճկտորին դրին: (Սամ. Անեցի. 145 եր.):

37. Բայց Տէր Յովհաննէս կաթուղիկոսը... վախճանեց Հայոց 669 թ. և ապա բոլոր իշխանների և եպիսկոպոսների միաբանութեամբ ընտրուեց բոլորից Մլիճի եպիսկոպոս Տէր Կոստանդինը և նստաւ Հայրապետական աթոռին Հայոց 670 թուին... (Միխ. Աս. 515 երես):

38. Առաւ վանքի առաջնորդութիւնը նրա եղբոր որդի (վանական վարդապետի) Պօղոս քահանան, իսկ վարդապետական ուսումը՝ Գրիգորիս վարդապետը, որ նրա աշակերտն ու ազգականն էր: Եւ այս եղաւ 700 թուին: (Կ. Գ. 209 երես):

39. Սա (Տարսայիճ Աթաբէկը) ժողով արաւ շատ եպիսկոպոսների, վարդապետների և վանականների՝ Նորավանից զերափառ վանքի մէջ՝ աշխարհախումբ հանդիսով, և ձեռնադրել տուեց իր որդի Ստեփաննոսին քահանայ 729 թուին. և հինգ տարի յետոյ ուղարկեց Կիլիկիա՝ Հայոց Թագաւորութիւնը, Տէր-Յակովբ մեծ կաթուղիկոսի մօտ՝ ձեռնադրելու համար...

(Հայոց Լևոն Թագաւորը Յակովբ կաթուղիկոսի մահից յետոյ) մեծ աշխարհաժողով արաւ և մեծ ընտրութիւնով Տէր Կոստանդինին Հայոց կաթուղիկոս նստեցրին... Եւ Ջատկի օրը ձեռնադրում են Ստեփաննոսին միտրապոլիտ Սիւնեաց մեծ

աթուրի և միւս եպիսկոպոսների վրայ, որ կային այստեղ և այնտեղ, ուսնաք Վայոց ձորում, ուսնաք Տաթևում, որոնք միաբան թղթով և ընծաներով ուղարկել էին նրան կաթողիկոսի մօտ սուրբ աթուրի հին պատուի և աստիճանի նորոգման համար, որ վերացել էր վաղ ժամանակից հետէ երկրի աւերման և կործանման պատճառով: (Ստեփ. Ուռպ. II հ. 174 երես):

40. Եւ ժողովուելով մեր եպիսկոպոսները հօրս մօտ, հրաւիրեցին ինձ երթալ թաղաւորական աշխարհը՝ Կիլիկիա, երջանիկ կաթողիկոսի և Հայոց աստուածապսակ թագաւորի մօտ՝ ձեռնադրուիլ Սիւնեաց աթուրի միտրապոլիտ... Գնացինք և հասնաք Սիս մայրաքաղաքը և դտանք Հայրապետին վախճանած... Այնտեղից գնացինք Ադանա քաղաքը և հանդիպեցինք թագաւորին... և կենալով թագաւորի մօտ երեք ամիս, մինչև որ աշխարհադուստար ժողովով ընտրեցին 40 օրուայ մէջ մի արժանաւոր մարդու Կոստանդիանոս անունով և Զատիկի ճրագաւոյցի երեկոյեան օծեցին նրան պատրիարք, և հետեւալ օրը մեզ ևս ձեռնադրեցին և պսակեցին Սիւնեաց սուրբ և առաքելական եկեղեցու հետ: (Անգ. 227 երես):

41. Յակօր սրբասէր կաթողիկոսից յետոյ մեծ հանդիսով և աշխարհաժողով բազմութեամբ նստեցնում են Սսի Աւագ ս. Սոփի եկեղեցում կաթողիկոս՝ Կոստանդին վարդապետին, որ սուրբ և հռչակուած Խորին կոչուած մենաստանի առաջնորդն էր, մեծապատիւ շքով և թագաւորական ձոխութեամբ՝ Հեթումի որդի Լևոն Հայոց թագաւորի ձեռքով, որոնց հետ էր և մեր նուստատեթիւնը (Ստեփ. եպիսկ. Սիւնեաց): Սա (Հեթում թագաւորը) հակառակութեան նախանձ ունենալով իր սրտում դէպի Կոստանդին կաթողիկոսը, իրան խորհրդակից է անում եպիսկոպոսներից և գլխաւորագոյն իշխաններից, նաև վարդապետներից անգամ: Հրապուրելով ամենքին տիրանենգ խորհրդով ժողով է անում Սիս մայրաքաղաքում, և առաջ է կանչում բանասարկու հարախօսների, և դնում են Հայրապետի վրայ զուր մեղադրանքներ՝ լսողների համար իսկ անարժան և անվայել: Ծառան տիրոջ վրայ քննիչ լինելով և հօտը հովուի, դատաւիտում են Աստուծոյ փոխանորդին: Եւ այսպէս զրպարտելով կաթողիկոսին, որի իրան ու անիրան Աստուած գիտէ: Իսկ այն հեղը ասում է... արդ, ինչ որ ձեր կամքն է՝ արեք ինձ: Որին պատասխան տալով թագաւորն և ժողովը ասում են, ձգիր քեզանից կաթողիկոսութիւնը և տուր մեզ: Կաթողիկոսն այս լսելով, յանձն էր առնում յօժարութիւնով, և Հայրապետական զգեստն հագնելով՝ բազմախաչը, և եմփոքորնը, որ պատրիարքներին էր յատուկ, և պատուական թագը դնելով

գլուխը և մեծագին վաւերականը (մատանին) մատը դնելով... և ապա հանելով զգետը զրեց արծաթի սեղանի վրայ, նոյնպէս և եպիսկոպոսական սքեմը հանելով ծալեց զրեց նրա վրայ և ծածկեց... հանեց մատիցը ծանրազին մատանին և զաւազանը և տուեց բոլորը պատգամաւորներին, և ասում է, ահա՛ ինչ որ պահանջում էք: Եւ ինքը... դուրս գնաց եպիսկոպոսարանից... Եւ ուղարկելով ձերբակալուած են նրան և շղթայակապ ձգում էամբրոնի բերդը... Այս այսպէս անելով, թագաւորն ու ժողովը նուիրակ են ուղարկում արևելք Հայոց աշխարհը, մեզ և միւս եպիսկոպոսների և աշխարհի իշխանների մօտ, մեզ մօտ վարժուած Ստեփան վարդապետ Սկևռացուն հրաւիրական նամակով, որի մէջ կաթողիկոսի աքսորման պատճառները դատարկ բաներով վերել էին... շարադրելով Կոնստանդինի վրայ մինչև երեսուն հատ, որոնցից մէկն այս էր, պատարադից տուա՞յ շարքաթ է լամուս... և երկրորդ թէ լիտիանոցներից հարկ է առնում... Այս խօսքերից յետոյ մեզ մեծարանօք հրաւիրել էին գնալ նոր Հայրապետի ընտրութեան ժողովին, որին պատասխանելով ասացինք. մենք տեղեակ և խորհրդակից չենք եղծմանը (պահնկէցութեանը), որ նորոգմանը մասնակից լինինք. ո՞վ որ ինքնահաճ կամքով եղծումն արաւ, նա էլ թող նոր ընտրութեան հոգսը տանի... (Ստեփ. Ուսպ. II. 183—4 երես):

42. Այս բոլոր զիպուածներից յետոյ Հեթում թագաւորը դարձեալ ժողով է անում և ձեռնադրել է տալիս Գրիգոր Անուարդի եպիսկոպոսին հայոց կաթողիկոս, որ զիտնական և առաքինի մարդ էր... Սրա երկրորդ տարին Զատիկի շփոթումն եղաւ... Իսկ մեր Հայրապետ Տէր Գրիգորը այստեղ շատ մեծ սխալ արաւ և հեռացաւ ճշմարտութիւնից, որովհետեւ հայրենի սուրբ նախնիքների բնական ճանապարհը թողնելով, հետեւեց յոյների թիւը և անկանոն ընթացքին, և հաւանեցնելով թագաւորին՝ բռնութեամբ տօնեց և տօնել տուեց ամբողջ Կիլիկա աշխարհին... Բայց պարկեշտ վանքերը չընդունեցին. նաեւ շատ եպիսկոպոսներ և վարդապետներ չհաւանեցին և ոմանք ծածուկ պահեցին, որի համար շատերը ծեծուելով և աքսորուելով հալածուեցին:

Դարձեալ հրաման արաւ, որ թաթախման գիշերը եղու թան չուտեն և այն քոլորն՝ ինչ որ սուանց մսի է, և մեծախորհուրդ տօներին նաւակատիւր չանեն: Եւ հրամայեց օրհնել հիւանդների, մեղաւորների և երեխայոց, և սկսեց կամաց-կամաց Հոռոմների եկեղեցու բոլոր աւանդութիւնները մեր եկեղեցու մէջ մտցնել և մերինը մէկ-մէկ կրճատել: Եւ շատ դեսպաններ և հաւանութեան նամակ էր ուղարկում Կ. Պոլիս Պատրի-

արքին և խոստանում էր յանձն առնել՝ ինչ որ և պահանջեն։ Ուղարկել էր և Ասորոց Աբունային, որ Նեստոր կաթողիկոսն է. նոյնպէս միաբանութեան յանձնառական թուղթ, որ մենք անձամբ տեսանք։ Բայց մեզ, արևելեան կողմեցիներն ոչինչ չէր տեղեկացնում, այլ միայն այսքան էր լուր տալիս, թէ աշխատում ենք, որ Անտիոքի աթոռը մերը լինի, և այս զբուռարին ժամանակների պատճառով կամենում ենք, որ Հոռոմների մեր և բոլոր ազգերի մէջ միաբանութիւն լինի։ Բայց պարճածներից դառնադատման մաղձի հոտ էր երևան գալիս տեղ տեղ, և ոմանք էլ մեր աշխարհին հաճելով հաւանեցին և սկսան նախատել մեր նախնիներին, և նորաձեռութիւններ ընդունել։

Իսկ մենք (Արևելեան Հայեր)... նրա նուիրակ Կոստանդին Կեսարացու գալին աշխարհիս եպիսկոպոսների և իշխանների միաբան խորհրդով մաղթանաց և Հայաստանեայց եկեղեցու ուղիղ հաւատի և կարգերի մասին թուղթ գրեցինք մեր կաթողիկոս տէր Գրիգորին, թէ թող չհիւանդանայ անողջանալի ցաւերով... (Ստեփ. Ուռպ. II, 193 երես)։

43. Այս տարին Քրիստոսի ծննդեան օրը Լեոն թագաւորի և շատ եպիսկոպոսների հրամանով կաթողիկոս դրին Սսի եպիսկոպոս Տէր Կոստանդին (դ.) Լամբրոնացուն...

776 թուին Անաւարդի արքեպիսկոպոս Տէր Յակոբին կաթողիկոս դրին Սսում։ Գրիգորի (կաթողիկոսի) քրոջ որդին էր... (Սմբ. Սպ. պատմ. 122 երես)։

44. Եւ յաջորդեց սրա (Յովհան Որոսնեցու XIV դար) աթոռը քրիստոսածաւալ աղբիւր և անմուտ Արեգակ՝ երկրորդ Լուսաւորիչ Գրիգորիոս վարդապետ Տաթևացին՝ հաւանութեամբ և կամքով ս. Խառաքաստի ուխտի Սարգիս մեծ վարդապետի և իր համշիրակ եղբայրներ Այրարատեան գաւառի Սաղմոսավանքի Յակոբ և Երզնկացի Գէորգի և Գնդի բոլոր աշակերտների՝ Մեծոփի Յովհաննէս վարդապետի և Յակոբի և Մխիթարի Ռշտունեաց։ (Թով. Մեծ. պատմ. 17 երես)։

45. Մեր 890 թուականին... բոլոր Հայերի միաբան համաձայնութեամբ դրին ս. Էջմիածնում կաթողիկոս... պատրիարք և ամենայն Հայոց Հայրապետ Տէր Կիրակոսին։

Եւ սրանք են ժողովուած վարդապետներն՝ ու եպիսկոպոսները.— Յովհաննէս վարժապետ և ուսուցիչ Հերմոնի ս. ուխտից և իր աշակերտ Դաւիթ վարդապետը, Սիւնեաց տանից Ստեփաննոս վարդապետը շատ քահանաներով, Ստաթէի առաքեալի շնորհալից աթոռից Շմաւոն վարդապետը, ս. Թաղէոս առաքեալի Գրիգոր վարդապետ եպիսկոպոսը և միւս Գրիգոր վարդապետ եպիսկոպոսը Հախպատու հռչակաւոր ուխտից։ Իսկ

Այրարատեան գաւառից Ռշտունի Կիրակոս վարդապետը՝ Չապաւանցի Սարգիս վարդապետը, Վանանդեցի Տիրացու վարդապետը Սիւնեաց, և Վասպուրական գաւառի կողմից Թովմա վարդապետը, Մեծոփայ վանքի ս. ուխտից Մկրտիչ վարդապետը, Կարապետ վարդապետը և Յովսէփ վարդապետը Պառարատու ս. Աստուածածնի վանքերի մայրաքաղաք ս. ուխտից. Բաղիշու բոլոր կողմերից՝ Ղազար վարդապետը, Ստեփան և Յովհաննէս վարդապետ Արծկէի, Չաքարէ վարդապետ՝ Վարապի մայրաքաղաք վանքերից, և Տէր Յովհաննէսը, և այստեղից ու այնտեղից տասներկու եպիսկոպոս, Հաւուց Թառի Տէր Չաքարէն՝ աղատներից, Տէր Գարրիէլ՝ ս. Էջմիածնից, Յովհաննա վանքից Տէր Կարապետը, Բջնու Տէր Յովհաննէսը, Վիրապի Տէր Անտօնը, Արճիշու Մեծոփի վանքի Տէր Յովհաննէսը, Կողբի Տէր Յակոբը, Բագարանի Տէր Մկրտիչը, Հախապատի Տէր Մարտիրոսը, Գանձասարի Տէր Ազարիան, Նորավանքի Տէր Չաքարէն, Սիւնեաց աթոռի տեղապահ Տէր Ստեփաննոսը տղատներից, Տէր Կիրակոսը Սալնապատի և ուրիշ շատ վանքեր և կրօնաւոր սուրբ հայրեր և պատուական երէցներ աւելի քան երեք հարիւր անձինք և շատ միայնակեացք. և աղատներ (աղանուականներ) և աղատների որդիք, գլխաւորներ և տանոււորներ. և անթիւ և անհամար բազմաթիւ ժողովուրդեան կին և մարդ:

Եւ թղթով մեզ հետ միաբանել էին հեռաւոր (բացակայ գտնուող) վարդապետներից և եպիսկոպոսներից ս. Պապի Աւետիս վարդապետը, Ապարանցի Յովհաննէս վարդապետը, Գամալի էլի Յովհաննէս վարդապետը, Հեղնի Կարապետ վարդապետը, Բարիձորի Յովհաննէս վարդապետը և Գամալիէլի միւս Յովհաննէս վարդապետը, և Դաւիթ և Սահակ եպիսկոպոսները, Տէր Ստեփաննոս Բաղիշու եպիսկոպոսը, և Տէր Բարսեղ և Տէր Աւետիս եպիսկոպոսը, Տէր Յովսէփը, Տէր Գրիգորը, Տէր Թորոսը ս. Կարապետ գերանշաղ վանքի, Առաքելոց ս. ուխտի Տէր Պօղոսն ու Տէր Չաքարէն, Վանադրին (Վանդրին) Տէր Կիրակոսը, Սասունի Տէր Յովհաննէսը, մեծահանգէս Վարազի ուխտի Տէր Յովհաննէսը և Սալնապատի ս. ուխտի Տէր Կիրակոսը: Սոքա բոլորեքեան միաբանութեամբ և ս. Հոգու ընտրութիւնով... բոլոր Հայկապեան գաւառի հաւանութեամբ... դրինք Հայրապետ և կաթողիկոս... Վիրապեցի Տէր Կիրակոսին... (Յիշատ. Թ. Մեծ. 51 երես):

46. Ասնելով վարդապետահայտարան ս. Էջմիածին բարձրագահ աթոռը, և երկրի բոլոր ժողովուրդը՝ հեղեցեցականներ և աշխարհականներ ժողովուրդով եղաւ մեծ սիւնհողոս (համապու-

մար ժողով). և այսպիսի մեծախումբ հանդիսով ձեռնադրեցին Սրապիոն վարդապետին Ամենայն Հայոց կաթողիկոս... (Ա. վ. Դավր. 13 երես):

47. Սրանից յետոյ քրիստոնեաները Շահսէֆի Թագաւորից խնդրեցին հրաման կաթողիկոսութեան՝ Մովսէս վարդապետի համար: Յետոյ Հայոց ամբողջ ազգը, որ կային արևելքում և արևմուտքում միաբանական թղթով և խօսքով Մովսէս վարդապետին կաթողիկոս արին և հառապեցին ս. Էջմիածնի աթոռին: (Անդ. 229 երես):

48. Եւ 1081 թուին, երբ Մովսէս կաթողիկոսի մահը մօտեցաւ, ժողովուեցին նրա մօտ եպիսկոպոսներ, վարդապետներ և երևելի մարդիկ, նաև Թահմազդուլի խանը, քաղաքի իշխանը և ողբալով ասացին... յայտնիր մեզ, թէ ո՞ւմ ես տալիս մեզ հայր և հովիւ քեզանից յետոյ: Նա ասաց՝ դուք զիտէք, ում և կամենում էք՝ ընտրեցէք: Իսկ ժողովականները ասացին, բոլոր աշխարհս քեզ ընտրեցինք և այժմ դու ո՞ւմ և ընտրես, մեզ ընդունելի է. և նա ասաց, ես կամենում եմ, որ Փիլիպպոս վարդապետը լինի իմ փոխանորդը և Էջմիածնի աթոռի յաջորդը: Երբոր Մովսէսի մահուան համբաւը տարածուեց... նաև այն խօսքերը թէ Փիլիպպոսի մասին է պատուիրել կաթողիկոս անել, ամենքը յօժարութեամբ հաւանեցին. ուստի և ամեն տեղերից ուղարկուեցին վկայականներ (հաւանութեան), որպէսզի Փիլիպպոս վարդապետը լինի կաթողիկոս. Էջմիածնի թղթի գալը անցաւ մի տարի և հասաւ 1082 թուականը, որ տարին նրան օրհնեցին կաթողիկոս: (Ա. վ. Դավր. 315 երես):

49. Եւ վախճանուեց... Տէր Փիլիպպոսը... և նրանից յետոյ յաջորդեց ս. Էջմիածնի կաթողիկոսութեանը Զուղայեցի Յակովբ վարդապետը. որովհետև Փիլիպպոսի մահուան առթիւ ժողովուած վարդապետներն ու եպիսկոպոսները կեցան ս. Էջմիածնում մինչև Մաղկաղարդ, և նոյն տօնին օրհնեցին Յակովբ վարդապետին կաթողիկոս... (Անտ. 345 եր.):

Ա. վ. Ղլաճնան

ԿԵԱՆՔԻ ԱՆԻՒՆ

(Քաղուածը մի յիշատակարանից)

I

Գարուն էր չքնաղ, գեղածիծաղ...

Արեգակի ոսկեզօծ ճառագայթները թափանցում էին կապոյտ երկինքը, փաղաքշում երկիրը, սաղմնաւորում կեանքը, պճնում ծառերը ծաղիկներով ու տերկներով, լեռներն ու ձորերը ծածկում թարմ կանաչով:

Ամեն մի արարած վայելում էր գոյութեան հրապոյրը:

Հրճւում էր բնութիւնը... հրճւում էր և իմ հոգին:

Գարունը ինձ արբեցրել էր, կախարդել իր հմայքներով: Անուշահոտ խոտի վրայ պառկած, ես երազում էի... Բայց ի՞նչ. դժուար է ասել... Վառ երիտասարդական զառանցանքներ էին, աւանդ, անդարձ ոսկի օրերի: Կուրծքս բարախում էր, արիւնը արագ հոսում էր երակներումս, ես փափագում էի, անյաղ տենչում սիրոյ: Կը կամենայի գրկել ամբողջ աշխարհը, թեթևացնել տանջողներին բեռը, սրբել բոլորի արտասունքը, աւետել նոր շշմարտութիւն, տանջուել, բայց և վայելել կեանքի երջանկութիւնը...

Կարծես սրտիս խորքը մի գերբնական ոյժ թափանցեց և կամեցաւ իրագործել իմ իղձը: Մի քանի քայլ հեռաւորութեամբ հնչեց արծաթանման ծիծաղ և ապա մի բուռը ծաղիկ թափուեց գլխիս, կրծքիս... Նս ցատկեցի... Իմ առջև կանգնած էր մի չքնաղ կոյս, թարմ, սնարատ ինչպէս վաղորդեան ցօղ: Աչքերը խորհրդաւոր՝ ինչպէս անհուն ծովը, դիւթիչ ժպիտը երեսին... Մի

Լինչ որ նոր լոյս սփռուեց շուրջս, արևը փայլեց աւելի պայծառ: Թեթև գեփիւռը երեքեց ծաղկունքը, նրանք ղլուխ խոնարհեցին, երկրպագեցին փոքրիկ կախարդուհուն... Ես ևս նրանց հետ: Այդ էակը՝ բնութեան զարդն էր, ստեղծագործութեան պսակը:

Նա ուրախ, զուարթ, իր քնքոյշ ձեւները ինձ մեկնեց... Դաշնակցութիւնը կայացաւ...

Մենք զրուցում, զուարճանում էինք, մեր ծիծաղը հնչում էր համարձակ, բարձր: Յդացած մի միտք, դադարի ցանկութիւն հողորդում էինք իրար վստահօրէն: Կարծես, մեր հոգիները վաղուց ճանաչում էին իրար և աներևոյթ թելերով կապուած էին... Բայց, աւագ, ժամանակը սլանում էր արագ: Դեռահաս հրապուրանքի օրերն անցան, ինչպէս մի վայրկեան...

Մենք բաժանուեցինք...

II

Անհուն և զօրեղ ծով էր մեզ շրջապատում: Անհուն և զօրեղ զգացմունք էր մեզ միացրել: Մի քանի տարի անշատուելուց յետոյ պատահեցինք իրար, բուն սէրը փոխարինեց անցեալի համակրութեանը: Բայց մեզ միացրել էր ոչ միայն անձնական երջանկութեան անյազ ցանկութիւնը, ոչ. նաւը մեզ մղում էր հեռու, օտար երկիր, ուր մենք լոյսի աղբիւր էինք փնտռում, որից սլիտի ցրուէր մեզ պատող խաւարը: Ձգտում էինք գիտութիւն ձեռք բերել, որը սլիտի լուծէր դժուարին հարցեր, բուժէր մահացու խոցեր...

Դիշերը հրապուրիչ էր. աստղերը փայլում, առկայծում էին խորհրդաւոր, կարծես՝ ողջունում էին մեզ, իսկ բարձունքից հովանաւորում էր յարգգողի ճանապարհը՝ երկնակամարով փռուած՝ իբրև հսկայական մառախլապատ ժապաւէն:

Ծովը նիրհում էր՝ արևի չիղիչ ճառագայթներից թուլացած. իսկ հեռուն չքանում՝ թեթև մշուշի քօղով

ծածկուած: Անդորրութիւն էր տիրում, միայն մեքենաներն էին աղմկում, միայն լսում էր ջուրի ճողիւղն ու ծփանքը նաւի պատերի վրայ... Մեր շուրջը բոլորը քնած էին: Երբեմն նաւաստիները անձայն՝ քնաշրջիկի նման՝ յետ ու առաջ էին դնում: Միայնակ՝ տախտակամածի մի անկիւնից՝ զմայլում էինք հրաշալի տեսարանի վրայ, ձուլւում այն կախարդական լոյսի հետ, որը ցոլում, պսպղում էր ջրի կոհակների մէջ, փայլում անթիւ տաքամանդներով:

Երջանիկ էինք... անսահման...

Ես փաղաքշում, գուրգուրում էի նրա գանգուրները և գեղանի աչքերում որոնում գոյութեան նպատակը — այդ մշտենշենաւոր հանելուկը...

Ինձ թւում էր, թէ՛ ամբողջ աշխարհը մեզ համար միայն գոյութիւն ունի, ամեն ինչ ժպտում է մեզ և պէտք է հնազանդի... Կարծես՝ մեր նաւը զգում էր մեր հոգեկան դրութիւնը: Նա սլանում էր թեթև, հանգիստ, ինչպէս թիթեռ, ճեղքելով զօրեղ տարրի մակերևոյթը...

Բայց այդ ի՞նչ սե բիծ է, հրեշաւոր կենդանու նման մեր առաջը: Ի՞նչ պատահեց արգեօք... Կոտորատուած, փշրուած նաւի բեկորներ... Մեզ ի՞նչ փոյթ... Մենք ուժեղ ենք, համարձակ, ոչ մի մարդ ահարկու չէ մեզ համար: Մեր նաւը ամուր է, նաւապետը՝ հմուտ և ոչ մի ծանծաղուտ և ժայռ մեզ չեն վախեցնում: Հրապուրիչ հեռուն ուժգին զրաւում է, շողշողալով ծիածանի գոյներով...

Ի՞նչ գեղեցիկ անուրջ էր դա...

Բուռն սիրոյ ի՞նչ ուխտեր էին կէս գիշերային խաղաղութիւնը վրդովում... Ո՛րքան բարձր էր սաւառնում միտքը, ի՞նչ համարձակ զիտաւորութիւններ էին հնչում... Թեաւոր երևակայութիւնը ձգտում էր քօղարկուած ապագան թափանցել...

Միայն մի հանգամանք էր մեր երջանկութիւնը թունաւորում. այդ՝ հեռու թողած տխուր տեսարանները: Նրանք սեղմում էին մեր կուրծքը կսկիծով... Բայց մենք

մեզ մխիթարում էինք, որ դա ժամանակաւոր երևոյթ է, կեանքը՝ որպէս անիւ պտտւում է, ամեն ինչ կը փոխուի. գերեզմանների վրայ անգամ փռւում են հրաշագեղ ծաղիկներ:

Այո, յառաջ, յառաջ: Ծիրանագոյն կրակով կը բորբոքուի արշալոյսը և կը յաղթէ գիշերը...

III

Մռայլ, թախծալի աշուն էր:

Սև, ծանր ամպեր էին կուտակուած հորիզոնի վրայ:

Բնութիւնը արտասուում էր, մրմնջում: Անձրևի կաթիլները մեղամաղձոտ մաղում, փշրւում էին ապակու վրայ, ճշում վշտագիւն: Քամին փչում էր: Երբեմն լսում էր հրացանների որոտը...

Զարհուրելի գիշեր էր դա. մառախլապատ մթնոլորտը ծանր էր, խեղդող. այնտեղ կատարւում էր տըխուր ողբերգութիւն. ուժեղը ոչնչացնում էր թոյլին, զինուածը՝ անզինին:

Տենդային հայեացքով հետևում էի ժամացոյցի սլաքին: Նա առաջ էր սողում դանդաղ, ինչպէս տխուր, միատեսակ կեանքը: Ես պատրաստ էի փշրել նրա մեքենաները, որ ազատուեմ բուպէները հաշուելու ծանր զգացմունքից:

Նորածին մանուկի ահաբեկած աղաղակը հնչեց միաժամանակ հրացանի տընքոցի հետ: Մայրը դողդղաց, ամուր սեղմեց ձեռքս:

—Այդ ինչ էր... դու լսեցի՞ր...

Ես ծունկ չոքեցի նրա առաջ, սեղմեցի երեսիս նրա թուլացած ձեռները:

—Այնտեղ մարդիկ են որսում...

—Հանգիստ եղիւր, ոչինչ... Մենք փոքրիկ ունենք...

—Խեղճուկ... խեղճուկ... ռը ծնուեց... շնչաց նա, և անգոր թեքուեց բարձին և մարած աչքերից երկու կաթիլ արտասուք գլորուեցին:

Ո՛ւր ծնունեց... Դա հառաչանք էր, մայրական-անգուսպ վրդովմունքից առաջացած բողոք. ծնել դառը հալածանքների, զրկանքների համար, առաջին օրից թշուառութեան դրոշմը կնքելով ճակատին: Ծնել տանջանքների մէջ, որ մի որ և է կամք նրանց դատաւճիւրը, վախճանը որոշէր...

Ես փաղաքշում էի հիւանդին, աշխատում նրա խռովայոյզ սէրտը հանգստացնելու. խսկ նրա յոգնած գէմքի վրայ արտայայտուում էր և ներքին խռովութիւն և ֆիզիքական տանջանք:

Ծանր, խեղդող զիշեր: Մօր դրութիւնը անյոյս էր. նա կուռում էր մահուան հետ: Վիրաւորուած այծեամի պէս, նրա աչքերը աղերսում էին կեանք. բնագդումով բռնում էր ձեռքերս, կախում պարանոցիցս, պաշտպանութիւն էր որոնում... Նոր արտայայտութիւն երևաց նրա գէմքին, մի ինչ որ տարակուսանք պատեց նրան, կարծես հասկացաւ, որ արդէն ուշ է: Նսեմացած հայեացքով հարցնում էր.

—Արդեօք այդ ի՞նչ անուղղելի երևոյթ է առաջ գալիս. ո՛ւր է անհետանում եռանդը, կեանքը, այդ ի՞նչ դաժան ոյժ է, որ գերիշխում է, քայքայում ամեն բան:

Կործանում էին յոյսերս, փշրւում սրտիս լարերը: Ես նման էի խելագարի...

... Մի ակնթարթ ևս... մի հառաչք... մի հայեացք... և ընդ միշտ փակուեցան այն աչքերը, որոնք անսահման թանգ էին ինձ համար:

Այդ հզօր և տհալի ոյժի՝ մահուան առաջ ես կանգնել էի թոյլ և անզօր, կրճատւում էի աստամներս: Երբ շօշափեցի անշունչ դիակը, ինձ թուաց՝ թէ կատարուել է մի ինչ որ հրէշաւոր թիւրիմացութիւն, որի հետ հաշտուելը անհնարին է: Իմ խելքս և զգացմունքներս ընդգրկմանում էին նրան: Վիշտը մորմոքում էր ինձ:

Իսկ դրսումը. քամին փշում էր լալազին, հնչում էր, որպէս թաղման մօայլ երգ իմ ականջներում: Անձ-

ընդ անդադար թափւում էր, թափւում, ձայնարկում
վշտագին:

...Ո՛չ, ո՛չ, դա թուլութիւն է. պէտք է սթափու-
ել. կեանքի հարուածների տակ ընկճւում է միայն
տկարը. իսկ ուժեղը զիմադրում է, մարտնչում: Անձ
նական երջանկութիւնը դարձաւ ցնորք, անհետ կորաւ:
Այժմ մնում է իրագործել մեր ուխտը...

Որպէս ամայի անապատի մէջ ծարաւից տանջու-
ածին զովացնում է յստակ ցօղը, ինձ մխիթարում է
այն միտքը՝ թէ կը մեծանայ նորածին մանուկը, որին
պիտի ժպտայ և՛ կեանքը, և՛ լոյսը, և՛ արեւը...

Տիկ. Եկ. Բահա/ժուր

ԴՈՒ ՑՈԳՆԱԾ ԵՍ

Մենակ կ'երթայի, առաջս քարեր,
Բազմաթիւ քարեր, սևամած, դժնեայ...
Առաջ կ'երթայի, ու անթիւ խաչեր
Հուռ խոկում էին քարերի վրայ...

Ա՛խ, շիրիմները, ազիզ շիրիմներն՝
Մենակ ու տխուր ինձ կը նայէին
— Դու էլ մօտեցիր մեղմիկ հանգչելու,
Խեղճ, դու յոգնած ես, ինձի կ'ասէին...

Հայկունի

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Մասնոյ նոր կոտորածները կրկին քաղաքակիրթ աշխարհին ուշադրութեան առարկայ կը դարձնեն Հայաստանի այդ ոստանը, որ իր երբեմնի բազմամարդութեան մէկ տասնեւորդն իսկ չունի այսօր: Յաջորդական ջարդեր ու յարձակումներ հետզհետէ ամայացուցած են այդ լարձրագիւր սարերուն անհամար գիւղերը: Երկար ժամանակ կայ որ այդ սարերու ծմակներուն մէջ ոչ հայու նախիր, ոչ ալ հայ հովիւ երեւցած է. քուրդը յափշտակած տարած է բոլոր հօտերը, նոյն իսկ մշակին եզն ու արօրը, և թիւրքին գնդակն ու սուրը սպանած են բոլոր երբեմնի հօտաղները, արի լեռնականներ՝ որոնց կարշնեղ, բայց անգէն չբազուկը չէ կրցած սաւայն ոչ իսկ իբր գիւրաբեկ թումբ մը՝ կասեցնել արշաւող գաղաններու վտճակը: Քաղաքակիրթ աշխարհէն մեկուսացած, արհաւրոտ լեռներու և ձորերու ամայութեան կուշտը թաղուած այդ ընդարձակ երկիրը՝ ահա տասը և աւելի տարիներէ ի վեր կը հեծէ անողոք և անկարեկիր դատապարտութեան մը տակ: Սնոնք որ մեռած կ'իյնան՝ բարեբաղդ կը նկատուին ողջ մնացողներուն կողմէ, որոնք՝ իրենց վրայ ծանրացող այդ անասելի անօրէնութեան ու վայրագութեան ի տես, ապշութեամբ կը հարցնեն թէ ինչպէ՞ս հակառակ այդ ամենուն տրեւ կրկին կը ծագի, թէ երկինք քար չի կտրիւր ու վար չիյնար, չի ճգմեր այդ մեղքի հերոսները, որոնցմէ միայն մէկը պիտի բաւէր ամբողջ դժոխք մը լեցնելու:

Տարիներ ու տարիներ թուրքը կը ջարդէ անխնայ, բայց տակաւին չէ կշտացած, չէ յապեցած. տակաւին արիւն ու արցունք պէտք է իրեն, տակաւին դիակ ու աւերակ պէտք է իրեն: Եւ կը կոտորէ ու կը կործանէ: Մատուռ տուն, դպրոց և ագարակ քար ու քանդ կ'ըլլան այդ ահարկու ուրակահին առջև, զոր կարծես դժոխքի բոլոր ոգիները մէկանց կը հրահրեն, և քանդուած օճախներուն, բոլոր երբեմնի բոյներուն ու թոնիրներուն տեղ հսկայ և ամբակուռ զօրանոցներ կը

բարձրանան, քարաշէն ու երկաթապատ: Հնձուած բնակարաններէ ու կործանած օճախներէ փախստական ժողովուրդը, աւելի կ'ին, աղջիկ ու երեխայ, անտէր ու անտուն կը դեգերի Մըշոյ ընդարձակ դաշտին մէջ, անպաշտպան՝ քուրդին յարձակումներուն դէմ, անպաշտպան բնութեան խստութեանց դէմ, կը թափառի ու կ'ողբայ, և ոչ ոք օգնութեան ձեռք կը կարկառէ իրեն: «Բանդուած բնակարանները կը վերաշինուին», կ'ըսէ թիւրք կառավարութիւնը եւրոպական դիւանագիտութեան, և Եւրոպայի արտաքին գործոց նախարարներ կը փութան իրենց ժողովուրդներուն յուզումը մեղմել՝ աւետելով թէ «բանդուած բնակարանները կը վերաշինուին»: Կը վերաշինուին, այո՛, բայց ի՞նչ ևն այդ վերաշինութիւնները. զո՞րք թիւրք դուրծաւորը քար մը շալկեր և Սասնոյ բարձունքը հանել է հայ օճախի մը վերահաստատութեան համար: Անոնք քարերը տարել են, որպէս զի զօրանոցներ շինուին՝ որպէս զի ապագային աւելի դիւրաւ կարենան ջարդել ու կործանել, հիթէ երբէք իր բնիկ հողին սէրէն ու յիշատակներէն մղուած՝ Սասնոյ հայ ժողովուրդի թշուառ մնացորդը կրկին երթայ ապաստանի տակաւին միացող աւերակներուն մէջ:

Բանի մը ամիս առաջ, նոյն ինքն թիւրք թերթերը բնիկ ժողովրդեան կ'աւետէին, թէ հանրային օգտակարութիւն ունեցող շէնքեր կը բարձրանան Սասնոյ լեռներուն կատարը, և թէ ...շնորհիւ Վեհ. Սուլթանին, ամէն կարելի միջոց ձեռք առնուած է այդ աստիճան հանրօգուտ նպատակի մը ժամ առաջ իրագործման համար: Թիւրք կառավարութիւնը Եւրոպայի կ'ըսէր թէ «բանդուած բնակարաններն են այդ շինուածները», բայց իր ժողովրդեան կ'իմացնէր բուն իսկ ճշմարտութիւնը, որ սքանչելապէս պարզուած է այդ օրերուն հրատարակուած Պաշտօնական Զեկոյցի մը մէջ:

Մենք այստեղ կը թարգմանենք այդ զեկոյցը՝ Իզուամ-ի էշերէն քաղելով.

Վեհ. Սուլթանը՝ Որուն ամենամեծ փափազն է որ իր կայս. բոլոր երկիրները իրենց բնական դիրքին համեմատութեամբ զարգանան և ժողովուրդը ամեն կողմ կատարեալ անդորրութեամբ աշխատի, ամեն տեղի պէս Սասունի և Թալուրի լեռներուն ամեն կերպով զարգանալուն ու շէնարուն համար ալ ասիէ առաջ իր շնորհներն բրած էր, հրամայելով որ՝—որպէսզի տեղւոյն ապահովութիւնը և անդորրութիւնը պահպանուի, բարձրագոյն հաճութեան հակառակ արարքներ տեղի չունենան և տեղւոյն հնազանդ ժողովուրդին իրաւունքները պահպանուին, —նոյն լեռներուն Մըշոյ շրջակայ Կէլի-Կիզան անուն կարեւոր դիրքին վրայ զօրանոց մը կառուցուի, Թաբրէի և Սիմալի դիրքերուն վրայ մէյմէկ աշտարակ, Կինճի շրջակայքը ու Սասունի մօտ՝ Թալուրի Միւրկեան դիրքին վրայ զօրանոց մը, և Աքչէ Սէյր ու Կիւզնաք անուն վայրերն ալ մէյ մէկ աշտարակ: Բիթլիսի կուսակալ Ֆէ-

ըիդ Բէյի և տեղական պաշտօնեաներու ջանքերով, այդ զօրանոցներէն ու աշտարակներէն անոնց՝ որոնց շինութիւնը աւարտած է, կայս. իրատէի մը համաձայն, բացումը մեծ հանդէսներով կատարուեր է՝ կուսակալին և պաշտօնեաներուն ներկայութեան: Այդ առթիւ ևս բարեմաղթութիւններ կատարուեր են Վեհ. Սուլթանին համար: Աշտարակներէն իւրաքանչիւրը խոշոր զօրանոցներու ձևն ունի: Անոնց շինուածանիւթերը մեծ դժուարութեամբ հոգացուած են. Մուշէն, Բիթլիսէն ու Հալէպէն տարուեր են, և տաղձներն ալ ժողովութեան իւրաքանչիւր սայլին հինգ զոյգ անասուն լծուելով, որով այդքան կարճ միջոցի մը մէջ նոյն շէնքերու կառուցումը գլուխ հանուած է, ինչ որ անյուսալի էր նախապէս:

Թիւրք թերթը՝ պաշտօնական աղբիւրէ ներշնչուած այս զեկոյցին կցած էր հետևեալ տողերը.

«Այս պարագան ալ մեծ ապացոյց մըն է Վեհ. Սուլթանին բարոյական այն բարձր կարողութեան, որով ամենէն դժուարին գործերն իսկ ի գլուխ կը հանէ հիանալի կերպով: Շէնքերը շատ հաստատուն եղանակով կառուցուած են: Վեհ. Սուլթանը, քնահատելով այդ մասին տարուած ջանքերը իր կայս. բարձր գոհանակութիւնը հաղորդել տուաւ: Նաև՝ իր կայս. բարեները հաղորդեց բացման ներկայ գտնուողներուն:

Եւ իսկապէս ալ տեղի կար բարե ու գոհունակութիւն հաղորդելու: Շնորհիւ այդ ամբողջներուն՝ Սասուն մեռած է այլևս, մեռած անդարձ կերպով, և թիւրք կառավարութիւնը՝ իրերու հեզնութիւնը մինչև այնտեղ տարած է, որ նոյն ինքն հայերը ծառայեցուցած է այդ աւերման ու կործանման գործին: Բուն հայկական նահանգներուն մէջ, տարապարհակ աշխատութիւնը շատ սովորական՝ գրեթէ օրէնքի կարգ անցած բան մըն է: Այնտեղ՝ հայ անհատը ոչ միայն տուրք կը վճարէ ճամբաներու շինութեան համար, այլ նաև,—երբ այդ կարգի շինութեանց կը ձեռնարկուի,—պարտաւոր է թողուլ իր արտը, իր բահն ու բրիչը, և երթալ ձրիաբար աշխատիլ կառավարական պաշտօնեաներու խորագանին տակ: Հայեր աշխատած են նաև Սասնոյ այդ ամրակուռ «աշտարակներուն» (իրականութեան մէջ՝ «բերդեր») համար: Վերոյիշեալ պաշտօնական զեկոյցին այն մասը՝ որ կ'ըսէ թէ «այդ անմատչելի սարերուն կա տարը հանուեցան հինգ զոյգ լծուոր ունեցող սայլեր», պարզապէս կ'ակնարկէ այն երկոտանի լծուորներուն՝ Սասնոյ կոտորածներէն ճողոպրած խեղճ հայերուն, որոնք իրը անասուն գործածուեցան շինութեանց առթիւ: Արդէն կարելի չէ որ չորքոտանիներ և կամ սայլեր վեր հանուին այդ աստիճան առապար ու տարամերժ բարձունքներէ...

* * *

Բայց պահ մը թողունք ներկան և զբաղինք անցեալով: Թողունք ներկայ ջարդերը, և անցնինք անցեալ ջարդերու՝ որոնց մասին տակաւին պատմական արժէք ունեցող ոչինչ

հրատարակուեցաւ հայ լեզուով: Այդ թերին պէտք է լեցնել, և պ. Մորիս Լըվէյրի մէկ աշխատասիրութիւնը,—«Les massacres de Sasounkh»,—սքանչեւապէս կրնայ մեզի աղբիւր ծառայել, արձանագրելու համար պատմութիւնը այն արիւնալի անցքերուն՝ որոնք Սասունը փճացուցին, և Հայաստանի ընդհանուր ու մեթոտիկ ջարդերուն նախակարապետները եղան: Պ. Լըվէյր՝ հմուտ անձնաւորութիւն մըն է թիւրքական խնդիրներու մասին, և հայերու ջերմ պաշտպան մը, ճիշտ այն ազատագիր և ազնուամիտ անձնաւորութեանց պէս,—Քիյեար, Վիկտոր Բէրար, դը Պրեսանսէ, դէտուրնել դը Կոնստան, Արտըր Լինչ, Մակ-Կոլ-Մակկոլմ, և այլն, որոնք բողոքի ձայներ բարձրացուցին Եւրոպայի մէջ, այն անըմբռնելի անտարբերութեան դէմ, որով քաղաքակիրթ Եւրոպան դիտեց գեղեցիկ և ամեն յառաջագիմութեան ատակ՝ հետեւաբար նաև ամեն համակրութեան արժանի ցեղի մը փճացման զարհուրելի դործը:

Իր տուած տեղեկութիւնները՝ թուուցիկ և անվաւեր աղբիւրներէ քաղուած չեն: Ո՛չ թէ միայն վաւերական պաշտօնական թուղթեր ունեցած է ի ձեռին, այլ նաև անձամբ հարցափորձած է ահարկու ջարդին փախստականներէն մէկ քանին, ինչպէս՝ Կէլի-Կիւղան գիւղացի Սամօ Պետրոսեանը, անոր կիսը՝ Ալթունը, և Տալվորիկ գիւղացի Օվիկ (Յովհաննէս) Վարդանը:

Մենք՝ ջարդերուն պատմութեան անցնելէ առաջ՝ այստեղ կ'արտագրենք կարգ մը ուրիշ տեղեկութիւններ՝ որոնք պ. Լըվէյրի աշխատասիրութեան նախաբանը կը կազմեն, և աւելի դիւրեմբռնելի կը դարձնեն յետագայ անցքերուն ծնունդ տուող պատճառները:

Սուլթանին հայ հպատակները, կ'ըսէ պ. Լըվէյր, առհասարակ չորս միլիոնի կը հասնին և ցրուած են թիւրք կայսրութեան բոլանդակ տարածութեան վրայ, որչափ Անատոլիոյ, այնչափ ալ Եւրոպական Թիւրքիայի մէջ, բայց անոնց ստուարագոյն մասը կը գտնուի Մեծ-Հայաստանի մէջ. այսինքն՝ Տրապիզոնի, Սեբաստիոյ, Նարբերդի, Տիգրանակերտի, Ատրպատականի և Արարատ լեռան շրջականները: Մեծ-Հայաստանը՝ Տիգրիսի և Եփրատի հովիտներով, բնական ճամբայ մըն է որ Սև ծովը կը միացնէ մէկ կողմէ Պարսից ծոցին, և միւս կողմէ ալ Աղէքսանդրէտի ծոցին (Կիպրոսի մօտը): Այս շրջանակէն դուրս, պէտք է նկատի առնել նաև շատ մը հայաշատ կեդրոններ, ինչպէս՝ Ամասիա, Եւփոկիա, Կեսարիա, Մարաշ, Մամուշ շրջանակները, Սև ծովու երկայնքը գտնուող երկիրները, ինչպէս նաև Կիլիկիա: Նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ՝ կան թաղեր, զոր

օրինակ Սամաթիա, որոնց մէջ միայն հայեր կը բնակին: Հանդարտ ժողովուրդներ են ամենքն ալ, որոնք դարերու ընթացքին՝ յաջորդական ստրկութեանց պատճառաւ, մասամբ վրայ տուած և կամ կորսնցուցած են դիմադրելու՝ բռնութեան դէմ բռնութեամբ մարտնչելու՝ բնածին զգացումը: Եւ սակայն, քառորդ դարէ ի վեր, ըմբռնած ըլլալ կը թուին կարգ մը տարրական իրաւունքներ, ինչպէս օրինակի համար չկողոպտուիլ ու չջարդուիլ առանց բողոքի կամ ցաւի ազազակ արձակելու:

1868-ին էր որ Սրիմեան պատրիարք՝ զոր հայ ժողովուրդը յարգանքով Հայրիկ կ'անուանէ՝ համարձակեցաւ Սուլթանին ներկայութեան յայտնելու այն կեղեքումները, որոնց տակ կը հեծէր իր ժողովուրդը: Մինչև Բերլինի զաշնագրին կազմութիւնը, նոյնիմաստ բողոքներ կրկնուեցան բազմիցս՝ իրեն և իր յաջորդներուն կողմէ, ամենքն ալ զուր տեղը: Բերլինի զաշնագրին կազմութեան միջոցին Ներսէս պատրիարքի գիմումներուն շնորհիւ, եւրոպական պետութիւնները ուշադրութեան առարկայ դարձուցին հայերու վիճակը: Այդ զաշնագրին 61-րդ յօդուածին համաձայն, Թիւրքիա կը խոստանար բարեկարգութիւններ գործադրել, և եւրոպական պետութիւններն ալ իրենց կը վերապահէին միջամտելու իրաւունքը, եթէ երբէք երբեմնի վարչական զեղծումները կրկին շարունակուէին հայկական նահանգներու մէջ: Նոյն իսկ Անգլիա՝ Կիպրոսի պայմանագրութեան շնորհիւ, բացառիկ պարտաւորութիւններ կը ստանձնէր այդ մասին:

Այսպէսով՝ մեծ յոյսեր տրթնցան հայ ժողովուրդին մէջ: Հայերը, առանց իրենց հաւատարմական զգացումները ոտնակոխ ընելու՝ մտածեցին թէ Թիւրքիոյ վեհապետին բարի կամեցողութիւնը իրենց մասին՝ կատարելապէս պիտի նպաստաւորուէր քաղաքակիրթ եւրոպայի բարոյական աջակցութեամբ: Եւ սակայն՝ այս յոյսը ցնդեցաւ, գնաց: Թիւրքիոյ ներքին գաւառներուն երբեմնի վիճակը անփոփոխ մնաց. զազմուեցաւ Երեւակ—Ջինակցութիւնը՝ որ եւրոպական տէրութեանց ընդհանուր համաձայնութիւնը անկարելի կը դարձնէր, և հայերը ստիպուեցան ընդդիմադիր տարը մը դառնալու: Այդ մտքով խմբեր կազմուեցան Անգլիոյ և Յունաստանի մէջ, և սկսան գործի անանկ ատեն մը՝ ուր նոյն ինքն հայկական նահանգներու մէջ, ամեն կարգի ապօրինաւորութիւններ, հարստահարութիւններ, կեղեքումներ և յափշտակութիւններ՝ խոր յուլման մը մատնած էին բնիկ հայ ժողովուրդը: Մուսա բէկի խնդիրը, 1888-ին, ալ աւելի մեծցուց գրգռութիւնը: Այս քիւրդ բէկը՝ Մշոյ կողմերը ամէն նախճիր կը գործէր անպատիժ: Սպանու-

թիւն, բռնաբարութիւն, գողութիւն, և այլն՝ սովորական բաներ էին իրեն համար: Վերջապէս Պոլիս տարուելով դատի ենթարկուեցաւ, բայց հակառակ անոր՝ որ երեսուն հայ ընտանիքներ իրեն դէմ վկայութիւն տուին, անպարտ արձակուեցաւ (զոնէ ոչ մէկ պատժի ենթարկուեցաւ): Դատավարութեան միջոցին՝ Մուսա բէկ աւելի ամբաստանող մը կը թուէր, քան ամբաստանեալ:

Շատ չանցած՝ շփոթութիւնները ծագում առին Կարնոյ, Կ. Պոլսոյ, Ամասիոյ, Կեսարիոյ, Նոզդատի և Նւդոկիոյ մէջ: Թիւրք կառավարութիւնը՝ ամենէն անողորմ ու վայրագ եղանակով զսպեց այդ բողոքի արտայայտութիւնները, որոնց հետեանքը եղող դատաստանի մը մէջ (էնկիւրիի դատաստանը) 150-է աւելի հայեր, նոյն իսկ բացարձակապէս անմեղ հայեր, դատապարտուեցան:

Սասնոյ ջարդերը՝ գրեթէ անմիջական հետեանքն են այս դէպքերուն: Տեսնենք ինչ կըսէ պ. Լըվէյը՝ այդ ջարդերուն նկատմամբ:

*
* *

Սասուն՝ ոչ քաղաք մըն է, ոչ ալ գիւղ մը: Սասուն և կամ Սասունք (ինչպէս հայերը կը գործածեն յոգնակի ձևով) ընդարձակ լեռնուտ երկիր մըն է, որ Նփրատի ու Տիգրիսի վերին հովիտները կը բաժնէ, և մօտաւորապէս հաւասար հեռաւորութիւն ունի հիւսիսի կողմէն՝ Մուշէն, հարաւի կողմէն՝ Տիգրանակերտէն և արեւելեան կողմէն՝ Բաղէշէն: Բայց ամենէն աւելի անմիջական յարաբերութեան մէջ կը գտնուի Մշոյ հետ՝ ուրկէ ութ ժամուան ճիւղ ճամբով միայն բաժնուած է: Բնակիչները միայն հայերէ չեն բաղկանար, կան նաև թափառական ու հաստատուն քիւրդեր, և սատանայ պաշտող եզլիդներ: Այս վերջինները անփնաս ժողովուրդ մըն են. բայց հակառակ ատոր, բաւական տարիներ առաջ թիւրք ու քիւրդ խուժանին մուսուլմանութեան գոհ զնացին ու ջարդուեցան: Սասուն՝ իր լեռնային դիրքին պատճառաւ ստիպուած է մեկուսանալ. շրջակայ գիւղերն ու քաղաքները չեն կրնար մշտակայ յարաբերութիւն ունենալ իրեն հետ: Աղքատ երկիր մըն է, որուն վտիտ հարստութեանց աղբիւրներն են գարիի, կորեկի և խաւարծիլի մշակութիւնը, խաշնարածութիւն, ինչպէս նաև քանի մը նախնական արհեստներ:

Այդ երկրին մէջ հաստատուած են 80—100 գիւղեր, իւրաքանչիւրը՝ միջին հաշուով՝ 80 տունով. ամենէն բազմամարդները, զոր օրինակ Բարկա՝ մինչև 400 տուն ունին, իսկ ամենէն նուազ բազմամարդները՝ ինչպէս Ռէմկանք և Թարուք՝ 8—12

տուն: Իւրաքանչիւր տան համար 20 բնակիչ հաշուելով, բովանդակ Սասնոյ երկրին բնակիչներուն թիւը 70,000-ի կը հասնի: Բայց իրականութեան մէջ, այս թիւը շատ աւելի մեծ է, որովհետեւ, նահապետական աւանդութեանց համաձայն, իւրաքանչիւր ընտանիքի ամուսնացող տղամարդերը առանձին տուն տեղ չեն կազմեր և խմբուած կը մնան ընտանեկան օճախին շուրջը, որով՝ ամեն տան մէջ՝ հեթադրուածէն շատ աւելի բազմամարդութիւն մը կը գոյանայ: Ջարդերէն առաջ, 60—70 հոգինոց ընտանիքներ շատ կային Սասնոյ մէջ:

Սասնոյ շրջականները կը բնակին բազմաթիւ քիւրդ ցեղեր կամ աշիրէթներ, ոմանք հաստատուն, ոմանք թափառական: Այս ցեղերու պետերը՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր տեսակ մը գերիշխանութիւն կը պահեն հայոց վրայ, և անոնցմէ կը ստանան քեաֆիրաթի տուրքը (անկրօնի տուրք), որուն փոխարէն զանոնք կը պաշտպանեն մօտակայ ցեղերու և կամ թափառիկ աշիրէթներու յարձակմանց դէմ: Թիւրքերն ալ իւրենց կողմէ շատ ծանր տուրքեր հաստատած են, թէև հայերը՝ մինչև այսօր կատարեալ կանոնաւորութեամբ վճարած են զանոնք:

Սասունցի ընտանիք մը ահա թէ ինչ տուրքերու տակ կը հեծէ, տուրքեր՝ որոնք մեծ մասամբ կամայական են, և որոնք պէտք է վճարուին առանց բացառութեան:—Դիխանարկը (անձնական տուրք) 40 դրուշ է իւրաքանչիւր արուի համար, կը սկսի անոր ծննդեան օրէն և կը վճարուի միայն չափահաս ըլլալէն վերջ: Եկամուտի տուրքը 200—300 դրուշ է իւրաքանչիւր ընտանիքի համար: Երկանարարի տուրքը՝ 30 դրուշ (մէկ հատին համար): Ոստայնանկի տուրքը՝ զարձեալ 30 դրուշ (ամեն տան մէջ ոստայնանկ մը կը գտնուի): Տուրքի ենթակայ է նաև լեռներու մէջ՝ անասուններու կերակրութեան գործածուելու համար հաւաքուած խոտը՝ որուն ամեն մէկ մարդու բեռան պէտք է վճարել երկու դրուշ: Ոչխարի տուրքը՝ հինգ դրուշ (մէկ ոչխարը այդ կողմերը կարժէ 20—30 դրշ.): Ասոնցմէ զատ՝ արքունի զանձը իրաւունք ունի ստանալու բոլոր հունձքերուն մէկ վեցերորդը. բերք չընդունիր, այլ միայն դրամ: Ամեն տարի՝ այս բոլոր հարկերուն զանձումէն վերջ, ընկալագիր մը կը տրուի իւրաքանչիւր ընտանիքի. բայց այդ ընկալագիրը ստանալու համար պէտք է վճարել 100 դրուշի գումար մը, որ ընդհանրապէս հարկահաւաքին գրպանը կը մտնէ:

Գալով քիւրդներուն՝ որոնք աւատական գոռոզութեամբ մը ինքզինքն հայոց ճշմարիտ տէրերը կը նկատեն, ամեն հարկ բերքով ու նախիրով կը հաշուակցին: Իւրաքանչիւր ընտանիքէ

կը ստանան երկու ոչխար, մօտաւորապէս 50 զրուշի արժէք ունեցող անկողին մը և 6—7 կիւօ կարագ. հարուստները պարտաւոր են աղքատներուն համար ալ վճարել: Այս հաշուով ամեն քիւրդ ցեղապետ՝ իւրաքանչիւր ընտանիքէ կը ստանայ 150 զրուշի հարկ մը: Կը պատահի սակայն որ՝ սովորաբար իբր գերիշխան ընդունուած ցեղերէն տարբեր ցեղեր ալ երևան ելլեն և հարկ պահանջեն: Ի՞նչ ընեն խեղճ գիւղացիք. աւելի առաջ յայտնուող ցեղապետները տմեն բան տարած են. բան մը մնացած չէ նորեկներուն: Ներկայացող յետամնաց ցեղերը բնական է որ ոչինչ կը գտնեն, բայց փոխանակ համակերպելու՝ կը յարձակին գիւղերուն վրայ, կը կողոպտեն, կ'այրեն, կը պղծեն ու կը ջարդեն: Կառավարական հարկահաւաքներու ընթացքը աւելի մարգասիրական բան մը չէ: Հարկահաւաքները կ'երթան կը հաստատուին գիւղերուն մէջ, և ամբողջ ութ օր և աւելի՝ կ'ուտեն, կը խմեն բնակիչներու հաշուին. յետոյ իրենց զբաղմանց ծանրութիւնը թեթեցնելու համար՝ կիներ բերել կուտան: Եթէ վճարուած ուշանայ, կին կամ էրիկմարդ պատանդներ կ'առնեն. էրիկմարդիկը կը կախն գլխի վայր ու կիներն ալ կը բռնաբարեն. երկար օրերու ընթացքին այսպէս տանջելէ վերջ, կը թողուն որ կրկին իրենց գիւղը վերադառնան, պայմանաւ որ իսկոյն դրամ ճարելով հարկերը վճարեն: Եւ այդ տանջանքին ենթարկուողը անպատճառ միջոցը կը գտնէ ու կը վճարէ: Որովհետեւ, եթէ երբէք կրկին չ'վճարէ, այն ատեն հարկահաւաքները չեն վարանիր աւելի սոսկալի տանջանքներ հնարելու:

Մինչև 1885, տեսակ մը բարեկամական հանգամանք ունէին հայոց ճորտական յարաբերութիւնները՝ քիւրդերու հետ: Այս վերջինները՝ յաճախ զէն ի ձեռին կը պաշտպանէին իրենց հպատակ հայերը՝ թշնամի ցեղերու ոտնձգութեանց դէմ: Բայց «Համիդիյէ» գոռնդին կազմութենէն ի վեր խստութիւններն աւելցան, և տակաւ առ տակաւ՝ կատարեալ վայրագութեան մը կերպարանքը առին: Այդ գոռնդը՝ որչափ ալ քաշը-քոզուք (անկանոն) գունդ է, կրկին պաշտօնապէս կանոնաւոր բանակ կը հաշուի: Անոր մաս կազմող քիւրդերը ընդհանրապէս ամենէն վայրենիներն ու ամենէն արիւնկղակներն էին. ասկէ զատ՝ պաշտօնական գինուորի հանգամանքը աւելի մեծ համեմատութիւններ տուած էր իրենց սովորական գոռոզութեան, որով՝ կ'ուզէին իբր բացարձակ տէր վարուիլ, ջարդել ու աւերել: Ու մինչդեռ մէկ կողմէ՝ քիւրդերու խժոժութիւնները կ'աւելնային այսպէս, միւս կողմէ ալ կ'աւելնար նաեւ հարկահաւաքներու անօրինու-

թիւնն ու խստութիւնը: Հայերը այս կողմ կը դառնային, այն կողմ կը դառնային, բայց հակառակ գերմարդկային ջանքերու չէին կրնար ամէն տարի վեց կամ հօթը կեղեքիչ հարկեր վճարել: Ատիկա եղաւ 1894 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներու արիւնահեղութեանց պատճառը:

Արդէն իսկ 1893-ին, առաջին բռնութիւնները գործուեցան իբր նախակարապետ այդ ջարդերուն: Նոյն տարուան գարնան՝ երբ հարկահաւաքները յայտնուեցան հարկերը վերցնելու համար, հայերը պատասխանեցին թէ ոչինչ պիտի կրնան վճարել, որովհետեւ քիւրդերը ամեն բան թալլած, տարած են: Հարկահաւաքները ակամջ չկախեցին այս առարկութեան, յայտարարելով թէ հայոց և քիւրդերու խնդիրներն ու յարաբերութիւնները բնաւ չեն հետաքրքրեք զիրենք: Յետոյ, պատանդներ վերցուցին երկրին չորս գլխաւոր գիւղերէն՝ Սիմալէն, Կէլի-Կիւզանէն, Խուլլէն և Շընիկէն: Այդ չորս պատանդները Սիմալ տարուելով՝ ենթարկուեցան սովորական տանջանքներուն: Հարկահաւաքները զանոնք կախեցին գլխիվայր, յետոյ՝ խաչաձև երկաթներ կարմրցնելով այրեցին անոնց ոտքերը, կուրծքը, լեզուն և ճակատը: Մէկը մեռաւ նոյնիսկ տանջանքի վայրին վրայ՝ Սիմալի մէջ. երկուքը մեռան, Մշոյ մէջ ուր բանտարկուած էին ի վերջոյ, և չորրորդն ալ՝ Խուլլ գիւղի երեւելիներէն Ագօ՝ որ ողջ մնացած էր, իր կարգին նետուեցաւ Մշոյ բանտը: Այս վայրագութիւնը սարսափի մատնեց Սասունը. հարուստ ընտանիքներ վճարեցին աղքատներու հարկերը, և միջոց մը նոր անօրէնութեանց առաջքը առին:

Կէլի-Կիւզանէն երկու օրուան հեռաւորութեամբ կը գտնուի Խարկանցի աշիրէթը. ամիս մը վերջը, այդ աշիրէթին պետը՝ Հասէկ րէկ՝ երևան ելաւ և հարկ պահանջեց: Սասունցիք վճարեցին: Տասը օր վերջն ալ միևնոյն պահանջումը ըրաւ դարձեալ Կէլի-Կիւզանէն երեք օր հեռաւորութեամբ հաստատուած Խիյանցի աշիրէթին պետը՝ Հէսէյին աղա: Սասունցիք անոր ալ վճարեցին: Բայց չորս օր չանցած՝ յաջորդաբար յայտնուեցան Պատիկանցի աշիրէթին պետ Շաքիր աղա, և Պաքրանցի աշիրէթին պետ Էօմէր աղա, իւրաքանչիւրը 40 ղինեալ մարդով: Այս անգամ՝ սասունցիք չուզեցին վճարել և ընդդիմացան: Ասկէ ծագեցաւ կռիւ մը՝ որու միջոցին երկու կողմէն ալ քանի մը հոգի վիրաւորուեցան: Քիւրդերը քաշուեցան, բայց տասն օր վերջ կրկին Սասուն մտան՝ այս անգամ Համիդիէ գունդին ընկերակցութեամբ և յարձակուեցան Տալիօրիկի վրայ: Կէլի-Կիւզանցիք, ինչպէս նաև շրջակայ գիւղերու բնակիչները իրենց արիւնակիցներուն օգնութեան փութացին

ու միասին կոուեցան. նոյն օրը՝ երկու կողմէն 10 հոգի մեռաւ: Բայց ի վերջոյ հայերը պարտուեցան և ցրուեցան այլևայլ ուղղութեամբ, մինչդեռ քիւրդերն ու համիդիէները կը թալլէին լքուած գիւղերը, և ամեն բան վերցնելէ վերջ կ'այրէին երեւելիներու ընտանեացիները:

Այս արիւնալի ընդհարումէն վերջ, հինգ գլխաւոր գիւղերու երեւելիներէն մէկ հոգի Մուշ գնացին կառավարութեան գանգատելու և օգնութիւն ու պաշտանութիւն խնդրելու: Բիթլիսի կուսակալը՝ Թահսին փաշա՝ որ այդ միջոցին Մուշ կը գտնուէր, մերժեց միջամտել, առարկելով թէ այդ գործը աւելի Տիգրանակերտի կուսակալին՝ Մուսթաֆա փաշայի կը վերաբերի: Եւ իսկոյն հեռագրով տեղեկութիւն տուաւ անոր: Մուսթաֆա փաշա՝ կանոնաւոր զինուորներու գլուխն անցած՝ եկաւ Սասուն, քիւրդերուն ձեռքէն առաւ կողոպտուած առարկաներն ու գողցուած նախիրը, և վերադարձաւ Տիգրանակերտ, հետը տանելով նաև քիւրդերէն կորզուած թալանը: Հայերը ապշահար ֆնացին՝ չկրնալով ըմբռնել այս տարօրինակ արդարութիւնը: Բայց պէտք էր համակերպիլ: Սասունցիք գլուխ ծոցին և վերսկսան իրենց աշխատութիւնները:

1894-ի գարնան, «խաւարծիլի եղանակին մէջ, երբ խոտը կը սկսէր կանանչնալ»,—ինչպէս կ'ըսէր Խամօ Պետրոսեան,—հարկահաւաքը՝ երևան ելաւ: Այս անգամ՝ իր կարեւորութիւնը շեշտելու և իր զօրութեան վրայ աւելի համոզիչ դադափար մը տալու համար, հետը բերած էր նաև 30 ձիաւորներ՝ որոնք լաւ հրացաններով զինուած էին, և կը կրէին նաև հաստատուն քրդալակներ (փողէ խարազան) զոր կարելի էր գործածել՝ քիչ շատ ներդրամութեամբ վարուելու հարկ ծագած ատեն: Նոյն տարին՝ հրացաններուն և խարազաններուն շնորհիւ միայն հարկահաւաքը կրցաւ մէկ քանի անգամ հարկերը վերցնել: Նոյն տարուան վերջին հարկահաւաքութիւնը,—ճիշտ միևնոյն ձիաւորներու ընկերակցութեամբ,—կատարուեցաւ յուլիս մէկէն մինչև 15:

Քիչ վերջը երևան ելան Խիրզանցի աշիրէթին քիւրդերը՝ Հասան աղայի՝ առաջնորդութեամբ, ինչպէս նաև Խիչանցի աշիրէթին քիւրդերը, և կանոնական ոչխարի, անկողնի ու կարագի հարկերը վերցնելով ելան գնացին. բայց հազիւ անոնք մեկնած էին, և ահա յայտնուեցան նաև Պատիկանցիները և Պաքլանցիները՝ առաջինները Շաքիր աղայի, և վերջիններն ալ էօմէր աղայի առաջնորդութեամբ: Կէլի-Կիւզան, Շընիկ, ինչպէս նաև Սիմալ գիւղերը, որոնցմէ հարկ պահանջեցին, չուզեցին ոչինչ վճարել: Քիւրդերը՝ բարկացած՝ ծեծեցին գիւղացիները:

և անոնցմէ մէկն ալ սպանեցին: Յետոյ, 2000 ոչխար գող-
նալով սկսան հեռանալ: Այս աւարտութեան լուրը իսկոյն
տարածուեցաւ Սասնոյ մէջ: Հայերը հաւաքուեցան, հալածեցին
քիւրդերը, և անոնց հասան Մշոյ կէս ճամբուն վրայ, Սիմալէն
երեք օրուան հեռաւորութեամբ, Քուրթէկ ըլլակին կատարը:
Քիւրդերը պարտուեցան և վեց հոգի կորսնցուցին: Յաղթական
հայերը՝ որոնք իրենցմէ հինգը զոհ տուած էին կռուին, նոյն
իրիկունը Սասուն վերադարձան:

Յաջորդ օրը, Մուշէն 400 կանոնաւոր զինուորներ եկան
և Շընիկի մօտ բանակեցան, բաց դաշտին վրայ: Իրենց կը հրա-
մայէր հազարապետ Թալիպ էֆէնդի, «անիծեալ շուն մը»,—ինչ-
պէս կ'անուանեն Սասունցիք,—իր վայրագ ընտելութեամբ
ծանօթ շրջակայ գիւղացւոց: Մանր-մունր զսպումներու առթիւ
առաւելապէս ինք կ'ըլլար զինուորներու հրամանատարը, և
մասնաւորաբար Սիմալի մէջ քանի-քանի անգամներ առիթը
ունեցած էր իր վայրենութեան ապացոյցները տալու: Սիմալի
երևելիներէն Սաքօ՝ իսկոյն իրեն ընդ առաջ պնդելը
բացատրելու և քիւրդերուն դէմ օգնութիւն խնդրելու համար:
Թալիպ ոչ իսկ մտիկ ըրաւ զինքը, բլրաօրէն վռնտել տուաւ
իր բանակետէն: Այդ օրուրէն սկսեալ մինչև 5 օգոստոս՝ հա-
միդիէ քիւրդեր և կանոնաւոր զինուորներ, զորս Դ. զօրաբա-
նակին հրամանատար Զէքի փաշա կը ղրկէր Երզնկայէ, Ե-
կան խմբուեցան Սասնոյ շրջակաները, գլխաւորաբար Քուրթէկ,
և որովհետեւ մասնաւորաբար Սիմալի և Շընիկի կը սպառնա-
յին, այդ գիւղերուն մէջ հաւաքուեցան Սասնոյ այլ և այլ կող-
մերէն զրկուած 600-ի մօտ հայեր: Այս վերջինները, նկատե-
լով որ իրենց թիւը շատ պզտիկ է՝ բաղդատմամբ թշնամիին,
սկսան Կէլի-Կիւզան քաջուիլ՝ հալածուելով քիւրդերէն և հա-
միդիէներէն, որոնք անխնայ կը սպանէին բոլոր յետամնաց-
ները: Կէլի-Կիւզանի տղամարդիկը անմիջապէս նահանջող խում-
բին օգնութեան փութացին, անոր սիրտ տուին, և ձեռք ձեռքի
յաջողեցան մինչև Շընիկ ու Սիմալ վանել յարձակող քիւրդերն
ու համիդիէները, որոնք թալլեցին ու այրեցին այդ երկու
լքուած գիւղերը: Այս ամենը տեղի կ'ունենային կանոնաւոր
բանակին աչքերուն տակ: Թալիպ և իր մարդիկը՝ փոխանակ
միջամտելու՝ անտարբեր հանդիսատես կ'ըլլային այդ անզգա-
մութեանց:

Քանի օրերը կ'անցնէին, այնքան կը ստուարանար քիւր-
դերու թիւը. ամեն օր նոր խումբեր կուգային. բիշ ատենէն՝
քառասուն տարբեր աշիրէթներ հաւաքուեցան այնտեղ: Ամենքն
ալ բազմաթիւ էին և հազիւ կարելի էր գտնել մէկ երկու աշի-

րէթներ՝ որոնք միայն տասը հոգի զրկած ըլլային: Այդ միջոցին՝ Կէլի-Կիւզանի մէջ դիրք բռնած հայերը զգացին թէ յարձակում մը կը պատրաստուի, և կիներն ու տղաքը, ինչպէս նաև իրենց բոլոր արժէքաւոր առարկաները զրկեցին Հանգօք-Տաղ, ապառաժուտ ու գրեթէ անմատչելի բարձունք մը՝ Կէլի-Կիւզանի արևմտեան կողմը: Գիւղին մէջ ֆնացին միայն այն մարդիկը, որոնք հրացան մը ունէին, և ասոնց ալ համագումարը հազիւ թէ 500-ի կը հասնէր: Իրենց գուշակութիւնը սխալ չէր: Քիւրդերը՝ ինքզինքնին զօրաւոր զգալուն պէս՝ յարձակեցան Կէլի-Կիւզանի վրայ: Բայց ամբողջ չորս օր կռուեցան, իրենց բոլոր ռազմամթերքը սպառեցին, և չկրցան գիւղը գրաւել: Ճարահատ՝ ստիպուեցան ետ քաշուիլ, գնացին գտան Թալիպ էֆէնդին, և իրենց զէնքերը անոր ոտուրներուն առջև նետելով խոտովանեցան թէ իրենք անկարող են մինակնին գլուխ ելլելու հայերուն հետ: Յետոյ՝ քրդական զրութեամբ՝ սպառնացան հայոց միանալ և թիւրքերուն վրա յարձակիլ, եթէ երբէք այս վերջինները իրենց չօգնէին, և իրենց ապատամբ հարկատուները (?) կրկին հպատակութեան ճամբուն մէջ չմտնէին:

Մինչև այն ատեն՝ կանոնաւոր զինուորները պարզ հանգիստեաներ միայն եղած էին. անկէ վերջն է որ ասպարէզ եկան տարրեր կերպով մը, և այն աստիճան փութկոտութիւն ցոյց տուին, որ ալ կարելի չէր տարակուսիլ թէ զիրենք առաքողներուն նպատակն էր Սասնոյ կործանումը՝ կարելի եղած խոտաբոյն միջոցներով: Թալիպ էֆէնդի, իր անմիջական պետերուն հետ համախորհուրդ, կայծքարաւոր հրացաններուն տեղ կանոնաւոր զինուորներու յատուկ հրացաններ տուաւ քիւրդերուն ձեռքը, բազմաթիւ կանոնաւոր զինուորներու քիւրդի հագուստ հագցուց և զանոնք Կէլի-Կիւզան զրկեց՝ յարձակումը վերսկսելու: Յաջորդ օրը, հայերը՝ որ կռուի դաշտին տէր ֆնացած էին, սպանուած քիւրդերու մարմինները վերցուցած ատեննին տեսան թէ անոնցմէ շատերը կանոնաւոր բանակի համազգեստ կը կրեն իրենց քրդական հագուստներուն տակ:

Տասը օր վերջ, կանոնաւոր զինուորները, համիդիէները և քիւրդերը, — որոնք ամբողջ այդ ժամանակամիջոցին Մշոյ գաղտին մէջ բանակած էին՝ գիւղերը կողոպտելով, գիւղացիներէն կերակրուելով, կիներն ու պատանի տղաքը պղծելով, — խմբովին յարձակեցան Կէլի-Կիւզանի, Շընիկի և Միմալի վրայ: Յարձակող բանակը իրեն հետ ունէր նաև տասերեք թնդանօթ՝ մինչդեռ խեղճ հայերը իւր ամբողջ զէնք միայն կայծքարաւոր

հրացաններ ունէին: Չորս օրուան ուժաւորութիւնէ վերջ, սասունցիք՝ որոնց ռազմամիջոցները սպառած էր արդէն, ցրուեցան և փախան Հանդօք-Տաղ, ուր իրենց ետեւէն հասան յարձակողները: Հայերը ստիպուեցան անկէ ալ փախչիլ, և ցրուեցան շրջակայ գիւղերու մէջ, մասնաւորաբար Տալվորիկ՝ ուր Մուրատ (իւր իսկական անունով Համբարձում Պօյաճեան) զիմադրելու և կոռուելու ուխտ ըրած զիւղացւոց խումբի մը գլուխը անցած էր:

Յարձակողները, մինչդեռ հայերը կը հալածէին, Հանդօք-Տաղի վրայ հանդիպեցան սասունցի կիներուն և տղոց, որոնք այնտեղ ապաստանած էին: Թիւրքերը՝ ջարդելէ, կոտորելէ յոգնած, 60 կիներ և երիտասարդ աղջիկներ տարին լեցուցին Կէլի-Կիւզանի եկեղեցին, և այնտեղ՝ ամենքն ալ ջարդեցին՝ նախապէս պղծելէ վերջ: Մէկ քանին՝ զորս ապագայ դործածութեան համար պահած էին, աղատեցան այդ անասելի վայրենութենէն՝ բայց անոնք ալ այն աստիճան հարաշար և անընդհատ բռնաբարուեցան, որ մեռան քիչ ատենէն: Մէկը միայն, Շաբէ, Կէլի-Կիւզանցի, յաջողեցաւ գիշերանց փախչիլ և հասաւ Տալվորիկ՝ ուր հինգ օր վերջ մեռաւ խենթեցած: Այս վաթսու զփրաղէ արարածներէն զատ՝ Կէլի-Կիւզանի ամենէն զեղեցիկ կիներէն հինգը՝ Գոհար, Եղսօ, Շիքրօ, Շապաղ և Մարիամ՝ բանակետող տարուեցան: Ամբողջ քսան օր, անոնք ամեն գիշեր նախապէս ցեղապետի մը անկողինը պէտք էին կիսել, և յետոյ մատնուիլ բոլոր զինուորներու բռնաբարութեան: Իրիկուն մը՝ վերջապէս յաջողեցան փախչիլ և ապաստանեցան Տալվորիկ՝ ուր մեռան իրենցմէ երկուքը, Շիքրօ և Մարիամ: Խամօ Պետրոսեան զանոնք թաղած է անտառին մէջ: Միւսները պահուեցան Մշոյ դաշտին գիւղերուն մէջ:

Տալվորիկի անտառը ապաստանած հայերը չկրցան երկար ժամանակ զիմադրել, որովհետեւ իրենց ռազմամիջոցները սպառած էր: Յարձակողները այդ պատճառաւ կրցան անոնց հասնիլ, ու ջարդը սկսաւ: Խամօ Պետրոսեան՝ իւր կիւնն ու զաւակը, ինչպէս նաև եղբայրն ու քենին այնտեղ թողած էր. ասոնք պահուեցան մացառուտի մը մէջ, մինչդեռ ինք՝ քահանայի մը ընկերակցութեամբ կը ջանար ճողովել հալածիչներու ձեռքէն: Հազիւ թէ քիչ մը տեղ հեռացած էր, և ահա այս վերջինները վրայ հասան ու զինքը բաժնեցին իրեններէն: Իւր ամբողջ ընտանիքը ջարդուեցաւ: Կիները նախապէս մեղկացուցին, և բազմիցս պղծելէ վերջ յօշոտեցին եւ թաղանով կամ խանչէրով: Երբ կարգը եկաւ Պետրոսեանի կնոջ՝ Ալթունի, զինուորները կասեցան անոր զեղեցկութենէն հմայուած (իսկապէս ալ հրաշալի

արարած մըն է, նրբացած և ազնիւ ցեղի մը շառաւիղը կարծես՝ որուն անաբեկած զաղանի անսովոր նայուածքը ալ աւելի վայրի վառք մը կը ստանայ, երբ իր գլխէն անցած սոսկալի պատահարները կը կըպատմէ)։ Զինուորները խոստացան իր կեանքը շնորհել, պայմանաւ որ հաւատքն ուրանայ, բայց Ալթուն՝ մերժեց յամառօրէն։ Այն ատեն՝ ատին իր զաւակը, եաթաղանով մը շամփրեցին զայն, յետոյ այդպէս օդին մէջ նետեցին. և երբ որ վար ինկաւ՝ կտոր կտոր ջարդեցին մօրը աչուլներուն առջև։ Եօթը հոգի էին այս անանուն ոճրագործութեան տխուր հերոսները. եօթն ալ որոշեցին բռնաբարել Ալթունը, բայց զայն մերկացուցած ատենին վրայէն դտան 30 օտմանեան ոսկիի գումար մը, ասկէ զատ, թեւերուն վրայ գոհարներ, և ճակտին վրայ ալ ոսկիի շարքեր կային. զինուորները մոռցան իրենց անասնական ցանկութիւնը, ինկան այդ դրամներուն վրայ, և սկսան կռուիլ իրարու հետ, բաժին մը աւելի ստանալու համար։ Առիթէն օգտուելով՝ Ալթուն ցատկեց տեղէն, և սկսաւ փախչիլ բոլորովին մերկ։ Զինուորները՝ որոնք չէին ուզեր իրենց ձեռքըն ինկած զրամը լքել, հազիւ թէ նստած տեղերէն մէկ երկու հրացան պարպեցին փախստականին վրայ։ Ալթուն՝ առանց վիրաւորուելու՝ կրցաւ ազատուիլ, և ընկուզենի մը վրայ ապաստանեցաւ։ Այնտեղ մնաց օր մը և գիշեր մը, սոսկալի ցուրտ օդով մը՝ իբր ամբողջ հագուստ միայն ծաւին գօս ճիւղերը ունենալով։ Երբոր զինուորները մեկնեցան, հազար ու մէկ զգուշութեամբ վար իջաւ, մեռեալներու վրայէն հանուած հին հագուստներ առաւ վրան, և այդ վիճակին մէջ ամբողջ շաբաթներ թափառեցաւ միայն խոտ ու արմատ ուտելով, միայն ձիւնով յապեցնելով իր ծարաւը։ Գոտն օր այդպէս թափառելէ վերջ միայն կրցաւ հասնիլ Խնուս, ուր ամիս մը վերջ ամուսինը եկաւ գտաւ զինքը։

Այս վերջինն ալ՝ տակաւին Խնուս չհասած՝ իրեն ընկերակցող քահանային հետ ամբողջ երկու օր պահուեցաւ անմատչելի ժայռերու մէջ։ Յետոյ իջաւ անտառ, ուր տեսաւ իր բոլոր սիրելիներուն զիւղները, ամենքն ալ սոսկալի կերպով յօշոտուած։ Բազմաթիւ շաբաթներ շարունակ հալածուեցան ինք և իրեն ընկերակցող ուրիշ մէկ քանի հայեր. ամենքն ալ ցերեկները կը պահուէին և միայն գիշերները կը քալէին. իրենց ուտելիքն էր խոտ ու տերև։ Զինուորները՝ վերջ ի վերջոյ ջլաւեցան ու քաշուեցան գիւղերէն։ Բայց ամեն օր երևան կելլէին նորէն, և երբ փախստականի մը հանդիպէին՝ իսկոյն կը սպանէին։ Իսկ իրիկունները փողի ձայնով կը հաւաքուէին բանակատեղը։

Օգոստոս, 1905.

Բայց ջարդը կատարեալ չէր եղած. տակաւին հայեր կային այստեղ այնտեղ: Զինուորները սկսան հետախուզութիւն ընել. անոնք ամեն տեղ կը պրպտէին՝ աղաղակելով.— «Հայեր, հայեր, Աստուծոյ սիրոյն, Մարդարէի սիրոյն, Քրիստոսի սիրոյն, հպատակեցէ՛ք, կը խոստանանք վերահաստատել խաղաղութիւնն ու անդորրութիւնը»: Շատեր խարուեցան այս օձի լեզուէն և անձնատուր եղան. ասոնցմէ 60 երիտասարդներ ողջ ողջ թաղուեցան Հանդօք լեռան ստորոտը: Իսկ Տալվորիկի բնակիչները՝ կին, տղայ, ծերունի՝ որոնք գիւղին եկեղեցին խրոնուած էին, ամբողջովին սպանուեցան՝ մարդկօրէն աներևակայելի ամեն տեսակ տանջանքներու ենթարկուելէ վերջ: Ուրիշներ՝ և հարկւրաւորներ են ասոնք՝ այդ տանջանքներէն ճողոպրելու համար՝ վար նետուեցան Ֆէրֆէրի ապստափէն, և կամ անձնապաւն եղան ինքզինքնին յանձնելով Բրէտանիան գետին ալիքներուն՝ Սասանի կամուրջին մօտ:

Սակայն այս բոլոր անօրէնութիւնները բան մը չեն բաղդատմամբ անոնց՝ որոնք գործուեցան Կէլի-Կիւզանի մէջ: Սիմալի Տէր Յովհաննէս քահանան՝ թուրքին անուշ խոստումներէն խաբուած, ժայռէ ժայռ, սարէ սար, լեռնէ լեռ թափառած և փախտողականները համոզուած էր որ իրենց գիւղը վերադառնան: Այսպիսով՝ 150—200 հոգի, հոկտեմբերի 10-ին իշան Կէլի-Կիւզան, գիւղին հարուստ բէսին՝ Պետոյի տան ետև, հսկայ ընկուզենիի մը տակ, որ իր շուքը կը տարածէ Սիմալէն Տալվորիկ տանող ճամբուն վրայ: Վերադարձող հայերը այնտեղ դրտան Դ. զօրաբանակին հրամանատար միւշիւր (մարաշախտ) Զէքի փաշան, որ նախորդ ջարդերուն մասնակից զինուորներուն գլուխը անցած էր: Համիդիէներն ու քիւրդերը ցրուած էին ուրիշ տեղ: Կը հետևի ուրեմն թէ փաշային շուրջը միայն կանոնաւոր զինուորներ կը գտնուէին: Ինչ որ պիտի պատմուի հիմա, քաղուած է տասնհինգ տարեկան տղու մը՝ քերախէնցի Մանուկի բերնէն. այս աղան՝ որ սոսկալի կերպով վերաւորուած էր՝ յաջողած էր ճողոպրիլ ջարդէն, որովհետև զինուորները զինքը մեռած կարծելով թողած էին:

Վերադարձող հայերը, վախնալով որ թիւրքը կը դրաւէ, իրենց գէնքերը յանձնած էին այն սասունցիներուն՝ որոնք ոչ մէկ յորդորի ալանջ չէին կախած և խոհեմութիւն նկատած էին իրենց լեռնային թաղատոցներէն չհեռանալու: Այդ վերադարձողները՝ Կէլի-Կիւզան իշնէնուն պէն՝ իսկոյն շրջապատուեցան զինուորներու կողմէ՝ որոնք բազմութենէն զատեցին Տէր Յովհաննէսն ու երկու երեւելիներ, իսկ մնացեալները՝ սուրի և սուլինի հարուածներով մղեցին մեծ փոսի մը մէջ (մօտաւորա-

պէս 19 մետր երկարութեամբ, հինգ մետր խորութեամբ և 3 մետր լայնութեամբ)։ Այդ փոքր փորուած է գիւղին շատ մօտը, կորեկի դաշտի մը մէջ։ Խեղճ հայերը՝ անդէն ու անպաշտպան՝ այդ փոսին մէջ թափուեցան խառն ի խուռն, ոմանք սպանուեցան տակաւին փոսին շհասած, իսկ միւսները կորան փոսին յատակը, իրենց ստացած ահուելի վէրքերուն հետեանքով։ Այս անզգամութիւնը տեղի կ'ունենար իրիկուան դէմ։ Վերոյիշեալ Մանուկը այդ փոսին մէջ դիպուած գիւղեւորուն տակէն կը ցաւ ազատիլ ու փախաւ նախ Շատախ, և անկէ ալ Քերախէն՝ իր ծննդավայրը։ Աւելի ետքը՝ երևան հանուեցան նաև Տէր Յովհաննէսի և երկու երեւելիներուն գիւղեւորը։ Տէր հօր գանկին ետևի կողմի մորթը ամբողջովին բաժնած էին ոսկորէն՝ և վարագոյրի պէս կախ ձգած գէմբին վրայ։ Իսկ թեւերը՝ հաղիւ թէ մօի փշուրներով կտրած էին մարմնին։ Երկու երեւելիներուն ալ քիթն ու ականջները կտրուած էին։

Լեռներու մէջ մնացողները կը շարունակէին զաշտնի պահուիլ, բայց թիւրք զինուորները ամեն օր հետախուզութիւն կը կատարէին, ալ սովորական հաճոյք մը դարձած էր իրենց համար՝ հայ մը որսալով տանջելն ու սպանելը։ Խոսմօ Պետրոսեան ալ այս փախտակահաններուն մէջ կը գտնուէր։ Իր երկու եղբայրներուն, Տէր Պետրոս քահանային և ուրիշ երկու ընկերներուն հետ քարայր մը երևան հանեց, և այնտեղ ծածկուեցան բաւական ժամանակ։ Գիշեր մը, դաշտի մը մէջէն քիչ մը ցորեն գտան և սկսան հում-հում ուտել, բայց Տէր Պետրոս որ չէր կրնար այդպէս ուտել, խնդրեց որ կրակ վառեն ու ցորենը խորովեն։ Այս անզգուշութիւնը աղիտարեւ հետեանքներ ունեցաւ իրենց համար. 150-ի մօտ քիւրդեր և թիւրքեր՝ հեռուէն լոյս տեսնելով՝ իսկոյն այն կողմ փութացին, և արշալոյսին՝ քարայրը պաշարեցին։ Բայց պաշարուողները, երկրի խորուրդութենէն օգտուելով, յաջողեցան ազատիլ, միայն Տէր Պետրոս թշնամիներուն ձեռքը ինկաւ. իր գիւղը գտան վերջէն, սոսկալի կերպով յօշոտուած։

Քանի մը շարաթ վերջ, այդ փախտակահանները՝ վստահ ըլլալով թէ ջարդերը դադրած են, և թէ թիւրք կառավարութիւնը իր աւերիչ գործին հետեանքներէն ահաբեկած՝ կաշխատի գիւղերը մարդաբնակ ցոյց տալու, դաշտ իջան և այնտեղ հաւաքուած գտան մաս մը հայրենակիցներ։ Թիւրք պաշտօնեաներ՝ ոչ թէ միայն կը խոստանային վերաշինել իրենց տունները, այլ նոյն իսկ դրամական վարձատրութեան յոյսեր կու տային, խնդրելով որ ջարդերուն և հրդեհներուն հեղինակ ցոյց տան մի միայն քիւրդերը, և կանոնաւոր բանակի խօսք չընեն։

Բայց երբ այդ մարդիկը իրենց քարուքանդ եղած և անընակելի դարձած գիւղերուն սրտամորմոք վիճակը տեսան, սիրտ չունեցան թիւրքերուն առաջարկը ընդունելու: Անոնք խմբովին գնացին Մուշ, վալին տեսնելու, բայց այս վերջինը զիրենք չընդունեց: Ատոր վրայ՝ ցրուեցան այլ և այլ կողմեր: Մէկ մասը գնացին Էջմիածին. ասոնց մէջ կը գտնուէին Օվիկ Վարդան, Խամօ Պետրոսեան, և իր կիներ՝ Ալթուն, որոնց պատմութիւնները հաստատուած են պաշտօնական ըննութիւններով:

Այս կերպով ջարդուեցան առհաւան 6000 անձեր, և կործանեցան Սասնոյ շրջանակին պատկանող 22 գիւղեր՝ որոնք հաւաքաբար 1080 տուն ունէին: Կործանուած գիւղերն են՝ Տալվորիկ, Հարթք, Նղկաթ, Բուրք, Սպաղանք, Ահրուք, Քեղովան, Հեթէնք, Քէլ-Հովիտ, Շէնիկ, Սիմալ, Քոփ, Գեղաշէն, Ներիցանք, Շուշնամերկ, Կէլի-Կիւզան, Իշկինձոր, Ալիանց, Կերմավ, Տաբեկ, Աղբեկ, Հալողէկ: Իսկ ջարդէն ու քիւրդերէն վերջ՝ երեւան ելան ոչ նուազ ահարկու ուրիշ թշնամիներ՝ անթուրթիւնն ու թշուառութիւնը, և կերպով մը աւարտեցին սկսած գործը: Բնակարանէ զրկուած իրենց արջառններն ու հողագործական առարկաները վրայ տուած, խեղճ սասունցիք չկրցան ցորեն ցանել, և ամբողջ ձմեռուան ընթացքին ենթարկուեցան հազար ու մէկ անտանելի տուայտանքներու: Շատեր մեռան անթութիւնէ, և ատոնց մէջ կը գտնուէին մասնաւորաբար փոքր տղաք՝ 8—12 տարեկան, ինչպէս Գասպար Փալոյեանի երկու զաւակները՝ Հայրապետ և Մխիթար:

*
* *

Մինչև այստեղ՝ մենք գրեթէ բառ առ բառ թարգմանեցինք պ. Մորիս Լըվէյրի գործին այն մասը՝ որ ջարդերուն կը վերաբերէր: Իր աշխատութեան միւս մասին մէջ պ. Լըվէյր կ'աշխատի ցոյց տալ թէ այս վայրագ ու անզգամ կոտորածները միայն Սասնոյ յատուկ բաներ չէին: Եւ իր այս ըսածը ապացուցանող դէպքեր ցոյց տալու համար բնաւ հարկ չկայ 1896-ի արիւնալի անօրէնութիւնները յիշատակելու: Աւելի առաջ պատահած են կարգ մը իրողութիւններ՝ որոնք նուազ պերճախօս չեն, որոնք նուազ արիւնալի ու սրտամորմոք չեն: Եւ պ. Լըվէյրի գործը հարուստ է այս պարագան հաստատող բազմաթիւ ապացոյցներով:

Յիշատակենք նաև անոնցմէ մէկ քանին.

1895 մարտ 16-ին, Եւդոկիոյ մէջ՝ թիւրքերը յանկարծ կը կոխեն քաղքէն քիչ հեռու գտնուող Ճերմակ-Ջուր ջրաղացը, կը վերաւորեն հայ մը ու կը փախչին՝ առանց իրենց ճամբուն վրայ գտնուող թիւրք գործաւորի մը դպչելու: Դէպքը տեղի

կունենայ գիշերանց: Յաջորդ առտուն՝ զոհը, Գէորգ ձեւագե-
 եան կը բողոքէ կուսակալին, բայց այս վերջինը կը յանձնա-
 բարէ իրեն լռել, սպաննալով թէ հակասակ պարագային աւելի
 մեծ գծրազգութիւններ կը բերէ իր գլխուն: Անկէ քանի մը օր
 առաջ, տաննի մօտ թիւրք և չէրքէզ բաշխողուկներ բռնի
 մտած էին Բոլուի կողմերը գտնուող ուրիշ ջրաղացք մը՝ տանի-
 քին և պատերուն մէկ մասը փլցնելով: Յարձակողները լաւ մը
 ծեծած էին ջաղացքին մէջ գտնուող եօթը հայեր և կողոպտած
 էին ամեն բան, առանց բնաւ թիւրք կառավարութեան կողմէ
 անհանգիստ ըլլալու: Մարտ 24-ին, դարձեալ նոյն կողմերու
 մէկ գիւղին մէջ, չէրքէզ մը երեան կ'ելլէ և Համբարձում Տէյր-
 մէնձեանի փարախը մտնելով կը թալլէ ձեռքին տակ ինկած ա-
 մեն բան: Համբարձում՝ իր եղբայրներուն օգնութեամբ կը հա-
 լածէ գողը, և զայն կը ստիպէ աւարը վերադարձնելու: Ասոր
 վրայ՝ չէրքէզը ոտքի կը հանէ մօտակայ թիւրք գիւղի մը բնա-
 կիչները, որոնք սուրերով և հրացաններով զինուած՝ կը յար-
 ձակին հայերուն վրայ. ու կառավարութիւնը կրկին չի միջա-
 մտեր: Ապրիլ 13-ին, Եւդոկիա քաղաքին մէջ՝ Յարութիւն Ա-
 պուշեանի կինը՝ Թերէզ՝ թիւրք զրացիի մը ծուղակը կ'իյնայ և
 անոր տունը կը բանտարկուի շտեմարանին մէջ: Դրացին յե-
 տոյ զայն կը մատնէ Զըրակ Օղլու Սատըք անուն սրիկայի մը
 ձեռքը: Այս վերջինը՝ շտեմարանին մէջ կը բռնաբարէ խեղճ
 կինը, յետոյ անագին քանակութեամբ օդի կը խմցնէ բռնի, և
 երեսին քող մը անցընելով՝ կը տանի մօտակայ պարտէզ մը,
 ուր ուրիշ հինգ թիւրքեր յաջորդաբար կը բռնաբարեն զայն:
 Վեցն ալ կրկին և կրկին անգամ իրենց անասնական կրքին
 յագուրդ տալէ վերջ, Թերէզի մարմինը կը նետեն ձորի մը մէջ,
 ուրկէ ոստիկաններ կ'ազատեն զայն կիսամեռ: Այս կինը միշտ
 մաքուր բարբ ու վարբ ունեցած է: Ամուսինը կը բողոքէ, բայց
 կառավարութիւնը, զիտնալով հանդերձ թէ որոնք են յանցա-
 ւորները, կարեւորութիւն անգամ չիտար: Եւ արդէն, եթէ երբէք
 կարեւորութիւն ալ տալու ըլլայ և խնդիրը զատարանի յանդի,
 յանցաւորները ընդհանրապէս անպարտ կ'արձակուին և միայն
 բողոքողներն ու իրենց պաշտպանները կը պատժուին աներևա-
 կայելի առարկութիւններով:

Նոյն վիճակը կը տիրապետէր նաև Կիլիկիոյ մէջ: Գրքեր-
 խան գիւղին մէջ Մէհմէդ անունով ենթասպայ մը այն աստի-
 ճան վայրագութեամբ կը վարուի գիւղացւոց հետ՝ որչափ թեր-
 ևս աշխարհակալ մը՝ բնակիչներուն հետ: Կը ձերբակալէ բոլոր
 անոնք՝ որոնք քիչ շատ ինչքի տէր են, և այն ատեն միայն ա-
 զատ կ'արձակէ զանոնք, երբ կը յօժարին 60—100 զրուշ փըր-

կանք վճարել: Օր մը նոյն գիւղի բնակիչներէն Սարգիս Թոփալեանի կը հրամայէ, որ «կէնը իրեն բերէ»: Սարգիս կը ըողորէ զայմագամին, բայց այս վերջինը կարևորութիւն անգամ չիտար իր բողոքին:

Սոֆի ալ յաճախ կը դաշնակցի թիւրքերուն՝ կործանման և աւերումի այս գործին մէջ՝ որուն նմանը թերևս բնաւ չէ արձանագրած պատմութիւնը: Շատ տեղեր բնակիչները ոչ իսկ ուտելու չոր հաց մը ունին, և կամ տեսակ մը թրիքի նմանող խմորով կը սնանին: Բայց հակառակ ատոր՝ հարկահաւաքները միշտ իրենց դուռն են, և անպատճառ տուրք կը պահանջեն: Եթէ դրամ չգտնեն՝ կը վերցնեն կը տանին բոլոր ընտանի աշխատանքները և աճուրդի կը հանեն: Գաղափար մը տալու համար այդ կարգի աճուրդներու վրայ՝ յիշատակենք միայն թէ զոր օրինակ 1000 զրուշ արժող ջորի մը՝ հազիւ 80 զրուշ կը բռնէ. իսկ էշերը՝ միևնոյն պայմաններուն մէջ՝ աճուրդի հանուելով կը բռնեն եօթը կամ ութը զրուշ: Դեռավորին դրամը առնելու համար ամեն միջոց արդար է թիւրքերու աչքին:

Կեսարիոյ Ենիճէ գիւղին մէջ 30 տարի է ի վեր գոյութիւն ունէր ս. Թորոսի նուիրումած եկեղեցի մը: Գիւղացիք, եկեղեցւոյն խարխուլ վիճակը տեսնելով վար կ'առնէին ու կը սկսէին վերաշինել: Բայց նոյն շրջանակին գայմագամը Շէվզը բէյ կ'արգիլէ շինութիւնը, և 30 ոսկի կաշառք կը պահանջէ, շինուած մասն ալ քանդելու սպառնալիքով: Աւելորդ է անշուշտ հսել թէ գիւղացիք կը ստիպուին վճարել:

Յիշատակելի են տակաւին բռնի հաւատաւորութիւնները և անիրաւ ձերբակալութիւնները, որոնք բնական կարգ դարձած են: Իսկ բանտերու գրութիւնը պարզապէս աննկարագրելի է: Պ. Լըվէյր կը յիշատակէ հետեւեալ իրողութիւնները, որոնք վերոյիշեալներու պէս տեղի ունեցած են 1896-ի ահարկու և անօրինակ ջարդերէն առաջ:

Սերաստիոյ բանտին մէջ թիւրք բանտարկեալները ամենքն ալ դանակներով զինուած՝ կը չարչարեն ու կը խոշտանգեն իրենց հայ վիճակաւիցները, որոնք զմեի մը անգամ չունին անձերնին պաշտպանելու և կամ զիմազրելու համար: Բանտին տնօրէնն ու պահապանները անտարբեր հանդէս առնէին կ'ըլլան այս նորօրինակ ողիմպական խաղերուն: Ութը հայեր կը վերաւորուին այդ բանտին մէջ, և թիւրքերը ոչ իսկ սկըրթով մը կ'ուռնան: Աղանայի մէջ քաղաքական պատճառներով բանտարկուած հայեր՝ մեծ մասամբ պատանիներ՝ ամենասոսկալի չարագործներու հետ կը փակուին, և առարկայ կը դառնան յարատեւ բռնաբարութեանց: Նարմանի դէպքը՝ ուրիշ ա-

մեն բանէ աւելի կրնայ ապացուցանել թէ թիւրքերու բանտային դրութիւնը ինչ է իրականութեան մէջ: 60-ի մօտ հայեր՝ առանց ապացոյցի նետած էին կարնոյ կեղրոնական բանտը, երկու թիւրքեր ուսանած ըլլալու ամբաստանութեամբ: Խնդրին քննութիւնը տեւեց բազմաթիւ տարիներ, ամբաստանեալներէն 37-ը անողարտ արձակուեցան ի վերջոյ, զուր տեղը այդքան ժամանակ բանտ մնալէ վերջ, և 10-ը դատաւարտուեցան յայտնի չէ թէ ինչ պատճառաւ: Իսկ մնացեալ 13-ին խօսքն անգամ չեղաւ, որովհետեւ մեռած էին քննութեան ընթացքին:

Բայց այս ամենը բան մը չեն՝ բազդատմամբ այն տանջանքներուն, որոնց ենթարկուեցաւ Համբարձում Պօյաճեան (Մուրատ) Բիթլիսի բանտին մէջ: Մարգկային երեակայութիւնը անդոր է այդքան հրէշային, այդքան ընդվեցուցիչ վայրագութիւն երեակայելու: Ո՛չ միջնագարեան հաւատարմութեան չարչարանքները, ոչ Էդգար Պօի հիւանդ մօրին յղացումները ոչ իսկ Օկտաւ Միրբօի Le Jardin des Supplices-ին մէջ նկարագրուած խելքէ մաքէ դուրս տանջանքները կրնան հաւասարիլ անոնց՝ որոնց թուրք կառավարութիւնը առարկայ դարձուց Սասնոյ զիմադրութեան գլուխ կանգնող այդ ընդմիշտ յիշատակելի հերոսը:

Ահա բառ առ բառ ինչ որ պ. Լըվէյր կը գրէ այդ մասին:

Բիթլիս բերուելուն պէս, բանտարկեալը նետուեցաւ միին ու խոնաւ նկուղի մը մէջ և ամեն հազորդակցութենէ զրկուեցաւ: Բանտապաններն անոր վզին երկաթ անցուցին, և ոտքերն ու բազուկներն ալ կաշկանդեցին ծանր շղթաներով: Խեղճը հին ու ազոտոտ խշաիքի մը վրայ կը պառկէր, պատառատուն հագուստներով՝ և իբր ամբողջ սնունդ կ'ընդունէր միայն օրական չոր հացի շերտ մը՝ զոր շատ անգամ չէին տար՝ որպէս զի անօթութեամբ տկարանայ: Երբ այս դրութեամբ բուական ընկճուեցաւ, ընդհանուր կառավարչին քով տարին զայն և առաջարկեցին ստորագրել սա իմաստով յայտարարութիւն մը.

«Կը գղջամ՝ օտար տէրութեանց եւ մասնատրարար «Լնգլիոյ խօսքերուն հաւատ ընծայած ըլլալու համար. աւնոնք մեծ գումարներ, զէնք ու ռազմավթերք խոստացած էին ինձի. անոնց խոստումին վրայ է որ Թիւրքիա եկայ եւ «խոտվութիւններ յարուցի: Բայց հիմա համոզուած եմ որ «Լնգլիս՝ մարդասիրութեան եւ Արեւելի ըրիստոնէից պաշտօնաւորութեան պատրուակին տակ իր սեփական շահերը միայն կը հետապնդէր, իր ղրդումներուն անսալով խոտվութիւններ յարուցի եւ պատճառ դարձայ որ դարերէ ի վեր

«կայսերական կառավարութեան (Թիւրքիոյ) զթառաւ հո-
«վանիին տակ հանդարտ ապրող հայերու արինը հոսի»»

Այս թուղթին հետ իրեն ներկայացուեցաւ նաեւ Փրանսե-
րէն գրուած ուրիշ յայտարարութիւն մը՝ հաւանականաբար
ուղղակի Պոլսէն ղրկուած: Վալին հրամայեց Համբարձումի որ
երկուքն ալ ստորագրէ: Բայց Սամսոյ դիւցազնը մերժեց այս
աստիճան խայտառակ սուտ մը վաւերացնել իր իսկ ստորա-
գրութեամբ: Ամեն սպառնալիք ապարդիւն մնացին, և անկա-
րելի եղաւ խորտակել իր երկաթեայ կամքը: Այն ատեն՝ վա-
լին մերթուրէն (Ա. քարտուղար) իրեն կարդաց կայս.
իրադէ մը, որուն մէջ կը յանձնարարուէր «կախել յանցաւորը՝
եթէ շարունակէ յամառիւ ու չստորագրել թուղթերը, և կախելէ
առաջ ալ տանջել 24 ժամ»: Սակայն այդ սպառնալիքն ալ օ-
գուտ մը չունեցաւ: Համբարձում յանձնուեցաւ բանտապաննե-
րուն՝ որոնք շղթաները կրկնապատկեցին և վիզն ի վար կա-
խեցին երկաթեայ գունտ մը՝ աւելի քան տասը կիլօ ծանրու-
թեամբ: Յետոյ սկսան ծեծել բիրերով և խարազաններով, մին-
չև որ մարմինը ամբողջովին ծածկուեցաւ կապտորակ հետքե-
րով: Ծեծէն վերջ, կրկին հրաւիրուեցաւ թուղթերը ստորագրե-
լու, բայց դարձեալ յամառեցաւ: Բանտապանները տարբեր
տանջանք մը հնարեցին. մազխիւններ (ջրմըրդ, pincettes) առին,
դիմացը անցան և սկսան հատիկ հատիկ փրցնել մօրուքին թե-
ւերը: Բայց միշտ զուր տեղը: Թուղթերը դարձեալ անստորա-
գիր մնացին: Բանտապանները՝ յուսահատ՝ խնդիրը տեղեկա-
գրեցին վալին, որ կըցաւ նոր տանջանք մը հնարել. բան-
տարկեալին աշուրներուն առջև, տախտակամածին վրայ ցանե-
ցին ապակիի, երկաթի սայրասուր կտորներ, գամեր ու փուշեր:
Յայտնի է թէ ինչ պիտի ըլլար այդ պատրաստութեան հետե-
ւանքը. բայց Համբարձում անդրդուելի մնաց: Ատոր վրայ
զինքը մերկացուցին, և ամբողջ ժամ մը իր մերկ մարմինը ան-
ընդհատ զլտորեցին այդ սոսկալի՝ կապերտին վրայ: Համբար-
ձում ուշաթափ մնաց. կազուրիչ գեղերով զինքը վերկենդա-
նացուցին և անգամ մըն ալ առաջարկեցին որ ստորագրէ թուղ-
թերը: Մերժումը սակայն միշտ մերժում մնաց: Երկու օր վերջ՝
Իիթլիսի դատարանին վճռով կախուեցաւ:

*
*
*

Այստեղ ալ կը թողունք պ. Լըվէյրի աշխատութիւնը և կը
դառնանք անձնական յիշողութիւններու:

Այդ սարսափի օրերուն մէջ, որոնք 95-ի մեծ ջարդերուն
կարապետները եղան, տակաւին Պոլիս կը գտնուէինք: Կը յի-
շեմ այն սրտայուզութիւնը զոր առաջ բերաւ այդ հրէշային ոճ-

բազործութեանց արձագանգը: Մասնակի ջարդեր՝ մինչև այն ատեն անտուր բաներ չէին դաւառի հայութեան համար. պարբերական ցաւ մըն էր ատիկա՝ որուն բարձման համար շատ մարգասէրներ, շատ դիւանագէտներ ու պատրիարքներ ամեն կարելի միջոց դործադրած էին, բայց դուր տեղը: Յաւը միշտ ցաւ կը մնար, հակառակ այնքան աշխատութեանց, բանակցութեանց ու բողոքներու: Որչափ ատեն որ հայը անգէն պիտի մնար, որչափ ատեն որ զինքը շրջապատող վայրագ հրոմանքը, մասնաւորաբար քիւրդերը, առանց օրէնքի պիտի ապրէին, ոտքերնուն մինչև պուլսին զինուած, որչափ ատեն որ ընդհարման մը կամ սպանութեան մը պարագային գոհուող հայը՝ մեղապարտ և սպանող քիւրդը, կամ չէրքէզը անպարտ պիտի հռչակուէին թիւրք կառավարութեան արդարադատ դատաւորներուն կողմէ, ի հարկէ բնական կարգ պիտի դառնային այդ մասնակի կոտորածները: Մենք ամեն օր վարժուած էինք լսելու թէ այս ինչ դաւառին հայ ջոշերէն մէկը կողոպտուեր կամ սպանուեր է քիւրդերու կողմէ, թէ այն ինչ զիւղին գեղուհիներէն մէկը յափշտակուեր ու բռնաբարուեր է սարի մը կատարը, թէ քիւրդեր կրակի տուեր են պատիկ գիւղ մը, թէ նախիր գողցեր են և կամ պատանիներ առեւանդեր են, բայց տակաւին չէինք լսած իրողութիւն մը այնքան սոսկալի, այնքան արհաւիրաց՝ որքան որ էր Մասնոյ կոտորածը: Ասոր մէջ՝ ոչինչ կար մասնակի. բնականաւոր՝ սիստեմաթիք և հիմնական քանդման ծրագիր մը դործադրուած էր կատարեալ պաղարիւնութեամբ, ԺԹ. դարու քաղաքակրթութեան յաւակնութեանց մէջ, Եւրոպայի աչքերուն առջև: Կործանած ու հրկիղած էին բաղմաթիւ գիւղեր, ջարդած էին ամբողջ ժողովուրդ մը, Հայաստանի և Հայութեան սիրտը խորտակել ուղած էին միակ հարուածով մը: Եւ տեղի անսովորը սն էր, որ անկարգ և անօրէն քիւրդերը չէին այս ոճրագործութեանց պլխաւոր հեղինակները, այլ կարգի ու կանոնի ենթակայ և օրէնքի պահանջմանց հպատակ կանոնաւոր բանակ մըն էր: Ջարգը կատարուած էր ոչ թէ քիւրդին նահապետական շէշխանէով, այլ նորահնար ու կատարեւագործուած պետական հրացաններով ու թնդանօթներով:

Մենք ըսինք այն ատեն թէ թիւրքիոյ վերջը եկաւ, թէ քաղաքակիրթ Եւրոպա նոր խաչակրութեամբ մը երկրի երեսէն կը սրբէ, կը ջնջէ այս դժոխային ազգը՝ որ կը սպառնար մարդկութեն անկարելի, գերագոյն նախճիրներուն հերոսը հանդիսանալ, անանկ ատեն մը, ուր աշխարհ ուրիշ ամեն ատենէ աւելի ուռած ըլլալ կը թուէր մարդկայնական յաւակնութիւններով: Եւ

սակայն, Եւրոպա ոչինչ ըրաւ: Թիւրք կառավարութիւնը փութաց ստորագրութիւններ և հանգանակութիւններ կորզել խեղճ ու անբաղդ սասունցիներէն, զորս մատոյց Եւրոպայի. և եւրոպական դիւանագիտութիւնը եթէ չհաւատաց ալ այդ բռնի կորզուած ստորագրութիւններուն, գոնէ չուզեց թերահաւատութիւն յայտնել, և հայը՝ հակառակ այդ սատիճան սոսկալի ոճրի մը զոհը ըլլալուն, պաշտօնական շրջանակներու մէջ արձանագրուեցաւ իբր յանցաւոր, իբր պատասխանատու Սասնոյ սարերը արիւնոտող անցքերուն:

Պատմական տեսակէտով կարեւորութիւն ունեցող դէպքերը արձանագրեցինք մենք արդէն, հետեւելով պ. Լըվէյրի աշխատութեան: Պէտք է արձանագրենք տակաւին ոչ նուազ պատմական նշանակութիւն ունեցող ուրիշ իրողութիւններ՝ որոնք այդ դէպքերուն ամբողջացուցիչ մասերը կը կազմեն, և որոնք՝ օրը օրին նօթագրուած են մեր կողմէ, մեր Պոլիս գտնուած ատենները:

Մենք տեսանք թէ թիւրք կառավարութիւնը ինչ սոսկալի տանջանքներու ենթարկած էր Համբարձում Պոյաճեանը՝ ստորագրել տալու համար երկու թուղթեր՝ որոնք ջարդերուն պատասխանատուութիւնը հայոց վրայ կը բեռցնէին: Համբարձում Պոյաճեան նախընտրած էր տանջանքներու մէջ մեռնիլ՝ քան այդ խղճի ու սրտի դէմ եղող ստորնութեան համակերպիլ: Ուրիշներ սակայն չէին կրցած նոյնքան հոգիի արիւթիւն ու նենալ, և որոշ ժամանակ մը կարգ մը տանջանքներու տոկալէ վերջ՝ ուրիշ աւելի սոսկալի տանջանքներու սպառնալիքին տակ ստորագրած էին իրենց ներկայացուած թուղթերը, որոնց պարունակութեան բացարձակապէս անտեղեակ էին:

1894 թ. սեպտ. 19-ին, Պոլսոյ թիւրք թերթերը՝ առաջին անգամ ըլլալով արձագանգ եղան այդ կարգի հանրագիրներու, առանց անոնց պարունակութիւնը յայտնելու: Հրատարակուածը սղաշտօնական ղեկոյց մըն էր՝ որ կ'ըսէր. — «Թալուրիի զինեալ աւազակներուն և խռովարարներուն հետ դորձակից չգլտնուելով հնազանդութեան և հաւատարմութեան մէջ մնացող ուրիշ տեղերու հայ ժողովրդի կողմէ Բիթլիսի (Բաղէշ) կուսակալին գրեթէ զրկուած են, որոնցմով յոտս կայս. Գահուն շնորհակալութիւն կը յայտնեն՝ աւազակներուն պատժուած ըլլալուն մասին: Այս պրութիւններուն ներքե գտնուած ստորագրութիւնները կուսակալին կողմէ հաղորդուած ըլլալով, ստորե կը հրատարակուին, ինչպէս նաև պիտի հրատարակուին սոյն գրութիւններն ալ երբ հասնին ¹⁾»: — Այս տողերուն կը հետեւին

¹⁾ Այդ գրութիւնները Պոլիս հասան անշուշտ, քանի որ ներկայացուեցան Եւրոպական տէրութեանց, բայց չհրատարակուեցան Թիւրքիոյ մէջ:

200 է աւելի ստորագրութիւններ՝ որոնց մէջ երկու քահանայ՝ Բոլոր ստորագրութիւնները հաւաքուած էին Բաղէշի կուսակալութեան շրջանակներէն, ու մասնաւորաբար (կէսէն աւելին) Սասուն գաւառակէն:

Այսքանը սակայն չէր բաւեր անհանգիստ և անստոյգ ժողովուրդ մը ապահովելու համար: Եթէ եւրոպական դիւանագիտութիւնը ձեռնպահ կը մնար և ոչ մէկ գործնական միջոց ձեռք կ'առնէր թիւրք կառավարութեան դէմ, գոնէ եւրոպական մամլոյն կարևոր մէկ մասը անընդհատ կը բողոքէր գործուած ուժիրներուն դէմ, զանոնք կը պարզէր իրենց բոլոր սոսկալի մանրամասնութիւններով: Եւ այդ թերթերն ընդհանրապէս ազատօրէն Պոլիս կը մտնէին Պոլսոյ եւրոպական նամակատանց շնորհիւ ու ձեռքէ ձեռք կը պտտէին: Նոր սուտ մը պէտք էր աւելի համոզիչ հիւստեածրով սուտ՝ մը՝ որ կարենար մտքերը հանգստացնել: Եւ ահա՝ նոյեմբեր 11-ին, նոր պաշտօնական զեկոյց մը կը հրատարակէին թիւրք թերթերը, զեկոյց մը զոր մէջ կը բերենք այստեղ նոյնութեամբ.

«Վերջերս եւրոպայի լրագիրներէն մէկ քանինները հրատարակեցին ճշմարտութեան հակառակ լուր մը Սասունի մէջ Օսմանեան զօրքերուն կողմէ քանի մը հայ գիւղերու քանդուած և այդ միջոցին ալ մարդու սպանութիւն կատարուած ըլլալուն մասին: Անոնցմէ ոմանք ալ այս լուրը սեծցնելով ըսած են թէ ասոր մինչև հիմա եւրոպայի մէջ իմացուած չըլլալը առաջ եկած է Սասունէն սեկնիլ ուղղող ճամբորդներու դէմ դրուած արգելքէն:

«Սասուն բնակող կայսերական հպատակները առաջուան պէս կատարեալ խաղաղութեան և հանդարտութեան մէջ ըլլալով, իրենց գործերով զբաղած են, և ակնհերև է թէ ճամբորդները կատարեալ ապահովութեամբ իրենց ուղած տեղերը կ'երթեկեն: Միայն թէ, որովհետև կարգ մը հայ աւագակներ խաբուելով խռովարարներուն թելադրութենէն՝ անցեալները թամարի և անոր մերձակայ տեղերուն մէջ համարձակած էին մարդ սպանել, աւար առնել, կողոպտել, թալլել, ճամբայ խափանել, և այդ կարգի ապահովութիւնն ու հանդարտութիւնը վրդովող աւաղակային գործեր ընել, կառավարութիւնը՝ այս խռովութիւնը զսպելու համար բնականաբար ձեռք առաւ հարկ եղած միջոցները, Դ. զօրաբանակէն պէտք եղած թուով զինուոր զրկուեցաւ, և այսպէս խռովութեան առաջն առնուեցաւ: Հանդարտութիւնը վերահաստատուած ըլլալով, զինուորներն ալ ետ զրկուեր են իրենց տեղերը:

«Դ. զօրաբանակին Միւշիլիին (Ձէքի փաշա) և Բիթլիսի

կուսակալին կողմէ ծանուցուած է թէ քիւրդերը այս առթիւ միջամտութիւն մը գործած չեն. և թէ, ինչպէս վերը ըսուեցաւ, մէկ քանի հայ աւաղակներ անվայել ընթացքի մէջ զըտնուած են:

«Որպէս զի քննութիւն մը կատարուի վերոյիշեալ աւաղակներու այս ասպատակութեանց վրայ, կազմուած է մասնախումբ մը որուն կ'անդամակցին կայս. թիկնապահ Ֆէրիկ Արդուլահ փաշա, Պուսոյ «էմնիյէթ Սանզըզըր (զրաւատուն) տնօրէն Էօմէր բէյ, ներքին գործոց նախարարութեան թղթակցութեան գիւանին առաջին քարտուղար Մէճիտ էֆէնդի, և կայս. անձնական սպայախումբէն Միրլիվա Հաֆըզ Թէվֆիկ փաշա: Այս մասնախումբը, այս շարթուման մէջ ճամբայ ելլելիք շոգեհաւով պիտի մեկնի:

«Կառավարութիւնը իր արդարութեան և գթութեան հովանիին տակ հաւասարաբար պաշտպանած հպատակներուն նկատմամբ ընաւ երբէք պատշաճ չի կրնար դռնել վերոյիշեալ լրագիրներուն հրատարակածին նման դէպքեր, և ճշմարտութիւնը այսպէս յայտնելով, կը հերքէ այդ հրատարակութիւնները»:

Այս պաշտօնական զեկոյցը, և կամ աւելի ճիշտ՝ այս պաշտօնական սուտը, շատ լաւ երևան կը հանէ թիւրք կառավարութեան հնարքը եւրոպական գիւանագիրութիւնը խաբելու համար: Սաանոյ ջարդէն անմիջապէս վերջ, թիւրք կառավարութիւնը զլիսաւորաբար աշխատած էր հաւատացնելու թէ կոտորածներուն և քանդումներուն հեղինակները միայն քիւրդերն էին և թէ կանոնաւոր զինուորներ չէին մասնակցած այդ նախճիրներուն: Այս մտքով ալ ստորագրութիւններ առնուած էին հայ ժողովրդին ձեռքէն: Բայց այս աստիճան վրանբաց խաղ մը չէր կրնար երկար ատեն դիմանալ: Հայկական նահանգներու մէջ գտնուած հիւպատոսները անձամբ Սասուն պնացած և տեղին վրայ ամեն շան տեսնելով համոզուած էին, թէ թիւրք կառավարութեան կանոնաւոր զինուորները մասնակցած են ջարդերուն: Թիւրքերը կրնային շատ բան ծածկել, բայց երբէք չէին կրնար անհետացնել թնդանօթին հետքերը: Եւ անշուշտ՝ քրդերը չէին կրնար թնդանօթ գործածած ըլլալ: Պէտք էր ուրեմն նոր գոյն մը տալ ինդիին: Այս անգամ՝ թիւրք կառավարութիւնը ինդըն բաժնած էր քիւրդերը և մէջտեղ թողած էր միայն կանոնաւոր զօրքերը, և որպէս զի անոնց աւերն ու ջարդը արդարացնէ, այնպէս կ'ուզէր հաւատացնել թէ Սաանոյ մէջ խռովարարներ ապառտանած էին, թէ գէն ի ձեռին հանրային ապահովութիւնը կը խանդարէին, թէ

կը թալլէին, կը կողոպտէին կամ կը սպանէին, և թէ թիւրք զինուորները միայն այդ խռովարարները սպանած, միայն անոնց ապաստանած վայրերը ուժեղացած էին:

Համիմաստ մեկնութիւններ տուաւ նաև Պոլսոյ թիւրք մամուլը: Այստեղ կ'արտայայտէր պաշտօնաթերթ Սապտի-ի («Առաւօտ») մեկնութիւնը ¹⁾, իբր առանձին նշանակութիւն ունեցող վաւերագիր մը.

«Կայսերական կառավարութիւնը այսչափ դարերէ ի վեր իր ընդհանուր հպատակներուն նկատմամբ մասնաւոր արդարասէր ընթացք մը ունեցած է, ինչ որ ծանօթ է, և բոլորն ալ իր հովանիին տակ կը բարեբարութիւն ու անդորր կ'ապրին, որով ամեն ատեն հոգ կը տարուի որ անոնցմէ ոչ մին վնասուի:

«Կայս. կառավարութիւնը, որ իր հաւատարիմ հպատակներուն անդորրութիւնը և երջանկութիւնն ապահովելու մասին այս աստիճան հոգածու ըլլալով կը փառաւորուի, յայտնի է թէ պատշաճ չափի գտնէ որ օսմանեան զինուորները հայաբնակ մէկ քանի գիւղեր սուրշտկեն ու այդ միջոցին մարդեր ալ սպաննուին:

«Յիրաւի՝ ցաւալի կը գտնենք սա պարագան թէ մէկ քանի խռովարար հայեր կը խաբէն հերոսական լրագիրները, որոնք տեղի հեռաւորութեան պատճառաւ չեն կրնար պէտք եղած կերպով ստուգել իրերու ճշմարիտ վիճակը. այդ խռովարարները ճշմարտութեան հակառակ եզոյ լուրեր հաղորդելով այդ լրագիրներուն, ճշմարտութեան յատկացուցած էջերը ստուրթիւններ հրատարակելու միջոց կը դարձնեն:

«Կայս. կառավարութիւնը, իր պարտականութեան բերմամբ, ուշադրութիւն կ'ընէ, որպէսզի երկրին հեռաւոր թէ մօտաւոր ամեն կողմերուն մէջ խաղաղութիւնն ու անդորրութիւնը անվթար մնան: Օրինակի համար երբ Թալոբիի և ուրիշ կողմերու մէջ՝ խռովարարներէ թելադրուած անձեր համարձակին խաղաղութիւնը վրդովել, այդ պարագային մէջ կայսերական կառավարութեան նուիրական պարտականութիւնն է՝ միւս հանդարտ և հաւատարիմ հպատակները պաշտպանելու, և խաղաղութիւնն ու անդորրութիւնը պահպանելու համար՝ ըստ օրինի պատժել ու կարգի բերել այդպիսիները: Շփոթութիւնները սրբիլելու համար կայսերական կառավարութեան կողմէ մասնաւոր միջոցներու ձեռք առնուիլը հպատակասիրութեան ամենէն մեծ մէկ փաստն է, բան մը որ կ'ապացուցանէ խռովա-

1) Հակառակ անոր որ հայ մըն է իր արտօնատէրը, Սապտի, մինչև այսօր կը մնայ Թիւրքիոյ պաշտօնաթերթը: Սապտի-ի արտօնատէրն է Միհրան էֆ. Նազալեան, որ մեքենայ դարձնող բեռնակիր մը եղած է նախապէս:

րարներու այն ձեռնարկները՝ զորս կ'ընեն հանդարտ և հաւատարիմ հպատակները պատրանքներով խաբելու համար: Արդարեւ եթէ խաբուող մէկ քանի կարճամիտներ անպատիժ մնան, խռովարարները պիտի աւելցնեն իրենց խաբէութիւնները, և, ինչպէս նշանակուած էր անցեալներս մեր հրատարակած պաշտօնական յայտարարութեան մէջ ¹⁾, անպատիժ մնացած կարճամիտներ պիտի առաջնորդուին աւելի ցաւալի և անվայել ընթացքներու մէջ գտնուելու:

«Պաշտարարները արդէն ի վաղուց անտի իրենց գործը ըրած են եւրոպական լրագիրներու մէջ տարբեր եղանակով հրատարակել տալ այն միջոցները, որոնք ձեռք կ'առնուին հանրային անգործութիւնը անվթար պահելու համար: Պաշտարարութեան և անգործութեան այդ թշնամիներուն հպատակը ծանօթ ըլլալով, յայտնի է թէ անոնց հրատարակութեանց Եւրոպայի մէջ կարեւորութիւն չպիտի տրուի: Կայսերական կառավարութիւնը մէկ կողմէ հերքելով այդ հրատարակութիւնները, որոնք միմիայն զրպարտութիւններ են, միւս կողմէ որոշած է հոն յանձնաժողով մը զրկել, որպէսզի մանրազնիւն քննութիւններ կատարէ՝ խռովարարներու կողմէ խաբուելով խաղաղութիւնը վրդովելու ոճիրը գործող անձերու չարագործական տրարքներուն նկատմամբ:

«Յանձնաժողովին կողմէ կատարուելիք քննութեամբ հարկաւ անգամ մը ևս երեւան պիտի ելլեն այն քամահոբելի միջոցները, զորս խռովարարները կը գործածեն իրենց գործովը զբաղող հանդարտ և հաւատարիմ հպատակները խաբելու համար: Մենք կը բաւականանանք հերքելով այն թշնամական հրատարակութիւնները զորս չարամիտները կը վերադրեն օսմանեան գինուորներուն, հրատարակութիւններ՝ որոնք բոլորովին սուտ են, և որոնցմով չարամիտները իրենց յոռի նպատակ մը ընտրած են իբրեւ հարստահարութիւն ցոյց տալ այն արդար միջոցները զորս կայսերական կառավարութիւնը ձեռք առած է միմիայն պարկեշտ ու պատուաւոր անձանց կեանքը, ինչքն ու պատիւը պահպանելու համար:

«Միւս կողմէ, կը յայտարարենք ու կ'ապահովցնենք թէ կայսերական երկիրներու ժողովրդէն անոնք՝ որոնք շնորհիւ վեհ, Սուլթանին, հանդարտ կը գտնուին ու կը յարգեն տիրող օրէնքները, ամեն ատեն գլխութեան և տրդարութեան կարժանանան ²⁾»:

1) Այն՝ զոր թարգմանեցինք աւելի վերը:

2) «Սապահ», 12 նոյեմբեր, 1904:

Պատմութիւնը ահա այսպէս կը գրուի անուշիկ թիւրքիայի հրաշագեղ երկինքին տակ: Այսպէս գրուեցան նաև 1896-ի ընդհանուր ջարդերուն պատմութիւնները: Այսպէս կը գրուի տակաւին Սասնոյ նոր կոտորածներուն պատմութիւնը:

Թիւրք կառավարութիւնը նմանօրինակ յօդուածներ հրատարակել կուտար նաև եւրոպական մամուլոյն կաշառեալ մէկ մասին մէջ: Ասկէ զատ՝ իր հաշուոյն հրատարակուող կարգ մը թերթերու մէջ շարունակ կ'երեային հայերու ստորագրութիւնը կրող հատուածներ՝ որոնցմով ջարդերու պատմութիւնը կը հերքուէր ի հիմանց: Այս կարգի յօդուածներու մէջ ամենանշանաւորը կրնայ նկատուիլ «Մշեցի Յովհաննէս և Պետրոս» ստորագրութիւններով նամակ մը՝ զոր Բոսնայի մէջ երեցող թիւրք թերթ մը, Ղլաթանի («հայրենիք») հրատարակած էր, և որուն մէջ Սասնոյ բոլոր ջարդերուն պատասխանատու ցոյց կը տրուէին հայ խռովարարներ և մասնաւորաբար՝ Անգլիայի կոռավարութիւնը: Ահաւասիկ այդ նամակէն մաս մը՝ ուրկէ կրնայ հասկցուիլ թէ ստութիւնը մինչև ինչ համեմատութեանց կը հասցուէր թիւրք կառավարութեան ճշմարտասէր արբանեակներուն կողմէ:—«Այս անգամ, կ'ըսէր վերոյիշեալ մշեցիներէն մէկը, երկիրս եղող Մուշն՝ հօրմէս հայասառ և հայաբարբառ նամակ մը առի 1894 դեկտ. 22 թուականով: Այս նամակին մէջ ըսուած է որ ինչպէս օսմանեան պետութեան ամեն միւս գաւառներուն մէջ, այնպէս ալ Բիթլիսի կուսակալութեան մէջ, խռամ և ոչ-խռամ բնակիչները, առաջուան պէս, առանց կըրօնքի և ազգի խտրութեան, վեհ. Սուլթանին հանգստաւէտ թեկն տակ խաղաղութեամբ կ'ապրին, և Եւրոպայի մէկ քանի լրագիրներուն մէջ տեսնուած այն լուրը՝ որպէս թէ օսմանեան զինուորներու կողմէ հայերու վրայ անարգար գործեր գործուած են, բացարձակապէս անհիմն է: Ասով կ'ապացուցուի անկողմնակալութեամբ և շատ ճարտասանօրէն՝ թէ օսմ. զինուորները այս պարագային մէջ ալ ապացուցին այն բարոյական յատկութիւնները, որոնցմով օժտուած են, և այլն:»

* *

Մինչ այս մինչ այն՝ թիւրք կառավարութեան կողմէ կարգուած Յանձնաժողովը լռիկ Սասուն կը ժամանէր ծանուցուած բնութիւնը կատարելու: Ողբալի էր Սասնոյ վիճակը: Գիւղեր կործանած, համայնքներ փճացած, ընտանիքներ ջնջուած էին: Երկրին ամեն մասերը մէյ-մէկ ահուելի ոճրի հանդիսավայր դարձած էին, և տակաւին մխացող տուներու շուրջը տարածուած դիակները ամբողջովին չէին թաղուած: Այդ չէ՛ր արդէն թիւրք կառավարութեան ուղածը: Յանձնաժողովը բաւական

ժամանակ շրջեցաւ այդ կողմերը, նոր պատուէրներ տուաւ, և Պուլիս դառնալով ծանոյց վեհ. Սուլթանին թէ ամեն բան իր փափաքածին պէս կատարուած էր, թէ Սամսոյ գոյութիւնը ի հիմանց խախտած էր, թէ բնիկ ժողովուրդը ան բնաւ չէր կըրնար ի վիճակի ըլլալ ընդդիմութիւն փորձելու: Ինչ որ կար տղամարդ՝ կամ ջարդուած էր և կամ փախած ու ցրուած ուրիշ տեղեր: Բրդերն ու թիւրք զինուորները սքանչելապէս կատարած էին իրենց սահմանուած գործը:

Բայց զոնէ եւրոպական դիւանագիտութիւնը գոհ չէր այդ ամենէն: Յայտնի կը տեսնուէր թէ կանոնաւոր բանակ մը՝ ոչ նուազ կանոնաւոր ջարդ մը կատարած էր: Պէտք էր զոնէ այդ ոճրագործութեան գլխաւոր հեղինակը՝ Դ. զօրաբանակին հրամանատար միւշիւր Ձէքի փաշան պատժել: Սուլթանը կ'ընդդիմանար, և կ'ընդդիմանար անոր համար, որ ապագայ կոտորածներու գլխաւոր կազմակերպիչն ու գործադիրը պիտի ընէր Ձէքի փաշան: Վերջապէս, խոստացաւ բան մը ընել, վերջապէս խոստացաւ պատժել, և այդ մտքով՝ զադանի հրահանգներով Պուլէն ճամբայ հանուեցաւ կայս. թիկնապահ Վէհպի փաշա: Դադաքակիրթ աշխարհը շունչ մը առաւ լսելով՝ թէ Ձէքի փաշա պիտի պատժուի՝ և Ձէքի փաշա պատժուեցաւ անանկ եղանակով մը, որ ճշմարտապէս արժանի է ընդմիշտ յիշատակուելու:

Վէհպի փաշա հասաւ Երզնկա՝ Դ. զօրաբանակին բանակաւորը, 1894 թ. դեկտեմբերի կիսուն: Հետեակ և հեծեալ զօրքերու վաշտեր իրեն ընդառաջ գնացին և թափոր կազմելով զինքը առաջնորդեցին Երզնկա: Ճամբան՝ իրենց կ'ընկերանար սոսկատեսիլ թիւրք խուժանը՝ որ անընդհատ «փաղիշաճմ չոր կաշա» կը պոռար: Այդպիսով՝ թափորը ուղղուեցաւ Ձէքի փաշայի բնակարանին առջև՝ ուր Միւֆթին հանդիսաւոր բարեմաղթութիւններ կատարեց վեհ. Սուլթանին արեւատութեան համար: Այնտեղ կը գտնուէին նաև Ձէքի փաշան, ինչպէս նաև Դ. զօրաբանակին բոլոր սպաները՝ պաշտօնական համազգեստով: Վէհպի փաշա անցաւ գնաց զօրանոց, և զինուորները խրախուսեց՝ յայտնելով թէ վեհ. Սուլթանին բարձր գոհունակութեան արժանացած են իրենց հաւատարիմ ծառայութեանց համար: Յետոյ բացաւ իրեն հետ բերած ծրարը, և անոնցմէ մասնաւոր դրօշակներ հանելով՝ հանդիսական արարողութեամբ յանձնեց զօրաբանակին:

Պատիժ, պիտի հարցնէք, ուր մնաց պատիժը: Վէհպի փաշա ամենէն վերջին վերապահած էր Ձէքի փաշայի պատիժը: Դրօշակներու յանձնումէն վերջ՝ անիկա միևնոյն հանդիսաւոր թափորով կրկին Ձէքի փաշայի ապարանքը վերադարձաւ, և

ընդհանուր ծախհարութեանց մէջ անոր կուրծքէն կախեց «Իմթիազի» պատուանշանը, և յայտնեց թէ վեհ. Սուլթանը շատ գոհ ֆնացած է իր բարւոք ծառայութիւններէն, և թէ իր կայս. բարենները կը հաղորդէ:

Անն այսպէս պատժուեցաւ Դ. զօրաբանակին հրամանատար Զէքի փաշան՝ Սասնոյ ջարդերուն արիւնսարբու կազմակերպիչը:

Ու տակաւին պնդողներ կան թէ Թիւրքիոյ մէջ արդարութիւն չկայ...

Շաքէ

30 Մայիսի, 1905 թ.

Օ Ր Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը

Վ Է Գ

ՐԱՆԷ ԲԱՂԷՆԻ

Վ

Ուղեկիցները

Չմեռը թոյլ չտուեց որ ժան կէտ առ կէտ հետևի, իր նոր արհեստի մէջ վարժութեան համար պ. Օրէրլէի նախապէս կազմած ծրագրին: Վոժերի կատարների վրայ նստած ոչ այնքան թանձր ձիւնի խաւը, ճանապարհները դարձնում էր դժուարանցանելի: Ժան վերակացու Գիյեօմի հետ երկու կամ երեք այցելութիւն միայն կարողացաւ կատարել Ալշէյմի մերձակայքում, և Վոժերի վերջին հովտաւորումների վրայ գտնուող անտառները, գործարանի հաշուին կտրուելիք ծառերը տեսնելու համար: Հեռաւոյ տեղեր կատարուելիք այցելութիւնները յետաձգուեցին մինչև օդի մեղմանալը: Բայց ժան սովորեց անսխալ հաշուել, թէ ռըքան խորանարդ է բռնում մի կողմի կամ մի կողմաւորի, և ռըքան արժէ՝ նայելով անտառում նրա գրաւած տեղին, ճիւղերի տակ կոճղի բռնած բարձրութեան, ծառի առողջութիւնը յայտնող Օգոստոս, 1905.

կեղևի տեսքին. նա սովորեց և ուրիշ բաներ, որոնց կարգում գուշակելու աւելի կամ պակաս շնորհքը, որը ոչ մի տեղ չի սովորում և որը յատուկ է վարպետներին: Հայրը նրան սովորեցրեց արդինարերութեան եղանակները, մեքենաները վարելու կերպը, աճուրդի թղթերի ընթերցումը և Օրերլէսերի կողմից յիսուն տարուանից ի վեր վաճառումի և փոխադրութեան պայմանագրերի մէջ պահանուած աւանդութիւնները: Բացի այդ՝ հայրը նրան յարարերութեան մէջ դրեց Ստրազբուրգի անտառների վարչութեան երկու պաշտօնեաների հետ: Այս վերջինները շատ փութկոտութիւն ցոյց տուին և յօժարութիւն յայտնեցին բերանացի բացատրել ժանի անտառային նոր օրէնսդրութիւնը, որից շատ քիչ տեղեկութիւն ունէր: «Եկէք, ասաց պաշտօնեաներից երիտասարդագոյնը, եկէք ինձ մօտ, իմ գրասենեակը. կը խօսակցենք և ես ձեզ շատ աւելի օգտակար բաների մասին ծանօթութիւններ կը հաղորդեմ, քան դուք ինքներդ կարող էք գտնել գրքերում: Որովհետև այլ բան է օրէնքը, այլ՝ վարչութիւնը»:

Ժան ուրախութեամբ ընդունեց առաջարկը: Բայց բաղմաթիւ շաբաթներ անցան և նա չկարողացաւ քաղար գնալ: Յետոյ մարտ ամսին օգը յանկարծ մեղմացաւ և ձիւնը հալուեց: Ութ օրուայ մէջ, և սովորականից աւելի վաղ, գետակները անչափ վարարեցին, և Ալշէյմից նշմարուող լեռների կատարները, Սէնտ-Օդիլից դէնը գտնուող Վոփերի բարձրունքները, որոնք իրանց լանջերի վրայ կրում էին ձիւնից սպիտակած բացաստաններ և ճանապարհներ—ամառուայ իրանց մուգ-կապոյտ և դժգոյն-կանաչ պատմուճանի մէջ երևեցան: Ալշէյմի շրջակայքում պտոյտները զմայլելի պիտի դառնային ուրեմն, այնպէս, ինչպէս ժան երեակայում էր իր երեխայութեան յիշողութիւններից առաջնորդուած: Հայրական տունը՝ առանց ընտանեկան միութեան մի տիպար լինելու, հանդիսատես չէր եղել նոր, տաժանելի տեսարանների, ժանի վերադարձի յաջորդ օրուանից ի վեր: Երկու հակառակորդ կողմերը միմեանց դնում էին, նշանակում էին այն բառերն ու փորձողութիւնները, որ մի օր կարող էին իրքեւ ապացոյց, փաստ ծառայել մեղադրանքի և վիճարանութեան. բայց այլևայլ պատճառներով տիրում էր մի հարկադրուած զինադադար. Պ. Ժոզէֆ Օրերլէ ցանկանում էր որ իր որդին՝ որը շուտով օգտակար պիտի հանդիսանար իրան, մեղաւոր չգլուխէր իրան ոչ մի բանում, մանաւանդ չկարողանար ամբաստանել իրան թէ զրգուում է. Լիւսիէն զուարճանում էր իր եղբոր ներկայութեամբ և նրա ուսանողական կեանքի հետաքրքիր յիշողութիւններով և ճանապարհորդական պատմութիւններով:

տիկին Օրերլէ վախենում էր իր զաւակին տառապեցնել և նրաւ ձեռքից փախցնել ընտանեկան գծտութիւնների պատճառով: Ընդուն ասելով ոչինչ էր փոխուած: Տիրում էր միայն մի մակերևոյթային զուարթութիւն, մի արտաքին խաղաղութիւն, մի ղինադադար: Բայց ժամը որքան որ էլ իր շուրջը մոքերի և զգացումների կատարեալ ներդաշնակութիւն չէր գտնում, այնուամենայնիւ գոհ էր, որովհետեւ երկար տարիներ ապրել էր բարոյական առանձնութեան մէջ:

Նեղութիւններն ու վիրաւորանքները դրսից էին գալիս, և նրանք անպակաս էին: Համարեա ամեն օր, ժամ, զբօսնելիս՝ առիթ էր ունենում անցնելու Ալլէյմ դիւղով, որ կառուցուած էր եռաժանի ձևացնող երեք ճանապարհների բերանում. եռաժանիքի կոթը լեռան կողմն էր, իսկ երկու ժանիքը երկարում էին դէպի դաշտը: Բաժանման կէտի վրայ գտնուում էր Սիզոններ (Արագիլ) պանդոկը, որ մի խորշ էր կաղմում եկեղեցու հրապարակի վրայ: Մի քիչ հեռու, ձախակողմեան ճանապարհի վրայ, որը տանում էր Բէշնհարդսվէյլէր, բնակութիւն էին հաստատել պ. Ժողէֆ Օրերլէի հրաւիրած գերմանացի բանուորները, որոնք ապրում էին միառեսակ փոքրիկ տներում, առաջը մի փոքրիկ պարտէզով: Արդ, Ալլէյմի ուր մասուումն էլ որ ման գար, երկտասարդը իր հանդիպած անձանց դէմքի և շարժումների մէջ անկարող էր լինում չնկատել այլևայլ դատողութիւններ, հաւասարապէս տաժանելի իրա համար: Գերմանացիներն ու նրանց կանայք, աւելի կարգապահ և աւելի ճկուն քան ալգասցիները, երկնչելով՝ առանց յարգելու, բոլոր իշխանութիւններից, ամբողջութեամբ՝ Ալլէյմի մի անկիւնում, շնորհիւ ազգաբնակութեան հակառակութեան, որից յոյս ունէին վրէժինդիր լինել մի օր, երբ իրանք աւելի բազմամարդ դառնային, չունենալով միւս բնակիչների հետ ոչ ծագման, ոչ ազգակցական, ոչ սովորութիւնների, ոչ կրօնքի ընդհանուր կապ—դէպի գործարանատէրը բացի անտարբերութիւնից, կամ թշնամութիւնից ոչ մի զգացմանը չէին տածում և չէին կարող տածել. զգացմունք՝ որ անկարող էին լինում թագցնել աղամարդկանց բարեն ու կանանց գաղտագողի ժպիտը: Բայց շատ ալգասցիներ այնքան բարակները չէին փնտռում: Բաւական է որ ժամը մտնէր գործարան և նրան տեսնէին շարունակ հօր մօտ, պարսաւանքի միևնոյն զգացումներով վերաբերւում էին և դէպի նրան: Ժամը զգում էր որ այդ ալգասցիները շրջապատում էին իրան զգոյշ և մի աջալիս արհամարհանքով, որ փոքրագիր ժարդիկ կարող են արտայայտել դէպի հօր հաւանները: Անտառի գործաւորները, երկրագործները, կանայք, նոյնիսկ երեխաները նրան չտեսնել

էին ձևացնում, իրը ինք անցնում էր, ուստի իսկոյն մտնում էին իրանց աները, ուրիշներ, մանաւանդ մի քանի վաղեմի ալ-զասցիներ, գիտում էին հարուստ մարդու անց ու դարձը, որ-պէս թէ նա մի օտարերկրացի լինէր: Ամենից աւելի յարգանքի նշաններ ցոյց տուողները կամ գործարանի մատակարարները կամ ծառայողները և կամ ծառայողների ազգականներն էին լինում: Եւ ժան սանջանքով էր հանդուրժում այդ վիրաւո-րանքին, որը նորոգւում էր ամեն անգամ, երբ ոտքը դուրս էր գնում պարկից:

Կիրակի օր, եկեղեցում, ժողովրդի՝ կիրով սպիտակած ա-ղօթմասում, Օդիլ Բաստիանի գալուն էր սղասում: Երկար տարիներից ի վեր նրա ընտանիքին յատուկ նստարանը հաս-նելու համար, որը Սեղանի աջակողմի առաջին նստարանն էր, նա պէտք էր անցնէր ժանի կողքից: Նա անցնում էր իր հօր և մօր հետ. սակայն երեքից և ոչ մէկը ոչ մի նշան ցոյց չէր տալիս թէ գիտէ որ ժանը այնտեղ կանգնած է, ինչպէս և տիկին Օ-րերլէն և Լիւսիէնը: Նա ժպտում էր այն ժամանակ, երբ պա-տարագը վերջանում էր և ծառուղիով վայր էր իջնում. բայց ժպտում էր բարեկամ դէմքերի ամբողջ շարքերի, կանանց, հին ալզասցիների, բարձրահասակ պատանիների, որ նրա համար իրանց կեանքը զոհելու պատրաստ էին, ինչպէս և «Կոնկորդիա» երգեցիկ խմբի երեխաներին, որ շտապով դուրս էին նետւում ա-ւանդատան դռնից, վալ բարեկիւր, շրջապատելու և տօնելու՝ եկե-ղեցու դռան առաջ, ալ. Բաստիանի աղջկան, ալզասուհին, բարե-կամուհին, սիրեցեալը ամբողջ գիւղի աղքատների, նա՛ որ, ան-կասկած, տիկին Օրերլէից աւելի փող չէր բաշխում, բայց որի տունը գիտէին թէ ոչ գփտութիւն կար, ոչ դաւաճանութիւն՝ և այն զանազանութիւնն ունէր միայն, որ Ալզասի հովտում և լեռներում գտնուող միւս անների չափ ճոխ չէր:

Ի՞նչ էր խորհում նա ժանի մասին: Նա՛ որի աչքերը եր-բէք իզուր չէին խօսում, չէր նայում սակայն իրան: Նա՛ որ երբեմն, ճանապարհների վրայ, խօսակցում էր, էլ ոչինչ չէր ասում այժմ:

Ժանի նոր կեանքի առաջին ամիսը այս եղանակով անց-կացաւ Ալշէյմում: Ծնունդ և զարունը: Պ. Ժոզֆ Օրերլէ եր-կու օր էլ սպասեց, յետոյ, տեսնելով որ իր թխկենիների բող-բոջները բացւում են արեգակի առաջ, երբորդ օրը ասաց իր որդուն.

— Դու այժմ բաւական վարժ աշակերտ ես և կարող ես մե-նակ գնալ այցելել Վոթերի մեր տտաղճարանները: Իսկոյն պէտք է ճանապարհ ընկնես: Այս տարի ես բացառիկ գնումներ եմ արել. մեզ համար ծառեր են կտրւում մինչև Շլուխտ, և այդ

քոլոր վայրերը այցելելով դու տեսած պիտի լինես համարեա ամբողջ Վոթերը: Իմ միակ հրահանգը քեզ այն է, որ շուրջդ ամեն ինչ լաւ դիտես, և ինձ համար պատրաստես մի տեղեկագիր, ուր արձանագրած լինեն քո դիտողութիւնները՝ միւլ համար կարուող ծառերի իւրաքանչիւրի մասին:

—Ե՞րբ պէտք է ճանապարհ ընկնեմ:

—Վաղը, եթէ կամիս. ձմեռը վերջացաւ:

Պ. Օրերէ արտասանում էր այդ վերջին խօսքը վստահութեամբ այն մարդուն, որը, ինչպէս մի գիւղացի, կարիք է զգացել եղանակը լաւ ճանաչելու, և ճանաչում է: Խօսելուց առաջ, նա կազմել էր տուել գործարանի համար թէ պետական, թէ համայնքների, թէ մասնաւոր անհատների անտառներում կտրուելիք փայտերի ցուցակը, մանրամասն ցուցմունքներով այն դիրքի մասին, որ նրանք գրաւում էին լեռներում, և յանձնեց ժանի: Վոթերի ամբողջ երկարութեան վրայ, հիւսիսում, Բրիւ լսէի հովտից սկսած, մինչև Շլուխտ տարածուող տափերկու անտառներում փայտ պիտի կտրուէր:

Հետևեալ օրն իսկ, ժան մի պայուսակի մէջ դրեց մի քանի սպիտակեղէն և փոխնորդ կօշիկներ և առանց ոչ ոքի լուր տալու իր մոտալոթեան մասին, վազեց դէպի լեռ, և բարձրացաւ մինչև Հէյդէնբրուխի բնակարանը:

Գառակուտի տունը, պատուհանի կանաչ փեղկերը, մարգագետինը, ինչպէս և բացաստանի շուրջը գտնուող անտառը ծխում էին որպէս թէ հրդեհը լափած լինէր մացառները և խոտերը, առանց դիպչելու կաղնիներին և կաղամախիներին: Մշուշի երկար քուլաներ կարծես թէ հողից գուրս էին փախչում և ձրգւում էին և խտանում և հալւում այն ցածր ամպի մէջ, որ հովիտներից արշաւելով և զառիվերներից մազլցելով սահում, գնում էր դէպի Սէնտ-Օգիլի անտեսանելի մեծաստանը: Խոնաւութիւնը թափանցում էր մինչև պուրակների սիրտը: Ամեն տեղ բռնել էր: Ջրի կաթիլներ մարգարտանում էին կաղնիների լեզուակաձև սաղարթների սուր ծայրում, օձապտոյտ զլորում էին բարախների ճաղատ կոճղերի շուրջը, փայլեցնում էին գայլախազները, սուսեցնում էին մամուռները, և հողի միջից անցնելով կամ հոսելով մեռած տերեւների վրայից՝ գնում էին վարաբիւլ գետակները, որոնց շառաչն էր լսում ամեն կողմից:

Ժան դնաց մինչև կանաչ ներկուած տախտակորմի մէջտեղը, որ շրջապատում էր Հէյդէնբրուխը, անցաւ դռնից և, զուարթութեամբ, բնակարանի ճակատն իլիւր, մշուշի պատճառով փակուած պատուհանների տակ, կանչեց.

—Ուլրիխ մօրեղբայր:

Ապակիները ետեւից մի գդակ երևաց. ալղասունու մի գը-
դակ, և գդակի տակ մի ծերունի բարեկամունու ժպիտ:

— Լիզ, գնա իմացրու մօրեղբորը:

Այս անգամ ձախակողմեան վերջին պատուհանը բացուեց,
և պ. Ուլըիխ Բիշլէրի նուրը դէմքը, խորադնին աչքերը, սրա-
ծայր մօրուքը շրջանակուեցին երկու փեղկերի մէջտեղ, որոնք
ծալուած էին սպիտակ պատի վրայ:

— Մօրեղբայր, ևս պէտք է այցելեմ, անտառում, տաճաներկու-
տեղ: Սկսում եմ այս առաւօտունից և եկել եմ քեզ էլ վեր-
ցնելու, որպէս զի ինձ ընկերանաւ այսօր, էգուց, ամեն օր...

— Պիտի այցելես անտառում տաճաներկու տեղ, պատաս-
խանց մօրեղբայրը, որ թևերը կրծքին խաչածեղձ յենուեց պա-
տուհանի նեցուկին. իսկապէս շատ սիրուն կերպով ես վերջա-
ցնելու Մեծ Պահքը: Շնորհաւորում եմ քո նոր պաշտօնը:

Նա դիտում էր քրոջորդուն՝ որ ճանապարհորդի շորերով,
կտրովի ու առնական դէմքը բարձրացրած մշուշի մէջ, կանգնել
էր իր առաջ նա դիտում և մտաբերում էր Ֆրանսիական սպային.
կարելի էր երգուել որ ժան նրանցից մէկն է, այնքան նման էր:
Ու իսկոյն, տարուած իր երևակայութեամբ՝ մոռանում էր վա-
ղադարձոյց այցելուին ասելու, որ նրան կ'ընկերանայ թէ ոչ:

— Դէ, մօրեղբայր, յարեց ժան, եկէք: Մի մերժէք: Գիշեր-
ները կ'անցկացնենք պանդոկներում. պէտք է որ ինձ ցոյց տաք
Ալղասը:

— Բարեկամս, երէկ եօթը մղոն ճանապարհ եմ կտրել:

— Այսօր միայն վեցը կը կտրենք:

— Յանկանում ես, իսկապէս, որ անպատճառ դամ:

— Երեք տարի բացակայ լինել. մէկ մտածեցէք, Ուլըիխ
մօրեղբայր: Եւ ինձ պէտք է դեռ մի ամբողջ դաստիարակութիւն:

— Է՛, լաւ, չեմ մերժի, սիրելի ժան: Ես ուղղակի չեմ կա-
րողանում հրճուանքս դապել, որ դու մտածել ես իմ մասին... Բա-
ցի այդ՝ ես ունիմ և մի երկրորդ պատճառ, որ մղում է ինձ ու-
ղեկցել քեզ և շնորհակալութիւն յայտնել այդ բանի համար:
Բիշ յետոյ կ'ասեմ:

Փակեց պատուհանը: Անտառի լուսթեան մէջ, ժան լսեց
նրա ձայնը, որ կանչում էր վաղեմի սենեկապանին, որը՝ մօր-
եղբորից յետոյ, երկրորդ հրամայողն էր Հէյդէնբրուխում:

— Պիէ՛ր, Պիէ՛ր... Ա՛հ եկար: Մենք տաճաներկու օրուայ հա-
մար գնում ենք լեռ: Քեզ էլ եմ վերցնում: Գնա՛ պայուսակի
պատրաստիր. կապիր նրան ուսիդ քրոջորդուս պայուսակի հետ,
առ քո բեկապատ կօշիկներդ, փայտդ, և մեղանից առաջ ըն-
կիր ճանապարհ ու գնա՛ այս գիշերուայ օթեանը. ժանն ու ես,

պիտի այցելենք անտառում կտրուելիք ծառերը. երեկոյեան կը միանանք... Մի՛ մոռանար վերցնել անձրեանոց վերարկուս... հէջ էլ զրպանի դեղարանս...

Տնից ներս մտնելով, երիտասարդը՝ Ուլրիխ մօրեղբօրը տեսաւ, որ ուրախ զուարթ և շտապագին անցաւ իր առաջից, բացաւ սրահի դուռը, մօտեցաւ պատին, վերցրեց մի կապարեայ առարկայ պանկուկ դրուած երկու մեխերի վրայ և տրագօրէն բարձրացաւ սանդուղից։

—Այդ ի՞նչ էք ձեզ հետ վերցնում, մօրեղբայր։

—Դիտակս։

—Այդքան հին դիտակը։

—Սա ինձ համար թանկ է, բարեկամս. սա իմ մեծ-հօր-եղբօրս, զօրավար Բիհլերի դիտակն է. սա տեսել է պրուսիացիներ թիկունքը իէնայում։

Կէս ժամ յետոյ, բնակարանի առջև դանուող զառիվայր մարգագետնում, պ. Ուլրիխ ժանի նման հետկառնուած, մի կակուղ գլխարկով զլուխը ծածկած, դիտակը ուսնդանութիւն շունը նրա շուրջը ոտոտտելով՝ գնում էր. ծերունի Պիէրը, շատ համեստ և լուրջ, իր լեռնալանի ուսերի վրայ կրելով կտաւով ծածկուած և փոկերով ամրացրած մի խոշոր կապոց հետևում էր նրան. իսկ ժան Օրերլէն, կուսցած մի սպայախմբի, շտաբի քարտէզի վրայ, որ միւսները բերան դիտէին, վիճարանում էր հօրեղբօր հետ թէ երկու ճանապարհներից միով պիտի գնային, բեռները՝ թէ զրօնողներին։ Վիճարանութիւնը կարճատև եղաւ։ Ծառան՝ թեքուելով ձախ, իսկոյն իջաւ վար, ուղղուելով դէպի մի գլուղ, ուր պիտի իջկանէին գիշերը. իսկ մօրեղբայրն ու քրոջորդին վերցրին կիսալեռնոտ մի արահետ, հիւսիս-արևմտեան ուղղութեամբ։

—Աւելի լաւ, եթէ այս ճանապարհն աւելի երկար է, ապա պ. Ուլրիխ, երբ մտան անտառի մէջ, աւելի լաւ... Ես կուզէի որ մինչև մահ տեսէր... Երկու հոգի, որ միմեանց հասկանում են և գնում են մանաւանդ անտառի միջով. ի՞նչ գեղեցիկ երազ է...

Աչքերը կիսով խփեց, ինչպէս նկարիչները, և հեշտանքով ծծեց մառախուղը։

—Գիտե՞ս, ասաց, մի ուրախ գաղտնիք հաղորդելու երեկոյ-թով, գիտե՞ս, ժան, որ անհա երեք օր է ինչ գարունը եկել է։ Ահա իմ երկրորդ պատճառը։

Անտառապահը ոգևորութեամբ կրկնում էր այն, ինչ գործարանատէրը ասել էր սառնութեամբ։ Միևնոյն նշաններից հասկացել էր, որ նոր ևզանակը ծնուել էր։ Ձեռնափայտի ծայ-

րով ժանին ցոյց էր տալիս կաղնիների բողբոջները, կարմիր՝
ինչպէս հասած արջախաղողը (arboise), կաղամախիների կոճղի
վրայ ճաքած կեղևները, տեղահան եղած քարերի երկարու-
թեամբ աճած վայրի ելակենիների նորածիլ շառաւիղները:
Մերկ ճանապարհները վրայ դեռ ևս փչում էր սառը քամին,
բայց ձորերում, հովիտներում, պատասպարուած վայրերում, հա-
կառակ մառախուղին զգացում էր արեգակի առաջին տա-
քութիւնը, որ թափանցում է մինչև սիրտը և սարսուղ-
նում մարդկանց, որ հասնում է մինչև տունկերի սաղմին:

Այդ, ինչպէս և հետեւեալ օրերը, մօրեղբայր ու քրոջոր-
դի անցկացրին անտառում: Նրանք միմեանց հիանալի կերպով
հասկանում էին թէ՛ առատօրէն և ամեն բանի մասին խօսելիս
և թէ՛ լռելիս: Պ. Ուլրիխ անտառն և լեռը խորապէս ճանաչում
էր: Նա պարզապէս հոգեկան վայելք էր զգում որ առիթ
ունէր բացատրելու Վոթերը, և կարգալու քրոջորդու ներ-
քինը: Ժանի կրակոտ երիտասարդութիւնը յաճախ դուար-
ճութիւն էր պատճառում իրան և յիշեցնում էր անցած գնա-
յած ժամանակները: Անտառապահի և որսորդի բնազդները՝ որ
քնում էին երիտասարդի սրտում, յուզուեցին և արիացան:
Բայց նա ունեցաւ նոյնպէս բարկութեան, ըմբոսացումի, երի-
տասարդական սպառնալիքի բողբոջներ, որոնց դէմ մօրեղբայրը
մեղմօրէն բողբոջում էր, որովհետեւ, իսկապէս ասած՝ նա համա-
ձայն էր նրա հետ:

Ալզասի արտունջը՝ առաջին անգամ լինելով՝ հնչում էր
իր ականջին, արտունջ՝ որ օտարականը չի լսում, և որ յաղ-
թականը կիսով չափ լսում է բայց չի կարողանում հասկանալ:

Որովհետեւ ժանն ոչ միայն անտառը դիտում էր, ալ և
տեսնում էր անտառի ժողովուրդը, սկսած վաճառականներից
և պաշտօնեաներից—աւատարկան տէրեր, որոնցից կախուած է
բաղբը մի համարեա անթիւ բազմութեան—մինչև փայտահատ-
ները, ածխագործները, սայլորդները և ուրիշ բանուորները,
մինչև թափառաշրջիկները, հօտաղները, խոզարածները, չոր
փայտ հաւաքողները, պտղորսներն ու գաղտորսները, սունկ,
կլակ և վայրի հաղարջ հաւաքող կիները:

Ուլրիխ Բիշլէրի կողմից ներկայացուելով կամ նրա հովանու-
տակ, ժանը ոչ մի անվտանգութիւն չէր ներշնչում ալպացիներին:
Նա աղատօրէն խօսում էր փոքր մարդկանց հետ. նրանց բառերի,
նրանց լռութեան, գիշեր ցերեկ նրանց ապրած միջնորդութեան
շնչում էր նոյնիսկ ցեղի հոգին: Երիտասարդներից շատերը չէին
ճանաչում միմեանս իրար և չէին կարող հաստատապէս ասել թէ
սխրում էին նրան: Այնուամենայնիւ, նոյնիսկ դրանք իրանց ե-

բաղններում կրում էին Ֆրանսիան: Նրանք չէին հաշտուում գերմանացու հետ: Մի շարժում, մի ակնարկութիւն, մի հայեացք, ալիսացի գիւղացու գաղտնի արհամարհանքն էին մատնում դէպի յաղթականը: Գերութեան գաղափարը ամեն տեղ էր և ամեն տեղ նկատուում էր հակակրութիւն տիրողի դէմ, որ բացի սարսափից՝ կառավարութեան ոչ մի կերպ չէր ճանաչում: Ուրիշ երիտասարդներ, աւելի հին, աւանդական ընտանիքների ներկայացուցիչներ, անցեալի հետ իրանց ծնողների միջոցով ծանօթացած և յուսահատութիւնից՝ հուսատարիմ, տրտնջում էին այն անարկարութիւնների և հարստահարութիւնների դէմ, որոնց առարկայ էին դառնում լեռնաքնակ կամ դաշտաքնակ խեղճ մարդիկ, երբ կասկածում էին կորած հայրենիքն ամսոտալու ոճրի մէջ: Նրանք պատմում էին այն ճարպիկ խաղերի մասին, որ վրէժ լուծելու համար խաղացել էին մաքսային պաշտօնեաների, ոստիկանների, անտառապահների գլխին, որոնք հղարտանում էին իրանց կանաչ զգեստներով և տիրուեան գլխարկով, նրանք պատմում էին մաքսախուսութեան և դասաքուլութեան պատմութիւններ, թէ ի՞նչպէս երգում էին յաճախ Մ'արմէյեզը զինեռներում, զոները պինդ փակած, տօներ էին կատարում Ֆրանսիական հողի վրայ, թէ ի՞նչպէս կառավարութիւնը խուզարկութիւններ է կատարում և դատի ենթարկում, պատմում էին վերջապէս այն ողբերգական կամ պատակերգական, անօգուտ և զայրացուցիչ մենամարտի մասին, որ մղում էր մի մեծ, ուժեղ երկիր մի բոլորովին փոքրիկ երկրի ողու դէմ: Այս վերջիններքը, երբ տանջում էին, սովորութեան և նախնիքներից ժառանգած խանդաղատանքի ուժով՝ երեւակայութեամբ թռչում էին Վոժերից այն կողմը: Կային և՛ հիները, որոնց խօսեցնել շատ էր սիրում պ. Ուլրիխ: Նրբ որ ճանապարհների վրայ, գիւղերի մէջ նա նշմարում էր յիսուս կամ աւելի տարեկան մի մարդու, որի մասին համոզուած էր թէ ալիսացի է, հազուադէպ էր որ նա ինքը՝ նրանից չճանաչուէր և մի խորհրդաւոր ժպիտ նախակարապետ չը լինէր Հէյդէնբրուխի տիրոջ հետեւեալ հարցին. «Դէ՛, ահա մի բարեկամ, հայրենիքի մի վաւակ էր» Նթէ պ. Ուլրիխ նրա դէմքի ալտայայտութիւնից, արտահանունքների շարժումից, երբեմն էլ մի փոքր երկիւղից զգար որ դատողութիւնը ճիշտ էր, աւելացնում էր ցած ձայնով. «Դու Ֆրանսիական մի զինուորի գէմբ ունիս:» Այն ժամանակ առաջ էին գալիս ժպիտներ կամ արցունքներ, սրտի յանկարծական թրթուռներ, որ փոփոխում էին գէմքի արտայայտութիւնը. դժգունեցնում, կարմրեցնում, ծխամորըը հեռացնում շրթունքներից, և յաճախ, շատ յաճախ, մի ձեռք բարձրանում էր, ավել գէպի դուրս դարձրած՝ գիպչում

էր գլխարկի եզերքին, զինուորական բարե տալիս, այնքան ժամանակ, որքան երկու ճանապարհորդները աչքից չէին ան-
յայտացել:

— Տեսնում ես սրան, ասում էր կամաց Ուլրիխ ժօրեղ-
բայրը, եթէ սա մի շեփոր ունենար, «la Casquette» — կածէր:

Ֆրանսիան, ժան Օրերլէ միշտ խօսում էր նրա մասին: Երբ հասնում էր մի սարի կատարին, հարցնում էր. «Սահմա-
նազլխից հեռու եմ»: Նա պատմել էր տալիս Ալզասի մասին,
«այն ժամանակներում, երբ տիրապետում էր բազմա լուծը»,
ինչպէս անուանում էր: Ո՞րքան էր իւրաքանչիւր մարդու ազա-
տութիւնը: Ի՞նչպէս էին կառավարւում քաղաքները: Ի՞նչ տա-
րերութիւն կար Ֆրանսիական ոստիկանների — որոնց պ. Ուլ-
րիխ՝ բարեկամական ժպիտով՝ անուանում էր, ազնիւ մարդիկ՝
չափազանց խիստ դէպի խեղճերը — և գերմանական քսու, գաղա-
նարարոյ և իշխանութիւնների կողմից միշտ պաշտպանութիւն
վայելող այն ոստիկանների միջև, որոնց ամբողջ Ալզասը ատե-
լով ատում էր, ներկայումս:

— Ի՞նչ էր անունը Առաջին Կայսրութեան ժամանակ պաշ-
տոնավարող այն նահանգապետի, որ Ստորին-Ալզասի ճանա-
պարհների եզերքին շինել է տուել երկյարկանի քարէ նստա-
րաններ, որպէսզի շուկայ դնացող կանայք կարողանան հանգիստ
առնել և միևնոյն ժամանակ իրանց գլխի վերև զնել իրանց
բռնները:

— Մարկիզ դը Լըզէյ-Մարնէզիս, փոքրիկս:

— Պատմեցէք ինձ մեր նկարիչների, նախկին պատգամա-
ւորների, եպիսկոպոսների մասին: Ասացէք ի՞նչպէս էր Ստրազ-
բուրգը, երբ երիտասարդ էիք և ի՞նչ տեսարան էր ներկայ-
ացնում, երբ զինուորական երաժշտութիւնը նուագում էր
Կոնտադում:

Պ. Ուլրիխ՝ իր յիշողութիւնները վերստին ապրելու հա-
ճոյքը վայելելով պատմում էր: Վոժերի լուսաշղթան բարձրանա-
լիս և իջնելիս՝ Ֆրանսիական Ալզասի պատմութիւնն էր
անում: Թոյլ էր տալիս որ խօսէր իր կրակոտ սիրտը: Եւ եր-
բեմն նա լաց եղաւ, երբեմն երգեց, երեսայի զուարթութեամբ,
Նադօի, Բերանֆէի երգերը, Մարսելէէզը, և կամ Ծանդեան
հին երգերը պուրակների կամարի տակ:

Ժան՝ նախկին Ալզասի այս վերակոչումներով այնքան
շատ էր հետաքրքրւում, այնքան բնական կերպով իւրացնում
էր ներկայի հակակրօնութիւններն ու ըմբոստացումները, որ մօր-
եղբայրը, որ նախապէս հրճուել էր այդ բանով, որպէս ազնիւ
ցեղի մի նշանով, սկսեց վերջապէս անհանգիստ լինել: Մի ե-

րեկոյ, երբ ողորմութիւն էին տուել մի նախկին ուսուցչի, որը զրկուել էր ֆրանսերէնը ուսուցանելու իրաւունքից և դատապարտուել էր թշուառութեան, որովհետեւ շատ ծեր էր և հետեւաբար անկարող՝ գերմանական վկայագիր ձեռք բերելու, ժան բորբոքուեց. մօրեղբայրը հարկ համարեց միջամտել:

—Սիրելի ժանո, աստց նա. զգուշացիր չափազանցութիւններից. դու պէտք է ապրես գերմանացիներէ հետ:

Այդ դէպքից յետոյ, պ. Ուլրիխ միշտ խոյս էր տալիս Ալզասի նուաճման հարցը յուզելուց: Բայց, աւանդ, ամբողջ Ալզասը,—մի դաշտանկար, ճանապարհի վրայ ընկած մի գերեզմանաքար, խանութի մի ցուցատախտակ, կանանց տաւաղը, մարդկանց տիպը, ղինուորներէ տեսքը, մի բլրի գաղաթին բարձրացող ամրոցները, մի սիւն, երեկոյեան ընթրիքի ժամանակ ալգասական պանդոկում գնուած լրագրի մի որեւէ լուրը, և վերջապէս օրուայ իւրաքանչիւր ժամն իսկ, ժանի կամ Ուլրիխի ուշադրութիւնը հրաւիրում էին Ալզասի դրութեան վրայ, այդ ընկճուած, բայց չիւրացրուած ազգի վրայ: Պ. Ուլրիխ՝ որքան որ էլ գիտամբ անփութօրէն և հապճեպով էր պատասխանում, չէր կարողանում արդեւել ժանի մտածումը անծանօթ ճանապարհներէ մէջ թափառելուց: Եւ երբ միտսին բարձրանում էին Վոթերի մի կիրճից, պ. Ուլրիխը հաճոյքով ինչպէս և երկիւղով տեսնում էր, որ ժանի աչքերը խուզարկում էին հորիզոնը՝ արեւմուտքում, և երկար կանգ էին առնում, որպէս մի սիրուած դէմքի վրայ: Ժան այդքան երկար չէր դիտում սակայն արեւըը կամ հարաւը:

Այսպէս տասնեւինգ օր ման եկան Վոթեան անտառները և այդ ժամանակամիջոցում, պ. Ուլրիխ՝ միայն երկու անգամ, և այն էլ մի քանի ժամուայ համար վերադարձաւ Հէյդէնբրուխ: Բաժանումը տեղի ունեցաւ Ծաղկաղարդի կիրակին, Միւնստէրի հովտի մէջ, մի դիւղում:

Երեկոյ էր, այն ժամին, երբ գերմանական զառիւլայրի հովիտները բոլորովին կապտին և տալիս և լոյսի միայն մի շերտ ոսկեղօծում է կապնիւնների կատարը: Պ. Ուլրիխ Բիհլէր արդէն հրաժեշտ էր առել իր բրոջ՝ որդուց, որ տասնեւինգ օրուայ ընթացքում դարձել էր իր ամենասիրելի բարեկամը: Սենեկապանը՝ նոյն առաւօտն իսկ երկաթուղի էր նստել Օրերնէ դնալու համար: Պ. Ուլրիխ, խայթող ցրտի պատճառով վերարկուի օձիքը վեր բարձրացրած՝ շուսցնելով կանչել էր Ֆիդէլին և հեռանում էր պանդոկից, երբ ժան, իր որսորդական կապոյտ տաբաղով, գլխաւորաց իջաւ վերնագաւթի չորս աստիճաններից:

—Դարձեալ ցտեսութիւնն, աղաղակեց նա:

Եւ որովհետեւ մօրեղբայրը, շատ յուզուել էր, յուզուած ծածկելու համար ձեռքով մի շարժում արեց, խոյս տալով բառերից, որոնք կարող էին դողդղալով մասնել նրան:

—Ձեզ պիտի ընկերանամ մինչև գիւղի վերջին տունը, շարունակեց ժան:

—Ի՞նչ կարիք կայ, սիրելիս: Աւելորդ է ուղին երկարել...

Գլուխը դէպի մօրեղբայրը դարձրած՝ որը գիտում էր իւր առաջ ձգուող ճանապարհը, ժան սկսեց քայլել: Իր մատաղ ու փաղաքշական շեշտով շարունակեց.

—Շատ եմ ցաւում քեզ համար, մօրեղբայր Ուլրիս, և առեմ ձեզ թէ ինչո՞ւ: Դուք մի քանի խօսքով ամեն ինչ կը հասկանաք. դուք, առ հասարակ ըրտօրէն բացասելու սովորութիւնը չունէք. երբ ինձ համակարծիք չէք, ես անմիջապէս հասկանում եմ այդ՝ ձեր շրթունքներէ կծկումից, որ թեթեօրէն վեր է քաշում ձեր սպիտակ մօրուքի սուր ծայրը. և այդ է լինում ըլլորը. դուք ներողամիտ էք առ հասարակ չէք զայրանում և գիտեմ որ հաստատակամ էք. թւում է թէ ուրիշներէ մտքերը անմիջապէս ծանօթ են ձեզ, որովհետեւ շատ հեշտութեամբ ներանց պատասխանում էք. դուք յարգում էք տկարներին... Ես դրան սովոր չէի Հռենոսի միւս ափում:

—Ի՞նչ էք ասում:

—Ես շատ լաւ ըմբռնում եմ նաեւ ձեր երկիւղները իմ վերաբերմամբ:

—Իմ երկիւղները:

—Այո. կարծում էք թէ ես չնշմարեցի, որ ինձ ոգևորող մի որոշ հարցի մասին դուք լռութիւն էիք պահպանում մի շաբաթից ի վեր:

Այս անգամ ժան իր մօրեղբոր կիսադէմքը չտեսաւ, այլ ամբողջ երեսը. և նկատեց որ նա փոքր ինչ մտահոգ էր:

—Փոքրիկ, ես գիտամբ այդպէս արի, պատասխանեց պ. Ուլրիս: Երբ որ դու ինձ հարց տուիր, ես քեզ յայտնեցի թէ ի՞նչ էիր անցեալում և ի՞նչ ենք այժմ: Իւ յետոյ տեսայ, որ չպէտք էր աւելի ծանրանալ այդ մասին, սրովհետեւ դու պիտի տառապէիր: Գիտեմ, տառապանքը ինձ համար բարերար է, բայց դու, և քեզ պէս երիտասարդ մարդիկը աւելի լաւ է որ արշաւեն այն նժոյգների նման, որոնք դեռ չեն վաղել, և արշաւեն շատ թեթեւ բեռով:

Վերջին տան առաջից անցել էին արդէն և գտնուում էին դաշտում, ժայռերի միջից թաւալող մի հեղեղի և փուլ եկած

մի զառվերի մէջտեղ, որ հասնում էր մինչև անտառի բարձունքը:

— Շատ սուշ է, սասայ ժան Օրերլէ ձեռքը մեկնելով և կանգ առնելով, շատ սուշ է. դուք, Ուլրիխ մօրեղբայր, խօսեցէք արդէն աւելի՝ քան հարկաւոր էր: Ձեզ չափ, ես ինձ զգում եմ նախկին Ալզասի զաւակ: Եւ, քանի որ վաղը Շլուխտ եմ բարձրանալու, աւելի վատ, կը գնամ կը տեսնեմ նրան. կը գնամ կ'ողջունեմ մեր ֆրանսիական երկիրը:

Նա ծիծաղում էր այդ խօսքերն արտասանելիս: Պ. Ուլրիխ նրան կշտամբելու համար, առանց մի որևէ խօսք ասելու, երկու, երեք անգամ գլուխը թափ տուեց միայն, և հեռացաւ մշուշի միջից:

(Կը շարունակուի)

ԹՈՒՐԻ ՄԱՄՈՒԼԸ

Ո՞վ է թուրքը և ո՞վքերից է բաղկացած *)

(Հիւսէյն Զադէ-ի)

Մեր լրագրի թուրքերէն, իսլամական մի թերթ լինելը իւրաքանչիւր համարի ճակատին դրոշմուած է: «Թուրքերէն» և «իսլամական» խօսքերը արտաքուստ որքան որ էլ բացայայտ և յստակ են երևում, իսկութեան մէջ այդպէս չեն: Այդ խօսքերը դիւրեմբունի, պարզ են թւում և ամեն մարդ այնպէս է կարծում, որ դրանք բացատրութեան, մեկնութեան կարօտ չեն: Այդպէս կարծողները ի հարկէ սխալւում են, որովհետև մեր լրագիրը եթէ շարունակէ սարիների ընթացքում հրատարակուել, յիշեալ երկու խօսքերի իմաստը բացատրելով պիտի զբաղուի և այս մասին վաղուց ի վեր գոյութիւն ունեցող սխալ կարծիքներն ու ենթադրութիւնները պիտի ջրէ, մէջտեղից վերցնէ:

*) Առաջ բերելով թարգմանօրէն «Հայաթի» այս յօդուածը, մենք յաջորդ համարներից մէկում մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ կը տանք այս հարցի մասին, մանաւանդ որ թուրք լրագրի գրուածքի մէջ միակողմանիութիւն է երևում:

Մեր լեզուն, մեր կրօնքը անարդ ածականներով աղարտել կամեցող թշնամական հրատարակութիւններին՝ մեր մրցակիցները, հակառակորդները, յաճախ և՛ մենք հաւատք են ընծայում: Ձենք իմանում թէ դրանք ի՛նչ միտումով, ի՛նչ դիտաւորութեամբ գրուել են և գրոււմ են: Նոյնիսկ վերջերս, ցաւով կարդացինք հէնց թուրք լրագրներից մէկում թաթարների՝ թուրքերի և թաթարների պարծանքի առարկայ եղող Ջինգիզների և Թիմուր (Լէնկ-թիմուրների) մասին անվայել խօսքեր: Ո՛րքան թուրք գրողներ ունենք, որ թրքութիւնը իրանց պարծանք համարելով հանդերձ՝ չգիտեն թէ ո՞վ է թուրքը և ո՞վքերից է բաղկացած... Անկասկած իրանց ժողովուրդին կենդանութիւն պարգևող, իրանց երկիրը շէն դարձնող, իրանց ազգը առաջադիմութեան շաւղի մէջ դնելով՝ նրան՝ քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճանները հասցնելով փառք վաստակեցնող մեծ աշխարհակալների վրայ, եթէ՛ փոխանակ իրանց բուն ժողովուրդի և ազգի տեսակէտից, օտար և հակառակորդ ազգերի հայեցակէտով նայենք, այն ժամանակ ի հարկէ որ այդ աշխարհակալների մասին լաւ չպիտի խօսինք: Սաադիբնը Վգասի քաղաքակրթութեան մատուցած ծառայութիւնը իրանցիներից մի հարցնէք, այլ արաբներից հարցրէք: Իրանցիների, զրադաշտականների նախկին քաղաքակրթութիւնը իր արմատից ջնջելով հանդերձ՝ նա իսլամ և արաբ քաղաքակրթութեան ծառայել է... Նոր ժամանակներում, Մոլոկէ և Բիսմարկ՝ Ֆրանսիացիների դժբաղդութեան պատճառ լինելով հանդերձ՝ գերմանացիների բարերարներն են հանդիսանում: անկասկած առաջինները՝ Մոլոկէն և Բիսմարկը բարբարոս և արիւնարբու անուանելով պիտի անիծեն, իսկ ընդհակառակն, երկրորդները նրանց արժանի յարգանքն ու ու փառաբանութիւնը մատուցանելու համար հարկ են համարում արձաններ ու կոթողներ կանգնել նրանց յիշատակին: Լորդ Կիչներից բօէրները դժգոհ, իսկ անգլիացիները վերին աստիճանի բաւական են: Ահա այսպէս էլ, Թիմուրի թուրք բաղաքակրթութեան մատուցած ծառայութիւնը պէտք է հարցնել ո՞չ թէ իրանցի, օսմանցի, չինաստանցի ժողովուրդներից, այլ Միջին-Ասիայի թուրքերից, Սամարկանդի ճարտարապետական շինութիւններից, նրա հարազատ սերունդից եղող Օլուդ բէկերի, Բարուր միրզաների հեղինակութիւններից, Ջղտայ (էզրէկ) գրականութեան վոյլն աւելացնող բանաստեղծների և գրագետների գրքերից...

Այս մասին պէտք է որ ուղղենք մեր սխալ հասկացողութիւնները: Միայն թէ մեր պատմութեան, մեր ազգային անցեալ մեծութիւնների մասին ճշմարտութիւնը երևան հանե-

լու համար նախ և առաջ պէտք է մենք մեզ լաւ ճանաչենք, այսինքն պէտք է գիտնանք, թէ ովքեր են թուրքերը, ովքերից բողկացած են, որտեղից ծագած են, ի՞նչ ճիւղերի բաժանուած են, այսօր ո՞ր տեղերում բնակութիւն հաստատած են, և ի՞նչ անունների տակ ապրում են: Մեր մէջ կան անձեր, որ չգիտեն թէ թուրք են և՛ էօղլէկները, զրդզները, բաշկիրները... Հետեւեալը հարցը վերին աստիճանի կարեւոր է: Արտաքուստ թէև անկարեւոր է երևում, բայց իսկապէս նա մեծ և մշտական կարեւորութիւն ունի: Այս հարցով ո՛չ թէ այսօր, այլ մի քանի դար առաջ զբաղուած պէտք է լինէինք: Անցեալում անուշադրութեան մատնուած այս հարցը, ապագային, հեռաւոր ապագային թողնելուց լաւ է այժմ և եթ ուսումնասիրել: Միայն թէ այս տեսակ մի հարցի վրայ ճշմարտութեան լոյսը սփռել՝ մի կամ երկու անձի ուժերից վեր է: Դրա համար հարկաւոր է զուցէ մասմեղականների առանձին համալսարաններ, ժողովուրդ և ընկերութիւններ ստեղծել:

Ֆինլանդիայում, Հելսինգֆորս քաղաքում գոյութիւն ունի այս կարգի հարցերով զբաղուող մի առանձին գիտական ընկերութիւն՝ «Ֆին և ուգր» անունով: Պետերբուրգի համալսարանում թուրք ժողովուրդների ուսումնասիրութեան համար առանձին ճիւղ կայ, ինչպէս և Ակադեմիայի անդամների շարքում «թրքաբանութեան» մէջ հռչակ ստացած Վասիլի Բատլով՝ նման մեծ գիտնականներ:

Մաջարիստանում, (Հունգարիայում) թուրք ժողովուրդների ուսումնասիրութեան գործը ո՞ր աստիճան զարգացած լինելը ցոյց տալու համար բաւական է միայն յիշատակել Վամբերիի և Օյֆալուի անունները: Ամբողջ Եւրոպայում այս ուղղութեամբ աշխատող գիտունների և այդ տեսակ գիտնականների կողմից հեղինակուած կարեւոր գործերի անունները թուելու համար լրագրի էջերը չպիտի բաւէին: Նոյնիսկ Դանիայի (Դանմարկա) նման փոքրիկ ուղգերը այս գիտութեան (թրքաբանութեան) մէջ իրանց կարեւոր յայտնութիւններով՝ թուրքերի պատմութեան, թրքական աշխարհին մեծ ծառայութիւն են մատուցել (թէպէտև այդ ծառայութիւնները մեզ անծանօթ են մնացել): Դանիացի այդ կարգի գիտնականներից պէտք է յիշատակել Վիլհէլմ Տոմսընին: Հարցի կարեւորութեան պատճառով Եւրոպայի մի քանի տեղերում, մասնաւորաբար այդ հարցին նուիրուած պարբերական հրատարակութիւններ են լոյս տեսնում կանոնաւորապէս: Զարմանալի է որ հարցը ամենից առաջ թուրքերին շահագրգռելով հանդերձ՝ մեր մէջ ո՛չ միայն այդ ուղղութեամբ պատրաստուած անձեր գոյութիւն չունեն, այլ և

հերոսացի զխոնականների՝ թրքական աշխարհի վերաբերեալ հեղինակութիւններին և զիտական հետազոտութիւններին ծանօթ մարդիկ չափազանց հազուադիւտ են... Ճիշտ է որ վերջին ժամանակներում, օսմանեան թուրքերի մէջ հանգուցեալ Շէմսէղիին Սամի բէյ, Նէջիր Ասիմ և ուրիշ մի քանի յարգելի անձեր աշխատեցին քսյա շաւղում մի ահօս բանալ, մի նոր ուղի ցոյց տալ, բայց նրանց ձեռնարկութիւնը շօշափելի արդիւնքներ չտուեց... Ինչ՞ով րոյճետե հարցի լուսաբանութեան համար ուսման և զիտութեան տէր անձերի միացեալ ջանքերը զործ դնելու, ժողովներ, ընկերութիւններ, և համալսարաններում այդ հարցի վերաբերեալ ճիւղեր բաց անելու, թուրք հնութիւնները որոնելու համար, անհրաժեշտ է հետաւոր երկիրներ գիտական արշաւախմբեր ուղարկել... Սակայն ափսոս, ափսոս:

II

Այս տեսակ հարցերով արդիւնաւոր կերպով զբաղուելու համար, նախ «ազգագրութեան», «մարդաբանութեան», «լեզուաբանութեան» և այլ գիտութիւնների մէջ ձեռնհասութիւն և հեղինակութիւն հարկաւոր է: Իսկ մենք՝ խոստովանուելով հանդերձ որ այդ գիտութիւնների մասնագէտ չենք, կասենք որ ճշմարտութիւնը մեր ազգին պարզ ու անխարդախ ցոյց տալ ցանկացող «Հայաթ»-ի էջերում այդ հարցի մասին ընդհանուր գծերով և ընդարձակ կերպով կարողանալ խօսելու համար հարկաւոր ծանօթութիւններից զուրկ չենք:

Եթէ չեմ սխալւում թուրք լեզուով հրատարակուող մի լրագրի վրայ աչք գցելով հետեւեալ նախադասութիւններին հանդիպեցինք.

«Մենք թաթարները թուրքից զուրա չենք հաշոււ. ամենքին յայտնի է, որ այսօր գոյութիւն ունի, մի ցեղ, մի լեզու, մի դիմագծութիւն, մի դէմք թաթար անունով... սակայն թուրք երակի մի ճիւղը կաղմելով հանդերձ՝ թաթար անունով մի ժողովուրդ իհարկէ կայ, որոնք մեծ պետութիւններ են կազմել, աշխարհակալութիւններ են արել, և այլն.» յօդուածադրի այսչափ խօսքերի մէջ գիտականօրէն ուղիղ եթէ մի նախադասութիւն կայ, այն էլ «թաթար անունով մի ժողովուրդ իհարկէ գոյութիւն ունի» խօսքն է անկասկած: Կայ, միայն թէ զրանք մի ժողովուրդի, մի աշիրէթի կամ ընտանիքի վիճակում դուրս չեն եկել Չինաստանից: Դուրս եկողները առանձին, առանձին անձերից, բանակի մեծերից և այլ այս կարգի

մարդկանցից բաղկացած են եղել և ոչ թէ իրանց ժողովուրդը իրանց հետ միասին առնելով բերել են զէպի այս կողմերը:

Դրանք մոնղոլական ցեղին պատկանելով՝ ինչպէս առ հասարակ ամբողջ մոնղոլները՝ թուրք երակի մի ճիւղը չեն կազմում, այլ մոնղոլ երակի մի ճիւղն են կազմում: Հետևաբար անհրաժեշտ է որ նրանք թուրքերից դուրս հաշուեն: Սակայն եթէ աշխարհակալութիւնը յատուկ է մի ժողովուրդի, մի ազգի, այդ ազգի ընդհանուր մեծամասնութեան, ուրեմն մոնղոլների այս մասը (թաթարները) այս կողմերում ոչ մեծ պետութիւններ կազմել են և ոչ էլ աշխարհակալութիւններ արել են:

Միայն թէ անկարելի է ուրանալ, որ այլ և այլ դարերում նրանք մեր բանակների վարիչներն ու առաջնորդներն են եղել յաջողութեամբ, և որովհետեւ դրանք պատկանում են մոնղոլական երակին հետևաբար աւելի կամ պակաս չափով պէտք է կրեն մոնղոլական ցեղի, լեզուի և դիմագծութեան յատկանիշները:

Իսկ գալով «թաթար» կոչուող, սխալմամբ թաթար կոչուող թուրքերին, կամ աւելի ճիշտը՝ թիւրքերի այն մասին, որ սխալմամբ թաթար են կոչուում, դրանք լեզուի և պատմութեան տեսակէտով մոնղոլների հետ շատ քիչ նմանութիւն և առնչութիւն ունին, կարելի է ասել որ համարեա չունին: Ինչպէս յետոյ պիտի ապացուցանեմ, նրանց լեզուն՝ հակառակ իր որոշ աստիճանի կոչուութեան, Ստրպատականի, օսմանեան թուրքերի բարբառներից աւելի թիւրքերէն է, այսինքն նախնական թուրքերէնին՝ պարսկերէն, արաբերէն լեզուների ազդեցութիւնից զերծ մնացած բուն թուրքերէնին աւելի մօտ է: Թաթար-թուրքերէնում տեսնուած այս երևոյթը՝ արևմուտքից զէպի արևելք գնալով՝ Վոլգա գետից մինչև Բայկալ լիճը կամ Ալտայ լեռներին մօտենալով՝ հետզհետէ աւելի յստակ ու բացայայտ է դառնում:

Գրանք այժմ «ցեղի» և «դիմագծութեան» հարցին:

Այստեղ կարելի է վճիռ կայացնել միայն մարդարանական (անթրոպոլոգիական) օրէնքի համաձայն դանդի ոսկրը չափելու և այլ միջոցների օգնութեամբ և ստատիստիկայով առաջնորդուելով: Մեր մէջ քիչ ու շատ մոնղոլների նմանուողներին «թաթարական դիմագծութիւն» ունի ասում ենք, այնպէս չէ: Այստեղ երկու տեսակ դատողութիւն կարող ենք անել, կամ երկու կերպ կարող ենք մտածել:

Առաջինը կարելի է որ դտնուում ենք մի ժառանգական երևոյթի առաջ, այսինքն, այդ ձևով եղողները կամ որդոց որդի ամբողջապէս թրքացած մոնղոլներ են, կամ իրանց երակների մէջ բաւական մեծ չափով մոնղոլական արիւն կրող

Թուրքեր են... Մարդաբանները Կազանի «Թուրքերի» (Թաթարների) մասին իրանց կատարած հետազոտություններով այն հետևանքին են յանգել, որ Կազանի թուրքերի մոտառարապէս կէսը որոշ չափով կրում է եւրոպական (այսինքն արիական) դիմագծութիւն, իսկ միւս կէսն էլ փոքր ի շատէ մոնղոլական դիմագծութիւն: Բայց այս բանը կազանցիների մոնղոլ լինելը չի կարող հաստատել: Որովհետեւ մասամբ մոնղոլ դիմագծութեան և մասամբ էլ կովկասեան դիմագծութեան տէր լինելով չէ պարզում այն հարցը թէ թր ճիւղին են իսկապէս պատկանում նրանք: Արդեօք Ատրպատականում, Անատոլիում և նոյնիսկ Թուրքեստանում մեր կողմից այս ուղղութեամբ կատարուած դիտական հետազոտությունները վերջ ի վերջոյ ի՞նչ արդիւնք պէտք է տան: Անատոլիի ներքին մասերում այնպիսի վիլայէթներ կան, ուր թուրքերի մեծ մասը «Թաթարական», այսինքն մոնղոլական դիմագծութիւն է կրում: Այս բանը այդ տեղերում ման եկողներին լաւ յայտնի է:

Վերևում ասացինք որ կար և մի երկրորդ մտածելու կերպ:

Քանի որ, ամեն կողմերում, կէս առ կէս երկու տեսակ դիմագծութիւններն էլ կրողներ գոյութիւն ունեն, այս դէպքում ազգաբանական և մարդաբանական տեսակէտով՝ թր դիմագծութիւնը ամենից աւելի թրքական պիտի համարել. մոնղոլներինը թէ հնդ-եւրոպացիներինը:

Հարցը չափազանց դժուար է լուծել: Որովհետեւ լուծել կարողանալու համար, մենք պէտք է կատարելապէս տեղեակ լինէինք, թէ սրանից երկու, երեք հազար տարի առաջ, ազգի վիճակ ստանալով՝ Բայկալի շուրջը, Օրխան և Ենիսէյ գետերի ափին և Ալաայ լեռների ստորոտում ապրող և թուրքերի ամենավաղեմի և ամենահարազատ մասը կազմող «Թուրքու—եէ» ժողովուրդը ի՞նչ տեսակ դիմագծութիւն ունէր և ի՞նչ տեսակ զանկոսկր: Եթէ կարելի լինէր, պատրաստութիւն տեսնելով կերթայինք հետազոտություններ կը կատարէինք: Կարող է պատահել որ նախնական ժամանակներում էլ գոյութիւն ունէին երկու դիմագծութիւնները... Սակայն դիմագծութեան հարցը վճռական կարեւորութիւն չունի. միայն նրանով չէ կարելի ամեն ինչ լուծել:

Թուրքերը՝ քրիստոսական թուականներից 2000 տարի առաջ պատմութեան ասպարէզ իջնելով՝ այդ ժամանակից ի վեր, ցեղի և լեզուի տեսակէտից անթիւ ու զանազան ազդեցութեան են ենթարկուել: Ասիական մասի արեւելքում մանջու, մոնղոլ և չին, իսկ արեւմուտքում կովկասեան երակի պատկանող արիական և սեմական ժողովուրդների, այսինքն հնդիկների, պար-

սիկների, սլաւոնների, չէրքէղների, քիւրդերի, արաբների և ուրիշ ցեղերի հետ խառն լինելով՝ այսօր ամեն կողմերում ձևով, տեսակով և լեզուով չափազանց զանազան մի ժողովուրդ են կազմում:

Մի կողմից՝ ինչպէս պատմութիւնը ցոյց է տալիս, կան ժողովուրդներ, որ սկզբից թուրք լինելով, յետոյ թուրքերէնը ամբողջապէս մոռացել և սկսել են գոյութիւն ունեցող ուրիշ ժողովուրդներէ լեզուով խօսել. իսկ միւս կողմից՝ իրանց նախկին լեզուն թողնելով՝ թուրքերէն խօսել սկսող և այդպէս մեր մէջ խառնուող և մեղանից բոլորովին տարբեր ժողովուրդներ կան:

Մարդաբանները առաջինների օրինակ են համարում խաղաղները, այժմ սլաւոններէն խօսող բուլղարները, մաջարները, հետ խառնուած հոները, հնդիկ ժողովուրդների հետ խառնուած մի քանի ցեղերը: Իսկ երկրորդ տեսակ ժողովուրդների օրինակ համարում են իբրև թէ սկզբից «ֆին և ուզը» խմբին պատկանող բաշկիրները, Աւղանիստանի և Թուրքեստանի կողմերը բնակութիւն հաստատած՝ ծագումով պարսիկ՝ «սարթերը», որոնք այսօր ամբողջապէս թուրքերի հետ խառնուելով թուրքերէն են խօսում:

Բացի այդ՝ կայ և մի ուրիշ՝ ուշադրութեան արժանի խնդիր. կան գէպքեր, ուր թուրք ժողովուրդների մի մասը իւրացրել է միւս մասը:

Ուրեմն իմ այս բոլոր ասածներից պէտք է եզրակացնել, որ ոչ տեսակը, ոչ դիմագծութիւնը, ոչ լեզուն, ոչ սովորութիւններն ու բարքերը և ոչ էլ կրօնն ու հաւատքը՝ առանձին առանձին չենք կարող հիմք ընդունել գիտնականօրէն բացատրելու և դասակարգելու համար թուրքերին: Պէտք է գուցէ պատմական, աշխարհագրական և այլ պայմանների հետ մեր վերև յիշած բոլոր պայմանների ամբողջութիւնը նկատի առնելով՝ թուրք ժողովուրդների շարքում թուրքական նմոյշ, տիպ ընդունել այն, որ լրացնում է բոլոր տրուած պայմանները: Իսկ մնացեալները պէտք է որոշել աստիճանական կարգով, նայած՝ թէ որքան մօտ են նմոյշ, տիպ ընդունածին: Եւ յետոյ տեսնել թէ նրանցից որոնք և ի՞նչ աստիճան թուրք անունը կրելու արժանի են: Ահա այս կերպով միայն կարելի է լուծել հարցը:

III

Բուն խնդրի մէջ չմտած՝ «մոնղոլ», «թաթար», «թուրք»

և «թուրօկ»-ի նման որոշ նշանակութիւն ունեցող խօսքերի մասին մի միտք յայտնենք:

Այսօր «մոնղոլ» բառը՝ ազգագրական դիտութեան համաձայն մի որոշ ժողովուրդի յատկացուած բառ է: Յետագայում, ինչպէս պիտի ցոյց տանք, այս ժողովուրդը՝ թուրքերից տարբեր լինելով հանդերձ, մի մեծ ձիւղն է կազմում «ալտայ» կամ «զուրանական» ժողովուրդների, որոնց շարքին է պատկանում և՛ թուրք ժողովուրդը: Մոնղոլները այս կերպով թուրքերի հետ առնչութիւն ունենալով հանդերձ, վերջիններից տարբեր են: Եւ ոսկայն թուրքերի մի մասին, որ մեծ դեր է խաղացել քաղաքակրթութեան պատմութեան մէջ, սխալմամբ մոնղոլ անունն է տրուած:

Թիմուրլէնկի եղբոր որդու՝ Բաբէր միրզայի՝ Հնդկաստանում հիմնած հոյակապ ու շքեղ պետութեան «մեծ մոնղոլների պետութիւն» անունն է տրուած, ինչ որ բացարձակապէս սխալ է:

Թիմուրը՝ «Բէլրլաս» անուն թուրք աշիրէֆներից մէկին էր ուսականում. եթէ թուրքերէնից տարբեր մի որեւէ լեզու գիտէր, այն էլ պաբսկերէն էր որ յետոյ սովորեց: Մոնղոլերէն չգիտէր:

Իսկ ինչ վերաբերում է Բաբէր միրզային, այս անձը նոյնքան օժտուած էր գրչի կարողութեամբ, որքան պետութիւն կազմելու և վարչական գործեր վարելու շնորհքով: Հօրեղբոր որդուն, Օգուլ բէկի նման ամբողջապէս թուրքերէն գրած նրա պատմական և գրական հեղինակութիւնները այժմ իսկ գոյութիւն ունին: Այս մեծ ալմէքով գործերի շարքում պէտք է թուել «Վակայի» — պատմական դէպքեր — և կամ «Բաբերնամէ» անուն գործը, և Բաբէր միրզայի անձամբ գրի առած մի ինքնակենսագրականը ¹⁾: Այս գործի մի քանի տեղերում հեղինակը մոնղոլերէնի անձանց լինելը խոստովանում է, և յայտնում է, որ իր հայրերի և պապերի նման ինք էլ թուրք է և նոյնիսկ իր թրքութեամբ պարծենում է: Նրա Հնդկաստանում գտնուող սերունդի «մեծ մոնղոլներ» յորջորջումը մի թիւրիմացութեան արդիւնք է, և այդ թիւրիմացութիւնը հերոպացիների մէջ էլ մուտք է գործել շնորհիւ մի քանի պարսիկ պատմաբանների: Այսօր, երբ հերոպացի արեւելագէտները, համարեա ամբողջապէս, իրանց սխալը հասկանալով ուղղել են, մենք ինչո՞ւ մեր նախկին սխալ հասկացողութեան մէջ հաստատ ենք մնում:

1) Պաւլադէ (?) Կուբտիլ անուն մի ֆրանսիացի գիտունի կողմից ֆրանսերէնի է թարգմանուած այս գործը:

Հնդկաստանում, խոշոր պետութիւններ հիմնող թուրքերի վրայից այդ «մոնղոլ» անունը ¹⁾ վանելուց և միայն պատկանեալ ժողովուրդներին յատկացնելուց յետոյ, այժմ դանք «թուրք» և «թաթար» կոչումներին:

«Թաթար» յորջորջումը կասկածելի, անորոշ, ոչ-գիտական լինելով և դիւրահաւան ու տգէտ ամբոխի կողմից միայն զործածուած լինելու՝ պատճառով՝ թրքաբանները նրա մէջտեղից վերացուելուն հետզհետէ կողմնակից են դառնում: Որովհետև «Թաթար» բառը, բացի իր իսկական իմաստից, երեք չորս առժամը էլ է զործածուած, որոնց բոլորը սխալ են:

Նախ քննենք այդ սխալ առումները:

Հին պատմագիրներից և արեւելագէտներից ոմանք՝ այդ երկու կոչումներն էլ (թուրք և թաթար բառերը) իբրև հոմանիշ և կատարելապէս միմիանց համարժէք զործ են ածել. ինչ որ, աւելորդ է ասել, մի մեծ սխալ է: Ուրիշներ, մասնաւորապէս Փրանսիացի հին հեղինակների մի մասը, այնպէս են կարծել որ իբրև թէ մոնղոլ, տուրքուղ (մանջու), տիբեթցի, թուրք և այլն միեւնոյն ճիւղից են և կարելի է բոլորին «թաթար» առնուանել, այսինքն թէ «Թաթար» կոչումը այնքան ընդարձակ է, որ թուրք, մոնղոլ և ուրիշները պարունակում է իր մէջ: Ահա այս թիւրիմացութեան պատճառով է որ Deguignes անուն պատմագիրը այս տեսակ մի տխուր է տուել իւր երկասիրութեան. *Histoire générale des Nuns, des Turcs, des Mogols et des autres Tartares* (Հնդհաստուր պատմութիւն հոնների, թուրքերի, մոնղոլների և այլ թաթարների): Վերոյիշեալ Փրանսիացի հեղինակի համաձայն այդ յիշատակուած բոլոր ժողովուրդներն էլ թաթար են:

Գիտնականների մի երբորդ դասակարգ էլ կայ, որ սրան բոլորովին հակապատկերը եղող մի սխալի մէջ ընկնելով՝ թուրք բառը ընդունում է ընդհանուր, ընդարձակ իմաստով և թաթարներին համարում է թուրք երակի մի ճիւղը: Սրանց մասին կարող ենք ասել, որ եթէ «Թաթար» խօսքով ուզում են հասկանալ այն թուրքերը, որոնց, ուրիշները սխալմամբ «թաթար» անունն են տուել, այն ժամանակ՝ առարկութիւն պէտք է անել միայն «Թաթար» կոչումի մասին: Իսկ եթէ նրանց նպատակն է ակնարկել ծագումով մոնղոլ եղող թաթարներին, այդ դէպքում, բնական է, այդ էլ մի մեծ թիւրիմացութիւն է:

1) Թուրքմէնների և Ատրպատականի թուրքերի մի մասը, օսմանցիներ և արաբներ կողմից սխալմամբ «աջէմ» — պարսիկ — են անուանւում, ինչ որ նորնպէս անհրաժեշտ է ուղղել:

Որովհետև, ինչպէս առաջ յայանեցինք, պատմութիւնը ցոյց է տալիս, որ ոչ «թաթար» անուանուող մոնղոլները «Տիան-շան» լեռներից այս կողմ գաղթել են, և ոչ էլ Ռուսաստանի և Սիբիրիայի հարթութիւններում ապրող թուրքերը թաթար են: Ընդհակառակը դրանք կազմում են թուրքերից, ամենաթուրք հատուածը: Հանգուցեալ Շէմս-էդդին Սամի բէյի «Գամուսը թիւրքի»-ի մէջ նմանապէս սխալ է սպրդած այս մասին: Սամի բէյը այնպէս է կարծում, որ նախնական ժամանակներում, թաթարները՝ թուրք ժողովուրդներից աւելի փոքր մի ժողովուրդ էին կազմում, և նրանց անունով է որ բոլոր մոնղոլները թաթար կոչումն ստացան:

Մի քանի ենթադրութիւնների համաձայն «թաթար» խօսքը ծագում է առել մանջուրիացիների «թա-թա» բառից, որ նշանակում է աղեղածիզ: Միւս կողմից՝ քրիստոսական թուականների իններորդ դարում գրուած չինաց պատմական գրքերում երկու խօսքեր կան, որ «թա-թա» և «թա-զէ»-ի նման են կարդացւում: Ինչպէս որ արարները՝ ծագումով և ցեղով իրանց անծանօթ ոչ-սրբար մահմեդական ժողովուրդները առ հասարակ «ալէմ» — սլարսիկ — էին յորջորջում, այնպէս էլ չինացիները՝ Ամուր գետի ափին բնակութիւն հաստատած, թուրքերի հետ ոչ մի նմանութիւն, ոչ մի առնչութիւն չունեցող, և իրանց անծանօթ շատ ժողովուրդներին «թա-թա» կամ «թա-զէ» անունը տալիս էին: Բացի այդ՝ ինչպէս որ արաբները «ալէմ» բառը յատկացնում էին մասնաւորաբար Պարսկաստանի Փարս ժողովուրդներին, այնպէս էլ չինացիները Դեղին գետի եղերքներում բնակուող մի մոնղոլ ժողովուրդի՝ առանձնապէս «թա-թա» անունն էին տալիս: Եւ որովհետև չինական որոշ խօսքերի վանկերի վերջը երբեմն «ը» տառն էին աւելացնում, «թար-թար» կամ «թա-թար»-ի ձևով էլ էր արտասանւում: Ահա Դեղին գետի եզերքում բնակուող և «թաթար» անուանուող այդ մոնղոլները՝ չինացիների հետ մի պատերազմում, յաղթանակ տանելով՝ Կորի անապատից անցել և հասել են մինչև Տիան-շան լեռան ստորոտները. բայց այդ տեղից երբէք, ոչ մի գէպքում, աւելի առաջ չեն եկել:

Զինվորի մայրը ահա այս մոնղոլներից էր: Զինվորի յաղթանակներից, աշխարհակալութիւններից յետոյ, թուրք ժողովուրդներին և երկրներին մի մասը՝ այդ աշխարհակալի բանակներում հրամանատարութիւն անող թաթար (մոնղոլ) զինուորականների անունով սխալմամբ թաթար կոչուեցան: Այդ սխալի գլխաւոր պատճառը սլաւները եղան: Որովհետև սրանք՝ Զինվորի բանակի՝ ընդհանուր մեծամասնութեամբ թուրք լի-

հեղը չհասկանալով՝ հրամանատարներին միայն նկատի էին ունեցել: Մինչդեռ աշխարհակալուած երկրների դուրանական ժողովուրդը արգէն սկզբից, ծագումից իվեր թուրք, այդ երկիրները աշխարհակալող ղինուորները թուրք, նրանց հտեից եկող հաստատուող գաղթականները թուրք, ինքը՝ Ջինգիզը՝ թուրք, թուրքին՝ նրա մի մասին, մի տեսակին, պատմական մի շրջանին իր անունը տուող որդին Ջղդայը կամ Էօզբէկը, թուրքերին անունը փայլեցնող միւս որդին՝ Ջուչի՝ թուրքի գաւակ թուրք էին: Ամենքին յայտնի է նոյնպէս, որ Ջինգիզը՝ պետական գործերի համար ոչ թէ մոնղոլների, այլ օյդուրների, այսինքն նախնական թուրքերի պիրն ու լեզուն գործ էր տնում:

Շատ չանցած՝ բանակի մոնղոլ ծագումից եղող հրամանատարներն ու առաջնորդները՝ թրքական ծովի մէջ ամրոցաւէս անյայտացան և ոչ մի հետք չթողեցին. բայց այնուամենայնիւ, թաթար անունը օտար ժողովուրդների լեզուի մէջ պահպանուելով մնաց: Սակայն այս սխալը՝ շնորհիւ ազգազրական և լեզուաբանական գիտութիւնների՝ վերջին ժամանակներում հետզհետէ մէջտեղից վերանալու վրայ է, որովհետեւ յիշեալ գիտութիւնները օրէցօր յառաջագիմութեան մի նոր շրջանի մէջ են մտնում: Կամայ կամայ հասկացուում է, որ «թաթար» կոչուող թուրքերը ամենահարազատ թուրքերն են և «թաթար» անունը յատկացուում է վերեւում յիշուած մոնղոլներին և տունդուդներին:

Սխալմամբ թաթար կոչուող թուրքերը հետեւեալ երեք մեծ ճիւղերից են բաղկացած.

1) Սիրիերիայի ընդարձակ դաշտերում հարիւրաւոր այլ և այլ անունների տակ ապրող ընտանիքներն ու աշիրէթները, որոնք գլխաւորաբար ծագում են ժամանակին՝ «Ղըզլ օրդու» — Կարմիր բանակ — անուն կառավարութիւնը կազմող կըպչակ թուրքերի սերնդից:

2) Եւրոպական Ռուսաստանի թուրքերը. սրանք կամ կազանցիներն նման կըպչակ սերնդից (ազգագրական գիտութեան տեսակէտից «բրախիսէֆալ» լինելով մեծամասնութեան ղիմադութիւնը եւրոպացիների յատուկ ղիմադութիւն է) կամ ղրիմցիների նման նողայ կամ այլ նախկին թուրքերի սերնդից են:

3) Կովկասի հարեան ժողովուրդների կողմից սխալմամբ թաթար անուանուող թուրքերը, այսինքն Կովկասի լեռնաշղթայի աջակողմում բնակութիւն հաստատած Ատրպետականի թուրքերը, որոնք բաղկանում են շիրվանցիներից, բաղուցիներից, դարա-

բաղցիններից, դանձակեցիներից, երևանցիներից և ուրիշ թուրքերից (Երևանի արևմտեան ձախակողմում բնակուող թուրքերն էլ նրանցից են) և յիշեալ լեռնաշղթայի ձախակողմում գլխաւոր նողայները, բլղարները և մասամբ լեզգիների հետ խառնուած կումուկները և արտաքուստ շատ չէրքէզների նմանուող և բոլորովին չէրքէզացած կարաբղաները և այլն:

Գանք այժմ «թուրօկ» բառին:

Ամենայայտնի թրքաբանները՝ մի պատմական թիւրիմացութեան արդիւնք եղող «թաթար» կոչումը չընդունելով՝ այդ անուան տակ յիշուող թուրքերի՝ իսկական թուրք լինելը վճռապէս հաստատել են: Բայց գերմանացի մի քանի «թրքագէտ»ներ՝ ցեղական և լեզուական տեսակէտից ամենից աւելի արարական, պարսկական և եւրոպական ազդեցութեան ենթարկուած, և իբր թէ այդ կերպով թրքութիւնից մի քիչ հեռացած՝ արեւմտեան, այսինքն օսմանեան թուրքերին՝ միւսներից զանազանելու համար, մի այլ խօսք հեղինակել են: Ինչպէս յայտնի է, թիւրքիայում, առհասարակ ժողովուրդը ուսմաներին անուանում է «մոսկով», այդպէս էլ ուսն ժողովուրդը՝ ընդհանրապէս, օսմանցիներին՝ մի սխալ կոչումով, յորջորջում է «թուրօկ» կամ «թուրկի»:

Ահա այսպէս, գերմանացի գիտնականներից ոմանք՝ թուրք անունը՝ վերեւ յիշուած թուրքերին և Միջին-Ասիայի թուրքերին յատկացնելով՝ առաջարկեցին օսմանցի թուրքերին «թուրօկ» կամ «թուրկի» անունը տալ:

Սակայն, այդ տեսակ մի առաջարկը, ինչպէս նոյնիսկ օսմանցի թուրքերի կողմից ծիծաղ պիտի առաջ բերէ, նոյնպէս գիտնականների ընդհանուրի կողմից ընդունելութիւն չպիտի գտնէ: Ռուսաստանի ամենամեծ ազգաբան գիտունները և պատմաբանները՝ յանուն իսկական գիտութեան, այդ մտքի դէմ սաստկապէս առարկեցին: Եւ արդէն գերմանացի գիտնականների՝ այդպէս երկու տեսակ կոչում ստեղծելու անհրաժեշտութեան համար առաջ բերած պատճառները շատ թոյլ և անտրամաբանական են: Որովհետեւ այսօր բոլոր թուրք ժողովուրդները օսմանցիների նման՝ լեզուական և ցեղական տեսակէտով արաբ, պարսիկ և այլ ազդեցութիւնների ենթակայ են: Համարեա չկայ մի թուրք ժողովուրդ, որ այդ ազդեցութիւններին ենթակայ չլինի: Եթէ կան իսկ, դրանք էլ եակուտների նման կռապաշտութեան մէջ մնացած և կամ բրիտանէութիւն ընդունած փոքրիկ ցեղերից, ճիւղերից են բաղկացած: Ուրեմն յիշուած տարբերութիւնը՝ արտաքին ազդեցութեան չափի, շատութեան և քիչութեան մէջ է միայն, իսկ ինչ վերաբերում է

տարբերութեանը՝ նա առաջ է գալիս, նայելով թէ քաղաքակրթութեան և առաջադիմութեան հր աստիճանների վրայ կանգնած են թուրք ժողովուրդների իւրաքանչիւրը:

Թարգմ. Տ. Զաւէն

(Կը շարունակուի)

ԱՄՊԻՆՎԱՆԻ ՓԱՐՈՍԻ ՊԱՅԱՊԱՆԸ

Հենրիկ Սենկեվիչի

I

Պանամայի մօտ, Ասպինվալի փարոսի պահապանը անհետ կորած լինելով, ենթադրուում էր, որ մի փոթորկի ժամանակ, դժբաղդը փարոսի գտնուած քարաժայռի մէջն ծալքը առաջ էր գնացել ու ալիքների զոհ դարձել:

Այդ պատճառով պահապանի պաշտօնը բաց էր մնում, բայց անհրաժեշտ էր կարելիին չափ շուտով նշանակել մէկին, որովհետեւ նաւազնացութիւնը վտանգաւոր էր այդ կողմերում, և Նիւ-Եօրկից Պանամա գնացող նաւերը չէին կարող Մասկիդո-Բայի մէջ գտնուող բազմաթիւ ժայռերին զարնուելով՝ փշրուելու վտանգին ենթարկուած մնալ:

Մանուանդ, գիշեր ժամանակ, յաճախ մառախուղը պատած է լինում այս արեւադարձային կիզիչ արեգակից տաքացած ջրերում:

Այդ, այս նաւարկութեան վտանգաւոր մասերում նաւերին ուղեցոյց լինելու ընդունակ միակ առաջնորդը Ասպինվալի փարոսն էր:

Պանամայում ալրող Միացեալ Նահանգների հիւպատոսի պարտականութիւնն էր գտնել մի նոր պահապան:

Բայց այդ պարտաւորութիւնը կտտարել հեշտ չէր: Նախ պէտք էր տնտիջապէս, այսինքն տամներկու ժամուայ մէջ նշանակուէր նոր պահապանը:

Եւ յետոյ անհրաժեշտ էր գտնել չափազանց լուրջ և իր

պատասխանատուութեան խորապէս գիտակից մի մարդ: Անհնար էր ուրեմն առաջին պատահողին ընդունել և վստահել լաղդին:

Այս դործում ամենից աւելի մտահոգութիւն պատճառողն այն էր, որ ոչ մի թեկնածու չէր ներկայանում:

Փարոսի կեանքը սարսափելի տաժանելի է և անհրապոյր՝ Հիւսիսի մարդկանց համար, որոնք ծուլասէր են և մասնաւորապէս փայփայում են թափառաշրջիկ կեանքի ազատութիւնը:

Ոչ ոքի գաղտնիք չէ, արդարեւ, որ փարոսի պահապանը համարեա մի իսկական բանտարկեալ է, որ բացի կլրակիից ուրիշ օրեր չի կարող հեռանալ իր քարաժայռիցը: Ամեն օր Ասպինվալից մի նաւ է գալիս նրա պարէնը բերելու, և անմիջապէս վերադառնում է:

Փարոսի աշտարակը շինուած է մի ակրոն (acre) տարածութիւն ունեցող ժայռոտ, փոքրիկ կղզեակի վրայ:

Պահապանը ապրում է փարոսի մէջ: Օրուայ ընթացքում, զանազան գոյներով զրօշակներ են պարզում օդաչափի փոփոխութիւնները ցոյց տալու համար:

Երեկոյեան, պահապանը վառում է փարոսի կանթեղը. բայց դրա համար պէտք է բարձրանայ չորս հարիւր քայլ, որպէսզի հասնի աշտարակի գագաթը: Նոյն իսկ ցերեկը, երբեմն ստիպուած է անել այդ տաժանելի վերելքը:

Հեշտ է, ուրեմն, հասկանալ թէ ի՞նչ շփոթութեան մէջ էր դտնւում Պ. Իսահակ Ֆալկոնըրի՞նք այս հաղուագիւտ պահապանի տեղը մարդ գտնելու համար: Հասկանալի է նաեւ թէ ի՞նչու հափազանց յափշտակուեց, երբ անյուսալի կերպով իրան ներկայացաւ մի թեկնածու:

Ներկայացողը մի ծերացած մարդ էր, մօտ եօթնասուն տարեկան, բայց դեռ թարմ ու կայտառ, և նախկին զինուորականի քայլուածքով: Մազերը բոլորովին սպիտակել էին, իսկ գոյնը դաղթածինի նման պղնձագոյն էր: Կապոյտ աչքերը վճռականապէս ցոյց էին տալիս, որ Հիւսիսի ժողովուրդներից ոչ մէկին էր պատկանում: Հէնց առաջին րոպէից նա դուր եկաւ Փալկոնրի՞նքին: Մնում էր միայն հարցափորձել:

—Ո՞րտեղացի էք:

—Լեհաստանցի եմ:

—Ո՞րտեղ էք աշխատել վերջին ժամանակներում:

—Մի տեղ, յետոյ մի տեղ, և դարձեալ մի ուրիշ տեղ:

—Փարոսի պահապանը միշտ միեւնոյն տեղում մնալու է:

—Ի՞նչ էլ ցանկացածս այն է, որ մնամ սուանց երբէք փոխ-

ուելու:

—Զինուորական ծառայութեան մէջ եղե՞լ էք, ձեր պատ-
ուաւորութիւնը հաստատող վկայագրեր ունե՞ք:

Այս հարցի վրայ ծերունին հանեց գրպանից թղթեր ու
մի կտոր դրոշի նմանող հին մետաքսեայ մի թերթիկ:

—Ահաւասիկ, սասց, իմ վկայաթղթերը: Այս խաչը սաա-
ցայ 1880-ին, երկրորդ խաչը սպանիական Կարլիստական պա-
տերազմում եմ ստացել. երրորդը Քրանսիական Պատուոյ Լէ-
դէօն է, չորրորդը ինձ ընծայուեց Ունգարիայում: Յետոյ ես
պատերազմեցի Հարաւացիների դէմ Ամերիկեան Նահանգներում,
ուր խաչի կամ այլ պարգեւաբաշխութիւն չկայ:

Փալկոնըրիճը թղթերը վերցրեց ու սկսեց կարդալ

—Հը, Սկավինսկի՞. այս է ձեր անունը:

«Սուինամարտի մէջ երկու դռնակ վերցրի:»

—Դուք մի քաջ զինուոր էք...

—Եւ փարոսի մի լաւ պահապան կը լինեմ:

—Գիտե՞ք որ օրական մի քանի անգամ աշտարակի չորս
հարիւր աստիճաններից պիտի բարձրանալ եւ իջնել: Ծունկեր-
նիւզ ուժե՞ղ են:

—Կալիֆորնիայի ու Արեւելքի մէջ տարածուող այն ընդար-
ձակ դաշտավայրը ոտով եմ անցկացել:

—Ծովային ծառայութիւնից հասկանում էք:

—Երեք տարի ծառայել եմ մի կիտորսանաւի վրայ:

—Տեսնում եմ, որ դուք ամեն մի գործի մէջ մի քիչ փորձ
արել էք: Միակ բանը որ ինձ տատանուել էր տալիս՝ դա յա-
րանութիւն ձեր մէջ բացակայումն է: Ինչո՞ւ համար:

Ծերունին գլուխը մի քիչ խոնարհեցրեց:

—Դրա պատճառը հաւանականաբար իմ բաղդն է եղել:

—Վախում եմ որ մի գուցէ ձեր ծերութիւնը արդելք լինի
փարոսի պահպանութեան համար:

—Ո՛հ պարոն, բացազանչեց խեղճ մարդը մի այնպիսի
յուզմունքով՝ որ ձայնը դողդացնում էր. Հափաղանց տառա-
պանք կրեցի. ինչպէս գիտէք, շատ սոսկալի վիճակներ անցկա-
ցրի, եւ այս պաշտօնը պիտի լրացնէ իմ ամենարուսն ցանկու-
թիւնը: Ծերացել եմ, եւ անհրաժեշտ է որ մի տեղ վերջնականա-
պէս հաստատուեմ: Շատ երջանիկ պիտի լինիմ, երբ կարողա-
նամ ես ինձ ասել—«այստեղ դու պիտի կարողանաս մնալ. վեր-
ջապէս հասել ես հանգստութեան նաւահանգիստը:» Ո՛հ, պա-
րոն, իմ երջանկութիւնը կախուած է այժմ միայն ձեզանից:
Այսպիսի մի բարեպատեհ առիթ գուցէ այլևս չի պատահի, չէ՞
որ ձեր այս պաշտօնը բացուած օրը իմ Պանամայում գտնուե-
լը մի բաղդ է. եթէ դուք մերժէք ինձ այս վերջին ապաւէնը,

ես կորած եմ: Ես մի համեստ մարդ եմ ու այս թափառական կեանքից յոգնած, խոնջած:

Ծերունու կապոյտ աչքերը պաղատանքի այնպիսի արտայայտութիւն ունէին, որ Ֆալկոնբերիճի բարի սիրտը զգածուեց:

— Լաւ, պատասխանեց, վերցնում եմ ձեզ: Նշանակում եմ Ասպլինվալի փարոսի պահապան:

Ծերունու աչքերը ուրախութեան աննկարագրելի ճառագայթով լուսաւորուեցին:

— Շնորհապարտ եմ ձեզ:

— Կարող էք գնալ այսօր փարոս:

— Անշուշտ:

— Ուրեմն, ցտեսութիւն: Յիշեցէք միայն որ ամենափոքրը զանցատութիւնը ձեր ծառայութեան մէջ, անմիջապէս ձեր պաշտօնանկութիւնը կը հրաւիրէ:

— Հասկանալի է:

Նոյն երեկոյեան, երբ արեգակը Պանամայի ետեւ մայր մտաւ ու անարեւ օրուան յաջորդեց առանց վերջալոյսի մի գիշեր, տեսնուեցին փարոսի փայլուն ճառագայթները՝ որոնք, ինչպէս ամեն օր, տարածում էին իրանց լոյսը ծովի վրայ: Նոր պահապանը՝ ուրեմն, իր զիրքումն էր:

Գիշերը մեղմ էր, բոլորովին մեղմ ու լսիկ, մի իսկական արևադարձային գիշեր:

Նօսը, թեթև գազից գոյացած քօղի նման մի թափանցիկ մշուշ՝ օդի մէջ պար էր գալիս, ու բարձրանալով լուսնի շուրջը, կազմում էր մի գունապեղ ծիրանիի նման բոլորակ: Ծովը մեղմիկ ծփում էր, որովհետեւ ջուրը բարձրանում էր:

Կապտերը շրջապատող փոքրիկ պատշգամբի վրայ կանգնած Սկավինսկին, ներքեից նայելով՝ երևում էր որպէս մի փոքրիկ, սև կէտ: Այդանդ նա աշխատում էր կենդրոնացնել իր ժողովրդութիւնները, բայց հոգին գեւեւ այնքան յուզուած էր, որ չէր կարող հնարանգել իր կամքին: Նրան թւում էր, թո՛ւ ինքը նման է մի հալածուած ու նեղը մնացած էր անասունի՝ այս անմերձեանի քարաժայռի վրայ վերջապէս գտել է ասլահով ապաստանը: Վերջապէս հնչել էր ուրեմն իր հանգստեան ժամը:

Պաղպղութեան ու հանգստութեան մի անբացատրելի զգացմունքով զեղում էր հոգին, մտածելով որ աշխարհից անջատուած այս փոքրիկ կղզեակի մէջ հանդիստ ու խաղաղ ապրելով՝ կարող էր միայն վերյիշել իր թափառական կեանքի արկածները և կրած գոթաղբութիւնները:

Եւ իսկապէս, նման չէր կայմերը, կապանքը ու առա-

գաստները փոթորկի ժամանակ կորցրած նաւն՝ որի վրայ բոլոր հողմերը անսանձ մրրկում են, և որը իր կայմ ու կաղմածից զրկուած լինելով հանդերձ, խնդրում, որոնում է մի ապաստան փոթորիկների դէմ:

Եւ այժմ, այս հաստատ կայանը ապագայի բոլոր հոգսերից ազատ, անվրդով մի կեանքի յայս էր ներշնչում նրան:

Նրա կեանքի մի քանի փոփոխութիւնների մասին Յալկոն-րիճի պատմածները բաւական չէին պատկերացնելու նրա ամբողջ կեանքը:

Կարելի էր ասել որ մի դառը ճակատագիր նրան հալածում էր ամեն տեղ:

Հազիւ թէ մի տեղ վրանը տնկում և օջախը վառում էր, երբ մի աղիտաբեր քամի ուժգնապէս փչելով պոկում, քանդում էր վրանը ու ցրում, տանում էր վառուած օջախի կրակը:

Այնտեղ, այդ փոքրիկ պատշգամբի վրայ կանգնած՝ փարոսից լուսաւորուած ալիքների վրայ աչքերը յառած՝ վերջիշից ամբողջ կեանքը, տառապանքի և յուզմունքի մի ամբողջ շղթայ կազմող կեանքը:

Աշխարհի չորս մասերումն էլ բոյն էր դրել: Աշխատասէր և ուղղամիտ մարդ էր, և բոլոր այն վիճակների մէջ՝ որոնց ինք՝ տիրացել էր, շատերը կարող էին հարստութիւն դիզել, բայց հակառակ բոլոր բախտաւոր նախատեսութիւնների, ամեն գործ անյաջողութեամբ էր վերջացել նրա համար: Եղել էր Աւստրալիայում ոսկու հանքերի մէջ հանքագործ, Ափրիկէում՝ մարգարտորս, Հնդկաստանում՝ կարարինաւոր:

Կալիֆորնիայում հիմնեց մի ագարակ, բայց երաշտութիւնը քանդեց: Փորձեց Բրազիլիայի ներքին մասերի վայրենի ցեղերի հետ առևտրական գործ ստեղծել, բայց իր ապրանքատար նաւերը Ամազոնի վրայ նաւաբեկուեցին: Առանց դէնքի, համարեա մերկ՝ ստիպուեց ապրել շաբաթներով անտառում, վայրի պտուղներով սնունդ ստանալով ու ամեն բոպէ կատաղի զազաններից յօշոտուելու վտանգին ենթարկուած: Հիմնեց մի դարբնոցի գործարան Ելէնա-Արկանսազում, բայց մի հսկայ հրդեհ ամեն բան, մինչև իսկ ամբողջ քաղաքը լափեց ու մոխրակոյտի վերածեց:

Ռոշէօզի լեռներում հնդիկների ձեռքն ընկաւ. կանառացիները ազատեցին նրան. կարելի է ասել հրաշքով ազատուեց մահից:

Յետոյ, Բահիայի և Բորդօի մէջտեղ երթևեկող մի նաւ նստեց: Մի կիտորսանաւ էլ վարձեց ու կիտորսութեամբ զբաղուեց, բայց երկու նաւերն էլ փոթորկի բռնուելով ծովատոյզ

եղան: Հավանայում ունէր սիգարի մի գործակալութիւն, բայց ընկերը նրան կողոպտեց տարափոխիկ հիւանդութիւնից բռնուած ժամանակ:

Վերջապէս հասաւ Ասպինլալ, ուր թւում էր թէ իր գրգռողութիւնները վերջ պիտի գտնէին: Որովհետեւ, թվ կարող էր մերձենալ աշխարհից անջատուած այս քարաժայռին, նրան չարիք հասցնելու համար: Անշուշտ, ոչ ջուրը, ոչ հուրը, և ոչ մարդիկ ոչինչ չէին կարող անել: Ասենք, մարդկանցից այնքան էլ շատ տառապելու առիթ չէր ունեցել: Յաճախ, աւելի լաւ քան վատ ընկերների էր հանդիպել, բայց և այնպէս, կարծես թէ աշխարհի չորս տարերքները կատաղած էին նրա դէմ:

Այս բոլոր գրգռողութիւնները բացատրելու համար, յաճախ նրան կրկնում էին թէ բազմ չունի: Վերջ ի վերջոյ նա եկել էր այն հաւատքին, որ ճակատագիրը անընդհատ իրան հալածելու է ամբողջ կեանքումը: Սակայն, երբէք չվհատուեց. հնդկիկ համբերութիւն ու տոկունութիւն ունէր:

Այս մարդը՝ որ շատ անգամ դիմագրաւել էր մահը, երկխայի վախով սիրտ ունէր, որովհետեւ կրել էր մարդկային բոլոր ցաւերը:

Կուբայում տարածուած տարափոխիկ հիւանդութեան ժամանակ ինք էլ վարակուեց, որովհետեւ իր ունեցած խնկին/ի/ ամբողջ պաշարը բաժանել էր բոլոր հիւանդներին:

Ապագայի համար ունեցած գերագոյն հաւատքը միայն պաշտպանում էր նրան: Ձմեռները անցկացնում էր ամառուայ համար ծրագիրներ կազմելով, ծրագիրներ՝ որոնց յաջողութեանը միայն ինքն էր հաւատում: Բայց զալիս էր ամառը, անցնում էր և ձմեռը, և Սկավինսկին ծերանում էր առանց վիճակը Դարեփոխուելու: Այնուամենայնիւ սկսել էր կորցնել իր տիտանական էներգիան, ու ծերունի խտտասիրտ զինուորը՝ ոչ մի բանի չյանգելով, լալիս էր ունայնութեան համար: Յետոյ, հայրենիքի կարօտը տիրեց այս մարդու զգացումներին. մի ծովածիժառի տեսքը, լեռան ձիւնը, մի մեղամաղձոտ նուազածութիւն, ամեն ինչ յիշեցնում էին նրան հայրենիքը ու ծնեցնում էին նրա մէջ իդէալական խաղաղութեան ըոյնը:

Այս թափառական ու անբնական մարդը այժմ երազում էր մի խաղաղ, հանգիստ անկիւնի մասին՝ միայն, մի վերջին անկիւնի՝ ուր կարողանար հանգստութեամբ սպասել մրրկալից կեանքի վերջին օրերը:

Եւ, այդ երազուած վայրը, այդ խաղաղութեան ըոյնը մի օրուայ մէջ գտնելը այնպիսի երանութիւն էր, որին չէր կա-

որդանում հաւատալ: Տարածութեան վրայ տիրապետող այս օդակառոյց պատշգամբի վրայ ամբողջ ժամերով կանգնած մընում էր: Թւում էր իրան՝ թէ առաջին անգամն էր տեսնում ծովը, որովհետեւ կարողանում էր դիտել ամեն հոգսերից ազատ, հանգիստ հոգով:

Փարոսի կանթեղը իր լայն եռանկիւններից մնայլ փշերուայ մէջ արձակում էր ակնախտիկ ճառագայթներ: Բայց ծերունու աչքերը գնում, կորչում էին այդ լուսարձակ տարածութիւնից դէնը՝ խորը մթութեան, և հեռուն՝ խորհրդաւոր, բայց ծովու մէջ:

Երկար ալիքները՝ մէկը միւսի յետեից, գալիս փշրւում էին աշտարակի ստորոտում, և, ամբողջովին փրփրայոյզ, յետ էին ցայտում, ճառագայթող եռանկիւնի ամբողջ լուսագեղի մէջ: Զուրը հետզհետէ աւելի բարձրացաւ, ու ծովի մեծադորդ ձայնը աւելի ուժգին որոտաց: Կարծում էր թէ լսում է թնդանօթի որոտը կամ մեծ սնտառի շառաչը և կամ մի հսկայ ամբոխի խուլ ու երկարատեւ մռնչիւնը: Վերջապէս քամին բարձրացաւ և փարատեց մշուշը, որպէսզի երևան գան սպառնալից, սև ու խոշոր ափերը՝ որոնք ծածկեցին ամբողջապէս լուսինը: Հովը արևմուտքից աւելի սասախիկ էր փչում, ալիքները աւելի կատաղութեամբ գալիս փշրւում էին քառաթայռի վրայ՝ փարոսը իր յատակից սասանեցնելով:

Հեռուն, բայց ծովում, փոթորիկը սաստկանում էր սանձարձակ:

Շատ հեռուն, մի փոքրիկ, կանաչորակ լոյս երևաց. դա մի լապտեր էր, մի ճրագ՝ մի նաւի կայմի վերևում: Նաւը նախ առաջացաւ դէպի աջ, յետոյ յանկարծ շուռ տուեց դէպի ձախ:

Սկավինսկին իջաւ իր սենեակը:

Դուրսը՝ կատաղաբար կոծում էր փոթորիկը, և այդ մոլեգնած ծովի վրայ՝ այդ նաւը կուռում էր քամու, ալիքների և մթութեան դէմ:

Աշտարակում ամեն ինչ խաղաղ էր: Հաստատ ու հաստ պատերից հազիւ թէ լսելի լինէր ալիքների կատաղի շառաչիւնը: Պատից կախուած ժամացոյցի կանոնաւոր տիկ-տակ հնչիւնի աղբեցութեան տակ, քնեց յողնած ծերունին՝ որ արդէն քնաթաթախ օրօրւում էր:

||

Ժամերը, օրերը և շաբաթները սահեցան...

Նաւաստիների մէջ այն հաւատքը կայ, թէ, երբեմն, զիր ժամանակ, բաց ծովի մէջ, լսում են ձայներ, և այդ ձայները որոշ կերպով իրանցից ամեն մէկի անունը տալով կանչում են:

Գուցէ մարդիկ էլ, երբ ծերանում են, լսում են այդպիսի ձայներ, միայն այն տարրերութեամբ, որ ծերերի լսած ձայները դալիս են մի այլ, աւելի խորունկ, աւելի խորհրդաւոր աշխարհից:

Փարոսը Սկավինսկիի համար եղել էր մի գերեզման: Ոչինչ այնքան միօրինակ չի կարող լինել, որքան կեանքը մի փարոսի մէջ: Եթէ մի երիտասարդ համաձայնուի ընդունել այդ ծառայութիւնը՝ հէնց որ ծանօթանայ նրա կեանքին, չի կարող երկար ժամանակ մնալ այնտեղ:

Փարոսի պահապանները՝ առհասարակ, հասակաւոր և իրանց մտածմունքների մէջ ամփոփուած, մեղամաղձոտ մարդիկ են լինում: Եթէ՝ մի ո՛ր և է փարոսի պահապան՝ բաղդի բերմամբ, թողնի փարոսը և վերադառնայ մարդկանց մէջ, նրա քայլուածքը այնպէս է լինում, որ կարծես թէ մի ծանր ու խոր քնից նոր է զարթել:

Երկնքի ու ծովի մէջտեղ, մարդկային հոգին՝ երկու մեծ անհունութիւններից ջախջախուած, կորած է զգում իրան: Փարոսի միօրինակ, մեքենայական աշխատանքը մարդուն չի դուրս բերում այն խորը մտախոհութիւնից՝ ուր յամառաբար թաղուելով նա ախորժ է զգում: Օրերը սահում, անցնում են այնպէս՝ ինչպէս ջերմեռանդ մարդու մատերի տակից աղօթհամրիչի հատիկները:

Բայց Սկավինսկին իրան այնքան երջանիկ էր համարում, որ կեանքումը երբէք այդպիսի երանութիւն չէր զգացել:

Առաւօտ կանուխ, արշալուսին վեր էր կենում, նախաճաշում էր և մաքրում էր մեծ կանթեղի ապակիները: Այդ ժամանակ, աշտարակից դուրս ցցուած պատշգամբի վրայ նստած՝ աչքերը յառում, շուտ էր աճում ջրի անհունութեան վըրայ, առանց երբէք ձանձրանալու այդ տեսարանից.

Երբեմն, նաւերի սպիտակ առագաստները լիքը քամիով ուռած՝ հեռուից փայլում էին, ինչպէս ծովի թռչունները ափնախտիդ արեգակի տակ: Աւելի հեռուն, խոշոր նաւեր զուգահեռական ուղղութեամբ անցնում էին մէկ մէկու յետեից: Կարմիր խաւիսխանիչը՝ որ ցոյց է տալիս նեղուցի մուտքը, խոշոր ալիքների վրայ օրօրում էր: Ամէն կէս օրից յետոյ, սպիտակ առագաստների մէջ երևում էր մի երփներանդ ծուխ. դա Նիւ-Եօրկից եկող մի մեծ շոգենաւ էր, որ ճանապարհորդներ էր տեղա-

փոխում մինչև Ասպինվալ՝ թողնելով իր ետևից մի փրփրալից շաւլ՝ դ։

Պատշգամբի միւս կողմիցը, Սկավինսկին շատ լաւ էր տեսնում Ասպինվալը և նրա ետևն նաւահանգիստը՝ իր նաւակայանների անտառովն ու ամեն տեսակ նաւակներովը՝ նաւահանգստից մի քիչ դէնը. անմիջապէս յետևի կողմում, քաղաքի սպիտակագոյն տները և աշտարակները յստակ կերպով անդրացողում էին թափանցիկ երկնքի մէջ։

Այս բարձրութիւնից դիտելով, տները նմանում էին ուրուրների բոյների, նաւերը խեցիների՝ և բնակիչները փոքրիկ, սև կէտերի, որոնք ալեծփում էին քաղաքի մեծ պողոտաների խճուղու վրայ։

Վաղ առաւօտեան, արեւելեան քամին բերում, հնչեցնում էր այս ծովային քաղաքի խառնիճաղանճ աղմուկը, ինչպէս և շողմնաւերի սուր սուլոցը մինչև փարոսի ստորոտները։

Երեկոյեան ժամը վեցին, նաւահանգստի շարժումը, կեանքը դադարում էր։ Այդ ժամանակ փարոսից այնպէս էր երևում, որպէս թէ խեցիները գնում, թափւում են ժայռերի խոռոչներում, և ալիքներն անգամ թւում էին թէ ծուլաբար մեղմանում, հանգստանում էին։ Յամաքի, ծովի, աշտարակի վրայ միանգամայն տարածւում էր խաղաղութիւնը՝ մի մեծ բարեբար հովանիի նման։

Այդ րոպէին էր, որ ծերունուն պատում էր մի տեսակ քաղցր մեղամաղձոտութիւն, և այդ ժամանակ միայն զգում էր նա, թէ որքան հեշտաւէտ է այնքան ցանկացած ու երազած այս հանգստութիւնը։ Այն սոսկ մտածումը թէ այդ հանգստութիւնը մշտապէս պիտի լինի իր համար, մեծ երջանկութիւն էր պատճառում։ Այլ ևս ոչինչ չունէր ցանկանալու։

Սկավինսկին խորասուզուած էր իր երանութեան մէջ և միևնույն ժամանակ ինք իր վրայ վստահութիւն ունէր։ Եթէ մարդիկ տներ են շինում անկարների համար, մտածում էր, ինչո՞ւ համար Աստուած չպիտի կատարէր, ըստ իր ընտրութեան, այդ անկարների Գաբրիէլեան հրաւերը։

Ծերունին հետզհետէ վարժուեց իր աշտարակին, լապտերին, աւազակայտերին և միայնութեանը։ Շատ շուտով սկսեց սիրել սպիտակ թռչուններին, որոնք թափւում էին ժայռի փռեկոմների մէջ և երեկոյեան պառկում, քնում էին փարոսի տանիքի վրայ։ Իրան սովորութիւն դարձաւ հացի փշրանք և կերակրել ֆաւորիտներ նետել այդ թռչուններին, և ամեն անգամ որ փշրանքներ ու կերակրի ֆաւորիտներ պցում էր՝ սպիտակ թռչելի մի իսկական ամպ շրջապատում, պաշարում էր նրան. ու Օգոստոս, 1905.

ծերունին այս թռչունների մէջտեղ քայլում էր, ինչպէս հովիւը իր հօտի մէջտեղ: Երբ ծովը տեղատուած ու հանդարտ էր, գտնում էր այնտեղ սատափաւոր խեցիներ՝ որոնք մնում էին այնտեղ ալիքների յետ քաշուելու ժամանակ: Գիշերները, լուսնեակ գիշերներին, երբեմն գնում էր հաւաքելու ձկնիկներ ժայռերի պատռուածքների այն տեղերից՝ ուր ծովը բոլորովին չէր քաշուում:

Այն աստիճանին հասաւ, որ ծերունին սկսեց պաշտել իր քարաժայռը, այս փոքրիկ, անծառ ու անհովանի կղզեակը՝ որի վրայ միայն մի քանի ծովային տունկեր էին բուսնում, և որոնք սակայն արձակում, սփռում էին արեւոցուցիչ բուրմունք:

Կէս օրերից յետոյ, պայծառ եղանակներում, փարոսից տեսնւում էր ուռճազարդ պարանոցը: Պարանոցի հարուստ բուսականութիւնը մի տիտանական, վեհաշուք պարտէզի տպաւորութիւն էր թույնում Սկավինսկու վրայ: Նարգիլակենիների թուխ թաւուտը՝ խառնուած մեծ բանանիների հետ, ճիշտ Ասպինվալի տների յետեր ընկած ահագին ծառատունկեր էին կազմում:

Աւելի հեռուն, Պանամայի ու Ասպինվալի մէջտեղ տարածւում էր մի ընդարձակ անտառ, որի վրայ սաւառնում էր ամեն առաւօտ և երեկոյ մի ոսկեզօծ ու թափանցիկ մառախուղ: Սա մի իսկական արեւդարձային անտառ էր՝ որի ծայրը հասնում էր մինչև անշարժ ծովը, և որ լիքն էր վայրի կինճերով, արմաւենիներով, կաթի ծառերով, խժենիներով և վիթխարի երկաթի փայտի ծառերով: Իր ծովային դիտակներով, ծերուկը կարող էր տեսնել ոչ միայն բանանիների խոշոր տերևները, այլ նաև կապիկների լեզւօնները, թութակների, փայլուն թռչունների անթիւ, անհամար բազմութիւնը՝ որ յանկարծակի բարձրանալով, թռչելով օդի մէջ, կազմում էր դալարախիտ բուսականութեան վերեւ մի ծիրանի գօտի:

Սկավինսկին լաւ էր ճանաչում այդ տեսակի անտառները, որովհետեւ, Ամազոն նաւի նաւաբեկութիւնից յետոյ շարաթնւորով թափառել էր նոյնպիսի թուխ անտառներում: Նա ծանօթ էր այդ անտառներում թագնուած վտանգներին: Գիշեր ժամանակ, յաճախ լսել էր իր շուրջը ինձերի մռնչիւնը և տեսել էր ամենի օձեր՝ բաղեղների նման, ծառերին փաթաթուած: Տեսել էր այն առ երեոյթա խաղաղ ու հանգիստ լիճները՝ որոնց մէջ ապրում էին անկուշտ կոկորդիլոսներ: Այնտեղ, խոշոր մօղուկներ՝ որոնք մարդու արիւն են ծծում, և հսկայ սարդեր՝ նուաղագոյն վտանգներն են, որոնք թագնուած են ամեն մի տերևի տակ: Այդ սոսկալի միջավայրերում տառապել ու պայ-

քարել էր, իսկ այժմ, հրախիսի հաճոյքով իր աշտարակի բարձունքից դիտում էր այն մեծ անտառը՝ որի թակարդներից այլևս ոչինչ չունէր վախենալու: Իր փարոսի մէջ ազատ էր ամեն վտանգից:

Կիրակի օր, մի քանի ժամուայ համար թողեց պաշտօնատեղին: Հազաւ իր փարոսի պահապանի յատուկ կապոյտ համազգեստը ու կրծքին վրայ շար ի շար կախ տուեց ունեցած բոլոր պատուանշանները: Ալեղարդ գլուխը մի առանձին հպարտութեամբ էր բարձրացնում, երբ եկեղեցու դռան մօտ գաղթածիւնները մըմնջում էին. «Փարոսի մի պատուական պահապան ունենք, որ նոյնպէս ուղղափառ դաւանանքից է»: Պատարագից անմիջապէս յետոյ, ուղղակի վերադառնում էր իր ծառայութեանը, ու այդ դէպքում զգում էր իրան երջանիկ, որովհետեւ տեսնում էր որ ցամաքը այլևս իր համար ոչ մի հրապոյր չունի: Նոյն օրն իսկ կարդում էր քաղաքից գնած սպանիական լրագիրը և կամ Նիւ-Յօրկ-Հերալտ-ը, որ տալիս էր իրան Ֆալկոնբերիշը, և որի մէջ ազահաբար փընտռում էր Հին Նւրոպայից լուրեր:

Այս խեղճուկ սիրտը՝ այս փոքրիկ քարաժառի վրայ, անշատուած աշխարհի մի հեռաւոր մասից, բարախում էր սակայն իր ծննդական հայրենիքի համար:

Երբեմն, երբ նաւը բերում էր պաշարեղէնը, իջնում էր ծովափ և մի քիչ խօսակցում էր նաւատէր Զոնսընի հետ: Բայց այդ սովորութիւնը կամ ցանկութիւնն էլ երկար չտևեց. սկսեց վայրենանալ ու դադարեց քաղաք գնալուց: Այլ ևս լրագիր չէր կարդում և Զոնսընի հետ քաղաքականութեան մասին չէր խօսում:

Այսպէս անցան շաբաթներ ու շաբաթներ. իր գոյութեան միակ ապացոյցն այն էր, որ աներևոյթանում էին ամեն օր ծովափի վրայ դրուած պաշարեղէնները, և որոշեալ ժամին փարոսի լոյսը վառւում էր: Ըստ երևոյթին, աշխարհը կատարելապէս անտարբերութեան էր մատնուել ծերուկի համար:

Ներսրտութիւնից ամփոփւում էր արդեօք իր հոգու խորքը, հայրենիքի բուռն կարօտի մէջ: Ո՛չ, որովհետեւ կատարելապէս համակերպուել էր բաղդին, ընտելացել էր այն մըտքին, թէ մնալու է այդտեղ մինչև մահը և մոռանում էր որ այդ քառաժայռից դուրս ուրիշ բան կայ:

Օրէցօր կորցնում էր անհատականութիւնը՝ որ ձուլւում էր կամաց կամաց ամեն կողմից իրան շրջապատող երկու վեհապանծ անհունութիւնների մէջ: Անգիտակցութեան, անզգայութեան վիճակին էր ենթարկւում: Հետզհետեւ

տէ միստիքական էր դառնում: Իր յստակ ու կապոյտ աչքերը՝ մանկական արտայայտութիւն էին ստանում, և յաճախ աչքերը հեռուն յառած՝ մնում էր հոգեզմայլութեան մէջ խորասուզուածի նման:

Մի առանձին հեշտանք էր զգում բնութեան այս անբաւ գաղտնիքի մէջ փաթաթուել, ծածկուել այնպէս՝ ինչպէս մետաքսեայ ու հեղզ անկողնի մէջ, ու այս կիսաքուն վիճակի մէջ գտնում էր մի մեծ հմայք, մի տեսակ կիսամեռ անմահութիւն ?

III

Բայց հասաւ դարձումի ժամը....:

Մի օր, երբ շոգենաւը բերել էր պաշարը, Սկավինսկին ցած իջաւ աշտարակից և տեսաւ որ իր սովորական նպարեղէն պաշարի կողքին կայ և մի խնամքով կապտած ծրար: Այս կապոյցը կրում էր Նիւ-Եօրքի պոստատան նաժակադրոշմները և իր հասցէն՝ խոշոր տառերով. «Skavinski—Esq-re»:

Մի առանձին հետաքրքրութիւնով ծերունին կտրեց կապոյցի թելերը և մէջը գտաւ գրքեր: Այդ գրքերից մէկն առաւ ու բաց արեց: Չեւեհերը սկսեցին դողալ յուլմունքից ու ստիպուեց աչքերը սրբել, որպէսզի կարողանայ աւելի լաւ տեսնել: Կարծում էր թէ երազում էր, այնքան անսպասելի էր լեհերէն լեզուով գիրը ստանալ այդ կղզիացեալ, հեռաւոր օտարութեան մէջ. և իսկապէս գրքերը լեհերէն էին: Ի՞նչ էր նշանակում այս, ո՞վ կարող էր զրկած լինել:

Չէր կարողանում յիշել, որ այդ պաշտօնի գլուխն անցնելու սկզբի օրերում, կարգացել էր «Հէրալդ» անուն լրագրում, թէ լեհական մի ընկերութիւն էր կազմուած: Այդ լուրը կարդալուն՝ անմիջապէս ուղարկել էր ընկերութեան իր ուժերի կէսը. ընկերութիւնը իր շնորհակալութիւնը արտայայտելու համար ուղարկել էր նրան այս գրքերը, որոնք հասան իր ձեռքը, սովորական ուղիղ գծով:

Առաջին բոպէում, ծերունին չէր կարողանում յիշել այդ անցքը: Լեհական լեզուով գրքեր Սասկինվալում, այս փարոսի վրայ, այս միայնութեան մէջ. սա մի արտակարգ բան էր, մի տեսակ հրաշք իր համար: Պահիկ մի նստեց ու աչքերը փակեց, էնթադրելով՝ որ եթէ բաց անի, ամեն ինչ՝ պիտի աներևոյթանայ իբրեւ հրազ:

Սակայն, կապոյցը, բաց գիրքը միշտ առաջն էր և արե-

գակի ճառագայթովը աւելի ևս լուսաւորուած: Գիրքը վերցընելու համար ձեռքը երկարելիս՝ ստիպուած էր գսպել սրտի բարախումները. բաց արած գիրքը բանաստեղծութեան գիրք էր. առաջին երեսի վրայ երևում էր գրքի անունը՝ և նրա վերևում, հեղինակի անունը:

Ակավինսկիի համար անծանօթ չէր հեղինակի անունը: Դեռ 1830-ին, Պարիզում կարդացել էր նրա բանաստեղծութիւնները: Միցկիեվիչի, լեհական ամենամեծ բանաստեղծի հեղինակութիւններին էր գիրքը:

Ամերիկայում իրան պատահած բաղձաթիւ արկածների միջոցին յաճախ էր պատահել հայրենակիցներին, բայց երբէք չէր գտել լեհերէն գիրք:

Առաջին երեսը շուռ տուեց ամենաբուռն հետաքրքրութիւնով: Իրան թւում էր, թէ այս ամենաւոր ժայռի վրայ մի ինչ որ ծանր դէպք է տեղի ունենալու:

Այդ բոլորում ամեն ինչ խաղաղ ու լուին էր:

Ասպինվալի զանգակները հնչեցնում էին երեկոյեան ժամը հինգը: Յոտակ, պայծառ երկնքում ամպի հեռք անգամ չէր տեսնուում, միայն կարելի էր նշմարել մի քանի որորներ, որ թռչկոտում էին ժայռերի ետևում: Ովկէանը թւում էր թէ քընած է. կոհակները անփութօրէն տարածւում էին աւաղի վրայ: Հեռուն, Ասպինվալը՝ իր սպիտակ տներով, թւում էր թէ հանգստանում է: Իսկապէս, այս մեծ, վեհ հանդարտութիւնը մի ինչ որ հանդիսաւորութիւն ունէր:

Այս հանդիսաւոր լուծեան մէջ, յանկարծ լսուեց ծերունու զոլզոլացող ձայնը, որ կարողում էր շատ բարձր, կարծես կամենալով այդպէս աւելի լաւ հասկանալ կարգացածը:

«Դու իմ ամբողջ կեանքս ես, ո՛վ իմ ծննդեան հայրենիքը Լիթվանիա:

«Քեզանից հետո ֆնացած զաւակը միթէ չի գնահատում քո հիասքանչ գեղեցկութիւնը աւելի՝ քան թէ իմ այս օրուայ դէպի բեզ տածած բուռն խանդաղատանքի ու համակրութեան չափը

Ակավինսկիի ձայնը թուլացաւ, տառերը սկսեցին իր աչքի առաջ պար գալ: Մի մեծ հառաչանք թռաւ նրա ճնշուած կրծքից: Միտը սաստիկ բարախում էր, ձայնը թրթռում էր և կոկորդը սեղմւում մկանունքների ցնցումով: Այնուամենայնիւ, ինքն իրան գսպեց ու շարունակեց կարդալ:

«Դէպի քեզ եմ դարձրել իմ արտասուալից աչքերը, ո՛վ իմ սուրբ Հայրենիք:

«Ես այժմ կաղզուրուած՝ իմ հաստատ քայլերը կ'ուղղեմ դէպի քո օրհնեալ հողը:

«Շնորհապարտ եմ քեզ, Աստուած իմ, որ ինձ նոր ոյժ տուեցիր, որպէսզի կարողանամ գործ դնել իմ ծննդական հայրենիքի համար

Ակամայ, արտասուքով ողողուեցին աչքերը և անկարող եղաւ աւելի երկար զիմադրել սիրտը ճնշող սաստիկ յուզումին: Հեկեկալով գետին փռուեց ու ալեզարդ մազերը խառնուեցին ծովի աւազներին հետ:

Քառասուն տարուց իվեր չէր տեսել իր երկիրը և երկար ժամանակից ի վեր հայրենիքի մասին ոչ մի լուր չէր ստացել: Այժմ, ամենաքաղցր յիշատակները զարթնում էին նրա մէջ, ծովերով բաժանուած հեռու, մի օտար երկրում, որ անշատում էր նրան իր սիրելի ու գեղեցիկ բնաշխարհից:

Դժբաղդութիւնը չէր որ հոսեցնել էր տալիս արտասուները, այլ մի յանկարծահաս, անսահման խանդաղատանք՝ որ գրաւում էր իր ամբողջ էութիւնը և որի առաջ ամեն ինչ չքանում էր:

Ամենասիրեցեալ հայրենիքից ներողութիւն էր խնդրում, որ ինք օտարութեան մէջ էր ծերացել և այնքան պինդ էր կապուել այս մենաւոր ժայռին, որ մինչև անգամ իր հայրենիքի յիշատակը մոռացութեան էր մատնել: Բայց այդ յիշատակը՝ որպէս հրաշք կանգնել էր նրա առաջ, և ճնշուած կուրծքին մէջ սիրտը մղկտում էր ուրախութիւնից:

Ժամեր էին անցնում և նա անշարժ մնում էր այնտեղ: Որորները թռչկոտում, անց ու դարձ էին անում իր շուրջը և աղեկտուր, փոքրիկ ճիչեր էին արձակում, որովհետև սարսափահար էին լինում տեսնելով՝ որ իրանց վաղեմի բարեկամը կատարեալ անշարժութեան մատնուած ու անտարբեր է դէպի իրանց:

Սակայն հասել էր նրանց հանգստութեան ժամը: Իրանց սպիտակ թևերը ծերունու գլխին մեղմիկ հուպ տալով ամպհովանի կազմեցին: Այդ ժամանակ նա վերկացաւ մի քիչ հանգրստացած, բայց աչքերը մատնում էին իր ներքին յուզմունքը:

Նաւից ստացած ամբողջ պաշարը թափ տուեց թռչունների առաջ, ու նրանք ուրախութեան աղաղակներ բարձրացնելով թռան, հեռացան: Ծերունին վերստին ձեռք առաւ գիրքը:

Արեգակը հասել էր արդէն Պանամայի պարտէզների և անտառների վրայ, կամաց կամաց աներևոյթանում էր պարա-

նոցի ետեւ՝ միւս ովկիանոսի մէջ։ Ատլանտեանը դեռ ևս ուղղուած էր սակայն լոյսի մէջ։

Սկավինսկին շարունակեց ընթերցումը.—

«Տմբ, այժմ, իմ հրակէղ հոգին դէպի այն զառիթափ անտառները և դալարախիտ դաշտերը։»

Վերջապէս, մոռթը պատեց և այլ ևս չի կարողացաւ որոշել տառերը։ Այդ ժամանակ, ծերունին զլուխը մի ժայռի յենեց, փակեց աչերը, և «խանդավառ հոգին փոխադրուեց այն դալարագեղ դաշտերի մէջ։» Վերստին տեսաւ իր երկրի հիասքանչ երկինքը և հայրենի գեղատեսիլ գաւառները։ Եղևնիների սօսափիւնը թրթռում էր իր ականջին, անտառների ակերը մեղմիկ մըմնջում էին նրա մօտ։ Տեսնում էր օրհնեալ երկրի ամեն մի անկիւնը, և այդ ամենը զարթեցնում էր իր մէջ ամենաքաղցր յիշատակներ, անտառները, դիւղերը, անդամատանները, մեծամեծ դաշտերը,—ճհ. այո, յիշում էր այդ ամենը, յիշում էր ամեն ինչ առանձին հմայքով։

Գիշեր էր արդէն։ Այն ժամին, երբ փարոսի լապտերը պարտաւոր էր իր հետագօտիչ ճառագայթները սփռել ծովի մթութեան վրայ, փարոսի պահապանը գտնւում էր շատ հեռու՝ իր ծննդական հայրենիքում. ալեկարդ զլուխը կրծքին վրայ խոնարհած՝ երազում էր... Պատկերները մէկը միւսի յետևից անցնում էին առջևից։ Չտեսաւ միայն այն տունը՝ ուր ծնուել էր, որովհետև պատերազմը քանդել էր նրան իր մեկնելուց առաջ։ Չտեսաւ նոյնպէս հօրն ու մօրը՝ որոնք մեռել էին, երբ ինք շատ փոքր երեխայ էր. բայց գտաւ հայրենի գիւղը այն դրութեան և տեսքի մէջ, ինչպէս թողել էր մեկնած օրուայ երեկոյեան. տները նոյն շարք ու դժի վրայ իրանց լուսաւորուած պատուհաններով՝ ցանկապատը, ջրաղացը, գիւղի երկու ծայրերին գտնուող լճակները, և ամբողջ գիշերուայ ընթացքում շների հաջոցը։

Ինքն իրան վերստին տեսնում էր ինչպէս՝ ինչպէս եղել էր, երբ մի երեկոյ վիճակուել էր իրան գիւղի պահապանութիւնը։ Գիշերուայ մէջ լսում էր գինետան երգերը, ուր կամ պարում և կամ ծիծաղում էին. որոշում, լըսում էր իր սրի շաչիւնը սալայատակի վրայ, երբ ձիու վրայ երկար մնացած լինելով՝ ցած էր իջնում մի ինչ հանգստանալու համար։ Այսպէս ժամերը սահում էին. ապա մի անթափանցիկ մշուշ սկսում էր ծածկել նրա տեսողութիւնից դաշտերն ու անտառները և իսկոյն լսում էին թռչունների առաւօտուայ դայլալիկը։ Գիշերը զով ու հանդարտ էր, մի խակական

գիշերը Լեհաստանի: Շոճիները սօսաւիւնը յիշեցնում էր ծովափի շփ շփ շրուկը: Արեւելքում երևաց մի պայծառութիւն՝ որ ցրւում էր մառախուղը. արաղաղները սկսեցին ցանկերի ետեւից միմեանց ձայն տալ, մի ագարակից միւսը միմեանց պատասխանել. արագիւնները թռչում, անցնում էին շատ բարձրից: Իւհլանը նոր սիրտ առաւ, յիշեց որ երէկ մէկը իրան տան էր, թէ յաջորդ օրը իբր թէ պատերազմ է տեղի ունենալու, և մտածում էր թէ ինչպէս ուժեղ կռիւ են մղելու, ու այս մտածման միջոցին իր երիտասարդական արիւնը եռում էր հակառակ գիշերուայ ցրտին: Բայց մառախուղը անհետացաւ. անտառները երևան գալով ցցուեցին իր տեսողութեան առաջ. ահա տները, ջրաղացը, մեծ կաղամախիները... Ի՞նչ թանկագին երկիր, այնքան գեղեցիկ առաւօտեան վարդազոյն լուսազարդի մէջ: Ո՛հ, միայնակ, միակ Հայրենիք...

Յանկարծ, մի խիստ ձայն ուղղուեց Սկավինսկուն.

— Ի՞նչպէս, դուք այստեղ էք. վեր կացէք: Ի՞նչ է պատահել:

Ծերունին բաց արեց աչքերը և զարմանքով նայեց իր առաջ կանգնող մարդուն: Իր երազի վերջաւորութիւնը խառնուում էր իրականութեան հետ. սակայն երազը անհետացաւ և նա ճանաչեց իր առաջ կանգնող Ջոնսըին:

— Ի՞նչ կայ, հիւանդ էք, հարցրեց Ջոնսըին:

— Ո՛չ:

— Դուք չվստեցիք այս գիշեր փարոսի լապտերը, որի պատճառով պէտք է թողնէք ձեր պաշտօնը: Սէն-Ժէրմէնից ելող մի նաւ խարակների վրայ նաւաբեկուեց, և ի մեծ բարեբաղդութիւն ձեզ, ոչ մի մարդ չխեղդուեց, թէ չէ, դատաստանի կ'ենթարկուէիք: Եկէք ինձ հետ, պէտք է որ ձեզ իմ շոգենաւով տանեմ, մնացածը կ'իմանաք հիւպատոսարանում:

Ծերունին գունաթափուեց, արդարև, մոռացել էր վառել լապտերը

.
Մի քանի օր յետոյ, Ասպինվալից Նիւ-Եօրկ գնացող շոգենաւի վերնայարկի վրայ տեսան Սկավինսկուն: Խեղճ մարդը կորցրել էր իր պաշտօնը:

Իր առաջ բացւում էին նոր, անծանօթ ճանապարհներ: Ճակատապրի քամիներից մի անգամ ևս քշուած, վտարուած տերևիկ, ռւր պիտի գնաս վերջապէս գտնելու քո վերջին կայանը:

Ծերունին շատ էր ընկճուել այդ վերջին մի քանի օրերի դժբաղդութիւնից. բոլորովին կքած էր երևում, և եթէ աչքերը

տարօրինակ փայլատակում էին, դա նրանից էր որ իր կեանքի այս նոր ուղու վրայ, իր կրծքին պինդ սեղմած պահում էր իր սիրելի գիրքը: Երբեմն, երբեմն, աւելի պինդ էր սեղմում գիրքը սրտին, կարծես վախենալով որ մի գուցե զրկեն նրան իր Հայրենիքից:

Թարգմ. Ատոմ

ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ

Լեւոն Խանսահանյան, «Զաքարիա Չագեցու օրերը», պատմական վեպ (849—889), գլխին է 1 ր. 255 երես:

Մեր պատմական վեպերի աղքատիկ շարքի մէջ մտնելու է նաև «Զաքարիա Չագեցու օրերը», որի առաջաբանի մէջ սպրտած երկտողից իմանում ենք, որ այդ վեպը գրուած է հայ գեղջուկի համար: Որը «նեղողամտութեամբ կը վերաբերուի դէպի մեր (հեղինակի) թերութիւնները»:

Առաջնորդուելով այս տեսակէտից պ. Խանսահանյանը պէտք է ձգտէ՝ իր գրուածքը մատչելի և զիւրմբունիի դարձնել գեղջուկ ընթերցողին, այն ինչ 254 երեսների խորգուրորդ նախադասութիւնների երկար շարանը, համեմուած կարճ ու զիւ ածականներով, նորագոյն և նորածին բառերի անտեղի կուտակումով՝ յուսահատութեան չափ ծանրատաղտուկ (հեղինակի սիրած բառն է) կը բերեն նոյն իսկ գրամու ընթերցողին: Իսկ մեր գիւղացին պ. Խանսահանյանի վէպից մի բան քաղելու համար, ձեռքին պէտք է ունենայ մի բառարան՝ մատենադարանական բունջ ու պունձախից հանած ու այստեղ-այնտեղ խցկած անագնաղորդ բառերը հասկանալու համար:

Իրըն նմուշ. սիրամանուգ, սիրատունկ (զաւակս), սեամ, անագնաղորդ, խուժաղուժ (ժամանակներ), ընդոստախօս, ընդ ունայնապարծ, առաքել (փոխ. ուղարկել), վաղվաղակի, դաւաղրուժ (!), վրդովաղին, տոռներով, յոլով, յողորդախօս, յա-

մեցնել (փոխ. ուշացնել), ծանրատաղտուկ, արտաքս, սփածուած, խոկալ և այլն: Դարձուածքներ էլ կան, որոնց իմաստը ըմբռնելու համար պէտք է ուեսերէն մտածել, օր. «Մենք փորձել ենք մտնել նրա կուրծքը իբրեւ ծնողի (Ն. երես)», «Նրա ափերին վխտում էին և ոչխարների հօտերը (,) և եղջուրաւոր կենդանիների նախիրները (,) և արաքական նոյնքների ջոկերը, որոնց վրայ զուարճանալու հաճոյքով բռնկուած՝ ցնծում էր Բաղդատ իսլամի զաւակը (Ա. երես)», «Նրա նուազ կազմուածքը և աւօրեայ նիստ ու կացը շնչում էին աղէխարշ և սոսկալի անգթութիւններով, որոնց նա անխնայ գործ էր դնում իւրաքանչիւր քայլափոխում դժբաղդ Հայաստանի զաւակների վրայ:»

Նման դարձուածքներով և անբովանդակ համեմատութիւններով լիքն է ամբողջ գիրքը:

Մեր կարծիքով որեւէ գրուածքի արժանիքը ոճի հէնց տեսակէտից՝ հեղինակի իմացած բառերի պաշարը հանդէս բերելու մէջ չի կայանում, ոչ էլ՝ սեթևեթ, ճոռումբան, շաղակրատ և պաթեթիկ նախադասութիւններ թխելով գրողը իր տաղանդը երևան կը հանէ: Ապացոյցի համար վերցնենք Բուղայի և Ատովմի, Բուղայի և Սմբատի, Վասակի և Ջազեցու, Վասակի և Մարեմի և միւսների մենախօսութիւնները, թողած այլ մանր կտորներ, որոնք համահասարակ չափով խմբուած են շինծու, ճգնովի գրամատիզմի վառանցանքներով:

Դալով վէպի պատմական լինելուն՝ պէտք է ասել, որ հեղինակը բաւականացել է նրան և նրա հերոսներին պատմական անուններ տալով և պատմական երեոյթներ ի տարեգրական դասաւորումով: Իսկ 849—889 թ. պատմական անցեալը կապուելով վէպի մէջ իր ժամանակի հասարակական, ընկերավարական, սոցիալական և քաղաքական յարաբերութիւնների հետ՝ չի ենթարկուել օրեկտիւ անալիզի՝ լուսաբանելու այդ երեոյթների կայն ու հոգեբանութիւնը: Միւս կողմից, վերապահելով ժամանակակից գեղջուկի նախահայրերին՝ հայ աշխատաւոր, երկիրը շէնցնող և բարեկարգող, նրա համար արիւն և քրտինք թափող դասակարգին պատիւ դեր՝ հեղինակը աջողութեամբ յարել է մի առանձին շեշտով նշաւակելու իշխանական և կղերական պաշտամունքի տենդենցիան, և այդ՝ այն գեղջուկի համար, որի կենսահայեցողութիւնը տակաւին դեգերում է ստրկական յատկանիշներով:

Մի նկատողութիւն ևս. պ. Խանսանամեանը փոքր ինչ խախտել է գրականական էթիկան, շտապելով հետաքրքրել ընթերցողին իր նկարով, մինչդեռ նա թէ իր իսկական և թէ

կեղծ «Խանդաղէ» (չլիոթիլ ТиФ. Лист.-ի աշխատակից Խանդաղէի հետ) անուններով տակաւին միաւորներին է յայտնի:

Գրքի զինը եռապատիկ բարձր է արժէքից:

Հ. Ս. Էֆրիկեան, «Պատկերագրող բնօթարհիկ բառարան», հատոր առաջին, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1903—1905, 6 ը.:

Այս հոյակապ աշխատութեան առաջին գրքի մասին ժամանակին խօսել ենք: Բնաշխարհիկ բառարանը պիտի բաղկանայ երեք հատորներից, որոնց իւրաքանչիւր բաժնեգինն է 6 բուրլի: Առաջին հատորի այս մասը պարունակում է անուններ Ա-ից մինչև Բ. տառով սկսած և բաղկացած 843 երկսիւնակ երեսներից: Դա Հայաստանի աշխարհագրական անունների մի էնցիկլոբեդիա է, որի մէջ ամփոփուած են մինչև այժմ յայտնի բոլոր տեղեկութիւնները: Հ. Ս. Էֆրիկեանի այս ծանր աշխատութիւնը պէտք է համարել Վենետիկեան Միթթարեանների տուած ամենաօգտակար և ամենակարևոր հրատարակութիւններից մէկը:

Гр. Чалхушьянъ, „Армянскій вопросъ и армянскіе погромы въ Россіи», (Панисламизмъ), Посвящается незабвенной памяти Г. А. Джаншиева, цѣна 20 коп.

Շատ ժամանակին է լոյս տեսնում յիշեալ գիրքը որ տալիս է լիակատար գաղափար հայկական հարցի մասին Ռուսաստանում և աշխատում է բացատրել ջարդերի պատճառները: Հայերի մասին ամեն տեսակ զրպարտութիւններ տարածողները այնքան շատ են եղել, որ ուսահասարակութեան մէջ ստեղծուել են ամենավայրենի կարծիքներ մեր մասին. ջրել այդ բոլոր ստերն ու զրպարտութիւնները և տալ հայերի մասին ճիշտ գաղափար փորձեց երջանկայիշատակ Զանշեանը: Նրա մահից յետոյ չպէտք էր սկսած գործը թաղել, և ահա պ. Գր. Չալխուշեանը իր այս բրոշիւրով շարունակում է տաղանդաւոր հրապարակախօսի գործը: Ցանկալի է որ այս գրքոյկը տարածուի ուսու հասարակութեան բոլոր խաւերում:

Ա. Օսիպով՝ «Մի տալիս Կ. Պոլսում», թարգմ. Ե. Բ. Նալբանդեանի, 1905, Ալեքսանդրապոլ 20 կ.:

Պ. Ա. Օսիպով՝ մի ուսու թերթի թղթակից, 1896-ի հայ-

կական սարսափների ժամանակ, փաղկշահի մայրաքաղաքում անցկացրած մի ամսուայ յիշողութիւններն է պատմում այս գրքայի մէջ: Ռուս թղթակցի աշխատութիւնը մեծ հետաքրքրութեամբ է կարդացւում, որովհետեւ նրա շնորհիւ մենք վերստին ենք ապրում այդ յաւէտ սգաւոր օրերը: Պ. Օսիպով աշխատում է մեզ բացատրել հայկական հարցը, Կոտորածների երկրում շղթայազերծուած արիւնի փոթորիկի շարժառիթները: Նա խօսեցնում է այլևայլ մարդկանց, մի հայ թերթի թղթակից ինչ որ Mars-ի, երկաթէ-պատրիարք Մատթէոս Իզմիրլեանին, նրա հրաժարումից յետոյ տեղապահ Բարդուղիմէոս արքեպիսկոպոսին, որին՝ հեղինակը, չգիտենք ի՞նչու, անուանում է Նուրեան էֆէնդի, իհարկէ շփոթութեամբ, նոյն ժամանակուայ ոստիկանութեան նախարար տխրահոշակ Նազըմ-փաշային, արտաքին գործերի նախարար, Թէմֆիկ փաշային, յետոյ թուուցիկ կերպով տալիս է մի դրուագ այն տարօրինակ էպոպէից, որ կոչւում է Բանկ-Օտտոմանի առումը, նկարագրում է Կոտորածի մի քանի տեսարաններ և այլն:

Գրքի ամենահետաքրքիր մասն է կազմում Իզմիրլեանի հետ տեսակցութիւնը: Մարդ անկարող է լինում կարգալ այդ էջը առանց խորապէս յուզուելու: Օսիպովի նկարագրութեամբ մենք տեսնում ենք այդ դժբաղդ ծերունուն կանգնած մեր առաջ, ցասկոտ, անիծող ու վրէժխնդիր մարգարէի դիրքում, որ իր վառուած սրտի շանթերն է թափում նախ յուսադրող, ոգեւորող, յետոյ անտարբեր ու մեղսակից Եւրոպայի գլխին: Տեսէք թէ նա ի՞նչպէս է ողբում, անիծում ուս թղթակցի առաջ: Նըրա անկեղծ, մորմորող խօսքերի տակ քարերն անգամ լեզու են առնում և աղաղակում:

«Ծերունին հրաւիրեց ինձ նստելու: Նորա դէմքի վրայ տարածուած թախիծն այնքան անկեղծ, այնքան խորն էր, որ ուղղակի ես չէի համարձակւում խօսել նորա հետ ինձ հետաքրքրող հարցի մասին: Բցելով թաղպէյը, պատրիարքն ինքն սկսեց խօսակցութիւնը, և քանի նա շատ էր խօսում այնքան աւելի ուժեղ բոցով վառւում էին նրա աչքերը և լցւում էին նախկին կրակով:

—Ձեր առաջ կանգնած է հովիւր—ասաց նա—որի ոչխարները մորթեցին և ցրուեցին ամբողջ հօտը: Ի՞նչ պէտք է անէ այսուհետեւ հովիւր: Որոնեւ նոցա, վերադարձնել իր հովանու տակ և աղօթել նոցա համար, որոնք այնտեղ լեռնային գիւղերումն են: Ես արեցի այդ բոլորը, աղօթեցի ամբողջ գիշերներ: Բայց Տիրոջ հաճելի չէին իմ աղօթքները: Այժմ ես մինչև անգամ զրկուած եմ հովուական գաւազանից և իմ

խցի խորութեան մէջ կարող եմ միայն յիշել անցեալը և նորից ազօթել Աստուծուն, որպէսզի նա իւր հովանու տակն առնէ և սփոփէ Հայոց թշուառ ժողովուրդը: Հինգ դար դերութիւն, դա նշանակում է տասը միմիանց յաջորդող սերունդ զգում են իրենց վրայ կիսալուսնի ոյժը. դա արդէն զժողովը է: Մեզ տուին Սահմանադրութիւն 61 թւին և 78-ին, և վերջը ցոյց տուին թէ ինչպէս յիմարացըին մեզ, ինչպէս ծիծաղեցին մեզ վերայ խլելով այն իրաւունքները, որոնք երեկ մեր առաջը քցեցին ինչպէս շներ: Մեզ գրպանցին, խաբեցին ստուկերով և երբ, զգալով մօտեցող ազատութեան արշալոյսը՝ հայերը սկսեցին ձգտել զարգանալու, առաջ գնալու, այն ժամանակ որոտացին հրացանի հարուածները, շողշողացին դանակները, մշակուած դաշտերը դարձրին անապատներ և հարուստ գիւղերը՝ աւերակների կոյտեր:—Ինչի՞ համար: Մի՞թէ թուրքերը կարող էին մտածել, որ, Հայերը երեւելայում են բաժնուել Բ. Դանից և կաղմակերպել առանձին թագաւորութիւն: Մի՞թէ այս է մեզ պէտքը: Մենք պահանջում ենք միայն, որ իւրաքանչիւր հայի տրւի հանրամարդկային իրաւունքներ, իրաւունք կեանքի և ոչ երկիւղ թէ՛ եթէ ոչ այսօր—վաղը նրանից կխլւի այն ամենը ինչ որ ձեռք է բերել տարիներով, ինչ թանկ է նրա սրտի համար: Լրագրներում գրում են կարճ, որոշելով այս ամենը մի խօսքով—կոտորած. բայց դուք գիտէ՞ք արդեօք ինչ բան է կոտորածը: Երբ այնտեղ ու այստեղ դիպում են այլ-լանդակուած դիակներ, արիւնը հոսում է աւաակներով...

Պատրիարքը կանգ առաւ. նա խիստ յուզուած էր. նորա ձեռները դողդողում էին և արագ-արագ քցում թագպէյը:

—Եւ ինչի՞ համար այս բոլորը: Ինչո՞ւ...

Նա իզուր աշխատում էր զսպել արտասուքի ամբողջ հեղեղը, որը կարծես ամաչելով թափւում էր նորա կնճռոտ այտերի վրայից և թագնւում էր ալեխառն մօրուքի մէջ: Պատրիարքն արցունքը սրբեց իր հագուստի թևերով և շարունակեց.

—Արտասահմանի պետութիւններն, այս բոլորին նայում են անտարբեր աչքով, չցանկանալով մանեւ մեր դրութեան մէջ, չցանկանալով թեթևացնել մեր ճակատալիրը, կարծես թէ մենք էլ նոյն քրիստոնեաները չենք: Դուք զարմանում էք առաջին քրիստոնեաների օրինակներով, որոնք մեռնում էին կրկէսի հրապարակում. բայց մի՞թէ մեր քահանաները, որոնք տկաւրացած լիզուով արտասանում են Քրիստոսի անունը, երբ նոցա խաչում են, աւելի քիչ յարգանքի են արժանի:

Պատրիարքը նորից լռեց:

Մենք գտնուում ենք 20-րդ դարու շէմքին. գիտութիւնը յառաջ է գնում հսկայական քայլերով, գիւտեր են լինում գիւտերի յետեից, բայց կատարելագործելով իրանց միտքը, մարդիկ ցամաքեցնում են իրանց սիրտը և մօտենում եսամոլութեան: Եւ մինչդեռ այս ասփում ազատութիւն են գոռում, միւսում լսում են օգնութեան կանչող ձայներ: Եւ միթէ Եւրոպան չպիտի կանգնեցնէ մեզ վերայ բարձրացած ձեռքերը: Միթէ Տէրը չի լսում ամբողջ ժողովրդի աղօթքը: Ինչի՞ համար է նա մեզ ուղարկում այս փորձութիւնը:

Պատրիարքը ոտքի ելաւ: Նրա աչքերը յանկարծ կրակով վառուեցին և նա բացազանչեց. — Թող չգան մեզ մխիթարելու, մենք այնուամենայնիւ միայնակ չենք, մենք միշտ յիշում ենք, որ անտեսանելի կերպով մեզ հետ է Նա, Որը արտասանեց այս մեծ և յաւիտենական խօսքերը. «Եկայք առ յիս ամենայն վաստակեալք և ծանրաբեռինք»: Եւ նա եռանդուն շարժուածքով ցոյց տուեց անկիւնի խաչելութիւնը:»

Բացի մի քանի արամեերից, թարգմանութիւնը առհասարակ սահուն է ու յաջող: Բայց ինչո՞ւ թարգմանիչը պահում է «նոցա», «նորա», «վերայ» ևն գրաբար ձևերը:

Ն. Ա. Աղբելով. «Ասանց Հարցը Եապօնիայում» Թարգմ. Նունէ Թա-
յիրեան, 1905, Թիֆլիս, 25 կ.:

Այս գրքի ընթերցումից յանգում ենք այն եզրակացութեան, որ ամեն ինչ վարգագոյն չէ Ճապոնիայում: Ճապոնացիք շատ հարցերի մէջ իրանց առաջադիմութեամբ եթէ մրցում են եւրոպական ազգերի հետ, կանանց հարցում դեռ բաւական ետ են մնացել: Սրանից դեռ մի քանի սամսեակ տարի առաջ նիպպոն կիւնը այն դրութեան մէջ էր, ուր գտնուում են առհասարակ արեւելեան ժողովուրդների կանայք—իրաւագուրդ և տղամարդու բռնապետութեան տակ ընկճուած:

Ճապոնական կիւնը հարկադրուած էր կրելու Կայսարի՝ «Մեծ ուսմունք կանանց համար» օրինագրքի բոլոր անարդար խստութիւնները: Այդ օրինագրքի պատուէրների համաձայն, որոնք սրբագործում են տղամարդու ստորացուցիչ դերիշխանութիւնը կանանց վրայ, ճապոնուհին պէտք է «առաւօտները վաղ դարձնի, իսկ գիշերները ուշ քնի. նա կէս օրերին ևս չպիտի քնի. այլ պարտաւոր է ուշագիւր կերպով հետեւել իր անտեսական գործին, այն է՝ գործել, կարել, մանել և այլն: Ի շնորհիւ փայփայէ թէ տեսողութիւնը և է թ լսողութիւնը

թատրոնական ներկայացումներով, երգեցողութեամբ, և պատմութիւններով:»

Մի խօսքով ճապոնացի կինը պէտք է վարէ հարեմական կեանք:

«Մենք լսեցինք ասում է Կայրար, որ նորածին աղջիկ երեխային հին ժամանակներում դնում էին յատակի վրայ երեք օր, որի համեմատ մենք այդտեղ ևս տեսնում ենք տղամարդուն երկնքին նմանեցրած, իսկ կնոջ—գետնին. անշուշտ այդ սովորութիւնը կնոջ պէտք է սովորեցնէր իր ծննդեան օրից զիջել և առաջին տեղը տալ տղամարդուն, իսկ ինքը բաւականա՜նար երկրորդով, հետո մնար հպարտութիւնից, տանէր ուրիշի ծագրն ու արհամարհանքը համբերութեամբ և խոնարհութեամբ...»

Բայց կամաց կամաց այս բռնաւոր օրինաբանի դէմ հակադրեցութիւնը սկսում է. Ֆուկուզավ կուում է Կայրարի վարդապետութեան դէմ. մամուլը նրան օգնում է. պետութիւնը չի վարանում կանանց իրաւունքները պաշտպանել՝ բացանելով նրանց համար մասնաւոր ուսումնարաններ, որոնք հակառակ իրենց ըարձրագոյն յորջորջումին, իրանց ծրագրով պրոգրիմնադիւաններից բարձր չեն: Բայց հիմնում են վերջապէս 1901-ին, Տօկիօում կանանց «համալսարան»:

Սակայն միւս կողմից խոշոր արդիւնաբերութեան եղանակների, գործարանների մուտք գործելը՝ առաջ է բերում կանանց դրութեան մէջ սոցիալական նոյն և աւելի մեծ չարիքները, որոնց ենթարկուած են Եւրոպայի գործաւորուհիները. բայց մինչդեռ Եւրոպայում այս վերջինների հանդէպ պետութիւնը պաշտպանութեան որոշ միջոցների է դիմում, Միկադօի կառավարութիւնը՝ ինչպէս առ հասարակ գործաւորների, նոյնպէս գործաւորուհիների համար դեռ ևս պաշտպանողական որոշ օրէնսդրութիւն չունի: Ահա՛ դրանից և առաջ է եկել Ճապոնիայում բանուորական հարց և նրա անխուսափելի հետեանքը—ընկերավարութիւնը:

Գիւրքը իր արտաքին տեսքով լաւ տպաւորութիւն է թողնում, բայց ինչ վերաբերում է թարգմանութեանը, պէտք է ասել, որ նա ունի շատ անհարթութիւններ և ընդհանրապէս լեզուն, ուղղագրութիւնը որոշ, միատեսակ կանոնների չէ ենթարկւում: Առաջ բերենք մի երկու նմոյշ. «Օրինակ Հօկկայետօի վուշի գործարաններում նոքա ապրում են ամբողջ շաբաթներով վուշի չորացնելու տեղը, որտեղ միջնուրդը կային:»

«Օջիի թղթէ գործարաններում նրանք տեղափոխում են ցնցոտիներով ծանր զամբիւղներ շնչելով այդտեղի ծանր և

խեղդող օդը, որի զուրըշիով լցուած է բնակարանը:» «Աւելացնենք դրան և այն տեսչային արագութիւնը, որը ստեղծում է այդտեղ արգինագործութիւնը, դոցա մոլորեցնում է բանւոր դասակարգի վերաբերմամբ, որի մասին ասում է այդ երկրի քաջիմաց Հենրի Նորմանը իր «Այսօրուայ Նասրոնիան» յօդուածում, որտեղ նրա ապագայ զարգացումն դասաւորում է «վտանգաւորների» թուին:» Ահա մի պարբերութիւն, որը նոյն-իսկ անհասկանալի է:

Խաչատուր արեղայի Ջուղայեցւոյ «պատմութիւն պարսկից» (ԺԸ դար) աշխատութեամբ Բարգէն վարդապետի Աղաւելեանց, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: 1905, 1 ր. 25 կ.:

Պատմութիւնը բաղկացած է 340 երես տ. 8 երեսից: Հրատարակիչը կցել է հրատարակութեան յատաճարան, որով տալիս է տեղեկութիւն հեղինակի անձնաւորութեան մասին, հեղինակութեան շարժառիթի և մի և նոյն ժամանակ Սաչատուր արեղայի աշխատութեան գնահատութիւնը պատմական արժէքի տեսակէտից: Կարևորագոյն մասը հրատարակչի աշխատութեան կազմում են պատմական անցքերի և անձնաւորութիւնների ստուգութիւնները վաւերական և գիտնական աղբիւրների հիման վրայ: Առանց դրան սովորական ընթերցողի, նոյն իսկ այս երկից օգտուել ցանկացողի համար անհնարին կը լինէր դատելու—վաւերականը անվաւերից: Այդ ստուգութիւնները մի տեսակ լոյսի գեր են կատարում այն շփոթութիւնների, մթութիւնների վերաբերմամբ, որոնք բնականաբար առաջ են գալիս Սաչատուր արեղայի և պատրաստութեամբ և նրա պայմաններում գրողի շարադրութեան մէջ: Սաչատուր արեղան իր կրթութիւնը ստացել է Նոր Զուղայում և այդտեղ էլ գրել է իր պատմութիւնը: Ինքն ըստ ինքեան արդէն հասկանալի պիտի լինի, թէ ի՞նչ պայմանների մէջ է կրթուել հեղինակը և գրել իր պատմութիւնը: Այդ ստուգութիւնների պատճառաւ հրատարակիչը, իրաւամբ դրոշմել է ջուղայեցու պատմութեան հրատարակութեան վրայ—աշխատութեամբ Բարգէն վարդապետի Աղաւելեանց:

Ջուղայեցու պատմութիւնը պատմական տեսակէտից մի որ և իցէ կարևորութիւն չունի, բացի գուցէ այն բաժինից, որ վերաբերում է Նադիրից սկսած մինչև Գերիմ խանի մահուան ժամանակամիջոցին, մի շրջանի, որին հեղինակը համարեա ժամանակակից է կոչել:

Եթէ աչքի առաջ չունենանք այն շարժառիթը, որը պատճառ է եղել հեղինակի աշխատութեան, անհասկանալի կը լինէր հայր Խաչատուրի ձեռնարկութիւնը: Որովհետեւ ինչպէս իրաւամբ նկատուած է հրատարակիչը, դա մի համառօտ ժամանակագրութիւն է Իրանին տիրող վեհապետների՝ սկսած նախ քան պատմական շրջանից և այն ևս պարսկական անվաւեր աղբիւրների հիման վրայ,— ժամանակագրութիւն՝ որը այժմ միայն աղբիւրի կարեւորութիւն է ստանում, շնորհիւ հրատարակչի վերև յիշած ստուգութիւններին:

Ջուղայեցու աշխատութեան շարժառիթը կապուած է մեր նոր գրականութեան մի հսկայ, անդուգական գործիչի գործունէութեան հետ,— անմոռանալի յիշատակի Միքայէլ վարդապետ Չամչեանի: Մեր տաղանդաւոր նոր պատմահայրը իր նշանաւոր Հայոց Պատմութիւնը գրելիս բնականաբար հնարաւորութիւն չի ունեցել անմիջապէս օգտուելու պարսիկ աղբիւրներէ, և նա փորձել է լրացնել այդ կարիքը Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի միաբանութեան միջոցաւ, որը բնականաբար միայնակ ձեռնհաս միջնորդը կարող էր հրանդիսանալ այդ կողմից: Եւ այդ խեղճ, սոսկալի պայմաններին մէջ իր գոյութիւնը պահպանող միաբանութիւնը, կալուած լուսաւոր աշխարհից, հին հայկական սքոլաստիկայից դուրս ոչ մի մտաւոր նիւթ չունենալով, իհարկէ ոչ մի լուրջ հետազօտող չէր կարող արտադրել: Եւ ինքը՝ այդ առաջարկութիւն կատարողը ամենայն խոնարհութեամբ խոստովանում է իր անպատրաստութիւնը. «ոչ վայել էր ինձ երազել զայսպիսի իր, այլ այնոցիկ էր ճահ և քմբոն, որք կրթեալք իցեն և մարդեալք համալսարանոջ գրելթողութիւն, զճարտասանութիւն, զտրամաբանութիւն և զայլ արհեստս ազատականս»: Այդ խոստովանութեան մէջ արժանի է նկատողութեան այն անկեղծ տենջանքը և ծարաւը դէպի իսկական գիտութիւն, և թախիծը՝ նրանից գուրկ մնալու. գծեր՝ որոնք այնպէս յատուկ են մեր ցեղին, և որոնք չփրկեցին սակայն նրան կորստից:

Խաչատուր արեղայի ժամանակագրութեան մէջ եթէ կան այլ նիւթեր, դրանք աւելորդ բարդութիւններ են. կրօնական միամիտ դատողութիւններ և խորհրդածութիւններ՝ մեր հին սքոլաստիկական ոճով արտայայտուած՝ որոնք տաղտկալի են դարձնում նրա երկի ընթերցումը:

Ինչպէս տաքինք կարեւոր պիտի համարել այս պատմութեան մէջ այն մասը, որը վերաբերում է հեղինակին մօտ, նոյնիսկ ժամանակակից անցքերին. ժամանակակից յիշատակութիւնները ինչքան էլ որ տհաս ձևով կատարուած լինեն, միշտ կ'ունենան իրանց

արժեքը, իբրև վաւերական անմիջական նիւթեր պատմութեան համար: Այդպիսին է այն մասը, որ վերաբերում է Նաղիւրից սկսած մինչև Գերիմ խանի ժամանակամիջոցին:

Մանաւանդ վերջինիս շրջանը: Այս մասում արդէն հեղինակի լեզուն ի հարկէ աւելի բնական ոճ է ընդունում, և զրաժը կարդացում է հետաքրքրութեամբ: Գերիմ խանի պատմութիւնը սիրով և մանրամասնաբար գրելով, հեղինակը ինքը չի դուռն այս նշանաւոր վայրկեանի խոշոր և բնորոշ կերպարանքը, ինչպէս յայտնի է, ի դէմս Գերիմ խանի, մի հասարակ ծագումով շիրազեցու, բուն պարսիկ ցեղը մի փոքր արեց վերածնութեան և նրա մահով նորից ընկճմանց լեթարգիական քնի մէջ, դառնալով նորից ստրուկ՝ թաթար-թիւրքական տիրապետութեան, շնորհիւ կրօնական միութեան, առանց գիտակցելու այդ դրութիւնը:

Զնայելով, որ պարսիկ ցեղի տիրապետութիւնը՝ ի դէմս Գերիմ խանի և նրա արքանեակների, կարճ ժամանակ տևեց, և այն էլ իբրև անընդհատ մաքառում թիւրք-թաթար խաների, այնուհանդերձ ցեղային տարբերութիւնը արիացիների և թաթարների ակներև և զգալի կերպով ընդգծւում է. սկսւում է երևան գալ կառավարութեան կողմից մարդկայնական յարաբերութիւն դէպի ստորադրեալ ժողովուրդը և դէպի պատերազմող-հակառակորդը—բուն արիական յատկանիշներ: Անշուշտ երբ և իցէ Իրանը դառնալու է իսկական պարսկական պետութիւն: Եւ առանց կասկածելու կարելի է ասել, որ այն ժամանակ քաղաքակրթութիւնը նրանում չի ընթանալու կրիայի քայլերով, ինչպէս թիւրքիայում: Բայց մօտ է թէ հեռու այդ օրը—դեռ նշաններ չկան: Գերիմ խանի շրջանը մի անգիտակցական կայծ էր, որ արագ մարեց և Իրանը նորից ընդունեց թրքական դրոշմը:

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Հ. Համբարձումեան. «Հպարտ հոգու երգերից», 1905, Պետերբուրգ. 30 կ.:
- 2) Ե. Ֆրանգեան. «Արհամարհուածները», (արտ. «Մշակ»-ից) 1905, Թաւրիզ, 10 շահի:
- 3) Ամպրէ. «Տաղեր», 1905, Վաղարշապատ, 10 կ.:
- 4) Ատրպետ. «Երկերի ժողովածու», Գ հատոր, 1905, Թաւրիզ, 1 ր.:
- 5) «Անասնապահութիւն և կաթնասնտեսութիւն», կազմեց Գ

- Ղազարեան (արտ. «Արարատ» ամսագրից), 1905, Վազարշապատ, 40 կ.:
- 6) «Էմինեան Աղզագրական Ժողովածու», Հատոր Դ. Ժողովրդական Հեքիաթ, հաւաքեց Ս. Հայկունի. հրատ. Լազար. Ճեմ. արև. լեզուաց. 1902, Մոսկուա-Վազարշապատ, 1 ր. 25 կ.:
- 7) Гр. Чалхушянъ «Армянскій вопросъ, Армянскіе Погромы въ Россіи», (Панислализмъ), Посв. незаб. Памти. Г. А. Джаншиева, 1905, Ростовъ Н/Д 20 к.
- 8) Հ. Ս. Էֆրիկեան. «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», հատոր Ա. Վենետիկ, 6 ր.:
- 9) Վահան Տիրացեան. «Մտքեր և մտքեր», 1905, Թիֆլիս, 10 կ.:
- 10) Ն Ա. Ազբելով. «Կանանց հարցը Եապոնիայում» (պատկերազարդ) Թարգմ. Նունէ Թայիրեան, 1905, Թիֆլիս, 25 կ.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տեղեկութիւններ գաւառներից.—Րեժարմների խոշորագոս տարր.—Փոխարձակի նա-
մակը Կովկ. ուս. երջ. հոգար.—Մուսուլմանների կրթութեան առիթով.—Ջեմ-
սովօն եւ ցանկալի կորրեկցիաներ.—Ամ. Հ. Կաթողիկոսը փոխարձակի մօտ.—Հա-
յոց դպրոցների եւ կալուածների վերադարձումը.—Փոխարձակի կոչը եւ յայտա-
րարութիւնը.—Կարեւոր բացատրութիւն.—Պրինց Նապոլեօնի կոչը.—Պաշտօնա-
կան հաղորդագրութիւն Թիֆլիսում բացուած մի դատագրութեան մասին:

Գաւառներում հանգստութիւնը դեռ ևս վերականգնուած
չէ: Այդպէս, օրինակ, Գողթնից մեր ստացած մասնաւոր նա-
մակները ցոյց են տալիս որ երթեկութիւնը հայ գիւղերի մէջ
շատ վտանգաւոր է դառել շնորհիւ զինուած թուրք սրիկանե-
րի, որոնք իրանց «Չանքէզար» են անուանում և նպատակ են
դրել սպանութիւններով և աւարառութիւններով շարունակ ա-
հարեկման մէջ պահել հայ ժողովրդին և, զգուեցնելով նրան,
ստիպել գաղթելու: Տեւի գիւղի թուրքերը, որոնք այնքան սպա-
նութիւններ, աւերմունք, թալանում և բռնութիւններ կատա-
րեցին Գողթնի լեռնային գիւղերում (Ալահի, Մարվանիս և այլն),
այժմ բերդան հրացաններով զինուած, 5—10 հոգուց բաղկացած
խմբերով, յարձակւում են Գողթնի ձորերի ներքեւի մասերում ե-
ղած հայ գիւղերի արտերի վրայ, փշացնում կալերը, այգիները
և քշում տանում տաւարը: Յուլիսի 25-ին Յաղնա գիւ-
ղից 4 վերստ հարաւ գտնուող Քէշանի արտերից այդպիսի մի
խումբ քշել տարել է 5 հզ և մի էշ, նախօրօք կապկպելով այդ
ասլրանքի վրայ հսկողների ձեռները: Այդ դէպքին ականատես
հարեան արտերում թուրք բէգերը (Դուզլանցի) ոչ միայն չեն
արգելում այդ յափշտակութիւնը, այլ և իմաց չեն տալիս տե-
րերին: Յաղնայից կաղակներ են ուղարկւում 7 ժամ ան-
ցած և դրանք ձեռնունայն վերադառնում են չհասնելով ա-
ւագակների յետեից:—Թոժա վարդապետը յուլիսի 16-ին հե-
ռադրում է Նախճաւանից որ «գիշերը թուրքերը հրդեհե-
ցին կողմնութիւնների կալերը: Հրդեհը հանդցնելու նպատա-
կով օգնութեան հասած մարդիկ հրացանաձգութեան ենթար-
կուեցին: Կաղակները պատասխանեցին: Ոչնչացրել են 500

խուրձ ցորեն: Յուլիսի 11-ին գիշերը թուրքերը սկսեցին իրանց յարձակումը Նորս գիւղի վրայ. ֆլամաներ չկան»:—Յուլիսի 29-ին նոյն Նախճաւանից պ. Սինակեիչը հեռագրում է հետեւալը. «Ահա արդէն մի ամիս է որ լրացաւ պրինց Լուի Նապոլէօնի տուած պայմանաժամը՝ կողոպտուած գոյքը վերադարձնելու համար, սակայն համարեա ոչինչ չէ վերադարձուած: Այս օրերս գողացուած է ոստիկանութեան մէջ ժողովուած և կընդէօնի կարգադրութեամբ յանձնաժողով է կազմուած, որ բաղկացած է հուրկային տեսչից և հաշտարար միջնորդից, որոշելու համար ֆլասուածներէ կրած կորուստներէ չափերը: Յուլիսի 25-ին թուրքերը նորից յարձակում գործեցին Նորս հայ գիւղի վրայ: Յարձակումը յետ մղեցին ղինուորները և նորսեցի հայերը: Յարձակումը գործել են հետեւեալ թիւրք գիւղերի բնակիչները. Գիւրուսա, Շախբուզա, Քէչեյու, Մախմուդովա: Հայերը հալածելով թուրքերին մինչև Մախմուդովա գիւղը՝ տաւրան նրանց գոյքի մի մասը»:

Այդ և նման փաստերը ցոյց են տալիս որ անկարգութիւնների սուր կերպարանքը անցել է և թուրքերը փորձեր են անում տեղական դարձնել իրանց ստեղծած դրութիւնը, որպէս զի, երևի, իրագործեն այն խօսքերը, որ նրանք լիտի պարծենկոտութեամբ յայտնել էին մի երկու ամիս առաջ պ. Մեօմինին. «армяне кончат!» «հայերին չենք թողնելու այստեղ ապրեն, նրանց վերջացնելու ենք»: Սակայն այդ մոլեռանդ և գազանաբարոյ մարդիկ այնքան տգէտ էին որ չէին հասկանում մի մեծ տարբերութիւն թիւրքիայի և Կովկասի մէջ. այդ այն է որ մի քրիստոնեայ պետութեան մէջ հայը չի կարող իրաւազուրկ ռայա դառնալ և վերջի վերջոյ օրինական ինքնապաշտպանութեամբ կը քանդի իր այդ նամարդ հարեանի թշնամական ընդդէմ դաւերը և երբէք չի փախչի իր ծննդավայրից, որ ոռոգուած է դեռ ասորաբարեկական գոռոզ բունակալների ժամանակներից սկսած՝ իր նախնիների բրտինքով և արիւնով: Ծիշտ է, սկզբում հայերը յանկարծակիի բռնուած՝ սաստիկ ահաբեկուելով այնքան վհատել էին որ պատրաստ էին տուն տեղ թողած փախչել, գաղթել, սակայն պրինց Լուի Նապոլէօնի խօսքերը տուին նրան վստահութիւն շարունակելու իր կուրտուրական մեծ միասիան հայրենի հողի վրայ և նա չգաղթեց և չալիտի գաղթի. դա կը լինէր փոքրհոգութիւն, վատութիւն...

Պատմութիւնից հային վիճակուած թուրքական հարեւանութիւնը դարերով հայի զարգացման ամենամեծ խոչընդոտն է եղել: Այն օրից, երբ Կովկասը անցաւ ռուսաց ձեռքը, այդ

խոչընդոտը կորցրել էր իր նշանակութիւնը և եթէ նա կրկին սկսեց դեր կատարել, դա հետեանք էր այն քաղաքականութեան, որի իդէօլոգը ախրահոչակ Վէլիչկօն հանդիսացաւ: Մենք մի քանի անգամ շեշտել ենք որ նոր Փոխաբքայի օրով այդ քաղաքականութիւնը դատապարտուեց և այժմ սկսուել է վերանորոգումների մի շարք, որոնց շնորհիւ Կովկասը կրկին կանգնելու է կուլտուրական խաղաղ զարգացման ճանապարհի վրայ: Սակայն մի բան նկատելի է ջարդերից յետոյ. այդ այն է որ այժմ իւրաքանչիւր բեֆորմի մէջ հայը ուզում է տեսնել թէ ռուսափոխադրածելի է այդ բեֆորմը թուրք-հայկական ներկայ յարաբերութիւնների տեսակէտից, քանի որ թուրք տարրը ցոյց տուեց իր բարոյական, մտաւոր կերպարանքը ամբողջապէս: Եւ մի յոռետես թախիժ համակում է հայի բոլոր մտածողութիւնները այդ բեֆորմները քննութեան առնելիս. ինչպէս անել որ երկրի բարօրութեան համար ծրագրուող այս կամ այն բեֆորմը թուրքական յետամնացութեան շնորհիւ այնքան չայլանդակուի իրականութեան մէջ որ մի նոր պատուհաս չգառնայ: Եթէ հայի հարեանները լինէին միայն վրացիներ, ուսը, որոնք նոյն կուլտուրական իդէալներն ունեն, ինչ և հայերը, հարկ չէր լինի որեւէ ուշադրութիւն դարձնել խնդրի էթնոգրափիական կողմի վրայ, սակայն թուրքը իր աշխարհայեցողութեամբ, ցեղական ինստիտուտներով, կրօնական իդէալներով և ամբողջ էութեամբ բոլորովին այլ աշխարհ է ներկայացնում և այդ հանգամանքը անկարելի է ինկատի չունենալ և միջոցներ ձեռք չառնել թուրքի հակակուլտուրական ոտնձգութիւնների դէմ: Թուրք տարրի յետամնացութիւնը, ինչպէս երևում է, հոգս է պատճառում և երկրի Փոխաբքային, որ առանձին նամակով, ուղղած Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուին՝ առաջարկում է ամեն տեսակ դիւրութիւններ տալ մուսուլմանների կրթութեան գործին, որպէսզի այդ տարրը կարողանայ շուտով հաղորդակից լինել համամարդկային կուլտուրային:

Մեր երկրի համար ծրագրուած բեֆորմների շարքում առաջնակարգ տեղ պէտք է բռնի Փոխաբքայի որոշումը՝ մըտցնել Հարաւային Կովկասի բոլոր նահանգներում 1864 թուականի գեմատլօն այն Փոփոխութիւններով, որ թելադրում են տեղական առանձնայատուկ պայմանները:

Տեղական ինքնավարութիւնը վաղուց է եղել ազգաբնակչութեան առաջադէմ մասի տենչանքը: Այժմ, երբ ամբողջ Ռուսաստանի ներքին կեանքի համար աւելի արմատական բեֆորմներ են սպասուում, ի հարկէ, գեմատլօն, մանաւանդ այն սեղմումներով որ մտցրել էր նրա մէջ բիւրոկրատիան, այնքան

էլ մեծ հրճուանք չի յարուցանում ժողովրդի մէջ, որովհետև նրա հիմքերը հաստատուած են նեղ դասակարգային շահերի վրայ և խոշոր կալուածատէրերին տրուած է գերիշխող դրութիւն: Այժմ երբ յարուցուել է ժողովրդային ներկայացուցչական մարմնի հարցը և անհամբեր սպասուում է սահմանադրական կարգերի ներմուծում Ռուսաստանի կեանքի մէջ—բնական է որ տեղային ինքնավարութիւնը հին բեժիմի հիմքերով չի կարող գոհացնել ազգաբնակութեան լայն խաւերը և որոշ կորրեկտիւները զեմստովային նոյնիսկ լաւագոյն, 1864 թ.-ի, կանոնադրութեան մէջ մի անհրաժեշտութիւն է դառնում: Այն բաղձանքները որ յայտնուած են տեղական ինքնավարութեան մասին հայ ժողովրդի մշակած հանրագրի մէջ, ըստ մեր համոզման, տալիս են ցանկալի կորրեկտիւներ ռուսագիծը: Եթէ չի մոռացել ընթերցողը, այդ հանրագրի մէջ (տես «Մուրճ» № 5) ասուած է. «Մտցնել Անդրկովկասում տեղական անդասակարգ ինքնավարութիւն լայն հիմունքներով, հիմնելով. ա) ինքնավար մանր գեմստովային միութիւն, բ) գաւառական (առանց նահանգականի) զեմստովո, առանձնացնելով քաղաքային ինքնավարութիւնը իբրև առանձին միութիւններ և, գ) մէկ Համ-Անդրկովկասեան զեմստովային ժողով, որը իրաւունք պիտի ունենայ օրէնքներ առաջարկելու և նախօրօք քննելու Անդրկովկասին վերաբերեալ օրէնսդրութիւնները»:

Մանր զեմստովային միութիւն ասելով հասկանում ենք մերձաւորապէս այն, ինչ որ բոճում է գաւառամասը (полиц. участокъ): Օրինակի համար, Նախճաւանի գաւառը բաժանուած է 4 գաւառամասի (полиц. участ.), որոնցից 1-ինը բաղկացած է երեք գիւղական հասարակութիւններից (Թմբուլի, Կըվրախի, Շըխմախմուղի), 2-րդը՝ 4 գիւղական հասարակութիւններից (Ջահրի, Բիշանագի, Դիգին—Ալմալինի, Ղարաբաբի), 3-րդը՝ 3 գիւղ. հաս. (Նեհրամի, Ղազանչիի և Ապրակունիսի), 4-րդը՝ 4 գիւղ. հասարակութիւններից (Վերին-Ադուլիսի, Չանանարի (Ցազնա), Վանանդի և Վերին Աղայի): Իւրաքանչիւր գիւղական հասարակութեան մէջ մտնում են 5—10 գիւղեր: Եթէ ի նկատի ունենանք տեղական ինքնավարութեան առարկաները, մենք կը համոզուենք որ չափազանց մանր ինքնավար բջիջները անտեսապէս շատ թոյլ կը լինեն իրագործելու տեղական տնտեսական շահերին և կարիքներին վերաբերեալ մի շարք ձեռնարկութիւններ, օր., ճանապարհներ շինել, հիւանդանոց հիմնել, գոյքերի փոխադարձ զեմստովային ապահովութիւն մտցընել, տեղական ատևտրի և արդիւնագործութեան մէջ փոքր ի շատէ նշանաւոր նորոգութիւնները ներմուծել, վարկային հիմնար-

կուլթիւններ բանալ, անասունների կոտորածների առաջն առնել, ցանքսերի պահպանութեան և առհասարակ գիւղատնտեսական բարոքութեան մասին լուրջ միջոցներ գործադրել: Չափազանց մանր զեմսովային բջիջը նիւթականապէս անզօր կը լինի այդ բոլորը իրագործելու: Հետևաբար, մանր զեմսովային միութիւն ասելով պէտք է ի նկատի ունենալ յամենայն դէպս գիւղական հասարակութիւններից բարձր մեծութիւն, որ ունենայ կարողութիւն իր ֆունկցիաները սեփական ոյժերով կատարելու: Միւս կողմից երբ արդէն կը կազմուի այդ միութիւնը, հարկ չի լինի ստեղծել բացի նրանից և զաւտական զեմսովայինց՝ և՛ նահանգական զեմսովո, քանի որ մեր նահանգները այնպիսի լայնածաւալ տարածութիւն չեն բռնում, ինչպէս Ռուսաստանի ներքին նահանգները: Նահանգական զեմսովոների տեղ անհրաժեշտ կը լինի ստեղծել Անդրկովկասը միացնող մի ընդհանուր օրգան, մի Համ-Անդրկովկասեան սէյմ վերև յիշած ֆունկցիաներով:

Մեր թուրք-հայկական նահանգներում բարբրախտաբար չկայ աղնուական դասակարգ, որովհետև թուրք բէգերի և խաների «աղնուական» յաւակնութիւնները դեռ ևս օրինական նուիրագործում չեն ստացել: Այդ պատճառով զեմսովոն այդ նահանգներում կարող է ստանալ աւելի զեմոկրատիական բնաւորութիւն, քան վրացական նահանգներում է: Եւ այդ զեմոկրատիական, ռամկավարական սկզբունքը աւելի ևս կ'ամրապնդուի զեմսովային գործունէութեան ընթացքում, որովհետև զեմսովային հաստատութիւնները իրանց բնաւորութեամբ արդէն չէզոքացնում են այն վատ պայմանները, որոնք բէգերի, խաների և մուլաների ձեռքում դաւնում են դէնք, թուրք ամրոխի յետամնացութիւնը պաշտպանելու՝ շահագործման նպատակով: Բոլոր ասուածները ինկատի ունենալով չի կարելի չցանկանալ որ մեր ժողովուրդը կատարեալ գիտակցութեամբ աշակցի տեղական լայն ինքնավարութեան, աշխատելով դաւառական և նահանգական ապագայ խորհրդածութիւնների մէջ պաշտպանել զեմոկրատիական սկզբունքները: Հայ ազգը իր կազմով և ձգտումներով ամենադեմոկրատ ժողովուրդն է, այդ պատճառով նրա շահերը երբէք չեն հակասում միւս ժողովուրդների շահերին...

«Մշակ»-ում կարդում ենք հետևեալ ուրախալի լուրը.

«Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, երէկ, օգոստոսի 2-ին, ժամը 5¹/₂-ին կէսօրից յետոյ այցելեց Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ Լուսն Վորոնցով-Դաշկովին, ուղեկցութեամբ Գարեգին եպիսկոպոս Սաթունեան և

Նահապետ եպիսկոպոս Նահապետեան սրբազանների ու թարգման—դիւանապետ Յուսիկ վարդապետի:

Կովկասի Փոխարքան ընդունելով Վեհափառին, առաջնորդեց կոմսուհի Վորոնցով-Դաշկովի ընդունարանը: Վեհափառը յայտնեց, որ մտաւիր լինելով շուտով վերադառնալ Էջմիածին, իր պարտքը համարեց դալ և հրաժեշտ տալ կոմսին և կոմսուհուն ու օրհնել նրանց և խնդրել միևնոյն ժամանակ փութացնել եկեղեցական և դպրոցական հարցերի լուծումը, որին անհամբեր սպասում էր քովանդակ հայ ազգը և հայոց եկեղեցին:

Կոմս. Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը հաղորդեց Վեհափառ Կաթողիկոսին հետևեալը. «Շատ ուրախ եմ հաղորդելու Ձեզ, որ ի նկատի առնելով Ձեր խնդիրքը և յարգելով իմ միջնորդութիւնը, Թագաւոր Կայսրը բարեհաճեց նպաստաւոր մտքով վճռել հայոց եկեղեցական կալուածների վերադարձման և հայ դպրոցների բացման հարցը: Թագաւոր Կայսրը հաստատել է այդ մասին արած իմ զեկուցումը»:

Հսկելով այդ ուրախալի յայտնութիւնը, Վեհափառ Կաթողիկոսը, օրհնելով Թագաւոր Կայսրին, ասաց, որ ինքն համոզուած էր Թագաւոր Կայսրի առ հայոց ազգը և եկեղեցին ունեցած դուրսի մասին, բայց կայսերական շնորհի ստանալը իր, Փոխարքայի ջանքերին է պարտական, ուստի և նորից օրհնում է նրան ու ամուսնուն: Միևնոյն ժամանակ Վեհափառ Կաթողիկոսը հարցրեց, կարո՞ղ է կայսերական այդ արդարադատ որոշումը անմիջապէս հաղորդել Կ. Պոլսի հայոց պատրիարքին և թեմական առաջնորդներին: Փոխարքան պատասխանեց, որ կարող է:

Խօսակցելով մօտ 35 րոպէ կոմսի և կոմսուհու հետ, Վեհափառ Կաթողիկոսը հրաժեշտ տուեց և խաչակնքելով ու օրհնելով նրանց մեկնեց:

Վեհափառ Հայրապետի Դիւանատունը, հայրապետական դիւանի համաձայն, հեռագրական հաղորդագրութեամբ հրէկ, օգոստոսի 2-ին, յայտնեց Կ. Պոլսի սրբազան պատրիարքին և բոլոր թեմական առաջնորդներին եկեղեցական կալուածների վերադարձման և դպրոցների վերաբացման մասին կայացած կայսերական ուկազլի ստորագրումը:»

Ահա այսպէս մեր հասարակութեան առաջ բացւում է լայն ապարէզ իր բոլոր մտաւոր, բարոյական և նիւթական ուժերը դործադրելու մեծ ստեղծագործութեան աշխատանքների մէջ, որոնք խոստանում են աւելի բախտաւոր ապագայ, քան ունե-

ցանք մինչև այժմ: Չպէտք է մոռանանք հին փորձերն ու փորձանքները և միահամուռ ուժերով ղեմենք առաջ:

Լ. Ս.

Օգոստոսի 3

Կովկասեան երկրի ընտկիչներին

Մի քանի ժամանակից ի վեր, մանաւանդ ներկայ տարուայ փետրուարի 5—10 Բագուի տխուր դէպքերի օրերից յետոյ, Կովկասի երկու ազգութիւններին՝ հայերի և մուսուլմաններին մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնները ստացան չափազանց թշնամական բնաւորութիւն և Բագուի աղէտից յետոյ առաջ եկան արիւնոտ ընդհարումներ յիշեալ երկու ազգութիւնների մէջ՝ նախ Նախիջևանում և Նախիջևանի գաւառում և ապա Երևանում և Երևանի նահանգի զանազան տեղերում: Անկարգութիւնների տևողութիւնը՝ շնորհիւ այն հանգամանքի, որ զրանք ծագում էին ցիրուցան տեղերում և հետու զօրքի բնակավայրերից, և գուցէ տեղական իշխանութիւնների մի քանի դէպքերում կարգադրութեան բացակայութիւնից, առիթ տուին մի կողմից անբարեմիտ անձանց՝ ժողովրդի մէջ լուր տարածելու՝ իբր թէ այդ անկարգութիւնները քաջալերութիւն են ստանում կառավարութիւնից և միւս կողմից—հաւատալու այդ լուրերին: Անուշադիր թողնելով այդ չարամիտ, հնարովի լուրը, որ հակասում է առողջ դատողութեան, ես պարտք եմ համարում դառնալ Բարձրագոյն կամքով իմ կառավարութեան յանձնուած երկրի ընտկիչներին՝ առանց խտրութեան կրօնի և ազգութեան, հրաւիրելով նրանց մոռանալ կորստարեր տոհմային թշնամութիւնը, որ տանում է դէպի փոխադարձ կոտորած և աւերում, և միանալ միահամուռ աշխատանքի ի բարօրութիւն Կովկասի, ի բարօրութիւն կանանց և երեխայոց, յիշելով որ միայն ընդհանուր խաղաղ աշխատանքը ազգութիւնների՝ որոնք պատմական ճակատագրով անքակտելի կերպով կապուած են իրար Ռուսաց Պետութեան Գայտոնի տակ, կարող է օգնել ծաղկեցնելու թէ ամբողջ տէրութիւնը և թէ Յորին Կայսերական Մեծութեան իւրաքանչիւր հաւատարիմ հպատակին առանձնապէս:

Ձեռնարկելով բացառիկ միջոցների, ի պաշտպանութիւն այն տեղերի, ուր վերջին ժամանակ կատարուեցան տխուր ընդհարումներ և ուր յաճախ կրկնուեցան քստմնելի յանցանքներ, ես ցանկանում եմ հաւատալ որ դէպի բնակիչներն ուղղած իմ անկեղծ համոզմունքի խօսքը աւելի շուտ առաջ կը բերէ խա-

դադութիւն և կրքերի հանդարտութիւն, քան զինուորական զըրութեան այն խիստ կանոնները, որոնց վերացնելու համար կը միջնորդեմ Թագաւոր Նայսեր առաջ անյապաղ այն դէպքում, հէնց որ այդ կարելի կը լինի:

Հրաւիրելով դէպի կրքերի հանդարտութիւն և խաղաղ աշխատանք, մեծայոյս եմ որ բնակիչներին մէջ յարգ ու պատիւ վայելող ազդեցիկ անձինք, մանաւանդ բոլոր կրօնների տեղական հոգեւորականութիւնը, չեն խնայել իրանց բեղմնաւոր օգնութիւնը այս դէպքում:

Հերիք են թշնամութիւն, փոխադարձ սպանութիւններ, աւերածներ և գաղտնի անվտանգութիւն. հերիք են սրանցից առաջացած խռովութիւնները, հերիք է զուր թափուած արիւնն ու արտասուքը:

Սորին Նայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ, գեներալ-ադիւդանտ Կոմս Վորոնցով-Դաշկով:

Սորին Նայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ գեներալ ադիւդանտ Կոմս Վորոնցով-Դաշկովի Յայտարարութիւնը

(Շրջաբերական՝ ուղարկուած նահանգապետներին, դաւառապետներին, ոստիկանապետներին, պրիստաներին՝ զիւղական ժողովրդի մէջ տարածելու համար):

Մեր ամենաողորմած Թագաւոր Կայսրի կամքով և վստահութեամբ իմ կառավարութեան յանձնուած այս երկիրը գալով, ես ցաւօք սրտի տեսայ, որ մի քանի տեղերում զիւղացիները, չարամիտ ժարդկանցից զրդուած՝ համարձակուել են ինքնակամ և բռնի գրաւել մասնաւոր կալուածատէրերի հողերը և անտառները, ոչնչացրել են նրանց տները և կողոպտել ստացուածքը: Սրա հետ միասին, իմ գիտութեան հասցրին և զանազան դիմումներ ու ցանկութիւններ, որ ամուսն էին գիւղացիները բերանացի և զրաւոր՝ իրանց տնտեսական և հասարակական կարիքների մասին: Յայտարարում եմ՝ Կովկասի երկրի բոլոր զիւղացիներին.—1) Օրէնքը խիստ պաշտպանում է ամեն սեփականութիւն անիրաւացի ձեռնմխութիւնից և առաւել ևս բռնի յափշտակութիւնից և ենթարկում է այդ տեսակ յանցաւորներին ոչ միայն ծանր պատժի, այլ նիւթական պատասխանատուութեան, ուրիշ սեփականութեան փաստաւորուած համար: Այսպէս, Թագաւոր Կայսրը՝ Իր Բարձրագոյն ուկազով, գրուած կառավարչական սենատին ապրիլի 10-ին 1905 թ., Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ սահմանել անկարգութիւն

պատահած դաւառներում առանձին ժամանակաւոր կոմիտեաներ, գիւղացիների յանցաւոր ժողովներում մասնակցող մարդկանց որոշելու և նրանց պատճառած ֆեւանների չափը հաշուելու համար: Այդ ֆեւանները պէտք է պահանջուեն գիւղացիների ժողովների մասնակցող և անկարգութիւններ ու կողոպտումներ սարքող գիւղական և շինական հասարակութիւնների բոլոր անդամների ստացուածքները: Այդպիսի կոմիտեաներ պէտք է հաստատուեն և Անդրկովկասի այն դաւառներում, որտեղ անկարգութիւններ են տեղի ունեցել:

Վերոյիշեալ գիւղական հաստատութիւնների կողմից իրանց կարիքների և ցանկութիւնների մասին ինձ տրուած յայտարարութիւնների մէջ ես գտնում եմ ուշագրութեան արժանի այն կէտերը, որոնք վերաբերում են՝ ժամանակաւոր պարտադիր գիւղացիների գէպի իրանց կալուածատէրերը ունեցած յարաբերութիւններին, հերկելի հողերին, արօտատեղերի և անտառների պակասութեան, գիւղական ներկայ հասարակութիւնների անբաւարար կազմութեան և շինական պաշտօնական անձանց ռոճիկի սակաւութեան, քահանաների օգտին նրանցից պահանջուող տուրքի անորոշութեան, գոյութիւն ունեցող շինական գաղութների անբաւարարութեան, հիւանդանոցներին վերապահուած ծախսերի ծանրութեան, գիւղական հասարակութիւնների ճանապարհային և սայլային տուրքերի անհաւասար բաժանման, այժմ գոյութիւն ունեցող արքունի, գէմսովային և հասարակական զբոսայգիների տուրքերի և հերկերի գանձման անբաւարարութեան:

Այս բոլոր յայտարարութիւնները ես հրամայեցի անյապաղ մշակել մանրամասնօրէն և ապա քննել հարկաւոր դէպքում շինական հասարակութիւնների միջից ընտրած ներկայացուցիչների՝ մասնակցութեամբ: Ապա ես կը ձեռնարկեմ ամեն միջոցների շուտով բաւարարութիւն տալու գիւղական հասարակութիւնների օրինաւոր ցանկութիւններին և անկարգութիւնների վերացման, որոնք խափանում են գիւղացիների բարեկեցութեան զարգացումը և նրանց աշխատաւոր կեանքի հանգիստ և կանոնաւոր ընթացքը: Բայց նախագրեւապէս եմ, որ գիւղացիները ոչ մի գէպքում չպէտք է յոյս ունենան իրանց հողաբաժինները մեծացնելու—մասնաւոր կալուածատէրերի հողերի հաշուով: Օրէնքը՝ պահպանելով գիւղական հողաբաժինների անձեռնմխելիութիւնը, հաւասար կերպով պարտաւոր է պաշտպանել և տմեն մի մասնաւոր սեփականութիւն: Այդ պատճառով, հողաբաժիններից դուրս եղած հերկելի հողերից, արօտատեղիներից և անտառներից օգտուել—գիւղացիները կարող

են միայն այն դէպքում, երբ մասնաւոր համաձայնութիւն կայացնեն նրանց տէրերի հետ: Բայց ես միջոցներ ձեռք կառնեմ բաւարարութիւն տալու համար գիւղացիների հողային պահանջներին, յանձնելով նրանց օգտուելու արքունի ազատ հողերով, նպաստաւոր պայմաններով, և ձեռք բերել մասնաւոր հողատէրերի հողերը, գնելով այդ հողերը գիւղական հողային բանկի աջակցութեամբ:

Ի վերջոյ, հրաւիրում եմ գիւղացիներին ղրադուել հանգաւոր իրանց տնտեսական գործերով, չհաւատալ չարամիտ անձանց շշուկներին, և յիշել, որ Թագաւոր Կայսրը կայսրութեան ժողովրդի բարօրութեան համար ունեցած Իր հոգսերից գլխաւորն համարում է մեծաքանակ գիւղական դասակարգի ամենալաւ կենցաղի բարեկազմութիւնը:

Գինեւրալ-աղիւղանաւ կոմս Վորոնցով-Դաշկով:

Մի կարեւոր քաջատրութիւն

Մայրաքաղաքի մի քանի թերթերում լոյս տեսան մի քանի յօդուածներ, որոնք նուիրուած էին Կովկասում ոստիկանութեան գլխաւորի նոր պաշտօն հաստատուելու մասին և որոնց մէջ ի միջի այլոց մատնացոյց էին անում այն հանգամանքի վրայ, որ մայիսի 22-ին Բարձրագոյն հրամանով ներքին գործոց մինիստրի օգնականին շնորհած առանձին լիազօրութիւնը, որ տարածուած է նաև ոստիկանութեան վրայ, ցոյց է տալիս տէրունական քաղաքականութեան հակուիլը դէպի ըէակցիա ընդհանրապէս և մասնաւորապէս Կովկասի համար նշանակում է բեպրեսիական այն սխտեմի շարունակութիւնը, որը գործադրուած էր իշխան Գոլիցինի ժամանակ:

Ձօշափելով ներքին գործոց մինիստրի օգնականին շնորհած այն լիազօրութեան պատճառները, որի իրաւասութեան ներքոյ գտնւում է և ոստիկանութեան կառավարութիւնը, և ոչ մի առանձին նշանակութիւն չտալով, որ այդ փաստը եղաւ ճիշդ այն ժամանակ, երբ Կովկասում ոստիկանութեան գլխաւորի պաշտօն հիմնեցին, վերջին փաստի առիթով «РАЗСВѢТЪ» լրագիրը հաղորդում է հետեւեալ փաստերը, որ իբր թէ նա հաւաքել է փոխարքայութեան կազմակերպութեան գործին շատ մօտ մասնակցութիւն ունեցող մի անձից:

Կովկասում ընդհանուր և քաղաքական ոստիկանութեան կազմակերպութեան հարցը վաղուց է կազմում Փոխարքայի առանձին հոգատարութեան նիւթը, որ շատ լաւ գիտակցում

է այդ հիմնարկութիւնների դեֆեկտը իր կառավարութեան յանձնուած երկրի համար: Հէնց զրա համար էլ Փոխարքան վրդովուած երկրի խաղաղութեան գործը իր վրայ վերցնելով, ջերմ ցանկութիւն յայտնեց ամեն միջոցների գիմելու վերոյիշեալ հիմնարկութիւնները կանոնաւորելու և նրանց գործունէութիւնը խիստ օրինաւորութեան հոգի վրայ միացնելու, առաջնորդելով այն հիմնական մտքով, որ Կովկասի վարչական իշխանութիւնների ոչ կազմակերպուած և թոյլ լինելը, որ մանաւանդ աչքի ընկաւ Բագուի, Օզուրգէտի, Նրեանի և ուրիշ տեղերի ցաւալի անցքերի ժամանակ, յաճախ պատճառ է այն կամայականութեան գործադրութեան, որի հետացնելը Փոխարքայի ամենապիտաւոր խնդիրն է կաղմուծ: Որովհետեւ ընդհանուր և քաղաքական ոստիկանութեան այս կամ այն պաշտօնեաներից և նրանց, իրանց պարտականութեան գիտակցութիւնից է կախուած ընակիչների խաղաղութեանը և վերջիններիս իշխանութեան վերաբերմամբ տաժած վստահութիւնը, զրա համար էլ Փոխարքան անհրաժեշտ համարեց իր խընամբին Բարձրագոյն յանձնուած երկրում մի այնպիսի օրգան ստեղծել, որ յարմարութիւն տար ամբողջ երկրի ոստիկանութեան պաշտօնեաների գործողութիւնները բազմազան կոնտրոլի ենթարկելու և բացի դրանից նա միացրել է ոստիկանական բոլոր հիմնարկութիւնների գործունէութիւնը խիստ օրինաւորութեան հոգի վրայ: Այդ գործունէութիւնը պէտք է համապատասխան լինի Կովկասի վերաբերմամբ տէրունական քաղաքականութեան այն հիմնական սկզբունքներին, որոնց մասին Փոխարքան արդէն յայտնել է Կովկասի ազգաբնակչութիւնից իրան ներկայացած զանազան պատգամաւորութիւններին: Հէնց այդ նպատակով էլ յայտարարուել է մայիսի 22-ի օրէնսդրական ակտը, որ հետեւապէս ըէակցիայի սկզբնաւորութեան նշան չէ, կամ թէ որ և է փոփոխութիւն՝ Փոխարքայի վերոյիշեալ հիմնական հայեացքների մէջ նրա առաջիկայ հոգատարութեան նիւթ կազմող հարցի վերաբերմամբ: Բարձրագոյն հրամանը իրականացնում է Փոխարքայի այն ցանկութիւնը, որով նա կամենում է իր կառավարութեան յանձնուած երկրում վրդովուած խաղաղութիւնը վերականգնել: (Кавказъ):

Նրեանի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ պրինց Լուի Եսպուլէօնի կողմ Նրեանեան նահանգի ազգաբնակչութեան

Ներկայ տարուայ յունիսի 16-ի Բարձրագոյն ուկագով

Երևանեան նահանգը յայտարարուել է զինուորական դրութեան մէջ:

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի հրամանով, լիազօրութիւն ունեւ իմ իշխանութեամբ ձեռնարկելու այն միջոցներին, որոնք ցոյց են տրուած այդ օրէնքների 19-րդ յօդ. (նկատ. նահ. ընդ. կանոն. 23-րդ յօդ.):

Կառավարութիւնը դիմեց այդ միջոցին՝ որպէս զի Երևանեան նահանգում կարգ մտցնէ, և վերականգնէ կեանքի, աշխատանքի սովորական պայմանները, որ անդադար խափանւում են երկու ազգութիւնների անմիտ թշնամութեամբ վերջին ամիսների ընթացքում և, որպէս հետեանք այդ թշնամութեան, ամեն մի առողջամիտ մարդու համար խորապէս վրդովեցուցիչ բռնութիւններով, սպանութիւններով, կողոպտումներով, հրդեհներով, որոնք հասցրին ազգաբնակչութեան մեծամասնութիւնը տնտեսական լիակատար քայքայման և աղքատութեան:

Երեւանի նահանգի հայ եւ թուրք ժողովուրդը եւ ոչ մի բոլէ չեմ կասկածում, որ ձեր մէջ չգտնուի խելացի, տոկուն, հոգով ամուր և ազդեցիկ մարդկանց մի յայտնի թիւ, որոնք, տեղի ունեցող դէպքերից վրդովուած, գիտակցելով ձեզ և ձեր ընտանիքներին մեծամեծ աղէտներ սպառնացող ֆլաքը, որ վերջին ժամանակներս մտցրեց ձեր տներում խռովութիւն և վիշտ՝ չգտնէին իրանց մէջ հոգու բաւական ոյժ, որպէսզի իրանց ազդեցութեամբ խանգարուած կարգը վերականգնեն և դրանով ինձ միջոց տան աւանց գոհերի, ի կատար ածել ինձ վրայ դրած պարտքը՝ ձեր մայրենի երկիրը խաղաղացնելու և վերականգնելու նրա մէջ օրինական և սովորական կարգը:

Դրա հետ միասին, սակայն, իմ պարտքն եմ համարում յիշեցնել ձեզ, որ միայն այդ պայմանում կարելի է խուսափել այն պատահականութիւնից և դժբաղդութիւնից, որ անխուսափելի կերպով կը ծագեն խստագոյն միջոցների գործադրութիւնից. իսկ այդ միջոցներին ստիպուած կը լինեմ դիմել, եթէ ձեր մէջ չգտնեմ կարևոր աջակցութիւն:

Ժամանակաւոր գեներալ-նահանգապետ գեներալ-մայօր Մապրլէօն:

Պաշտօնական հաղորդագրութիւն

Անցեալ ամսի վերջին Կովկասի Փոխարքայի սլաւատի աստակալքում եղած տեղերի վրայ հսկողութեան ժամանակ նշկատուեց, որ մի քանի կասկածելի անձեր էլ իրանց կողմից

հսկում են պալատի վրայ որոշ ժամերին, առաձնապէս ուշադրութիւն դարձնելով պաշտօնատար անձերի գալու և մեկնելու վրայ:

Այդ պատճառով այդ անձերի վրայ հսկողութիւն նշանակուեց, որը և ցոյց տուեց նրանց ծանօթութեան ու յարաբերութեան բաւական մեծ շրջանը Թիֆլիսում այնպիսի անձերի հետ, որոնք արդէն ոստիկանութեանը յայտնի էին իրանց քաղաքական անբարեյոխուութիւնով: Այդ կապերը քննելով, հաստատուեց, որ յուլիսի 28-ին հսկողութեան ենթակայ անձերից մէկը Միշենկոյի լուսանկարչատնից գնեց Կովկասում գէմատովային հաստատութիւններ մտցնելու համար կազմուած ժողովին մասնակցող անձերի խմբական պատկերը, իսկ հետեւեալ ղիտողութիւնները ցոյց տուին, որ պալատի վրայ հսկող անձերը հաւաքուած են «Գրանդ-Օտէլ» հիւրանոցում, և ժողովուած են խիստ զաղտնարար. իսկ վերջին օրերն էլ, այդ բոլորից անկախ, նկատուեց, որ նրանք այդ հիւրանոցն են բերում մի տեսակ ծանր փաթէթներ: Հիւրանոցից իմացուեց, որ այդ անձերը հաւաքուած են սովորաբար № 28-ում, ուր տեղափոխուել էր նոյն հիւրանոցի № 30-ում առաջ բնակուող մի վրացի երիտասարդ, որի կեանքի եղանակը և վարմունքը գրաւել էին բոլորի ուշադրութիւնը իրանց տարօրինակութիւնով:

Այդ փաստերն աչքի առաջ ունենալով, որոշուեց ձերբակալել այդ անձերին:

Յուլիսի 31-ի ցերեկուայ 12^{1/2} ժամին այդ անձերին բռնելու համար «Գրանդ-Օտէլ» եկած ոստիկանական պաշտօնեաները յանկարծ ներս մտան № 28 սենեակը: Այդտեղ նրանք յանկարծակիի բերին 4 հոգու, որոնք աշխատում էին դիմադրութիւն ցոյց տալ և վերցնել իրանց առաջ դրուած «Բրաունինգի» լիքը ատրճանակը և նրա պատրաստի փամփուշտների շարանը: Մի և նոյն ժամանակ նրանցից մէկը փորձեց վազել դէպի սենեակում եղած վառարանը, որի մէջ, ինչպէս յետոյ երևաց, պահուած էին լցուած պատրաստի ռումբեր: Բայց ձերբակալուածների բոլոր ջանքերն ի զուր անցան՝ ոստիկանական խմբի շնորհով: Ձերբակալուածներից մէկը ոստիկաններից մէկի գլխին վերքեր հասցրեց:

Վրայ հասաւ դատական իշխանութիւնը Թիֆլիսի դատաստանական պալատի պրոկուրոր Ալէքսանդրով-Դունիկովի գլխաւորութեամբ և սկսուեց № 28 սենեակի խուզարկութիւնը. վառարանի մէջ գտնուեց 7 հատ պայթուցիկ ռումբ, «մակեդոնական» կոչուած տեսակից, մեծ և միջակ չափերով, որոնցից 2-ը արդէն պատրաստուած էին նետուելու համար, ունէին

աւժանակ, որոտացող սնդիկ, բիկֆորդէ պատրոյգներ և պայթեցնելու պիստոններ: Նոյն տեղում գտնուեցին Կովկասի Փոխարքայի և Կովկասեան ոստիկանութեան կառավարչի պատկերները, որ ըստ երևութիւն կտրուած հանուած էին զեմսովային ժողովի ընդհանուր խմբից, զենեքալ-մայօր Շիրինկինի մահուան դատավճիռը «Սոցիալիստ-րէվոլյուցիոնէրների կուսակցութեան Թիֆլիսի ռազմական կազմակերպութեան» անունից տրուած:

Ձերբակալուած անձերի անցագրերի մէջ նշանակուած են նրանց անունները. 1) Դաւիդ Կաչաուրի, 2) Շիօ Պաւլիաշվիլի, 3) Գասպար Կօչարով և 4) Միխայիլ Պետրով: Բոլորն էլ բանտարկուած են և բացուած է քննութիւն քրէական օրէնսդրութեան 1035-դ յօդուածի համաձայն: («КАВКАЗ»:

Պետերբուրգ. Պաշտօնական. Բարձրագոյն Հրովարտակ կառավարիչ Սենատին.

Կովկասում Մեր փոխարքայութիւնը վերականգնելով՝ Մենք Կովկասը կառավարելու համար Մեր վստահութեամբ ընտրուած անձի վրայ հոգացողութիւն դրինք վերհաստատել այդ օրհնեալ երկրում հասարակական կեանքի խանգարուած ընթացքը: Այժմ Փոխարքան ծանօթանալով իր խնամքին յանձնուած երկրի պայմաններին, Մեզ առաջադրութիւններ ներկայացրեց՝ փոփոխելու մի քանի կարգադրութիւններ, որոնք վերաբերում են ազգաբնակչութեան հայկական մասին և զժողովրդացնում են նրա կանոնաւոր և խաղաղ զարգացումը: Բարեոք համարելով հաստատել Մեր Փոխարքայի առաջադրութիւնը շնորհում ենք Հայ-Ղուսաւորչական հոգևորականութեանը միջոցներ լայն լուսաւորիչ գործունէութեան՝ յօգուտ ժողովրդի: Հրամայելով ընդ սմին յետ դարձնել՝ ստորև ցոյց տրուած հիմունքներով՝ այն գոյքերը, որոնք վերցնուած էին Հայ եկեղեցական հաստատութիւններից, Մենք թոյլ ենք տալիս Մեր Փոխարքային այժմ և եթ իր իշխանութեան յանձնուած երկրի սահմաններում ժամանակաւորապէս գործադրել՝ մինչև օրէնսդրական կարգով քննուելը՝ կազմուած կանոնները, որոնք պէտք է ապա-

հովեն ծխականների մասնակցութիւնը եկեղեցական գոյքերի կառավարմանը. իսկ որպէսզի այսուհետեւ վերացուեն այն թիւրիմացութիւնները, որոնք առաջ էին դալիս գործող օրէնսդրութեան թերութիւնից, Փոխարքան պէտք է քննութեան ենթարկէ այն հարցը, թէ ինչպէս պէտք է որոշակի սահմանել պետական իշխանութեան յարաբերութիւնը դէպի Հայ եկեղեցական հաստատութիւնները: Ըստ այսմ հրամայում ենք ա) ի վերացումն 1903 թ. յունիսի 12 բարձրագոյն հրամանի՝ յանձնել Հայ եկեղեցական պատշաճաւոր հաստատութիւնների տնօրինման և կառավարման հայոց եկեղեցիներին, վանքերին, եկեղեցական հաստատութիւններին և հոգևոր ուսումնարաններին պատկանող բոլոր անշարժ գոյքերը ու զրամագլուխները և արքունի կառավարման ընթացքում ստացուած բոլոր եկամուտները բացի այն ծախսերից, որոնք տեղի են ունեցել այդ գոյքերի պահպանութեան համար, և բացի այն գումարներից, որոնք ծախսուել են այդ գոյքերը յարքունիս գրաւելու համար: Եկեղեցական հաստատութիւններին իրանց գոյքերը և եկամուտները յետ դարձնելը կատարել Մեր Կովկասեան Փոխարքայի, ներքին գործերի մինիստրի և երկրաշինութեան և երկրագործութեան կառավարչապետի համաձայնութեամբ. բ) Այդ գոյքերը և եկամուտները յետ դարձնելու ժամանակ հայ հոգևորականութեան յարուցանելիք խնդիրքների վերջնական լուծումը յանձնել Մեր Կովկասեան Փոխարքային: գ) Մինչև հայոց եկեղեցական դպրոցների նոր կանոնադրութեան մշակումը՝ իրաւունք տալ մեր Փոխարքային, որ Կովկասեան Փոխարքայութեան սահմաններում թոյլատրի եկեղեցիների և վանքերի կից եկեղեցական դպրոցներ բանալ 1874 թուի յուլիսի Բարձրագոյն հաստատուած կանոնների հիմամբ. զ) Յանձնարարել՝ ա) անյապաղ առաջադրութիւն ներկայացնել սահմանուած կարգով, առանց այլ տեսչութեան հետ բանակցելու, Հայոց դպրոցների նոր կանոնադրութեան հրատարակման մասին, կապելով այդ

հարցը այն խնդրի հետ, որ վերաբերում է հայոց եկեղեցուն այն անշարժ գույքերը և եկամուտները յետ դարձնելուն, որոնք յանձնուած են ժողովրդական լուսաւորութեան միւնիստրութեանը՝ Միւնիստրների կոմիտեի 1898 թ. 26 մարտի և 1903 թ. յունիսի 12-ի Բարձրագոյն հաստատուած կարգադրութիւնների համաձայն, բ) արքունի գանձարանի աջակցութեամբ մշակել նախագիծ հայոց եկեղեցուն պատկանող բնակչութիւն ունեցող կալուածների գիւղացիների համար և ներկայացնել այդ նախագիծը սահմանուած կարգով Մեր հաստատմանը: Սրա ի կատար ածման համար կառավարիչ Սենատը թող պատշաճաւոր կարգադրութիւն անի. իսկականի վրայ Նորին Մեծութեան սեփական ձեռքով ստորագրւուած է «ՆԻԿՈՒՅ»:

Պետերհօֆ

1905 թ., օգոստոսի 1-ին

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-ճապոնական պատերազմը.—Նաղաղութան կոնվերենցիան.—Գերմանիայի միսումները թխրփայում.—Նորս գիւղի դէպքը.—Սուլթանին սպանելու վտրմը:

Մինչ Ամերիկայի Միացեալ Նահանգների Պորտսմութ քաղաքում շարունակուած են ռուս-ճապոնական բանակցութիւնները խաղաղութիւն կնքելու մասին, ճապոնական երկու բանակներ, Սախալինում և Կորէայում, աշողութեամբ զարգացնում են պատերազմական գործողութիւնները: Գնեերալ Սասիգավան Կորէական Կիօն-Սիօնից առաջ է խաղում հիւսիս-արեւելք և հասել է Տիւմէն գետին, որ բաժանում է ռուսական հողը կորէականից: Ճապոնական այդ գնեերալի նպատակն է իհարկէ Վլադիվոստոկը: Միւս կողմից արդէն յուլիսի 11-ին Սիբիրիայի մայր ցամաքի վրայ իջան առաջին անգամ ճապոնացիները և հազար հոգով գրաւեցին Դե-Կաստրա ծովափնեայ աւանը: Յուլիսի 17-ին գնեերալ Սարազուէին արդէն յայտարարեց որ ամբողջ Սախալին կղզին միացրուած է Ճապոնիային և կղզու վրայ մտցրուած է ճապոնական վարչութիւն. այսուհետեւ Սախալինում ընդդիմադրութիւն ցոյց տուող ռուսները համարուելու են ապստամբներ: Սախալինի ռուսաց նահանգապետ Լեպոլոնովը, 700 օֆիցեր և 3200 զինուոր գերի ընկան յաղթողների ձեռքը: Յուլիսի 26-ին ճապոնացիները առանց որեւէ արգելքի իջան Դե-Կաստրայից հարաւ Նիկոլա Կայսրի հրաւանդանի մօտ և գրաւեցին Կոստանտինովսկիյ պահակավայրը: Մի քանի ժամանակ անց գրաւեցին և սուրբ Օլգայի ծոցը և այդպիսով Ուսուրեան երկրի ամբողջ ծովափը անցաւ ճապոնացիների ձեռքը՝ նրանք սկսել են իրանց գործողութիւնները արդէն Մեծն Պետրոսի ծոցում, այսինքն Վլադիվոստոկի շրերում:

Նաղաղութեան բանակցութիւնները շարունակուած են թէև, եզրակացութիւնների մասին պաշտօնական հաղորդագրութիւններ չկան, սակայն եւրոպական և ամերիկական ազդեցիկ թերթերի կարծիքով պէտք է լաւատես լինել դէպի արդիւնք-

ները: Այն յոյսը թէ բանակցութիւնները խաղաղութիւն կնքելով կը վերջանան մի քիչ աղօտուեց, երբ աշխարհը իմացաւ որ յուլիսի 10-ին Բիեօրկում տեսակցութիւն ունեցան գերմանական և ռուսաց կայսրները: 1896 թուականից Գերմանիան աշխատել է ռուսաց արտաքին քաղաքականութեան մէջ թելադրողի դեր կատարել: Բոլորին յայտնի է Վիլհելմի ձգտումը, Հեռաւոր և Մերձաւոր Արեւելքում համաշխարհային դեկավար լինելու յաւակնութիւնները: Միաժամանակ իրողութիւն է, որ վերջին տասն տարիների ընթացքում Գերմանիայի վաճառականութիւնը և արդիւնագործութիւնը հսկայական քայլերով առաջ գնալով, Անգլիայի կողքին բուսել է մի զօրեղ, հաստատակամ ու շահասէր մրցակից, որի ախորժակները գրգռուած են թէ Մերձաւոր և թէ Հեռաւոր Արեւելքի շուկաներով: Իր նըպատակներն իրագործելու համար Բիսմարկ-Մոլտկէի Գերմանիան ունի կոլոսսալ ցամաքային ոյժ, իսկ Վիլհելմի ջանքերով նաև բաւական պատկառելի նաւատորմ: Մակայն իրան ուժեղ զգալով հանդերձ, բիսմարկեան անսիրտ քաղաքագիտութեան հետևող Վիլհելմը գիտէ զանազան դիպլոմատիական խաղերով և հաշիւներով ևս թուլացնել իր նպատակների առաջ կանգնած խոչընդոտները, որոնց մէջ ամենախոշորներն են Անգլիան և Ռուսաստանը: Առաջինը թուլացնելու համար, հրճուանքով Վիլհելմ Ս-ը հեռագրներով խրախուսեց բօէրներին մի խիզախ կոիւ սկսելու: Այդ կուռի ժամանակ Գերմանիան շտապեց իր գործերը շտկել Թիւրքիայում: Իզուր էին բօէրները սպասում որ Վիլհելմը խօսքից գործի անցնի և օգնի իրանց. նա նոյնիսկ չընդունեց ջախջախուած հանրապետութիւնների ծերունի ներկայացուցիչ Կրիւրգերին. այլևս նա մի որևէ բանի ծառայելու անկարող էր... Հեռաւոր Արեւելքում Գերմանիան աշխատեց կռուացնել Ռուսաստանը Ճապոնիայի հետ, և մէջտեղում կտորներ պոկել Չինաստանից: Իր նպատակների համար Գերմանիան ամեն կերպ գրգռեց ռուս-անգլիական ատելութիւնը, աշխատեց խանգարել լաց դռների քաղաքականութիւնը Չինաստանում, որ ձեռնտու էր Անգլիային, Ճապոնիային և Միացեալ-Նահանգներին: Այժմ երբ դժբաղդ պատերազմի շնորհիւ Ռուսիան սթափուած՝ կարող է վերադառնալ այն քաղաքագիտութեան, որին նա հետևել է մինչև Լոբանով-Ռոստովսկին, Մերձաւոր Արեւելքում, Գերմանիան կ'աշխատի դեռ զբաղեցնել նըրան Հեռաւոր Արեւելքում, որովհետև Թիւրքիան դեռ ևս ամբողջապէս չի դառել գերմանական շահագործութեան առարկայ և համիսլամական դիմակը չի դառել համագերմանական ձգտումների ըէալ արտայայտութիւն: Աւելի ևս վտանգաւոր կը լինի

Գերմանիայի ղեկավարները թիւրքիայում, երբ Անգլիայում կառավարութեան ղեկը անցնի պահպանողականներից ազատականներին: Իսկ այդ բանը օրից օր սպասւում է, որովհետեւ անգլիական պահպանողականները պարլամենտում արդէն մի քանի անգամ պարտութիւն կրեցին և միայն Բալֆուրի երեսպնդութեան շնորհիւ ներկայ մինիստրութիւնը չտուաւ իր հրաժարկանը: Անգլիական ազատականները միշտ կողմնակից են եղել Անգլիայի մերձեցման Ռուսաստանին. իսկ երբ որ այդ իրագործուի, այդ երկու պետութիւնների կողմը կը լինի և Ֆրանսիան, որ այժմ երկուսի հետ էլ դաշնակից է: Այն ժամանակ այդ երեք պետութիւններից սուլթանը հազիւ թէ գտնի քրիստոնեաների բնաջնջման սխտեմի համար այն քաջակերութիւնը՝ որ ցոյց է տալիս նրան Գերմանիան՝ միացած Աւստրիայի հետ: Այս վերջինի մէջ համագերմանական պրոպագանդան ահադին նուաճումներ է արել և զուսմեալ Ֆրանց Յոլմէֆի մահից յետոյ դուրէ Աւստրիան դառնայ Գերմանիայի մասերից մէկը: Այն ժամանակ Բոսնան, Հերցեգովինան կուլ տուած Գերմանիային դժուար չի լինի հաստատուել և Սալոնիկում, ինչպէս նա հաստատուել է այժմ Փոքր Ասիայի Հայդար Փաշայում, Մարմարա ծովի ափում... Պարզ է որ արեւելեան հարցի լուծման համար ցանկալի է Անգլիայի և Ռուսաստանի մերձեցումը և ոչ Գերմանիայի գերիշխանութեան աճումը, որը աւելի ևս անգութ է դարձնում թիւրքական բեժիմը: Ամենաանսիրտ վաշխառուի նման Գերմանիան սառնասիրտ ակնատես է Մակեդոնիայում և Փոքր Ասիայում կատարուող բարբարոսութիւններին: Թէ ինչեր են տեղի ունենում քաղաքակիրթ աշխարհից մոռացուած այդ թշուառ վայրերում և այժմ, դրա մասին թոյլ դադափար է տալիս մի թղթակցութիւն, որ տպուել է РАЗСѢТѢ (№ 117) լրագրում: Թղթակցի հաղորդածները կասկած չեն թողնում որ ականատեսի նկարագրութիւն է դրուած մեր առաջ: Եակովինկոն Պոլսից գրում է հետեւեալը.

Թուրքական խժգոնութիւնները բնաւ չփոխուեցին վերջին ժամանակները: Մօտ մի ամիս առաջ տեղի ունեցաւ հետեւեալ եղելութիւնը:

Բիթլիսից 8 ժամուայ և Մուշից 6 ժամուայ ճանապարհի վրայ գտնուում է հայկական ծորս գիւղը, բաղկացած 80 տնից: Բնակիչները ունեւոր էին հաշուում: Բաւական շատ տաւար ունէին, ամեն տնում կային զարնացանի և աշնացանի համար հատիկների, ինչպէս և ուտելու պաշար: Գիւղի մէջ կային 15 տուն, որոնք ունէին ամեն մէկը 20-25 շունչ: Այգիլիսի տները ունէին և մի քանի տասնեակ լիւրա փող:

Ապրիլի 21-ին գիւղը մտան 21 ֆիդայիներ Գէորգի գլխաւորութեամբ: Նրանք մտան գիւղը ծածուկ, երբ ընդրը քնած էին, և օթեանեցին երկու տներում, որոնք իրարից հեռու են 50-70 քայլ: Գիւղի ուսը, իմանալով այդ քանի մասին, տեղեկութիւն տուաւ թուրքերին: Վիշերը՝ խա-

դադ անցաւ, ինչպէս և յաջորդ օրը մինչև ժամի 3-ը ճաշից յետոյ: Այդ ժամանակ գիւղից դուրս երեւցան թուրք զօրքերը, որոնք գնում էին Վարթէնիս գիւղի ուղղութեամբ:

Որովհետև շատ յաճախ են կատարում զօրքերի տեղափոխութիւններ, ուստի բնակիչները դրա վրայ ուշադրութիւն չդարձրին. նրանք հասկացան իրանց դրութեան բոլոր սարսափը, միայն երբ նկատեցին, որ զօրքերը, իսկ նրանց յետևից և քրդերը սկսեցին շրջապատել գիւղը: Զօրքը բաղկացած էր 80 հոգուց: Քրդերի թիւը յայտնի չէ, թէ և ստուար, որովհետև շրջակայ 15 գիւղից էին հաւաքուել, իրանց գլուխ ունենալով շէյխին:

Զօրքից բաժանուեց ժանդարմերիայի զլխաւոր Միւրալայ Ալայ բէյ — իգէթ փաշա 15 զինուորներով: Դիմելով գիւղը նրանք մտան այնտեղ գերեզմանատնի և եկեղեցու կողմից: Ագէթ-փաշան կանչել տուեց իր մօտ ունէր Ղազարին և նրա եղբօր Դաւօյին: Այս վերջինը գիւղում ամենահարուստն էր համարւում և մեծ պատիւ էր վայելում: Նրա գերդաստունը բաղկացած էր 35 հոգուց և տունը կատարեալ բարեկեցութեան մէջ էր: Եղէթ փաշան հարցրեց Դաւօյին, թէ ուր են Ֆիդայիները: Նա պատասխանեց թէ գիւղում Ֆիդայիները չկան: Իսկ հարցուփոխի ենթարկուած ուսը չայտնեց թէ նրանք գիւղում են և ցոյց տուեց նրանց տան վրայ: Ռէսը միայն խնդրում էր թոյլտուութիւն դուրս բերել գիւղացիներին գիւղից և Ֆիդայիներին թողնել իգէթ փաշային: Սակայն փաշան բարեկամաբար Դաւօյի վրայ, սուտ խօսելու համար տեղն ու տեղը նրան սպանեց սեփական ձեռքով: Այն ժամանակ ուսը փախաւ իր տուն, իսկ զինուորները բնական Դաւօյի մարմնի վրայ, կտոր կտոր արին նրան դաշոյններով, հանեցին աչքերը, մերկացրին և վերցրին նրա գօտիւրում եղած 15 ոսկին, որ սպանուածը ստացել էր մի քիչ առաջ իր հօտի մի մասի վաճառումից:

Դաւօյի վրայ գնդակ արձակելուց յետոյ բոլոր գիւղացիները փախան իրանց տները, իսկ զինուորները, որոնք շրջապատել էին գիւղը ներս խուժեցին և շրջապատեցին այն տունը, ուր թաքնուած էր Ֆիդայիների զլխաւորը: Բարձրանալով տան կտուրը, զինուորները հերթիկից կրակում էին տան ներսը, սակայն Ֆիդայիները չէին պատասխանում: Տեսնելով որ հրացանաձգութիւնը չի բնդհատուում, միւս անում եղած Ֆիդայիները դուրս եկան ընկերներին օգնելու: Սկսուեց հրացանաձգութիւն որ տևեց մինչև մութը կոխելը: Ֆիդայիներից ոչ ոք չէր սպանուած, իսկ թիւրքերից սպանուած են 8 հոգի և վիրաւորած 4-ը: Երբ վրայ հասաւ մութը Ֆիդայիները դուրս պլըծան գիւղից: Երբ թուրքերը իմացան որ Ֆիդայիները հեռացել են, նրանք վրայ թափուեցին գիւղը, կոտորեցին զոնները և ուժով ներս խուժեցին տները: Զինուորները և քրդերը կոտորուում էին սնդուկները, դուրս էին բերում կարասիները, հանում բնակիչների վրայից փոքր ի շատէ արժէք ունեցող բաները և թողնում վրաները ցնցոտիներ: Բոլոր կողոպուտը գիւնուորները ծախում էին քրդերին չնչին գներով, իսկ նրանք դնում էին ուղիերի վրայ և իսկոյն տանում էին իրանց գիւղը: Քրդերը իմանալով թէ որ տեղ են գիւղացիները թաղցնում հատիկներ յաշարը, գտնում էին այն հորերը և դատարկում, տանում իրանց հետ: Այդպիսով թալանուած էին թէ ցանքսի և թէ սպրուտտի պաշարը: Քրդերը քչեցին բոլոր տաւարը որ գտնուում էր գիւղում. մնաց միայն այն որ արածում էր սարերում: Կողոպուտը կատարւում էր օֆիցերներ չալքի առջև: Դիւաւոր օֆիցերը թոյլ չտուեց կողոպտել միայն ունէր Ղազարի տունը որովհետև նա մատնել էր Ֆիդայիներին: Ամբողջ գիւղը շարունակուում էր կողոպուումը, իսկ առաւօտեան մօտ, երբ աւեն ինչ թալանուած էր, զինուորները սկսեցին ըննա-

բարել կանանց և 8 տարեկանից սկսած աղջիկներին: Ձխնայեցին նոյնիսկ դողդոջուն պառաւններին: Ձինուորները բաժանուում էին խմբերով, 5—10 նոյնիսկ 20 հոգի, ընտրում էին իրանց գոհը, քաշում տանում էին նրան խրճիթը, կանգնում էին դռան առաջ և հերթով մտնում էին թշուառ կնկայ մօտ, որին և բռնաբարում էր ով ինչպէս կամենում էր: Բռնաբարութեան ենթարկուեցին 90 կանայք: Գրգեբը այդ բանում չէին մասնակցում: Չբռնաբարուեցան միայն ռէսի տան կանայք, որոնց պաշտպանեց ինքը Ալայքէկը և նրանք, որոնք կարողացան փախչել: Ձինուորները մորթոտեցին և կերան գիւղում եղած դառները (70 հատ): Եւ որովհետեւ գոմշի միսը լաւ համ չի ունենում—դրանց գցեցին հորերի և ջրհորների մէջ: Ձինուորները պղծեցին և կողոպտեցին նաեւ եկեղեցիներ: Սրբազան զգեստները ծուէն ծուէն էին անում և քրդերը դրանցով զարդարում էին իրանց զգեստները: Ձինուորները պոկում էին աւետարանի թերթերը և սրբում իրանց՝ եկեղեցում աղտեղութիւններ անելուց յետոյ: Գարուքանդ արին եկեղեցու քարեայ սեղանը: Երեք օր շարունակուեցին այդ անգթութիւնները, ապա այդ զինուորները և քրդերը հեռացուեցին և նրանց փոխարէն բերուեցին 80 նոր զինուորներ, որոնք մինչև օրս մնում են այդ գիւղում: Թրքական սովորութիւններին համեմատ դրանք այդտեղ կը մնան երկի շատ տարիներ: Կողոպտարի և բռնութեան ժամանակ՝ թուրք զինուորների ձեռքով սպանուած էին 22 գիւղացիներ (տղամարդ, կին և երեխաներ) և երկուսը վերաւորուած էին: (Ապա բերած է դրանց մանրամասն ցուցակը):

Բոլոր սպանուած տղամարդիկ, կանայք և երեխաները սպանուած էին այն ժամանակ, երբ Ֆիդայիները գիւղից հեռացել էին արդէն: Անգէն բնակիչները ոչ մի ընդգիմադրութիւն չէին ցոյց տալիս: Բոլոր բնակիչները փախան գիւղից և ապաստան գտան հարեան գիւղերում: Շատ երեխաներ և կանայք հիւանդացան բռնաբարութիւնից յետոյ, 7 յդի կանայք վիժեցին դրանից յետոյ: Երկու հոգի եւրոպական պետութիւնների հիւպատոսները մանրամասն զիտեն բոլոր անցած դարձածի մասին. սակայն նրանք նոյնիսկ չհետաքրքրուեցին մինչև այժմ դնալ այնտեղ և ջարդի հետեանքներին ակնատես լինել: Երբ հիւպատոսներից մէկը բերանացի խիստ բողոքեց կատարուած անգթութիւնների առթիւ— վալիին պաշտօնապէս յայտնեց, նոյնպէս բերանացի, որ այդպէս է վարում նորին մեծութեան Սուլթանի կարգադրութեամբ, որ իր, վալիի վրայ պարտք է դրել—քարուքանդ անել իւրաքանչիւր գիւղ, ուր երևան Ֆիդայիները: Եւ մեծ պետութեան հիւպատոսը, ինչպէս երևում է, բոլորովին զոհացաւ այդ պատասխանով, որովհետեւ մենք չենք լսել, որ վալիի այդպիսի յայտարարութիւնը ըստ արժանւոյն գնահատուած լինէր...

Ահա ձեզ մի ամենաչնչին կտոր այն իրականութիւնից, որի պաշտպանը հանդիսանում է գլխաւորաբար Վիլհելմ 11-ը և նրա հետ նաեւ միւս եւրոպական պետութիւնները, որոնք խեցին Ռուսաստանի ձեռքից թշուառ թիւրքաց-Հայաստանը որ մեռցնեն նրան 30 տարիների անլուր տանջանքների մէջ: Բիւսմարկի խորհուրդներով ղեկավարուող այդ Բերլինի վեհաժողովի կատարած «մարդասիրական» գործով Statu quo-ն իբրեւ թէ պահպանուեց. մինչդեռ միայն կոյրը չի կարող տեսնել որ այդ Statu quo-ն, երկրի նախնական դրութիւնը փոխեց միայն ի նպաստ Գերմանիայի...

Յուլիսի 22-ին ն. տ., ժամի 1¹/₄ կէսօրից անց, Սեւածիւր-
քից յետոյ անյայտ մարդու ձեռքով նետուած ռումբից սպա-
նուեցին և վիրաւորուեցին Սուլթանի շքախումբից և թուրք զի-
նուորներից մօտ 100 մարդիկ: Սուլթանը մնաց ողջ: Կասկածը
ընկնում է մակեդոնացիների և հայերի վրայ: Այսօր հեռագրուե-
րում տպուած էր հետեւեալ լուրը.

Կ. Պոլիս, 3 օգոստոսի: Անգլիական դեսպանը զօրեղ բողոք ներ-
կայացրեց այն բռնութիւնների առիթով, որ Դիւարքերում Համիդիէ զօր-
քը գործել է հայերի դէմ ճիւղի սպանութեան փորձի ժամանակ: Սուլթա-
նական գվարդիայի բոլոր ալբանացիները և արաբները զարհուրած պալ-
թումից փախան և միայն թիւրքական գվարդիան, որ բաղկացած էր կա-
րաչելի ցեղի զինուորներից, մնաց տեղում և մերկացրեց սրերը սուլթանի
պաշտպանութեան համար: Այդ պատճառով սուլթանը հրատարակեց իրագէ
որ Բէշլիքթաշում, Օրթաքէօյում և պալատի շրջականերում պահակութիւն
անող բոլոր ժանդարմները ընտրուեն բացառապէս յիշեալ ցեղի զուտ-ա-
րիւն թիւրքերի միջից:

Այդ ո՞ր պետութեան մէջ է ընդունուած որ այս կամ այն
յանցաւորի պատճառով ջարդեն, տանջեն, սպանեն, բռնաբարեն
նրա ազգակից խաղաղ, անղէն, անմեղ ժողովուրդը:—Ոչ մի,
բացի օսմանեան պետութիւնից: Ահա համաթուրքական տեն-
չանքների իդէալ մի պետութիւն...

Լ. Ս.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մի հանելուկ: Յայտնի է որ «Баку» թերթը հրատարակում է նոյն քաղաքում, ուր և Աղայեվի «Հէյաթ»-ը: Այս վերջինի № 3-ում (յունիսի 10-ին) տպուած էր «Արաբների խառնակութիւնների» մասին մի յօդուած: Չնայած որ «Баку»-ի քթի տակ է լոյս տեսնում թուրք թերթը, մինչեւ յունիսի 28-ը, այսինքն համարեա ամբողջ ամիս ու կէս, այդ ոռւս լրագրի աշխատակից ՅՈՅՈՒՆ-ը ոչ մի տող չի գրում յիշած յօդուածի մասին և միայն այն ժամանակ է գրիչը ձեռք վերցնում, երբ լոյս է տեսնում «Մուրճ»-ի № 7 եւ ստացում Բազում... Եւ նա գրում է «Арабы и Турция» յօդուածը «Баку» լրագրում (№ 90) առանց մի խօսք ասելու թէ ի՞նչ աղբիւրներից է քաղած իր գրուածքի նիւթը... Գրական էթիկայի մասին տարօրինակ հասկացողութիւն ունի այդ ՅՈՅՈՒՆ-ը... «Тифлис. Листокъ» լրագիրն էլ գրեց նման յօդուած, սակայն նա իր պարտքը համարեց յիշել աղբիւրը...

Ժամ. իմրագիր՝ Լ. Սարգսեան
Հրատարակիչներ՝ Վ. Քանանեան
եւ Լ. Սարգսեան

ВУЗСУЛУГОНІФІКЦІЯ

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА
НОВОЕ ИЗДАНИЕ ТОВАРИЩЕСТВА М. ВОЛЬФЪ:

Толковый Словарь

ЖИВОГО ВЕЛИКОРУССКАГО ЯЗЫКА

ВЛАДИМИРА ДАЛЯ

3-е, исправленное и значительно дополненное издание, под редакцией проф. С П Б. университета
— И. А. БОДУЭНА-ДЕ-КУРТЕНЭ. —

«Толковый словарь Даля» увѣнчанъ Императорскою Академіею Наукъ. Ломоносовскою преміею; Императорскимъ Русскимъ Географическимъ Обществомъ удостоенъ Константиновскою медалію; совѣтомъ Императорскаго. б. Дерптскаго, нынѣ Юрьевскаго университета награжденъ полною преміею имени Реберта Геймбургера: въ настоящемъ изданіи признанъ заслуживающимъ рекомендаціи со стороны Министерства Народнаго Просвѣщенія, посредствомъ особаго циркуляра, вниманію педагогическихъ совѣтовъ среднихъ учебныхъ заведеній на предметъ приобрѣтенія его въ фундаментальныя бібліотеки этихъ учебныхъ заведеній, и допущенъ, кромѣ того, въ ученическія, старшаго возраста, бібліотеки среднихъ учебныхъ заведеній, а равно въ бесплатныя народныя читальни.

ВЫШЕЛЪ ВЫПУСКЪ XVI-й (6-й) вып. II-го тома
(Мстить-накрѣпить) СПБ., 1905. 4о. Столбцы 577-й по 928-й.

Полное изданіе «Толковаго словаря» будетъ состоять изъ сорока выпусковъ, составляющихъ четыре большіе тома въ 4 д. л., въ которыхъ будетъ заключаться до 250 печатныхъ листовъ или около 8000 столбцовъ текста убористыми, но четкими шрифтами, на плотной, глазированной бумагѣ,

Подписная цѣна словаря—20 рублей. Допускается разсрочка: при подпискѣ 2 р. 50 к. и за каждый изъ первыхъ 35 выпусковъ по 50 коп.—Пересылка по дѣйств. стоим., причемъ для облегченія расчета выпуски, по мѣрѣ выхода, высылаются съ наложеннымъ платежомъ.

Подробное объявленіе высылается желающимъ бесплатно.
ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: у издателей—въ книжныхъ магазинахъ Т-ва М. О. ВОЛЬФЪ—С.-Петербургъ, Гостиный Дворъ, 18, и Москва: 1) Кузнецкій Мостъ, д. Дзамгаровыхъ, и 2) Моховая ул., д. Чинова и Курындиной (противъ университета), а также у всѣхъ др. столичныхъ и провинціальныхъ книгопродавцевъ.

Կովկասի Ոստանական Շրջանի հոգաբարձական Խորհրդի որոշմամբ, որ հաստատուած է Կովկասի ֆադաֆա-
ցիական պ. կառավարչապետի պաշտօնակատարի
կողմից

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)

Համառոտ հայերէն-ռուսերէն բառգրքով

ԳԻՆՆ Է 70 Կ.

(246 երես)

Համարուած է պիտանի սկզբնական դպրոցների համար:
Դիմել թիֆլիս՝ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական», իսկ Բա-
զու՝ «Сотрудник» գրավաճառանոցներին:

Իշխ. Ա. Սումբասովի

ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻԻՆ

գրամատիկական լեզենդա Վրաստանի անցեալից

5 արարուածով

(Հեղինակի պատկերով և յառաջաբանով)

Բնագրից թարգմանեց

Ալ. ծատուրեան

ԳԻՆՆ Է 50 Կ.

Ջ. ՄՕՐԻԷՐ

ՀԱՋԻ ԲԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Վէպ պարսկական կեանքից

Լորդ Կըրզընի ներածութեամբ

Թարգմ. անգլ. բնագրից

Մ Կարապետեան.

ԳԻՆՆ Է 2 Ր.

- Պրինց Նապոլեոնի կոչը.—Պաշտօնական հաղորդա-
գրութիւն թիֆլիսում մի դաւադրութեան մասին.—Օ-
գոստոսի 1-ի Բարձրագոյն Ուկազը: 152
16. ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ.—Խուս-ճապոնական պատերազմը.
—Խաղաղութեան կոնֆերենցիան.—Գերմանիայի մի-
տումները թիւրքիայում.—Խորս գիւղի դէպքը.—Սուլ-
թանին սպանելու փորձը: 168
17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ :
18. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
19. ՅԱԻԵԼՈՒՄԾ. Ջէյմս Ս'որիէր՝ «ՀԱՋԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-
ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ.
անգլ. Մ. Կարապետեան. 65—112

ՇԵՐՈՒՆԸՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1905 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան V տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Փոստատան՝ տարեկան	10 ռ.	Արժույթահաճ.՝ 12 ռ.	(32 ֆ.)
կէս տարին	6 »	» 7 »	(18 ֆ.)
1 ամսուան	1 »	» 1 » 20 կ.	(31,2 ֆ.)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է
ԹԻՓԼԻՍԱՅԻ խմբագրատունը (ձախճախական փողոց, ա. № 12)
Կայսրութեան ալ ճեղքից պէտք է գիտիլ՝ Тифлисъ, въ редакцію
журнала «МУРՃ».
Արժույթահաճ.՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ, մանաւանդ քուեր, յատուկ անուններն ու օտար բառերը, եւ քերթի միայն մի երեսի վրայ. ստանձնապէս ու զարմեկ կէտերու քան, ուղղագրութեան եւ նոր պարբերութիւններ որոշակի լինելու վրայ. Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ լեզուները:
2. Չընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուած են: Չեռագրերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ստանաւորները չեն վերադարձնուում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագրերները համարուում են անվճարելի:
4. Խմբագրութիւնն իրան է վերադառնում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուրճ» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը զանազան հարցումներով գիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ:
7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրանշիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. Ընդունում է ամէն լեզուով Յայտարարութիւնների համար վճարում են,—1 երես ընտղ յայտարարութեան 15 ռ., 1/2 եր.—8 ռ., 1/4 եր.—4 ռ., տողատեղ (կորպ.)—40 կ.:

Չեռագրերները, նամակները եւ ծրարները պէտք է ուղղել խմբագրութեան, ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով: